

5 OCT 2011

Ս. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ» ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

9(497)

Ա-62

մե

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ



ԸՆԴԱՐՁԱԿ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՊԱԼՔԱՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

Կ Ա Ջ Մ Ե Ց

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ



ՆԱԶԸՄ ՓԱՆԱ

ԶՕՐ. ՍԱՎՈՑ



Ս. Հ Ա Տ Ո Ր

Կ. ՊՈՒԽՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ՍԵԶՈՒՄԱՆ

1912



13.02.2013

13.02.2013

ՏՊԱՐԱՆ ԵՒ ԿԱԶՄԱՏՈՒՆ
Օ. ԱՐՋՈՒՄԱՆ
№ 148



3115-48 g

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Քիչ պատերազմներ միանգամայն այնքան յուզումնառիթ, վրդովիչ ու հետաքրքրական եղած են, քիչ պատերազմներ այնքան խոշոր քաղաքական նշանակություն ունեցած են որքան ներկայ Պալքանեան Պատերազմը:

Չորս փոքր ու երիտասարդ պետութեանց դաշնակցութիւնն ու ծառայումը դարաւոր Օսմ. Կայսրութեան դէմ, որուն նահանգներն էին դեռ երէկ, ապշեցուցիչ յաջողութիւնները որոնցմով պսակուեցան իրենց յանդերձութիւնն ու յանձնապատանութիւնը, պատմութեան նոր էջ մը կը բանան, և մասնաւորաբար Արեւելեան Անդիր կոչուած յաւիտենապէս կնճռոտ ու անլուծելի հարցը կը մտցնեն լուծման ճամբու մը մէջ որ վերջնականը ըլլալ կը թուի:

Երբոր մտածենք թէ մօտաւորապէս չորս դարէ ի վեր Եւրոպական դիւանագիտութիւնը, զարհուրագին մաքառումներու և անհաշուելի զոհողութեանց ենթարկուելով, ի զուր կ'աշխատէր այդ արդիւնքին ժամանելու, երբոր մտաբերինք մանաւանդ այն անսպասելի ու զրեթէ կայծակնային եղանակը որով այդ արդիւնքը ձեռք բերուեցաւ, այն ատեն մանաւանդ պիտի կրնանք լաւագոյն կերպով մը ըմբռնել նշանակութիւնը այս պատերազմին որ ամէնէն փորձ մասնագէտներն անգամ յանկարծակիի բերաւ, և ապշութեան մատնեց բովանդակ աշխարհը:

Անկախաբար այս անակնկալ արդիւնքէն, ներկայ պատերազմը տակաւին բազմաթիւ զարմանալի կողմեր ունի, ամէնքն ալ արժանի հետաքրքրութեան ու մանաւանդ խոկման:

Ուշադրութեան արժանի առաջին կէտ մը նոյն ինքն կնքուած դաշնակցութիւնն է պալքանեան չորս պետութեանց միջև: Այդ չորս պետութիւնները տակաւին երէկ իրարու թշնամի ազգեր էին: Պուլկարիա և Սերպիա, իրենց անկախութեան վաղորդայնին իսկ պատերազմած էին իրարու դէմ, և Սերպերը, մինչև վերջին տարիները, իրենց պարտութիւնը մոռցած ըլլալ չէին թուեր: Յոյներն ու Պուլկարները պարզապէս իրար կը ջարդէին տակաւին մէկ քանի տարի առաջ: Գարատաղցիք ու Սերպերը, հակառակ իրենց արհնակցութեան, մշտապէս իրար կը նեղէին, ու նաև իրար կը սպաննէին: Ինչպէ՞ս իրականացաւ այս այլամերժ ու իրերատեաց պետութեանց միութիւնը միակ նպատակի մը շուրջը, ինչպէ՞ս մանաւանդ կրցան համաձայնիլ այդ նպատակին նկատմամբ, որ մինչև այսօր բուն իսկ կռուախրճոճորն էր իրենց հակամարտութեանց: Ատելութեան պատճառէ մը ինչպէ՞ս կրցան ազգային իտէալ մը գոյացնել, ինչպէ՞ս յաջողեցան քնացնել իրենց հերուան ոխն ու քէնը և համախուժու ու միաբան այդ իտէալին նուիրուիլ այս աստիճան հոյակապ եղանակով մը:

Ուշադրութեան արժանի երկրորդ պարագայ մը՝ Թուրքիոյ տկարացումն ու պարտութիւնն է, ինչ որ նոյնքան զարմանք առթած է աշխարհի որքան դաշնակից փոքր պետութեանց յաջողութիւնը: Տարակոյս

միջ

չկայ որ Թուրքիա շատ մը արդարացուցիչ պարագաներ ունի իր կողմը : Ատոնց մէջ կը գտնուին նախ քառորդ դարու բռնակալութեան մը ստեղծած շլատիչ պայմանները որոնք կաշկանդեցին երկրին թէ՛ քաղաքական, թէ՛ իմացական, թէ՛ տնտեսական և թէ՛ մանաւանդ զինուորական ոյժերը, ու բացարձակապէս անհնարին դարձուցին անոնց զարգացումն ու բարգաւաճումը : Յետոյ յաջորդեց հինգ տարուան ժէօն-Թիւրք վարչութիւնը, Սահմանադրութեան դիմակին տակ, — իր ապիկարութեամբ, իր անհեռատեսութեամբ ու սխալներով նոյնքան վնասակար երկրին յառաջդիմութեան ու զօրացման համար՝ որքան իր տապալած բռնակալութիւնը : Իր պատասխանատուութեան չափը աւելի մեծ է անշուշտ անոր համար որ գոնէ ինք զուրկ չեղաւ անկեղծ ու անշահախնդիր խորհրդատուներէ, որոնք այս օրուան անկումը գուշակեցին և երբեք չզաղրեցան զինքը այդ ահաւոր վաղորդայնէն զգուշացնելու, հակառակ անոր որ ինք միշտ խուլ մնաց, իմաստագոյն խորհուրդներէ նախընտրելով իր սեփական տխամարութիւնը : Բոլոր ասոնք արդարացուցիչ պարագաներ են Թուրքիոյ արդի վարիչներուն համար : Ու տակաւին անուրսնայի է որ, հակառակ ձախողութեան շարքի մը, Թուրք բանակը կրցաւ իրական դիւցազնութիւն մը ցոյց տալ պատերազմին ամէնէն զօրուարին և յուսահատական ըրպէններուն մէջ : Բայց քաղաքականութիւնը զգացման խնդիր չէ. պատերազմը իր արդիւնքէն միայն կը դատուի, և այսօր՝ արդիւնքը բացարձակապէս աննրպաստ է Թուրքիոյ : Հաշուեյարդարութեան ժամուն՝ ոչ ոք կը հետաքրքրուի թէ ինչո՞ւ պարտուեցաւ այս կամ այն կողմը : Այլեւս մէկ բան միայն կը գրաւէ մտքերը . — Ի՞նչ պիտի ըլլայ պարտութեան հետեւանքը, ի՞նչ պիտի տուժէ պարտուողը, ի՞նչ պիտի մնայ իրմէ . . .

Այս բոլոր վրդովիչ հարցումներուն պատասխանն է որ պիտի գտնեն ընթերցողները ներկայ ընդարձակ ու մանրակրկիտ աշխատութեան մէջ, զոր կը կազմենք հիմնուելով ամէնէն արժանահաւատ և անկողմնակալ աղբիւրներուն վրայ, առանց կողմնակալութեան, սոսկ ճշմարտութիւնը, նոյն իսկ դառն ճշմարտութիւնը պարզելու մտահոգութեամբ : Ու տակաւին՝ այս աշխատութեան ընթացքին առիթ պիտի ունենանք պատկերացնելու ներկայ պատերազմին ունենալիք քաղաքական հետեւանքներն ու յարուցանելիք միջազգային կնճռատութիւնները, ինչպէս նաև այն նոր վարչական դրութիւնը որուն պիտի ենթարկուի Թուրքիա :

Մեզի, Հայերուս համար ալ այս աշխատութիւնը պիտի ունենայ իր հետաքրքրական կողմը, որովհետեւ քիչ մըն ալ Հայութեան ճակատագրին հետ կը խաղան ներկայ անցքերը : Այն պահուն ուր այս սողերը կը գրենք, վաղուան ըլլալիքը անյայտ է անշուշտ, բայց տարակոյս չկայ որ վաղընչուց յոռի կարգերու այս շրջափոխութենէն բարիքի բաժին մըն ալ մեր դժբախտ ազգին պիտի վիճակի : Ինչ որ ալ ըլլայ Թուրքիոյ ապագան, անշուշտ իր վարիչները պիտի ջանան օգտուել ներկայի դառն դասէն, ճշմարտապէս տանելի կեանքի պայմաններ ստեղծելով երկրին մէջ, ամէն կողմ և ամէն ցեղի համար ալ անխտիր :

Այս բոլոր հետաքրքրական կողմերով, ներկայ աշխատութիւնը

պիտի դառնայ ժամանակին լաւագոյն գիրքը և իրաւունք պիտի ունենայ հանրային լայն օժանդակութեան, ինչ որ կը յուսանք թէ չպիտի զլացուի : Մեր կողմէ՝ ոչինչ պիտի խնայենք զայն միշտ աւելի շահեկան ու գրաւիչ դարձնելու համար, և մասնաւոր հոգ պիտի տանինք անոր պատկերազարդութեան . այդ մտքով՝ յարաբերութեան մէջ մտած ենք արդէն Եւրոպացի և Ամերիկացի նշանաւոր հրատարակիչներու հետ, որոնց մեզի հասցնելիք «քիչէ»ները հետզհետէ լոյս պիտի տեսնեն յաջորդ պրակներու մէջ :

* * *

Անցեալին հետախուզութեամբ մանաւանդ կարելի է լաւագոյն կերպով մը ըմբռնել ներկան : Դէպքերը որոնք կայծակնային արագութեամբ մը իրարու կը յաջորդեն այսօր և մեզ կ'ապշեցնեն իրենց առաջ բերած քաղաքական յեղաշրջութեամբ, շատ բնական պիտի թուին մեզի, եթէ երբեք վերյուշենք մերձաւոր անցեալին մէկ քանի նշանակելի անցքերը, որոնք իրական սկզբնակէտերն են արդի պատերազմին, և որոնք, քառորդ դար առաջ, այսօրուանին պէս ծանր տագնապ մը առաջ բերին Արեւելքի մէջ, թէև իրենց արդիւնքով այնքան վճռական չեղան որքան կը սպառնան ըլլալ հիմակուան դէպքերը :

Մեր գծած ծրագրին հաւատարիմ մնալու համար՝ բուն պատերազմի անցքերուն անցնելէ առաջ, հարեւանցի ակնարկ մը պիտի ձգենք այդ մերձաւոր անցեալին վրայ, որպէս զի ընթերցողները կարենան հեշտիւ գտնել ներկայ դէպքերուն բուն պատճառները և աւելի խորապէս ու գիտակցութեամբ ըմբռնեն զանոնք :

Ամիս մըն է որ սկսաւ այս պատերազմը, և ահա արդէն իսկ տակնուվրայ ըրած է դիւանագէտներու բոլոր հաշիւները, քանդած է «Սթաթու ըրու» ի ամէն խոստում, խորապէս յեղաշրջած է Եւրոպայի քարտէսը և որոշ չափով փոխած եւրոպական հաւասարակշռութիւնը . և այս ամէնը կատարուած լմնցած է՝ առանց մեծ տէրութեանց միջամտութեան պէտք մնալու, — ինչպէս դիտել կուտար Փրանսական թերթ մը՝ նոյեմբեր 21ին :

Ինչպէ՞ս տեղի ունեցաւ այս հրաշքը : Ներկայ աշխատութիւնը ահա ճիշդ ատիկա պիտի յայտնէ մանրախիղճ ու մանրակրկիտ կերպով մը :

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԸՆԴԱՐՁԱԿ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՊԱԼՔԱՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

ԳԼՈՒԽ Ա.

ՊԱԼՔԱՆԵԱՆ ԹԵՐԱԿՂԶԻԻՆ ԱՆՑԵԱԼԸ

Բովանդակ Եւրոպայի, թերեւս բովանդակ աշխարհի մէջ չկայ աւելի փորձանաւոր երկրամաս մը քան այս Պալքանեան թերակղզին որուն անուան կը կապուի այսօր արդի ժամանակներու մեծագոյն դէպքը: Մանուածապատ ու խառնափնթոր պայմաններու և սահմանագծումներու ենթարկուած այդ թերակղզին բաժնուած էր Թուրքիոյ, Ռուսիոյ, Պուլկարիոյ, Սերպիոյ, Յունաստանի և Գարատաղի միջեւ, բայց այս երկիրներէն ոչ մէկը իր բնական սահմաններուն մէջ հաստատուած էր իրապէս: Ռուսանացիներ կը գտնուէին Ռուսիայէն դուրս, Պուլկարներ՝ Պուլկարիայէն դուրս, Սերպեր և Յոյներ Սերպիայէն ու Յունաստանէն դուրս, վերջապէս ամէնքն ալ աւելի կամ նուազ թուով ազգակիցներ ունէին իրենց սեփական երկրին սահմաններէն անդին:

Թերակղզին լեռները բացուած հովահարի մը ձեւով կը տարածուին, իրենց կեդրոն ունենալով Սօֆիայի հարաւակողմը գտնուող Մոէզիայի հովիտը, և բնակութեան անյարմար ըլլալով անանցանելի պատուարներ դարձած են Պալքանեան զանազան ժողովուրդներուն միջեւ: Այս վերջինները, իրարու հետ հաղորդակցութենէ ու շփումէ զրկուած, չէին կրցած ստեղծել այն տեսակ կեանքի պայմաններ որոնք զիրենք մէկգմէկու մօտեցնէին. ընդհակառակը միշտ իրարմէ անջատ և հեռու ապրած ու մէկգմէկու թշնամի մնացած էին:

Յարաբերութեանց դժուարութիւնը չէր միայն որ իրենց կռիւներուն պատճառ կը դառնար: Ատկէ անկախաբար՝ միշտ գոյութիւն ունէին ցե-



Ն. Կ. Կ. ՄԷՅՄԷՏ ՐԷՇԱՏ Ե.
ԿԱՅԱՐ ԹՈՒՐՔԻՈՅ

ղերու, կրօնքներու և ձգտումներու հակամարտութիւններ, որոնք յաւիտենական վէճերու առիթ կը ստեղծէին շարունակ: Եւրոպայի և Ասիոյ սահմանաձայրերուն վրայ հաստատուած ըլլալով, թերակղզին արշաւանքի բնական ճամբայ մը դարձած էր ամէն տեսակ պատերազմիկներու և կրօնքի քարոզիչներու համար. անոնցմէ իւրաքանչիւրը իրմէ մաս մը բան կամ իր քարոզութենէն որոշ հետք մը կը թողուր այնտեղ: Այս պայմաններուն մէջ՝ բնական է որ Պալքանեան թերակղզին այլազան և տարակրօն ժողովուրդներու խառնուրդ մը պիտի ձեւացնէր:

Այդ ժողովուրդներուն մէջ նախ կը գտնուէին թուրքերը՝ որոնց տիրապետութիւնը երբեմն մինչեւ Հունգարիա կը տարածուէր և որոնք դեռ երէկ ետ մղուած էին մինչեւ Ռոտորի լեռնաշղթային հարաւակողմը, որ տեսակ մը բնական պատուարի պէս Մահմէտական թուրքիան կ'անջատէր Օրթոտոքս տարրէն: Յետոյ կու գային Ռումանացիները որոնք Հին Հռոմի գալթականներէն ձեւացած և Գանուբի ու Բարբաթեան լեռներուն միջև հաստատուած ժողովուրդ մըն են, կրօնքով օրթոտոքս, բայց զգացմամբ և արեւակցութեամբ շերմապէս Լատին: Ռումանացիներէն վերջ կու գային Պուլկարները որոնք Ե. դարուն եկած էին Ուրալի եզերքներէն և կը գրաւէին ո՛չ միայն պալքանեան լեռնաշղթային երկու կողերը, այսինքն բուն Պուլկարիան, այլ նաև Արեւելեան Ռումէլին որ իրենց տիրապետութիւնը կը տարածէր մինչև Մակեդոնիա: Պուլկարները մերձաւոր ազգակիցներ են Սլաւներուն որոնցմէ փոխ առած են իրենց լեզուն և կրօնքը: Սերպերը՝ որոնք Մօրավայի ընդարձակ հովիտը կը գրաւէին, տարածուած էին մինչև Գարատաղ՝ Նովի Բազարի Սանճագին միջոցաւ, թէև Աւստրիա այս բնական կամուրջը խլած էր իրենցմէ՝ նախ ինք գրաւելով զայն, յետոյ՝ Պոնա-Հէրսէքի վերջնական կցման առթիւ՝ թուրքիոյ վերադարձը ներով: Սերպերը Սլաւ ընտանիքին կը պատկանին և ընդունած են Օրթոտոքս կրօնքը: Գարատաղցիք ալ Սլաւ ընտանիքին մէկ ճիւղն են: Սերպերուն և Գարատաղցիներուն զբացի էին Ալպանացիները որոնց զուխաւոր զանգուածը հաստատուած էր Տրինի հովտին մէջ: Ալպանացիները մեծ մասամբ մահմէտական են, կռուական, մշտապէս զինուած, միշտ պատրաստ թալլելու. իրենք մանաւանդ հակառակութեան մեծագոյն աղբիւրները եղած են միշտ: Իսկ հարաւի կողմը՝ Օրթոտոքս Յոյները կը գրաւէին Հին Յունաստանն ու կղզիները՝ թէև իրենց ազգեցութիւնը այդ պզտիկ հայրենիքէն շատ աւելի հեռուները կը տարածուէր, չնորհիւ բազմաթիւ Հէլլէն հասարակութեանց որոնք կը վիստան Միջերկրականի արեւելեան աւազանին ծովեզերքներուն վրայ և կղզիներուն մէջ:

Մենք այստեղ թուեցինք միայն ցեղային խոշոր բաժանումները. պէտք չէ մոռնալ թէ իւրաքանչիւր ցեղ ինք իր մէջ ունէր բազմաթիւ տարանջատ ու տարակրօն ստորաբաժանումներ. խլամացած Սերպեր կողք կողքի կը բնակէին կաթոլիկ Ալպանացիներու հետ. նոյն ինքն Օսմանեան Կայսրութեան նահանգներուն մէջ միեւնոյն ցեղին Օրթոտոքս և խլամ Լտարրերը քով քովի կ'ապրէին. Մալիսորներ, Միրալիթներ, Մակեդոնացիներ և Յոյներ յաւիտենական վէճի մէջ էին իրարու հետ: Պէտք

չէ զարմանալ ուրեմն այս փորձանաւոր երկրամասին մէջ ծագած հակա-
ռակութեանց և պայքարներու անհատնում առատութեան վրայ: Աշխար-
հագրական պայմանները, ցեղերու բազմազանութիւնը, կրօնքներու տար-
բերութիւնները անպատճառ կռուականձոր մը կը զնէին մէջտեղ, ու թե-
րակղզին շփոթութեանց և յաճախ արիւնալի ընդհարումներու զանազա-



Օսմ. անդրանիկ հետազօտիչ խումբը որ թշնամիին դէրձերը երեւան հտնելու պաշտօնը ունէր պատերազմին սկզբնաւորութեան միջոցին և որ Պուլկար ջոկատի մը հետ ընդհարելով, կատաղի և հերոսական կռուէ մը վերջ բնաջինջ եղաւ:

պիտի ունենար նաև փորձանաւոր պատմութիւն մը: Պալքանեան թերա-
կըղզիին աշխարհագրական դիրքն իսկ պատճառ մըն էր որ փոթորիկը
մշտապէս անպակաս մնայ անոր վրայէն: Այնտեղ կը ժամանէին շա-
րունակ երկու հակընդդէմ հոսանքներ, մէկ կողմէն՝ Արեւմտեան Եւրո-
պայի ժողովուրդները՝ Արեւելքի մէջ շահաւէտ տիրապետութիւն մը
ապահովելու ըզձանքով, և միւս կողմէ ասիական ցեղերը՝ Եւրոպան
աշխարհակալելու տենչանքով: Այս պայմաններուն մէջ՝ Պալքանեան թե-
րակղզին երկու թշնամի աշխարհներ իրարու միացնող կամուրջ մը դար-
ձած էր:

կան թատերավայր
մը կը դարձնէին: Յետոյ իւրաքանչիւր
ցեղ իր կրօնակից,
նոյն իսկ արենակից
պաշտպան տէրու-
թիւնները ունէր, և
այս վերջիններուն
համար, բոլոր այդ
վէճերն ու ընդհա-
րումները անհրա-
ժեշտորար պէտք
էին տեսել, որպէս
զի կարենան զանոնք
պատրուակ դարձը-
նելով իրենց քաղա-
քական յետին մըտ-
քերուն իրականաց-
ման աշխատի: Ահա
թէ ինչո՞ւ Արեւել-
եան Խնդիրը եւրո-
պական քաղաքա-
կանութեան ամէնէն
կենսական և ամէնէն
կարեւոր առանցք-
ներէն մէկը դար-
ձած էր:

Փորձանաւոր եր-
կիր մը բնական է որ

Եւ սակայն՝ ոչ մէկ տիրապետութիւն կրցաւ ամրապէս հաստատուիլ
այդ երկրամասին վրայ: Երկու հակընդդէմ յորձանքները, Արեւմուտքն
ու Արեւելքը, շարունակ իրարու ձեռքէ խլեցին զայն, վտանգելով նոյն
ինքն Բիւզանդական կայսրութեան գոյութիւնը: Պուլկարներու անդրանիկ
գաղթականութիւնը՝ Յուստինիանոս կայսեր օրով, յետոյ՝ արաբական
արշաւանքը զոր Լևոն Իսաւրացի դժուարաւ կրցաւ խորտակել, ու մա-
նաւանդ ուսական յորձանքը շատ ծանր զոհողութիւններ արժեցին կայս-
րութեան: Միջոց մը նոյն ինքն Պոլիս վտանգուեցաւ երբ Պուլկարներու
Սիմէօն Չարը կրցաւ իր մականին տակ համախմբել Պուլկարներն ու Սեր-
պերը և Էտիրնէն գրաւելով (917) պաշարեց մեծ մայրաքաղաքը:

Յետոյ, յաջորդաբար, Պալքաններու մէջ երեւան եկան կարճատև
իշխանապետութիւններ, զուրկ հաստատ կազմակերպութենէ. անոնցմէ
շատերը կորան այլևս բնաւ չվերականգնելով: ԺԲ դարուն վերջերը՝
Հէմանիայի և Սթէֆան Ա.ի իշխանութեան տակ՝ Սերպերը յաջողեցան
կազմել բաւական կարեւոր պետութիւն մը որ ընկրուեց բովանդակ Տալ-
մացիան: Միևնոյն թուականին՝ Պուլկարներն ալ, այս անգամ Ռուսա-
նացուց հետ դաշնակցելով, Պէրճէայի մէջ պարտութեան մատնեցին Յոյ-
ները, յետոյ, — ճիշդ այս օրուան պէս, — Թրակիան և Մակեդոնիան
ասպատակելով վերստեղծեցին իրենց պետութիւնը, որ սակայն դարձեալ
հիւժեցաւ Խաչակիրներու դէմ մղուած կռիւներու մէջ: Այս դիւրարեկ
պետութեանց մէջ ամէնէն փայլունը հաստատեց Սերպիոյ Տուչան Չարը՝
ԺԴ դարուն. Սերպերը մինչև այսօր կը փառաբանեն այդ յանդուգն վե-
հապետին քաջութիւնն ու անմոռանալի հպարտութիւնը:

Բիւզանդական կայսրութեան յուլացած անիշխանութեան յաջոր-
դեց թուրք տիրապետութեան ամենի խստութիւնը: Օսմանեան Սուլ-
թանները, իրենց ծանր լուծին տակ, ամբողջ երեք դար կրցան խաղաղ
ու լռիկ անշարժութեան մը մէջ պահել պալքանեան անհանդարտ ժողո-
վուրդները: Բայց 1770ին՝ երբ ուսական նաւատորմիղը երեւցաւ Մօրէ-
այի առջեւ, Յոյները ոտքի ելան, իրենց հետ ապստամբութեան մղելով
նաև դրացի ժողովուրդները: ԺԹ դարուն սկիզբները, շատ սուր խռո-
վութիւններ ծայր տուին Պալքաններու մէջ: Բասվան Սղու, քաղաք առ-
քաղաք յառաջանալով, փորձեց վերակազմել վաղընջուց Պուլկար կայսրու-
թիւնը: Իր ծրագիրը չկրցաւ լիովին իրականացնել, բայց յաջողեցաւ կիսանկախ
դէրք մը պահել մինչև 1807: Վլասիքա Բիէր, այդ շրջանին, Ռուսեզա-
րատադեան անդրանիկ դաշնակցութեան հիմերը դրաւ: Թուրքիա հետզ-
հետէ կ'ընկճուէր արտաքին ու ներքին թշնամութիւններու տակ: Գարա-
ձօրճի արիաբար գրաւեց Պէլկրատը, և Սերպ թագաւորութիւն մը ձևա-
ցուց: Յետոյ, Միլօշ Օպրէնօվիչ երկրորդ ապստամբութեան մը գլուխ
կանգնելով՝ յաջողեցաւ Սերպիան վերածել ժառանգական վոյվոսայու-
թեան մը, որ օժտուած էր Սքուրչինայով: Թուրքիա միայն անուանական
գերիշխանութիւն մը կը պահէր Սերպիոյ վրայ, և թուրք փաշա մը՝ Պէլ-
կրատի մէջ:

Էտիրնէի դաշնագիրը՝ 1829 ին բոլորովին ազատեց Յունաստանը:



ԳԱՇՆԱԿԻՑՆԵՐԸ. — ՆԻՔՕԼԱ (Գարատաղե), ՖԷՐՏԻՆԱՆՏ (Պուլկաբեդ), ԲԷՔԱՎ (Սերպեդ), ԵՖՈՐԻՍՍ (Յունաստանի)

Յետոյ, 1858ին Գարատաղցիները վար իջան իրենց յուններէն, Սերպերը աւելի լայն անկախութիւն մը ձեռք բերին, և 1862ին այլ Մօլտօ-Վալաքիոյ նահանգներուն մէջ մարմին առաւ Ռուսման իշխանապետութիւնը որ ետքէն անկախ պիտի հռչակուէր: Այս բոլոր մանր պետութիւնները մըշտական խլրտուածի մէջ էին, շարունակ անհանդարտ ու պահանջկոտ, և ամէն նոր առիթ մաս մը բան աւելի կը բերէր իրենց: Վերջէն անոնց վրայ պիտի աւելնար նաև Պուլկարիան, և ամէնէն անհանդարտ ու փութորկայարոյցը ինք պիտի ըլլար այդ բոլոր անհանդարտ պետութեանց մէջ: Իսլամները, երիտասարդ ու տարածուելու, ընդարձակուելու, իրենց պատմական սահմաններուն հասնելու անհամբեր այս երիտասարդ երկիրներու մղման տակ քայլ առ քայլ, թէեւ յաճախ դիւցազնական դիմադրութեաւ, կը նահանջէին դէպի հարաւ, դէպի ծով: Սակայն իրենց նահանջը ո՛չ միայն չէր նպաստեր Պալքանեան թերակղզին խաղաղացման, այլ ընդհակառակը, թուրքերուն մեկնելէն վերջ մանաւանդ կռիւր աւելի բուն ու կատաղի կը դառնար այնտեղ:




ԶՕՐԱՎԱՐ ՅԻԶԷ

Պէտ Պուլկարական Սպայակոյսին Պատրաստ եւ պատերազմին յստակագիծը

Բոլոր պատերազմներուն, բոլոր դաշնագիրներուն հակառակ կարելի չէր եղած վերջնական հաշուեյարդարութեան մը առարկայ դարձնել Արեւելեան Խնդիրը: Մասնաւորաբար կարելի չէր եղած քիչ շատ կայուն ու տեւական բաժանման մը ենթարկել Պալքանեան թերակղզին, որ Արեւելեան Խնդրին մեծագոյն վառարանն էր իրաւամբ: Եւ ասոր գլխաւոր պատճառը Աւստրիոյ և Ռուսիոյ շահերուն հակամարտութիւնն էր, — ճիշտ ինչպէս այսօր ալ նոյն հակամարտութիւնն է որ քաղաքական հորիզոնը կը մթագնէ և կը սպառնայ եւրոպական ընդհանուր պատերազմի մը գետինը հարթել:

Սլաւները՝ իրենց պետերուն միջոցաւ կանուխէն վարժուած էին պատրաստ որս մը նկատելու Պոլսը, — «Զարկրաս»ը: Յետոյ Իվան Գ. Բալէօթիներու Սօֆիա իշխանութիւնն հետ ամուսնանալով, ինքզինքը Բիւզանդական կայսրութեան օրինաւոր ժառանգ հռչակած էր: Ատկէ Ռուսերուն ձգտումը դէպի Պոլս, որ դարերու ընթացքին իրենց աշխարհական ըղձանքներուն մէջ գլխաւոր տեղը պիտի բռնէր: Բայց Ռուսերէն աւելի Աւստրիան է որ թուրքիոյ կողոպուտին ճամբան հարթեց: 1706ին՝

Սիթվաթօրօքի դաշնագրութեամբ, Հապսպուրկեան գերդաստանը ազատ կացուցուած էր այն հարկէն զոր ամէն տարի կը վճարէր Սուլթանին: Մէկ քանի տակաւին վարանոտ յաջողութիւններէ վերջ Աւստրիացիք որոշեցին քանդել թուրքիոյ անպարտելութեան նախապաշարումը, կրցան ետ առ-



Դարատաղցիք իրենց արծիւի բոյներուն վրայ

նել Պուտաբէշթը ու պաշարեցին Պէլկրատը: Աւստրիոյ կայսրը, Բարյօ-վիցի մէջ կնքուած համաձայնութեան շնորհիւ, տէր մնաց Հունգարիոյ և Թրանսիլվանիոյ:

Աւստրիոյ այս յաջողութիւնները մեծապէս վրդովեցին Մեծն Պետրօսը: Վախցաւ որ երկար ատենէ ի վեր Ռուսիոյ տենչանքին առարկան ձեռքէ կ'ելլէ, և սկսաւ դէպի Սև Ծով իջնել, հակառակ անոր որ շատ ծանր ու նուաստացուցիչ պարտութիւն մը կրած էր Ազովի առջև: Աւստրիա՝ Ռուսիոյ յառաջխաղացութեան պատասխանեց նորէն շարժման մէջ դնելով իր բանակը: Իշխան Էօթէն, նոյն ժամանակներու լաւագոյն ռազմավարներէն մէկը, աւստրիական յաղթական բանակը մտցուց Օսմ. կայսրութեան սահմաններէն ներս և Բ. Դուռը ստիպեց կնքելու Բասա-



ՆԱԶԸՄ ՓԱՇԱ,
Պատերազմական նախարար և Սպարապետ

բովիչի դաշնագրութիւնը (յուլիս 1718) որ Աւստրիոյ կը թողուր Պանաթն ու Թամսվարը, ինչպէս նաև հիւսիսային Սերպիան ու Վալաքիոյ մեծ մասը: Այս կերպով՝ Աւստրիա կը հակակշռէր իր մրցակցին՝ Ռուսիոյ ձեռք բերած առաւելութիւնը:



ՍԵՐՊԻՈՅ ԲԷԹՍԻ ԹԱԳԱՒՈՐԸ
1877ի Ռուսական Պատերազմին մէջ

Կատարինէ Ա.ի օրով սակայն, երկու յաւիտենական հակառակորդները պահ մը դաշնակցեցան իրարու հետ՝ յանդուգն փորձ մը ընելուն պատակով: Մինչդեռ մէկ կողմէ Խաղախները Խրիժը կ'ասպատակէին, միւս կողմէ ալ Աւստրիա կը պահանջէր Նովի Բազարը: Երկու դաշնակիցները հոգեվարք կը նկատէին Օսմանեան Կայսրութիւնը և ամէն կերպով ապահով էին իրենց յաջողութեան: Բայց Թուրքիա՝ գերագոյն ճիգով մը կըրցաւ երկուքն ալ պարտութեան մատնել: Այդ ճիգը սակայն չկրցաւ փրկել զինքը, տարած յաղթութիւնը աւելի սպառիչ եղած էր իրեն համար՝ քան պարտութիւնը դաշնակիցներուն համար: Ռուսիա համբերատարութեամբ կը սպասէր իր գլխուն վերև, ճիշդ ու ճիշդ անգղի մը պէս, պատ-

րաստ խոյանալու իր որսին վրայ: 1770ին յարձակեցաւ դէպի Արշիպեղազոս և հրդեհեց Օսմ. նաւատորմը: Աւստրիոյ Յովսեփ Բ. կայսրը իրար անցաւ, յայտարարեց թէ պատրաստ է Թուրքիոյ աջակցելու, բայց չկրցաւ արգիլել Ռուսոսգ-Քայնարճրի դաշնագրին կնքումը որ ռուսական մաքիավելութեան գլուխ-գործոցն էր, և որ՝ կրկնիմաստ ու տարտամ բացատրութեանց շնորհիւ՝ ռուսական գերիշխանութեան կ'ենթարկէր Մեծն Սիւլէյմանի հայրենիքը: Այդքսանդր Ա. կայսրը, Նարոլէօնի հաւանու-



Թուրք պահակախումբ մը սահմանագլխին վրայ

թեամբ իւրացուց Մօլտօ-Վալաքեան նահանգները, յետոյ գրաւեց նաև Դանուբի ամրոցները: Աւստրիա-Հունգարիա շուտով ռուսական զրաւումները հակակշռող առաւելութիւններ ձեռք բերաւ իր կարգին, վերջնականապէս իւրացնելով Քարէնթիան, Քարնիօլը, Իլլիրիան, Խրուաթիան և Տալմացիան:

ԺԹ. դարուն, ռուսեւաստրեան այս հակամարտութիւնը աւելի խոր պատճառներ ունեցաւ և բոլորովին չեչտուեցաւ. ու Ռուսիան էր որ յաղթական ելաւ այդ նոր բաղխումէն: Զօրավար Տիպիչ, կայծակնային արշաւով մը գրեթէ Պոլսոյ դուռներուն առջև հասած էր, ինչ որ առիթ դարձաւ Խտիրնէի դաշնագրին վաւերացման: Ռուսիա ճշմարիտ դիտանոց մը ձեռք կը բերէր Դանուբի գետաբերաններուն մէջ. միւս կողմէ՝ Անդրկովկասի մէջ կը գրաւէր բազմաթիւ ամրոցներ և իր ազդեցութիւնը Պէլկրատի մէջ՝ չիտիկ չիտակ խնամակալութեան մը հանգամանքը կը ստանար: Այս կերպով՝ Սլաւ տարրը դարձեալ կը զօրանար Պալքանեան թերակղզիին մէջ, ի վեաս Գերման տարրին, որուն առջև կը սպառնար փակել ծաւալման ամէն ճամբայ և հաւանականութիւն:

1853ի դարնան, Ռուսիա աւելի յանդուգն քայլ մը առաւ այդ տեսակէտով: Իշխան Մէչնիքօֆ Բ. Դրան վրայ ճնշում բանեցնելով ուզեց ստիպել զայն որ Ռուսական կայսրութեան հետ «առժամեայ դաշնակցու-



թիւն մը» կնքէ. այդ դաշնակցութիւնը Ռուսիոյ Չարին պաշտօնական պաշտպանութեան պիտի ենթարկէր Եւրոպական Թուրքիոյ մէջ բնակող տասերկու միլիոն Սլաւները: Վերջնագրի ձեւով եղած այս առաջարկը պատճառ դարձաւ Խրիմի պատերազմին: Ռուսիա պարտուեցաւ դաշնակցից տէրութեանց գրոհին տակ: Սլաւ աղբեցութեան ծաւալումը պահ մը կասեցաւ, բայց կարելի չեղաւ բոլորովին արգելել զայն: Ոչ Բարիդի դաշնագիրը որ ծանրապէս կը հարուածէր Ռուսիոյ ձգտումները, ոչ ալ Լոնտոնի համեմատապէս աւելի նպաստաւոր դաշնագիրը կրցան պատուարներ դառնալ իր ծաւալման:

Շուտով վրայ պիտի հասնէր 1877ի արեւելեան պատերազմը, այնքան աղետալի Թուրքիոյ, և այնքան թոյլատու Ռուսիոյ յաւակնութեանց, մանաւանդ Սան Սթէֆանօի համալուծող դաշնագրին կնքումէն վերջ: Եւրոպա՝ որ ուսական յաջողութենէն աւելի անարեւելած էր քան նոյն ինքն Թուրքիա, չթողուց որ այդ դաշնագիրը իրականանայ: Անգլիոյ ճնշումներուն և սպառնալիքներուն վրայ՝ Սան Սթէֆանօի դաշնագիրը սրբագրուեցաւ Պէրլինի Վեհաժողովին մէջ և նոր դաշնագիր մը, որ կը խղզէր նաև մեր սեփական ազգին բարօրութեան համար Սան Սթէֆանօի դաշնագրին պարունակած խոստումները, քանդեց ուսական յատակագիծը:

Ներկայ պատերազմը ուրիշ բան չէ, այլ ուղղակի հետեւանքը այդ երկու դաշնագիրներուն: Քառորդ դար առաջուան ուսական յատակագիծն է որ կ'իրականանայ այսօր, աւելի լայն հիման վրայ: Եւ ուղղակի իրենք, բուն իսկ շահակից մանր պետութիւններն են որ ձեռք առած են իրենց ճակատագրին հարցը, առանց պէտք ունենալու իրենց ազդեցիկ պաշտպաններուն գոնէ զէն ի ձեռքին աջակցութեան: Ընթերցողները աւելի հեշտիւ պիտի կրնան ըմբռնել ներկայ դէպքերը և վաղուան շրջափոխութիւնը որուն պիտի ենթարկուի Արեւելք, եթէ հակիրճ կերպով մը ներկայացնենք այստեղ թէ ի՞նչ էր Սան Սթէֆանօի դաշնագիրը, ի՞նչ սրբագրութիւններ կրեց Պէրլինի դաշնագրին մէջ և թէ ինչպէ՞ս գործադրուեցաւ այս վերջինը: Այսօրուան պատերազմին բանալին եօթանասնական թուականներու անցքերուն մէջն է:



Պուլկար պահեստիներու մարզանքը



ԳԼՈՒԽ Բ.

ՍԱՆ ՍԹԷՖԱՆՈՅԻ ՎԱՂՈՐԴԱՅԵԸ

1878 յունուար 20ին, Ռուս գորավար Կուրքօ կը մտնէր Էտիրնէ, Պալքանեան արդի պատերազմին Բօրթ Արթիւրը, որ այս ատղերը գրուած միջոցին տակաւին հերոսաբար կը դիմադրէ Պուլկար բանակին խտրական պաշարման: Երկու ամիս կար որ Ռուսերը վերջնականապէս խորտակած էին Օսման փաշայի դիւցազնական դիմադրութիւնը, և չորս օր առաջ ալ՝ Շիրքայի մէջ պարտութեան մատնած էին Սիւլէյման փաշայի բանակը, որ 25,000 զերի ձգելով ետ քաշուած էր, Պոլսոյ ճամբան բաց թողով ուսական բանակներուն առջեւ: Կուրքօ առանց մեծ դիմադրութեան հանդիպելու մտած էր Էտիրնէ որ այն ժամանակ օժտուած չէր արդի ամենի ամրութիւններով: Յաջորդ օրը, երկու Թուրք նախարարներ՝ հակառակ ուղղութենէ մը, — Պոլսոյ ճամբէն, — իրենց կարգին Էտիրնէ կը մտնէին, բանագնացի սպիտակ դրօշ մը պարզած: Սուլթան Համիտ զինադադար կը խնդրէր՝ հաշտութեան բանակցութեանց ձեռնարկելու համար:

Բլէվնայի անկումէն վերջ՝ ուսական բանակներուն յառաջխաղացումը մինչև Էտիրնէ, և Էտիրնէէն ալ մինչև Պոլիս, այլևս կասկած չէր վերցնել: Եւրոպա, մանաւորաբար Անգլիա որ ծայր աստիճան վրդովուած էր Ռուսիոյ յաջողութիւններէն, ինչպէս նաև Հիւսիսի մեծ կայսրութեան աւանդական թշնամին՝ Աւստրիա, վաղուց պատրաստուած էին այդ օրուան: Անգլիա իր նաւատորմից շոգիի վրայ կը պահէր Պէշիքայի առջեւ, պատրաստ Տարտանէլ մտնելու. իսկ Աւստրիա, ճիշտ այսօրուան պէս, գորահանութեան ձեռնարկած էր և կը սպասէր սպառնալից: Ռուսական բանակներուն ընդհանուր հրամանատար Նիքօլա Մեծ-Դուքար, փառաւոր գործողութեամբ մը կ'ուղէր պսակել իր յաղթանակը, որ շատ սուղ արժած էր արդէն Ռուսիոյ: Մի՛ միայն Բլէվնայի յաջողութիւնը

խոշոր պարտութեան մը չափ աղետալի եղած էր իրեն: Մեծ-Դուքսը անհամբեր էր Պոլիս մտնելու. Այս Սօֆիան կը հրապուրէր զինքը. և որքան ալ որ Ռուսիա նախապէս խոստացած էր ո՛չ Պոլսոյ, ոչ ալ Տարտանէլի դպչելու, կրկին կը փորձուէր ետ ճամբելու Սուլթանին պատուիրակները, և անոնց ետեւէն Պոլիս մտնելու, այնտեղ կատարելու համար հաշտութեան բանակցութիւնները: Իր մուտքը Պոլիս՝ Մեծն Կոստանդիանոսի մայրաքաղաքին անկումէն 425 տարի վերջ, ճշմարիտ պսակումը պիտի ըլլար ռուսական յաղթութեանց:

Ռուսիոյ վարչապետ Կորչաքով իշխանը սակայն իրաւունք ունենալ կը կարծէր խոհեմութեամբ շարժելու: Երբոր Մեծ-Դուքսը Բեթերսպուրկէն հրահանգ խնդրեց Կէլիպօլուն գրաւելով անգլիական մարտանաւերու ճամբան կտրելու և յառաջանալու մինչև Պոլիս, պատասխանը շատ քաջալերական չեղաւ: Սուլթան Համիտի պատուիրակները յունուար 30ին աւետեցին վերջապէս թէ զինադադարը կնքուած է: Ատով սակայն չէին անհետանար Անգլիոյ երկիւղները: Ինչ պայմաններով Ռուսիա հաշտութիւն պիտի կնքէր: Տարակոյս չկայ որ՝ դանակը Թուրքիոյ վզին դրած, պիտի կրնար ձեռք բերել իր բոլոր ռեզաճը, հակառակ պարագային սպառնալով Պոլիս մտնել: Այս պատճառաւ Անգլիա հրամայեց իր նաւաբաժնին որ անցնի Տարտանէլը: Հազիւ զինադադարը կնքուած՝ անա նոր կնճռոտութիւն մը կը ծագէր այդպէսով: Անգլիական նաւերը Իշխանաց Կղզիներուն առջեւ երկաթ նետած էին, ռուսական բանակին յառաջխաղացումը արգելելու յայտնի մտադրութեամբ:

Երբ այս իրողութեան լուրը Բեթերսպուրկ հասաւ, մեծ սրտմտութիւն առաջ բերաւ Չարին և իր անմիջական խորհրդականներուն շրջանակին մէջ: Ռուսիա չափաւորութիւն ցոյց տուած էր, հակառակ անոր որ իր ծանրագնի յաղթանակները իրեն իրաւունք կուտային մինչև Պոլիս առաջ երթալու: Եւ անա ատոր փոխարէն՝ Անգլիա իր նաւերը կը մտցնէր նեղուցէն, անշուշտ ռուսական յաղթութեան արդիւնքը կարելի եղած չափով չքացնելու մտադրութեամբ: Աղեքսանդր Չարը չգոհացաւ սոսկ կրաւորական սրտմտութեամբ. ընդհակառակը, Անգլիոյ սպառնալիքը առ ոչինչ գրելով, իմացուց Նիքօլա Մեծ-Դուքսին թէ ազատ է յաղթական բանակը Պոլիս մտցնելու ամէն գնով, նոյն իսկ եթէ ատոր համար պէտք ըլլայ ռուսական զէնքերը դարձնել անգլիական նաւերուն դէմ: Մեծ-Դուքսը հրամանը կրկնել չտուաւ. քանի մը օր ետք, բանակը մտցուց Սան Սթէֆանօ և կը պատրաստէր Պոլսոյ վրայ ըլլալիք յարձակումը, երբ անգլիական նաւերը յանկարծ մեկնեցան Պոլսէն: Սուլթանը ինք՝ կայսրութեան մայրաքաղաքը փրկելու համար, աղաչած էր անգլիական դեսպանին որ հեռացնէ նաւերը: Նիքօլա Մեծ-Դուքսը «Չարիկրատ» չմտաւ, թէ և աստիկա պատճառ մը չեղաւ որ Ռուսիա ծանրագոյն պայմաններ չառաջարկէ Թուրքիոյ: Նոյն տարուան մարտ 3ին կնքուած դաշնագիրը Օսմ. կայսրութեան համար մահուան դատաւճռի պէս բան մըն էր: Ռուսիա հինգ ու կէս միլիոն ֆրանք պատերազմական տուգանք կը պահանջէր, և որովհետև վստահ էր թէ Թուրքիա երբեք չպիտի կրնայ

այդ գումարը հատուցանել, պայման կը դնէր որ տուգանքը չվճարելու պարագային իրեն թողու Փոքր Ասիոյ մէջ Պաթումը, Արտահանը, Կարսը և Պայագիտը, ու Եւրոպայի մէջ ալ Տօպուճան՝ զոր Ռուսիա իր կարգին Ռուսմանիոյ պիտի թողուր Պեսարապիոյ փոխարէն: Այսպէսով՝ Ռուսիոյ սահմանը կը տարածուէր մինչև Դանուբ: Ամէնը այս չէր: Պալքանեան երեք կիսանկախ պետութիւններ՝ Ռուսմանիա, Սերպիա և Գարատաղ, բոլորովին անկախ կը դառնային ու մանաւանդ կ'ընդարձակուէին. Ռուսմանիա, ինչպէս ըսինք, Տօպուճան կը ստանար, Սերպիա՝ Նիշի ու Միթրօվիցայի շրջանակները, և Գարատաղ՝ մաս մը հող Պօսնայէն ու երկու նաւահանգիստ Ադրիականի վրայ, Անթիվարին ու Տուչլինիօն: Իսկ Պօսնա Հէրսէք որ Աւստրիոյ աշխարհակալական ըղձանքին գլխաւոր առարկան էր, կը դառնար ինքնավար՝ միանգամայն թէ՛ Աւստրիոյ և թէ՛ Ռուսիոյ հսկողութեան տակ: Թուրքիա տակաւին աւելի մեծ զոհողութեան մը ենթարկուած էր, Պուլկարական մեծ իշխանապետութեան մը կազմութեամբ: Այն Պուլկարիան որուն սահմանները գծուած էին Սան Սթէֆանօի դաշնագրով, և որ իրաւամբ «Մեծ Պուլկարիա» կոչուած է, կը տարածուէր Դանուբէն մինչև Ադրիական, իր մէջ բովանդակելով նախ բուն Պուլկարիան, յետոյ Ռուսէլին և ի վերջոյ Մակեդոնիան: Ինչպէս կը տեսնուի մեր հրատարակած քարտէսէն (էջ 22) Եւրոպական Թուրքիան այդ կերպերը հրատարակած քարտէսէն (էջ 22) Եւրոպական Թուրքիան այդ կերպերը կը մնար Ալպանիան, իսկ արեւելեան կողմն ալ Թրակիան (Էտիրնէի նահանգն ու Պոլիսը): Նորակազմ Պուլկար իշխանապետութիւնը Թուրքիայէն անկախաբար, կ'ենթարկուէր Ռուսիոյ խնամակալութեան: Ինչպէս յայտնի է, Սան Սթէֆանօի դաշնագրին 16րդ յօդուածով՝ հայկական նահանգներն ալ Ռուսական հովանաւորութեան կ'ենթարկուէին. Սուլթանը՝ հանգներն ալ Ռուսական հովանաւորութեան կ'ենթարկուէին: Սուլթանը՝ յաղթական կայսրութեան հետ համախորհուրդ՝ բարեկարգութիւններ պիտի մտցնէր այդ նահանգներուն մէջ, և պիտի ստեղծուէին այն տեսակ պայմաններ որոնցմով հնարաւոր դառնար Հայ ազգին խաղաղ զարգացումը ու բարգաւաճումը: Չանց կ'ընենք Սան Սթէֆանօի դաշնագրին միւս տրամադրութիւնները, որոնք մերձաւոր առնչութիւն մը չունին ներկայ պատմութեան հետ:

Տարակոյս չկայ որ Արեւելեան Եւրոպայի դրութիւնը տակն ու վրայ ընող այդ դաշնագիրը ռուսի մը տպաւորութիւնը պիտի գործէր արեւմտեան երկիրներուն մէջ: Սան Սթէֆանօի դաշնագիրը մինակ Թուրքիոյ գոյութիւնը չէր վտանգեր, այլ նաև հիմնովին կը խանգարէր Արեւելքի մէջ շահեր ունեցող բոլոր եւրոպական տէրութեանց հաշիւները: Ասոնց մէջ, բնական է Անգլիան առաջին կարգին վրայ կը գտնուէր: Պիքօնաֆիլիտի դահլիճը, դաշնագրին պայմաններուն տեղեկանալով, իսկոյն Ռուսական սպառնալիքներ տեղացուց Ռուսիոյ գլխուն: Անգլիական նաւազմաշուկ սպառնալիքներ տեղացուց Ռուսիոյ գլխուն: Անգլիական նաւատորմի զորքերը պատերազմական վիճակի մէջ դրուեցաւ, Ճիպրայթարի և Մալթայի ամրոցները զօրեղ սպառազինութեանց առարկայ դարձան. Լորտ Պիքօնաֆիլիտ նոյն իսկ յայտարարեց թէ Հնդկաստանի անգլիական բանակը Եւրոպա պիտի կանչէ, ամէն պատահականութեան դէմ պատրաստ գըտ-

նուեիու համար, թէև իրականին մէջ, հազիւ 6000 զինուոր միայն կրցաւ բերել, վախճարով որ Հնդկաստանը պարպելով՝ ուսական արշաւանքի մը առիթը ստեղծած կ'ըլլայ:




ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹՈՒՐԻՔԻԱ ՍԱՆ ՍԹԷՖԱՆՈՒ ԴԱՇՆԱԳՐՈՎ

Ինչպէս կը տեսնուի՝ Եւրոպական Թուրքիան բաժնուած էր երկու անջատ մասերու, որոնք ցամաքէն անջատուած էին իրարմէ:

Այս բոլորը անուղղակի սպառնալիքներ էին տակաւին, և Ռուսիա բնաւ տրամադիր չէր երեւար անոնց կարեւորութիւն ընծայելու: Միջոց մը, Անգլիա փորձեց Աւստրիոյ հետ ձեռք ձեռքի տալով անգլիա-աւրստրիական խնամակալութեան մը տակ առնել թովանդակ Օսմ. Կայսրութիւնը և այդ կերպով Ռուսիան զրկել իր յաղթութեան պտուղներէն, սակայն Աւստրիոյ վարչապետ Անտրաշի կոմսը զգուշացաւ այդ յանդուգն քայլէն, որ կրնար անակնկալ դաշնակիցներ ստեղծել Ռուսիոյ, և այլապէս վտանգաւոր կացութիւն մը գոյացնել Եւրոպայի մէջ: Անգլիա, ճարահատ, Թուրքիոյ դիմեց, և անոր գոյութիւնը ապահովելու, մասնաւորաբար Ասիական Թուրքիոյ ամբողջութիւնը պահպանելու խոստման վրայ կնքեց Կիարոսի գաղտնի դաշնագիրը, որ իրեն կ'ապահովէր այդ կողմին անմիջական գրաւումը, և որ վերջէն իր աշխարհակալութեան առջեւ պիտի բանար Եգիպտոսը: Այդ դաշնագրին ապաւինելով է որ Պիքոնսֆիլտի Գահլիճը, արտաքին գործոց նախարար Լորտ Սալզպրիի միջոցաւ խիստ ծանուցագիր մը տուաւ Ռուսիոյ, պատերազմի յայտնի սպառնալիքով մը՝ եթէ երբեք Չարը պնդէր անխախտ պահել Սան Սթէֆանոի դաշնագիրը: Անգլիոյ տեսակէտը շատ մանուածապատ չէր, պարզ ու մեկին՝

ինչպէս կը ներկայացնէր զայն, կը սահմանափակուէր սոսկ Սեւ Մովու տիրապետութեան հարցին մէջ: Սան Սթէֆանոի դաշնագիրը՝ այդ ծովին քացարձակ տէր կը դարձնէր Ռուսիան, ինչ որ Օսմ. Կայսրութեան անկախութիւնը կը չքացնէր բոլորովին. այս հիման վրայ, Անգլիա կը պահանջէր սրբազրել դաշնագիրը, նկատելով որ Թուրքիոյ այդ ողորմուկ վիճակէն մեծապէս պիտի փաստէին Անգլիոյ շահերը Արեւելքի մէջ:

Ի՞նչ կերպով տեղի պիտի ունենար այդ սրբազրութիւնը: Անգլիայէն առաջ՝ Ռուսիոյ վաղեմի հակառակորդը, Աւստրիա, այդ հարցը լուծած էր արդէն, պահանջելով որ եւրոպական վեհաժողով մը գումարուի Սան Սթէֆանոի դաշնագիրը վերաքննելու, ինչպէս նաև եւրոպական տէրութեանց Արեւելքի մէջ ունեցած շահերը Թուրքիոյ ստացած նոր վիճակին պատշաճեցնելու համար: Աւստրիա մասնաւորաբար կը պահանջէր գրաւել Պոնան ու Հէրսէքը. միւս կողմէ Ռուսիոյ կողմէ Պուլկարիոյ վրայ ի դործ դրուելիք խնամակալութիւնը հակակշռու համար, կ'ուզէր իր կարգին իր հովանաւորութեան տակ առնել Գարատաղն ու Սերպիան, և Սելանիկի ու Արշիպեղազոսի ճամբան բաց պահել իր անտեսական ու քաղաքական յառաջխաղացութեան առջեւ:




ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹՈՒՐԻՔԻԱ ՊԵՐԼԻՆԻ ԴԱՇՆԱԳՐՈՎ

Այս քարտէսը ցոյց կուտայ թէ լծն շահեցաւ Թուրքիա Պերլինի դաշնագրին մէջ և թէ լծն կրտսնցուց Պալատնետն ազգերէն իւրաքանչիւրը:

Եթէ սոսկ Անգլիան ունենար իր դէմը, Ռուսիա բնաւ տեղի չպիտի տար, որովհետև հեռաւոր Անգլիոյ հետ պատերազմի մը հաւանականութիւնը զինքը այնքան չէր խրաչեցնէր: Սակայն սահմանակից Աւստրիան

իրաւամբ մտահոգութիւն կը պատճառէր իրեն, մանաւանդ որ, Սան Սթէֆանօի դաշնագրին յայտնութենէն վերջ, Աւստրիա աւելի մեծ չափով առաջ տարած էր իր զօրահանութիւնն ու սպառազինութիւնները



Պուրկար բօք մը կ'օրհնէ պատերազմի դացող պահեստիները

հարաւային սահմաններուն վրայ: Ռուսիոյ այս տրամադրութեան ապացոյցներէն մէկն ալ այն է որ միջոց մը առաջարկեց Գերմանիոյ որպէս զի ճնշում բանեցնէ Աւստրիոյ վրայ՝ և զայն ստիպէ չէզոք մնալու, մինչև որ ինք աստիճան իր հաշիւը տեսնէ Անգլիոյ հետ: Սակայն Պիզմարք՝ որ Արևելքի մէջ սլաւ ազդեցութեան տարածումը վտանգ մը կը նկատէր

գերման ազդեցութեան ծաւալման դէմ, չհաճեցաւ: Ընդհակառակը, իր կարգին ոյժ տուաւ Վեհաժողովի առաջարկութեան, յայտարարելով թէ Գերմանիա բացարձակ անչափանդրութեամբ պիտի վարուի Վեհաժողովին մէջ, և թէ ինք, անձնապէս, «պատուաւոր միջնորդի» դերէն դուրս չպիտի ելլէ բնաւ: Ռուսիոյ կը մնար կամ իր յաջողութիւնները վտանգել բոլորովին, և կամ զիջիլ: Վերջին ճամբան է որ ընտրեց, այն վստահութեամբ թէ Վեհաժողովին մէջ իր կողմը պիտի ունենայ Պիզմարք իշխանը որ նախագահը պիտի ըլլար, և որուն անձնական ազդեցութիւնը մեծապէս կրնար ազդել բանակցութեանց ընթացքին վրայ:

Այս տեսակէտով՝ մեծապէս յուսախար պիտի ըլլար: Յունիս 13ին (Ն. Տ.) գումարուած Վեհաժողովը, — որուն Թուրքիա իր կողմէ զրկած էր երեք պատուիրակ՝ Մէհմէտ-Ալի և Գարաթէօտօրի փաշաները ու Սաստուլլահ պէյը, և որուն դուռը ափ առած էր նաև Արիմեան Հայրիկի նախագահութեան տակ գտնուող Հայ պատուիրակութիւն մը, — հիմնովին սրբագրեց ու քայքայեց Սան Սթէֆանօի դաշնագիրը: Մեր ծրագրէն դուրս է այստեղ թուել Ռուսիոյ եղած զրկանքները, ինչպէս նաև Անգլիոյ, Ֆրանսայի, Իտալիոյ և Աւստրիոյ ձեռք բերած նիւթական ու բարոյական առաւելութիւնները: Սաչափ միայն բռնեք թէ ամիս մը ետքը՝ Յունիս 13ին՝ վերջնական հանգամանք ստացած Պէրլինի դաշնագիրը, որքան ալ աննպաստ Թուրքիոյ, կրկին կը փրկէր զայն այն խեղճ դրութենէն՝ որուն ենթարկուած էր Սան Սթէֆանօի դաշնագրով: Եւրոպայի մէջ՝ Ռուսիա սոսկ Պեսարապիան կը պահէր, որով իր սահմանը կ'ընդարձակուէր մինչև Գանուրի հիւսիսային գետաբերանը: Այսքան մը առաւելութեան փոխարէն՝ Աւստրիա անհունապէս աւելի փառաւոր պահուած մը կ'իւրացնէր, ո՛չ միայն անորոշ ժամանակի մը համար գրաւելով Պօնան ու Հէլլասը, այլ տակաւին աղատութիւն ձեռք բերելով գրաւելու նաև Նօլի Բաղարի սանձագը, եթէ երբեք պէտք տեսնէր:

Մեր ձեռնարկած պատմութեան համար ամէնէն աւելի հետաքրքրական է Պալքանեան ժողովուրդներու կրած հիասթափութիւնը: Որովհետև Պէրլինի դաշնագիրը կրճատեց այն բաժինները զորս պիտի ստանային Թուրքիոյ կողմուտէն, Սան Սթէֆանօի դաշնագրին չնորհիւ:

Յունաստան՝ ցեղակցութեան իրաւունքին վրայ հիմնուելով, կը պահանջէր Կրէտէն, Եպիրոսը, Թէսալիան և Մակեդոնիոյ մէկ մասը, առնուազն Կալքիտեան թերակղզին (Սելանիկ), ու դիտելի է որ ներկայ պատերազմին մէջ, ի բաց առեալ Եպիրոսի մէջ Եանեան՝ որ արի դիմադրութիւն մը ցոյց կուտայ մինչև այս օրերը գրուած պահուն, յունական բանակները այդ վայրերը գրաւեցին արագ ու փայլուն գործողութեանց շարքով մը, որուն յաջողութեան մեծապէս նպաստեց նաև իրենց դէմ ճակատած թրքական ոյժերուն համեմատական սակաւութիւնն ու տկարութիւնը: Ռուսիա՝ 1878ին դեռ լաւ տրամադրուած չէր Յունաստանի նկատմամբ. միայն Սլաւ տարրը նպաստաւորել կ'ուզէր. այս պատճառաւ առաջինը ինք ընդդիմացաւ յունական յաւակնութեանց, և յայտնաբար հակառակ ընթացք բռնեց Վեհաժողովին բանակցութեանց մէջ: Այն ատեն,

Յոյները միջոցը գտան Պրանսան սիրաշահելու, և առաւելագոյն ֆրանսացի պատուիրակներուն անդումներուն շնորհիւ է որ Յունաստան արտօնուեցաւ իր սահմաններուն ընդարձակման մասին ուղղակի բանակցելու թուրքիոյ հետ: Վեհաժողովը մերձաւոր սահման մըն ալ որոշեց այդ բանակցութեանց համար, — Քալամաս - Սէլէմպրիա գիծը, — որոշելով որ եթէ երկու կողմերը չկարենան համաձայնիլ, տէրութիւնները միջամբտեն իբր իրաւարար: Իսկ կրէտէն մնաց թուրքիոյ, պայմանաւ որ 1868ի բարենորոգումները զործադրուին այնպէս:


Գարատաղ որ ցնծութեան մէջ էր Սան Սթէֆանօի դաշնագրին վաղորդայնին, իրեն խոստացուած երկիրներէն միայն Հէրսէքէն մաս մը բան, — Նիքշիցի ու Բիվայի շրջանակները, — և Ազրիականի վրայ ալ Անթիվարիի ու Տուլչինիօի նաւահանգիստները ստացաւ: Սերպիոյ թողուեցաւ Բիրօթի պուլկարական շրջանակը, Նիշն ալ հետը, այսինքն Նիշչավայի հովտին գրեթէ ամբողջութիւնը: Ռուսմանիա ստիպուեցաւ Ռուսիոյ թողուլ հարաւային Պեսարապիան, փոխարէնը ստանալով Դանուբի գետաբերաններն ու Տօպրուճան մինչև Սկլիսթրէի բարձունքը: Գոնէ Գարատաղ, Սերպիա և Ռուսմանիա սա առաւելութիւնը ձեռք բերին որ Պէրլինի դաշնագիրը ղերենք բացարձակագոյն անկախ հռչակեց:

Կը մնար Պուլկարիան, և վեհաժողովին խորհրդակցութեանց մեծագոյն առանցքը ան էր արդէն: Այն խոշոր իշխանապետութեան տեղ՝ զոր կը փափաքէր ստեղծել Սան Սթէֆանօի դաշնագիրը, — Մեծ Պուլկարիային տեղ, — նեղկճուկ հողամաս մը միայն վերածուեցաւ պուլկարական առանձին իշխանապետութեան մը. այդ հողամասը, ինչպէս կը տեսնուի մեր հրատարակած քարտէսէն (էջ 23) սեղմուած էր Դանուբի և Պալքաններուն միջև, մէկ կողմէն ունենալով Սօֆիան ու Իսքէրի աղբիւրները, և միւս կողմէն ալ Սթրուճան: Ինք պիտի կաղձակերպէր իր քաղաքական հիմնարկութիւնները, ո՛չ թէ սոսկ Ռուսիոյ, այլ եւրոպական միջազգային յանձնաժողովի մը հսկողութեան տակ, և հարկատու պիտի ըլլար թուրքիոյ: Իսկ իր հարաւակողմը՝ Մարիցայի վերին հովտին վրայ գանուող Արեւելեան Բուճէլիի նահանգը, Ֆիլիպէն ալ հետը, ինքնավար վարչութեամբ մը պիտի օժտուէր, քրիստոնեայ կառավարչով մը զոր Սուլթանը պիտի ընտրէր ինք տարուան համար, եւրոպական տէրութեանց հաւանութեամբ:

Այսպէս ուրեմն՝ Պէրլինի վեհաժողովը Օսմ. կայսրութեան կը թողուր Մակեդոնիան՝ զոր Սան Սթէֆանօի դաշնագիրը Պուլկարիայ բաժին հանած էր: Պահելով Մակեդոնիան՝ թուրքիա, թէև նեղ, բայց բաւարար երկիր մը կ'ունենար Ալպանիոյ շրջանակն ու Եպիրոսը՝ մայրաքաղաքին կապող, և եւրոպական թուրքիան, որքան ալ բզբտուած ու մասմաս յափշտակուած, նորէն բաւական կարեւոր, գեղեցիկ ու հարուստ ստացուածք մըն էր. որուն շնորհիւ Օսմանեան կայսրութիւնը կրնար իր եւրոպական տէրութեան հանգամանքը պահպանել:

Գարով հայկական նահանգներուն, Պէրլինի դաշնագրին տիրահռչակ 61րդ յօդուածին պատմութիւնը արդէն չափազանց ծանօթ է մեր ազգին,

և հարկ չի մնար որ այստեղ մասնաւորապէս ծանրանանք անոր մասին: Համիտ խոստացաւ կեանքի դիւրատար և բարեկարգ պայմաններ ստեղծել անոնց մէջ. պաշտպանել Հայ ժողովուրդը աւարառութեանց, սպա-



Զօրակոչը Օսմանեան ոստաններու մէջ

նութեանց դէմ, և շխեղել անոր քաղաքակրթական ճիգերը վայրենի և յետամուտ ոստաններու մէջ: Գիտենք արդէն թէ այս խոստումները ինչպէս յարգուեցան նախ համիտեան բռնակալութեան, և է՞հաքն ալ զայն տապալող այն միւս բռնակալութեան՝ Ժէօն-Թիւրք վարչութեան օրով:

գուրանք: Անգլիա սոսկ իր շահուն համար կ'աշխատէր ամբողջ և ամբողջ պահելու Թուրքիան, ինչպէս բացորոշ կերպով կը յայտնէր Պոլսոյ անգլիական դեսպան Պ. Հայարտ՝ 1877 յունիսին, ռուսելթուրք



Գարատաղցի զինուորներու զէնքերուն քննութիւնը

Թշնամութեանց նախօրեակին. — «Թուրքիոյ զօրավիգ ըլլալու քաղաքականութիւնը որ զնահատուած և իւրացուած է ամենամեծ պետական մարդոց կողմէ, և որուն կը հետեւինք ո՛չ թէ Թուրքերուն և իրենց կրօնքին նկատմամբ վերացական սէր մը տածելնուս, այլ սոսկ մեր սեփական նպատակներուն ու ապահովութեան համար, անոնցմէ չէ զորս

պիտի կրնային տապալել սա վերջին ամիսներու դէպքերը, որոնք արդէն բնաւ առնչութիւն չունին անոր հետ: Այդ քաղաքականութիւնը մամբ հիմնուած է այն հաւատքին վրայ թէ Թուրքիա պատուար մըն է Ռուսիոյ Արեւելքի մէջ հետապնդած փառասիրական նպատակներուն դէմ, և թէ Սուլթանը՝ իբր պետ մահմէտական կրօնքին, եթէ ոչ օգտա-



Թուրք զինուորներ զէպել կուռի դաշտը

կար, գոնէ անհրաժեշտ դաշնակից մըն է Անգլիոյ համար, որ միլիոնաւոր Մահմէտականներ ունի իր նպատակներուն մէջ...»: Օժանդակելով Թուրքիոյ, Անգլիա ծառայած կ'ըլլար իր իսկ շահերուն, որովհետեւ Թուրքիա բնական ամրոց մըն էր իր հնդկական ստացուածքին համար, միշտ ենթակայ ռուսական արշաւանքի մը սպառնալիքին:

Եւ արդէն՝ հոն ուր Ռուսիա իր շահը կը փնտռէր, անպատճառ դէմ առ դէմ կուգար Անգլիոյ հետ. իր շահերը սոսկ Անգլիոյ վնասովը միայն կրնային իրականանալ. և ահա թէ ինչո՞ւ Բրիտանական Կայսրութիւնը միշտ իր ճամբան կը կտրէր: Ծովը էր Ռուսիոյ ըզձանքը. անսահման ցամաքը որուն կը տիրէր, պէտք ունէր բաց ճամբու մը դէպ ի ովկիանոսներու անսահմանութիւնը. տիրանալ նեղուցներուն ու մանկ Եգէական, ուրկէ այլևս Միջերկրականը կը բացուէր իր առջև. ասոր կը տեսնուէր, ասոր կը ձգտէր նաև Սան Սթէֆանօի կայսրութեան բանալիները ձեռք այն վախը ունէր որ Ռուսիա Հնդկական կայսրութեան բանալիները ձեռք կը բերէ՝ հաստատուելով Պոլսոյ, Հայաստանի, Պարսկաստանի և կամ Աֆղանիստանի մէջ. նեղուցները բաց՝ Պոլիս Ռուսիոյ տիրապետութեան ենթակայ կը մնար: Մինակ սա չէր Ռուսիա իր թեւարկութեան տակ կ'առվտանգը: Անոր 16րդ յօդուածով Ռուսիա իր թեւարկութեան տակ կ'առնէր Հայաստանը: Եւ այս երկու վտանգներն ալ ուղղակի Հնդկաստանի ապահովութեան կը սպառնային: Ահա թէ ինչո՞ւ ջնջուեցաւ Ներսէս Պատ-


րիարքի մեծ ձեռնարկութեան պատկուճը եղող համբաւաւոր 16 ըզ յօդուածը : Անգլիոյ համար՝ խնդիրը միայն Ռուսիոյ վրայ չէր, եւրոպական ո՛ր և է տէրութիւն որ Թուրքիոյ ժառանգ պիտի դառնար, նոյնքան վտանգաւոր պիտի երեւար իրեն և նոյն ընդդիմութիւնը պիտի յարուցանէր անոր դէմ : Թուրքիոյ լաւագոյն տէրը Թուրքիան էր. քանի Թուրքիա կար՝ կրնար ապահով ըլլալ. ասոր համար է որ միշտ աշխատած է Թուրքիոյ գոյութիւնը պահպանելու, և, քրիստոնեայ ցեղերու գանգաւորներէն ու խլրտուճներէն առաջ գալիք վտանգը անհետացնելու համար ալ, խորհուրդ տուած է ազատական ու թոյլատու կարգերով օժտելու երկիրը : Կիւլհանէի Սաթթը Հիւճայունն ու Թանզիմաթը իր գործն են մեծ մասամբ :

Անցողակի ըսենք որ Անգլիոյ այդ տրամադրութիւնը Թուրքիոյ նըկատմամբ՝ նոյնը չէ այսօր : Եւ պատճառը, ինչպէս պիտի տեսնենք, Թուրքիան էր, ուրքով գլխով գերման ազդեցութեան գիրկը ինկած Թուրքիան : Գերման մրցակցութիւնը Արեւելքի մէջ՝ Սլաւ մրցակցութեան հաւասար վտանգաւոր դարձաւ Անգլիոյ, որ ստիպուած՝ փոխեց իր քաղաքականութիւնը՝ նախ 1904 Ապրիլ 8ին Ֆրանսայի և յետոյ՝ 1907 Օգոստոս 31ին Ռուսիոյ հետ կնքելով պայմանագրութիւններ, որոնք նոր էջ մը բացին մասնաւորաբար Արեւելեան խնդրին համար, գոյացնելով Երրեակ Համաձայնութիւնը : Անգլիա և Ռուսիա՝ իրարու մօտենալով՝ կրցան բաւեալ փոխադարձ կասկածները, և համաձայնութեան գալ նաև Հնդկաստանի հարցին նկատմամբ, ինչ որ գործնական ձեւի մը վերածուեցաւ Պարսկաստանի բաժանմամբ : Ետ հաւանական է որ Ռուսիոյ դիտումները փոքր Ասիոյ մէջ, այլևս բնաւ արգելքի չհանդիպին Անգլիոյ կողմէ, ինչպէս եղաւ 1878ին, Պէրլինի վեհաժողովին մէջ, և անկէ առաջ ալ՝ 1854ին, Սրիմի պատերազմին ընթացքին :

Տեղեկացանք այն նկատումներուն՝ որոնցմով Անգլիա հակառակեցաւ Սան Սթէֆանօի դաշնագրին և զայն քանդեց : Հիմայ ծանօթանանք նաև Աւստրիոյ նկատումներուն, որոնք նուազ կենսական չէին որքան իրեն, այնքան նաև բովանդակ Գերման ցեղին, մասնաւորաբար Պրիմարքի հանձարին շնորհիւ դարբնուած Գերման կայսրութեան համար : Կ'արժէ այստեղ դիտել տալ որ մինչդեռ եօթանասնական թուականներուն Անգլիոյ ունեցած նկատումները հիմնովին չըջուած են այսօր, Հնդկաստանի մասին Ռուսիոյ հետ համաձայնութեան մը գալէն ի վեր, ընդհակառակը, Աւստրիոյ և ընդհանուր Գերման տարրին նկատումները կը մնան անփոփոխ : Աւստրիական վէճը որ հիմայ քաղաքական հորիզոնը կը մթազնէ, և որ վաղը կրնայ աւստրոսլաւ վէճի մը վերածուիլ, նոյն պատճառները ունի էապէս, ինչ պատճառներ որ ունէր աւստրիական ընդդիմութիւնը 1878ի Սան Սթէֆանօի դաշնագրին :

Եւ այդ պատճառները ուրիշ բան չեն՝ այլ Գերման ու Սլաւ տարրերուն դարաւոր մրցակցութեան արդիւնքները : Կայ հազար տարի մը որ Գերմաններն ու Սլաւները կատաղի պայքար մը կը մղեն Կեդրոնական Եւրոպայի տիրապետութեան համար : Սկիզբէն՝ Գերման ցեղը, մասնաւորապէս Հռոմէական կայսրութեան շրջանին, յաղթական տարրն էր Եւրո-

պայի այդ մասին վրայ. բայց տակաւ սկսաւ դէպի արեւմուտք տարածուիլ, և Սլաւները իրեն հետեւեցան Գանուրի եզերքէն : Նոյնիսկ մերձա-



Գոհաբանական աղօթք Սթարա Զակօրայի Սանթա Մարիա Եկեղեցիին մէջ
ի ներկայութեան Պուլկարիոյ վեհապետին


ւոր ժամանակներու մէջ՝ Աւստրիոյ տիրող Հապսպուրկեան գերդասանը երկար ատեն տէր մնաց Իտալիոյ և Սպանիոյ : Սակայն քիչ առ քիչ՝ լատին մեծագոյն երկիրը, Ֆրանսա, նախ Լուի Ժ. Ի և յետոյ Մեծն Նապոլէօնի օրով, Գերման տարրը վանեց դէպի Արեւելք՝ Սլաւներուն վրայ :

Եւ ահա Գերմանները շատ աննպաստ դիրքի մը մէջ գտան ինքզինքնին: Հարաւէն Լատին ցեղին, հիւսիսէն ալ Սլաւ ցեղին միջեւ սեղմուած երբ դարձան Պալքաններու վրայ, տեսան որ Արեւելքի կողմէն ալ ճամբան գոցուած է Պալքանեան սլաւ մանր ազգութեանց կողմէ: Եթէ ակնարկ մը ձգէք Եւրոպայի քարտէսին վրայ, դիւրաւ պիտի կրնաք ըմբռնել Գերմաններու կացութեան բովանդակ տաժանագին դժուարութիւնը: Ամբողջ Եւրոպայի վրայ՝ նրբանցք մը միայն կը մնայ իրենց, ամրապէս փակուած միանգամայն թէ՛ աջէն, թէ՛ ձախէն և թէ՛ ստորոտէն: Եւ այս նրբանցքը հեռզհեռէ կը սեղմուի ու կը սպառնայ զիրենք խեղդել: Վըտանգը կու գայ մասնաւորաբար Սլաւ տարրէն, որ ոչ միայն այդ նրբանցքին երկու կողմերը մէկանց կը փակէ, այլ Գերման տարրին առջեւ կը գոցէ նաև այն մէկ հատիկ ճամբան որ իրեն առիթ պիտի տար ազատելու հարաւէն և հիւսիսէն եղած սեղմումէն, ու շունչ առնելու: Այդ ճամբան, հարկ կայ ըսելու, Արեւելքի ճամբան է, և այն պատուհանը ուրկէ շունչ պիտի առնէր՝ Սելանիկը՝ Եգէական ծովուն վրայ: Սլաւ տիրապետութիւնը Արեւելքի ու Պալքանեան Թերակղզիին մէջ, վտանգաւոր էր անով մանաւանդ որ մինակ այդ անհրաժեշտ պատուհանը չէր գոցեր Գերման տարրին առջև, այլ՝ Ալպանական եզերքներուն գրաւմամբ, Ադրիական Ծովը ալ կը փակէր անոր առջև:

Գերմանները նոր չէ որ կը զգային Արեւելքի ճամբուն անհրաժեշտութիւնը: «Տրանկ նախ Օսթրի» — «Մղում դէպի Արեւելք», — իրենց համար դարաւոր քաղաքականութիւն մըն է: Հարաւային Եւրոպայի մէջ կատարուած արկածախնդրութիւններ, մանաւանդ Օսմ. Կայսրութեան սկզբնական շրջաններու անպարտելի զինուորական զօրութիւնը զիրենք թէև անկէ հեռու պահած էին, բայց Պալքաններու վրայ իյնալնէն անմիջապէս վերջ իսկոյն իրենց աչքը դէպի Արեւելք ձգած էին նորէն, ուր շուտով իրենց դէմ պիտի գտնէին Սլաւ մրցակցութիւնը: Ու դարձեալ Պիզմարքի հանճարն է որ այդ բնական ճամբուն մուտքը բացաւ Գերման տարրին առջև, այնտեղ մղելով Աւստրիան, որ յառաջապահը պիտի մնար Արեւելքի տիրապետութեան:

Ուրկէ՞ ուր Պիզմարքի այս շահագրգռութիւնը Արեւելքի մասին, ինք որ երբեմն չէր վարաներ յայտարարելու թէ Արեւելքի բոլոր գործերը Բօսնիանիացի զինուորի մը կեանքը չեն արժեր: Պիզմարք անսխալական չէր: Գերման Կայսրութեան կազմութիւնը իրականացնելէ վերջ, սկսած էր հոգալ նաև անոր ապագան. և ահա շուտով զգացած էր թէ պիտի գայ օր մը ուր Գերմանիա, իր տնտեսական բարգաւաճման համար պէտք պիտի ունենայ ցամաքային ճամբու մը որ Հիւսիսային Ծովը Միջերկրականի կապէր: Այդ ճամբան Համպուրկ - Սելանիկ գիծն էր, որ Ադրիականի միջոցաւ կրնար ուղիղ Միջերկրական իջնել: Բացի այս նկատումէն ուրիշ անհրաժեշտութիւն մը զինքը կը ստիպէր Աւստրիոյ բովանդակ ուշադրութիւնը դէպի Արեւելք կեդրոնացնելու: Սատովայի պարտութենէն ի վեր՝ Աւստրիա սպառնալիք մըն էր նորակազմ Գերման Կայսրութեան համար: Պիզմարք միշտ այն վախը ունէր թէ Աւստրիա պիտի ուզէ վրէժ

առնել, ի հարկին միանալով Արտանի պարտեալին, Ֆրանսայի, որ նոյնպէս վրէժի ծարաւի էր: Եւ Գերման Կայսրութիւնը ներքնապէս տակաւին այնքան ամուր հաստատութիւն մը չունէր որ Երկաթեայ Նախարարապետը այդ սպառնալիքը արհամարհէր: Աւստրիան մղելով դէպի Արեւելք, Գերմանիա թէ՛ այդ սպառնալիքէն ազատած, և թէ՛ միանգամայն իր կենսական շահերուն ճամբան հարթած կ'ըլլար:



Թուրք զինուորներ խրատի մը մէջ

Ահա այս տրամադրութեանց մէջ էր Պիզմարք, երբ Սան Սթէֆանօի դաշնագիրը իբր ուղմբ պայթեցաւ Եւրոպայի գլխուն, և Անգլիոյ հետ սկսաւ պողչտալ նաև Աւստրիա: Հաւատարիմ Պիզմարքի թելադրութեանց, Աւստրիա արդէն իսկ խոշոր քայլ մը առած էր դէպի Արեւելք, օգտուելով Պօսնա-Հէրսէքի և բովանդակ Պալքանեան երկիրներու խլրտուումներէն: 1876 յուլիսին, Ռէյլթատի մէջ, այդ անդրանիկ քայլը բոլորովին ամրապնդուած էր Ֆրանց-Յօզէֆ և Ադեքսանդր Բ. կայսրերուն տեսակցութեամբ: Ռուսիա Թուրքիոյ հետ պատերազմի ձեռնարկելէ առաջ, կ'ուզէր ապահովել Աւստրիոյ չէզոքութեան, Ռուսիա Պօսնա-Հէրսէքի նկատմամբ հրաժարի ամէն յաւակնութենէ, ի շահ Աւստրիոյ: 1877 յունուարին այս համաձայնութիւնը գրաւոր պայմանագրութիւն մը կը նկատէր ձած էր արդէն, ինչ որ Աւստրիա իրաւամբ յաղթանակ մը կը նկատէր դէպի Արեւելք իր յառաջխաղացութեան մէջ: Պօսնա-Հէրսէքի գրաւմամբ իր առջեւ կը բացուէր Ալպանիոյ ճամբան, ուրկէ դէպի Սելանիկ, դէպի անհրաժեշտ պատուհանը Եգէականի վրայ՝ քայլ մը միայն կը մնար առնելիք:

Սան Սթէֆանօի դաշնագիրը ճիշդ այդ ճամբան էր որ կը փակէր Գերման տարրին առջև: Իր ձեւացուցած Մեծ Պուլկարիան, բոլորովին

կը կողիացնէր Սելանիկը, և առանց Սելանիկի՝ Գերման արշաւը դէպի Արեւելք՝ բոլորովին անպէտ կը դառնար: Այս չէր միայն դաշնագրին բովանդակ վտանգը: Ռուսիա՝ Նովի Բաղարի նեղ անցքն ալ, — Ալպանիոյ ճամբան, — կիսովին կը փակէր Աւստրիոյ առջեւ, անոր ամէնէն դիւրամերձ վայրերը Գարատաղի ձգելով: Ասոնցմէ զատ, նոյն ինքն Աւստրիոյ կողմէ դէպ Արեւելք առնուած անդրանիկ քայլը կը կաշկանդէր, Պօսնա-Հէրսէքի մէջ հաստատուելու վերայ եղող աւստրիական թեւարկութեան միացնելով նաև ռուս թեւարկութիւնը: Սան Սթէֆանօի դաշնագիրը, սլաւ տարրին տիրապետութիւնը հաստատելով Արեւելքի մէջ, վերջնական ու անդարմանելի կերպով մը անոր ճամբան կը փակէր Գերման տարրին առջեւ:



ԳԱՐԱՏԱՂԻ ՆՌՈՒՍ ԹԱԳԱՒՈՐԸ

մը: Իր յայտարարութիւնը թէ ինք սոսկ անշահախնդիր «պատուաւոր միջնորդ» է դեր մը միայն պիտի խաղայ խորհրդակցութեանց ընթացքին, խաբեց Ռուսիան, որ փութաց ընդունել Վեհաժողովի առաջարկը, այն յոյսով թէ Պիզմարք իր կողմը պիտի տաչէ: Իրօք ալ երկաթեայ Նախարարապետը՝ Վեհաժողովին մէջ միշտ զգուշացաւ յայտնաբար հակառուս

ընթացք բռնելէ, թէեւ երեսանց Ռուսիոյ թոյլատու երեւարով հանդերձ, գերման շահերէն մատ մը բան անգամ չզոհեց, և միւս կողմէ աշխատեցաւ վառ պահելու Անգլիոյ և Ռուսիոյ միջեւ գոյութիւն ունեցող հակառակութիւնը, իրաւամբ մտածելով որ անգլուստ թշնամութիւն մը ապագային բոլորովին պիտի դիւրացնէր գերման ազդեցութեան ծաւալումը Արեւելքի մէջ:

Այն հապճեպին մէջ՝ որով քանդուեցաւ Սան Սթէֆանօի դաշնագիրը, Ռուսիայէն զատ ամէն տէրութիւն ինք շահաւոր եղած ըլլալ կը կարծէր: Այդ համոզումով է որ մասնաւորապէս Լորտ Պիքօնսֆիլտ, Սլաւ վտանգէն խուսափելու իր փութկոտութեան մէջ, թանկագին օժանդակ մը եղած էր Աւստրիոյ, հեռուաբար նաև Գերման տարրին: Վերջէն սակայն Անգլիա հասկցաւ որ շատ խոշոր սխալ մը գործած էր: Պէրլինի դաշնագրէն իրապէս ոչ ինք բան մը շահած էր, ոչ Թուրքիա, ոչ ալ ուրիշ ոչ ոք, այլ սոսկ Գերմանիա: Իրաւ է որ Լորտ Պիքօնսֆիլտ յաջողած էր Սուէզի է որ Լորտ Պիքօնսֆիլտ յաջողած էր Սուէզի ջրանցքէն և Հնդկաստանի ճամբաներէն հեռացնել ռուսական վտանգը, նոյն իսկ՝ Ռուսիոյ դիտումներուն վրայ աւելի մօտէն հրսի կերպ համար՝ ձեռք ձգած էր Կիպրոսը, բայց այդ ամէնը չէին կրցած Հնդկաստանի գլխէն սպառնալիքը անհետացնել: Չէզոքացումը էր Սլաւ վտանգը, բայց ահա անոր ետեւէն կը ծագէր նոյնքան սպառնալից և ահաւոր ուրիշ վտանգ մը, Գերման վտանգը: Ի փոխարէն իր կարծեցեալ «անշահախնդրութեան», Գերմանիա քիչ առ քիչ սկսաւ ծաւալել Թուրքիոյ մէջ. իբր փրկել երեւցած էր կողմը կը բանար, հրապուրուած անոր աչքին, և Թուրքիա սիրով իր գիրկը վիրէլմ կայսր անձնամանաւանդ այն աննկատ բարեկամութենէն զոր անցնելով, Գերման պէս ի սպաս դրած էր Սուլթան Համիտի: Ժամանակ անցնելով, Գերման նիւոյ այդ ծաւալումը Թուրքիոյ մէջ՝ դարձաւ համապարփակ: Գերման արշաւը դէպի Արեւելքի գլխաւոր շահաստանները՝ ճշմարիտ ողորման մը հանգամանքը ստացաւ: Գերման դրամագլուխը ձեռք անցուց բաղամթիւ ձեռնարկութիւններ, գլուխ կանգնեցաւ երկաթուղիներու շինութեան, և մրցակից տէրութեանց ընդդիմութեան հակառակ՝ յաջողեցաւ կորզել նաև Պաղտատի գիծին մենաշնորհը, որ Ասիական Թուրքիոյ ամէնէն կենսական մասը իր անտեսական ու քաղաքական ազդեցութեան անցուց նաև կէր: Այս ծաւալումը լրացնելու համար՝ Գերմանիա ձեռք անցուց նաև Օսմանեան բանակին վերակազմութիւնը: Գերման սպաններու խումբ մը փութաց Թուրքիոյ զինուորական ծառայութեան մտնել, իրեն գլուխ



Պուլկար պահեստի մը

Պարսկաստանը, և այդ կողմէն ապահով՝ երկուքը մէկ ձեռք ձեռքի կուտային մարտնչելու համար գերման ազդեցութեան համապարփակ ծաւալման դէմ, միայնգամայն թէ՛ Ասիոյ և թէ՛ Պալքաններու մէջ: Այս անգլեւուս մերձեցումը՝ զոր Ժէօն-Թիւրքերու յիմարօրէն գերմանասէր ընթացքը բոլորովին ամրապնդեց, աղիտաբեր պիտի ըլլար Թուրքիոյ, ինչպէս դէպքերը ցոյց տուին անկէ ի վեր:



Պուլկար պահակախումբ մը



ԳԼՈՒԽ Գ.

ՊԵՐՍԻՆԻ ԳԱՇՆԱԳՐԻՆ ԱՐԳԻՒՆՔԸ

Գերման ոգին որ գլխաւոր դարձնողը եղած էր Պերլինի դաշնագրին, ճիշդ իր յետին մաքերուն յարմարող սահմաններու մէջ ամրափակեց Պալքանեան ազգերը: Անոնց այնքան տեղ միայն տուաւ, որքան որ պէտք էր Գերման ծաւալման բնական ուղին բացարձակապէս ազատ պահելու համար: Աւստրիա տիրացած էր Պօսնա Հէրսէքի և Նօլլի Բազարի որ ուղղակի Ալպանիա և անկէ ալ Սելանիկ առաջնորդող մէկ հատիկ անցքն էր: Այլեւս անարգել կրնար այդ անցքն ի վար իր յառաջխաղացութիւնը շարունակել, տակաւ առ տակաւ իր ազդեցութիւնը տարածելով Ալպանիոյ վրայ, ուր կրնար հաստատուիլ յարմար առիթով մը:

Կար սակայն խոշոր վտանգ մը այս ծաւալման դէմ, և այդ ալ պալքանեան ազգերու դաշնակցութիւնն էր: Բայց Պիզմարքի դիւային հանձարը այդ ալ նախատեսած և անոր առջեւ ալ թուժք մը բարձրացուցած էր: Պերլինի դաշնագրին հողային բաժանումները անանկ հաշուով մը կատարուած էին որ Պալքանեան բոլոր ազգերը վիճելի շրջանակներ կ'ունենային իրարու միջեւ: Սերպիոյ ձգուած հողի մը վրայ Պուլկարիա յաւակնութիւններ ունէր. դարձեալ Պուլկարիոյ ձգուած հողի մը վրայ Ռումանիա յաւակնութիւններ ունէր, վերջապէս ամէնքն ալ անանկ մը տեղաւորուած էին որ մշտապէս անհամաձայն պիտի գտնուէին իրարու հետ և իրենց ժամանակը պիտի անցընէին մէկզմէկու դէմ մաքառելով: Այդ միջոցին՝ Աւստրիա, անոնց հակառակութիւնը բոլորովին զրգռելու միջոցներ պիտի գտնէր և միւս կողմէ անխօսուկ պիտի շարունակէր իր ծաւալումը: Այս խաղը կը դիւրանար անօ՛վ մանաւանդ, որ վաղուցուան ատելութիւններ արդէն իսկ այդ ազգերը խորապէս կը բաժնէին իրարմէ: Սերպերն ու Պուլկարները, Ռումէներն ու Յոյները, Յոյներն ու Պուլկարները, Ռումէներն ու Յոյները, Յոյներն ու Պուլկարները:

հուն համար, տեղի տուաւ այդ կատաղի ատելութեան, ինամապետութիւն մը կազմեց Սթամպուլօֆի նախագահութեան տակ և յուզիչ պարագաներու մէջ հրաժեշտ առնելով իր ժողովուրդէն, վերջնականապէս քաշուեցաւ (1886 Սեպտեմբեր 7):

Իրեն հետ պարտուած էր նաև ոռւսասէր կուսակցութիւնը: Խնամակալ Սթամպուլօֆ նոր իշխանի մը ընարութեան ձեռնարկեց: Տանիմար-



ֆայի Վալտէմար իշխանը չուզից ընդունիլ այդ թագը: Սօպրանիէն՝ 1887 յուլիս 7ին ընտրեց Սաքս-Քոպուրկ-Կոթալի Ֆէրաինանտ իշխանը, մօրը կողմէն թոռ Ֆրանսայի Էտի Ֆիլիբ թագաւորին: Նորընտր իշխանը սպայ էր Աւստրո-Հունգար բանակին մէջ, և իր ընտրութիւնը հովանաւորուած էր Աւստրիոյ ու Գերմանիոյ կողմէ: Պիլմարֆի այս միջամտութիւնը որ գաղտնի չմնաց, պատճառ եղաւ որ Զարը խղովի Գերմանիոյ հետ և Ֆրանսայի մօտենայ:


Ֆէրաինանտ և իր գլխաւոր նախարարը՝ Սթամպուլօֆ, մէկ քանի տարի մաքաւեցան ոռւսասէր կուսակցութեան փորձերուն և դաւադրութեանց դէմ:

Այդ պայքարին մէջ՝ Սթամպուլօֆ չհանգաւ վայրագութեան համբաւ մը որ մատամբ իրաւացի էր. մասնաւորաբար 1890ին երբ մահուամբ պատժեց հազարապետ Բանիցան, բուռն ատելութիւններ գրգռեց իրեն դէմ: Եւ սակայն այս բարբարոսը մեծ ծառայութիւններ մատուցեց Պուլկարիոյ, զայն ազատեց օտար խնամակալութեան մը վտանգէն, անոր տուաւ իր ազգայնութեան, իր անձնականութեան գիտակցութիւնը, զանիկա ի վիճակի դրաւ իր սեփական ոյժերով ապրելու, և զօրեղացուց անոր կամքը այն արգելքներուն մէջ, որոնցմով չըջապատուած էին իր անկախութեան անդրանիկ տարիները: Շատ կանուխէն և շատ ալ հաստատակամութեամբ Պուլկարիան նետեց քաղաքակրթութեան ճամբուն մէջ, և անիկա իրմով մանաւանդ կրցաւ դառնալ Պալքանեան պետութեանց ամէնէն բարգաւաճն ու ամէնէն կորովին:

Քիչ առ քիչ՝ կիրքերը հանդարտեցան: Ֆէրաինանտ բաժնուեցաւ Սթամպուլօֆէն, զոր Բանիցայի վրիժառուները սպաննեցին 1895ին: Երբոր մեռաւ Ազեքսանդր Գ. Զարը, իշխանը աշխատեցաւ Ռուսիոյ մօտենալու. իր Պօրիս զաւակը Օրթոտօքս ծէսով մկրտեց և Նիքօլա Բ. Զարը

հաւանեցաւ անոր կնքահայր ըլլալու: Ֆէրաինանտ իշխանին դիրքը ամբախնդուեցաւ տարուէ տարի, և 1908 սեպտեմբերին յաջողեցաւ հանդիսաւորապէս հռչակել Պուլկարիոյ անկախութիւնը, հին մայրաքաղաքին՝ Թիրնօվայի մէջ: Իր ժողովրդին վերածնութեան պսակուն մը էր ատիկա:

1877ի ոռուսութեաք պատերազմին գլխաւոր արդիւնքներէն մէկը սա եղաւ որ բոլորովին յեղաշրջեց Արեւելեան Խնդիրը, մասնաւորաբար



Սեւ Ներկուած մասերը թուրքիոյ կը պատկանէին

Պատերազմիկ տէրութեանց տարածութեան համեմատութիւնը


Թուրքիոյ յաջորդութեան հարցը, Հին ըմբռնում մը՝ զոր կ'արդարացնէին Աւստրիոյ և Ռուսիոյ փոխադարձ յաւակնութիւնները Արեւելքի տիրաւորութեան մասին, այդ երկու երկիրներէն մէկուն կամ միւսին և կամ պետութեան մասին, այդ երկու երկիրներէն մէկուն կը նկատէր Օսմ. Կայսրութիւնը: 1877ի պատերազմին հետեւանքը, հիմնովին կը չըջեր այս ըմբռնումը: 1877ի պատերազմին հետեւանքը, հիմնովին կը չըջեր այս ըմբռնումը: 1877ի պատերազմին հետեւանքը, հիմնովին կը չըջեր այս ըմբռնումը: 1877ի պատերազմին հետեւանքը, հիմնովին կը չըջեր այս ըմբռնումը:

ուելու անհամբեր պետութիւններ ստեղծուած էին, ամէնքն ալ նախա-
սահմանուած տիրական դեր մը խաղալու այդ թերակղզիին մէջ: Ընդար-
ձակման տենչը՝ իրենց համար սոսկ փառասիրութեան արդիւնք չէր, ցե-
ղակիցներ ունէին իրենց սահմաններէն դուրս՝ աննախանձելի վարչութեան
մը տակ մնացած. զանոնք ազատագրելը ո՛չ միայն ազգային պարտակա-
նութեան մը գոհացումը պիտի ըլլար, այլ նաև իրենց բարգաւաճման պի-
տի նպաստէր. նոր հողեր ու նոր աշխատող բազուկներ իրենցմէ իւրա-
քանչիւրին պիտի պարգեւէին աւելի ամրապինդ տնտեսական կացութիւն
մը և աւելի փայլուն քաղաքական նշանակութիւն մը. անոնցմով մանա-
ւանդ աւելի զօրեղ պիտի դառնային. զանոնք ազատագրելը ո՛չ միայն
պարտք մը, այլ մանաւանդ անհրաժեշտութիւն մըն էր իրենց համար:

Պերլինի Վեհաժողովը, հակառակ ամէն բանի, չէր կրցած այս պայ-
մանները չըջել. Պիզմարքի բոլոր խաղերէն վերջ, մէջտեղը կը մնար իրա-
կանութիւն մը զոր կարելի չէր անտեսել. Արեւելքի տիրապետութեան
հարցը այլևս լոկ թուրքիոյ տկարութենէն կախում չունէր. պէտք էր
հաշուել նաև Պալքանեան նորաստեղծ պետութիւնները, որոնք հազիւ
անկախութեան տիրացած, շուտով յանձնուած էին իրենց պատմութեան
հին յիշատակներուն և իրենք մանաւանդ տէր դառնալ կ'ուզէին երկիր-
ներու՝ որոնց վրայ իրենց նախահայրերը տիրեր էին դարեր առաջ: Եւ
ահա նոր հոսանք մը ստեղծուեցաւ Արեւելքի նկատմամբ յետին միտքեր
սնուցանող տէրութեանց քաղաքականութեան մէջ: Մասնաւորաբար
Ռուսիա և Աւստրիա աշխատեցան իրենց սեփական ազդեցութեան տակ
պահելու Պալքանեան պետութիւնները, անոնցմով իրենց շահերը և իրենց
հեռաւոր նպատակները իրականացնելու համար: Ու դարձեալ Գերման և
Սլաւ տարրերու դարաւոր մրցակցութիւնն է որ երեւան եկաւ քաղա-
քական այս նոր ուղղութեան մէջ: Ո՞րքն այստեղ այլևս չենք ծանրանար
այդ մրցակցութեան նոր երեւոյթներուն վրայ: Կը բաւէ միայն որ ար-
ձանագրենք անոր արդիւնքը, զոր յստակօրէն ցոյց կուտան արդէն ներ-
կայ դէպքերը. — յազթանակ Ռուսիոյ, հետեւաբար նաև Սլաւ տարրին:
Հիւսիսի մեծ կայսրութեան յաջողութիւնը այս նոր պայքարին մէջ՝ նշա-
նաւոր է նաև անով որ հակառակ սկզբնական օրերու բուռն թշնամու-
թեան, կրցաւ իր կողմը շահիլ Պալքանեան հզօրագոյն պետութիւնը,
Պուլկարիան, զոր Պիզմարքի հեռատես հանձարը, ռուսական ազդեցու-
թենէն կորզելու համար. Աւստրիացի իշխանով մը օժտած էր:

Եւ սակայն, բոլոր այդ մանր պետութեանց համար՝ այսօրուան փա-
ռաւոր արդիւնքին ժամանումը շատ դիւրին չեղաւ: Ներքին պայքարներ,
թէ՛ իրենց սեփական սահմաններուն մէջ և թէ՛ իրարու միջեւ, երկար
ժամանակ յամեցուցին իրենց բարգաւաճումն ու զօրացումը: Մասնաւո-
րաբար աղիտաբեր եղան կուսակցական պայքարները զորս այդ մանր
պետութիւններէն իւրաքանչիւրին մէջ վառ պահեցին աւելի կամ նուազ
չահախնդիր բոլիթիքօսներ: Եղան նաև ներքին յեղափոխութիւններ, շատ
հեղ արիւնալի, զինուորական ըմբոստութիւններ ու ժողովրդական խլըր-
տումներ, և որքան ալ ասոնցմէ մաս մը իրերու բնական բերմունքովը

կ'ըլլար, և անխուսափելի էր վարչական ամուր կազմակերպութենէ զուրկ
այդ նոր ազգերուն համար, կրկին կը տկարացնէր զանոնք թէ՛ ներքնա-
պէս և թէ՛ արտաքուստ:



ՊՈՒԿԱՐԻՈՅ ԳԱՆՃԱՌԱՆԳ ԳՕՐԻՍ ԻՇԽԱՆԸ

Աւելի աղէտալի բան մըն էր այն ատելութիւնը զոր Պալքանեան
պետութիւնները կը սնուցանէին իրարու նկատմամբ: Ռուսներն ու Յոյ-
ները, Պուլկարներն ու Յոյները, Սերպներն ու Պուլկարները, Գարատաղ-
ցիք ու Սերպերը, Պէրլինի Դաշնագրէն յուսախաբ, սկսան նախանձիլ իրար-

մէ . իրենցմէ ոչ ոք գոհ մնացած էր . բայց իւրաքանչիւրին անանկ կու գար թէ զրացին աւելի նպաստաւորուած է քան ինք : Ատկէ փոխադարձ անսիրելութիւն մը դոր հին ատելութիւններ և պատմական յիշատակներ հետզհետէ աւելի կը հրահրէին : Երկար ժամանակ Սերպերն ու Պուլկարները չմոռցան 1885ի պատերազմը , որ Պուլկարներուն յաղթութեամբ վերջացած էր : Յետոյ Ռուսներն ու Յոյները սկսան իրար կոտորել : Պուլկարներն ալ ջարդեր սարքեցին իրենց սահմաններուն մէջ գտնուող Յոյներու դէմ , այրեցին անոնց շէնքերը , գրաւեցին եկեղեցիները : Այս իրերասպան վէճերէն անմասն չմնաց նոյն ինքն փոքրիկ Գարատաղը , որ շարունակ ծանր ինդիւրներ ունեցաւ Սերպիոյ հետ : Սոսկ իրենց սահմաններուն մէջ չէր որ տեղի կ'ունենային այս խուժուժ ընդհարումներն ու հալածանքները : Աւելի բարբարոս դէպքեր կ'արիւնոտէին Մակեդոնիոյ սարերը , ուր իւրաքանչիւր Պալքանեան ազգ իր յաւակնութիւնները արժեցնել և իրեն յատուկ ազդեցութեան շրջանակ մը ստեղծել կ'ուզէր , զէն ի ձեռին : Ազատագրութեան , անկախութեան իտէլիով զեղուն երբեմնի հրոսախուժերուն տեղ երեւան ելած էին նոր հրոսախուժեր , եղբայրասպան ծրագրով մը . Յոյն , Պուլկար , Ռուսներ , Սերպ չէթէներ , անընդհատ իրար կը հալածէին , իրար կը սպաննէին , և Մակեդոնիոյ բնիկ գիւղացի ժողովուրդը որ արդէն իսկ յոռի վարչութեան մը և բռնակալ պաշտօնեաներու լուծը ունէր իր վզին , այդ եղբայրասպան կռիւներուն կը զոհուէր , յաճախ ընդվզեցուցիչ պարագաներու մէջ : Ծատ անգամ ամբողջ գիւղեր , աւաններ կը կործանէին չէթէներուն ձեռքով :

Այսպէս ահա կը յաղթանակէր Գերման ոգին՝ իր դարբնած Պերլինի դաշնագրով : Որպէս զի Եգէականի ճամբան բաց մնայ գերման ծաւալման առջեւ , պէտք էր որ Պալքանեան պետութիւնները արգելք չդառնային . և ատոր համար անհրաժեշտ էր որ մշտապէս կռուոտ մնային իրարու միջեւ , փոխադարձաբար իրար տիրացնէին ու ո՛չ թէ ձեռք ձեռքի տալով կազմէին այն տեսակ միութիւն մը որ շուտով պիտի կրնար կասեցնել ամէն օտար ոտնձգութիւն : Ինչպէս ըսինք արդէն , ճիշտ այդ զիւլային ծրագիրը իրականացնելու համար եղած էին Պերլինի դաշնագրին հողային բաժանումները : Եւ արդիւնքը լիովին կը պսակէր այդ նպատակով տարուած աշխատութիւնը : Արդէն Գերման ծաւալման յառաջապահը , Աւստրիա , արթուն կը հսկէր միշտ , պատրաստ գրգռելու Պալքանեան պետութեանց փոխադարձ հակառակութիւններն ու ատելութիւնները՝ երբ մարելու վրայ ըլլային : Ինք էր որ 1885ին Սերպիան մղած էր Պուլկարիոյ դէմ ձեռնարկուած դժբախտ պատերազմին , որպէս զի Սերպերը իրենց ուշադրութիւնը հեռացնեն Ադրիականի եղերքներէն և աշխատին ընդարձակուելու ի վնաս Պուլկարիոյ : Այսպէս՝ Պալքանեան ազգերը իրենց բուն կոչումը ոտնակոխ կ'ընէին , և իրենց սեփական երջանկութիւնը կը վտանգէին թէ՛ ներքնապէս՝ կուսակցական վէճերու անձնատուր ըլլալով և թէ՛ արտաքուստ՝ իրար բզքտելով :


Տարակոյս չկայ որ Համիտի բռնակալութեան ալ գործին կուգար իրերու այս վիճակը : Պալքանեան ազգերու միութիւն մը կրնար ծանրա-

պէս վտանգել իր եւրոպական ստացուածքները . ուրախ էր որ անոնք իրարու հետ կը կռուէին , և ինք ալ որոշ չափով անոնց համար նոր կռուախնձորներ կը ստեղծէր Մակեդոնիոյ մէջ , անխնայ կիրարկելով «Բաժանեա զի տիրեսցես»ի սկզբունքը որ արդէն պետական լաւագոյն դաւանանքն էր իրեն համար :



Գարատաղցի ձիաւորի տիպար

գուշակէր այդ պզտիկ և տակաւին աննշան պետութեան համար, որուն իշխանական գահը պահ մը իրօք խանդավառած էր զինքը: Պ. սը Պլովից



Դէպի Էտրնէ՝ Պուլկարներու յառաջխաղացութեան ճամբան

որ մտերիմը եղած է նշանաւոր պետական մարդուն, և որուն նուպար պարզած էր իր յոյսերն ու յատակազիծերը, այդ մասին հետեւեալ նշա- նակելի յայտնութիւնն է թողած. — «Կը հաւատամ որ եթէ նուպարի

ընտրութիւնը յաջողէր, Պալքանեան թերակղզին իր մեծութեան և բարո- բութեան լաւագոյն օրերուն այնպիսի մէկ վերկենդանացումը պիտի տես- նէր, որ լոկ յիշատակ մըն է իր մէկ քանի պետութեանց համար, և ան- ծանօթ բան մը՝ միւսնեկուն համար: Կը հաւատամ որ ո՛չ հայկական ջար-



Ն Ո Ւ Պ Ա Ր Փ Ա Շ Ա
որ 1877ին Պուլկարիոյ եշխան պետի ընտրուէր


զերը պիտի ունենայինք, ո՛չ թուրքեւհեղէն պատերազմը, և թէ վառ- նայէն Չէթինէ՝ երկու մեծ պետութիւն, բացի Ռուսմանիայէն, այսօր իրենց մէջ բաժնած պիտի ըլլային թերակղզին, Ռուսիոյ թողլով իր խոշոր բաժինը, առանց զոհելու ազատութիւնը կամ արդարութիւնը: զորս

Նուպար ամէն բանէ կը նախընտրէր) : Եթէ Պուլկարիոյ արդի յաւակնու-
թեանց խոշոր գիծերը նկատի առնենք, առանց մանրամասնութիւններուն
ուշադրութիւն ընծայելու, պիտի տեսնենք որ Նուպարի ծրագիրը շատ
չէր տարբերեր այսօրուան արդիւնքէն, զոնէ Պուլկարիոյ համար :

Ինչ որ ալ ըլլայ սակայն, պուլկարական ազգին արագ ու ամրապինդ
վերածնութեան մասին Նուպար երբեք չպիտի ունենար այն դիւրութիւն-
ները որոնցմով օժտուած էր արդի Ֆէրաինանտ Չարը : Ազգակցական
կապեր, բարձր ազնուականութիւնը որուն կը պատկանէր, միջազգային
դիրքն ու նշանակութիւնը զորս կը միացնէր իր անձին վրայ, թանկագին
օժանդակութիւններ էին յաջողելու համար այդ դժուարին երկրին մէջ,
որուն բախտը կը յանձնուէր իրեն՝ սոսկ դիւանագիտական հաշիւներով :
Ֆէրաինանտի Պուլկարիոյ իշխան հռչակուիլը՝ Պիղմարքի գործն էր էպպէս :
Իշխանը, մօր կողմէն Փրանսական և հօրը կողմէն աւստրիական ծագում
ունէր. ասկէ զատ, սպայ ալ էր աւստրիական բանակին մէջ. տարակոյս
չկայ որ գերման ոգուով սնած այդ վեհապետը Գերման տարրին ծաւալ-
ման ռահվիրայ մը պիտի դառնար Պալքաններու մէջ, ի վրաս Ռուսիոյ :
Բայց Ֆէրաինանտի մեծութիւնը հոն է որ իր ժողովուրդին բարօրութիւնը
գերադասեց ուրիշ ամէն բանէ : Ո՛չ իր ծագումը նկատի առաւ, ո՛չ իր
ազգակցական կապերը, ո՛չ իր ընտրութիւնը յաջողցնող նկատումները,
այլ սոսկ Պուլկարիոյ մեծութիւնն ու ապագան : Ծիշդ է որ սկիզբները
մաքառեցաւ ռուսական ազդեցութեան դէմ, — և այդ մաքառումը ան-
հրաժեշտ էր Ռուսիոյ քիչ մը չափազանց տիրական թեւարկութիւնը թօ-
թափելու և իրապէս անկախ դարձնելու համար Պուլկարիան, — բայց
վերջէն, հակառակ նոյնիսկ Պուլկար ժողովուրդին ընդդիմութեան, Ռու-
սիոյ հետ մերձեցման գործը իրականացուց, համոզուած ըլլալով որ Պուլ-
կարիոյ բուն շահը կը պահանջէ անբաժան մնալ Հիւսիսի մեծ Կայսրութե-
նէն, «Ազատարար կայսրութենէն» : Այսօրուան դէպքերը ցոյց կուտան թէ
իրօք այդ էր իմաստութիւնը :

Պուլկարները միշտ երախտապարտ պիտի մնան այս աստիճան թան-
կագին վեհապետի մը որ իրենց մեծութեան լաւագոյն գործաւորը եղաւ,
և որ վերջէն՝ նոյնքան խոշոր դեր մը պիտի կատարէր Պալքանեան Դաշ-
նակցութեան կազմութեան մէջ : Լրացնելու համար իր պատկերը, կ'ար-
ժէ որ Ռընէ Բինօնի մէկ գործէն արտադրենք հետեւեալ տողերը. — «Ֆէր-
տինանտի և իր ժողովուրդին միջեւ ոչ մէկ ընական հանգիստութիւն կար .
ամէն կերպով հակոտնեայ էին իրարու : Իշխանը չափազանց մշակուած
մտքի տէր, շատ նրբակիրթ, արթնամիտ դիտող, լաւ հաշուող և պաղ-
արիւն քաջութեամբ օժտուած մարդ մըն էր. — քաջութիւնը արդի թա-
գաւորներու, որոնց համար կեանքը պատերազմի դաշտ մըն է, այն քա-
ջութիւնը, զոր մշտակայ սպառնալիքները, ռուսները, ատրճանակը կամ
ըէվովէրը աւելի դժուարին կը դարձնեն քան իրական պատերազմիկի մը
արիութիւնը : Եւ սակայն Ֆէրաինանտ Իշխան շատ պատերազմասէր չէր .
ինք անոնցմէ էր որոնք ձակատագրին կը թողուն այն բանը միայն զոր
չեն կրնար անկէ կորզել, ու կը նախընտրեն քաղաքական ճատրակին յա-

մտա ու համբերատար խաղը, բուն բախտախաղէն, ուր յաճախ միակ
ճակատամարտ մը կը վճռէ ազգի մը և արքայական գերդաստանի մը
ապագան : Իսկ պուլկար ժողովուրդը, ընդհակառակը, կուուզան, խան-
դավառ, ձեւականութեանց և դիւանագիտական նրբութեանց հետ ան-



Պատերազմի յայտարարութիւնը Գարատաղի մէջ

հաշտ տարր մըն էր, աւելի վստահ իր բազուկին զօրութեան քան իր
պետական մարդոց ճարտարութեան վրայ : Այսպէս ուրեմն՝ Պուլկար
ազգին և իր Իշխանին յատկութիւնները իրար կը լրացնէին, և թերեւս
ատոր մէջն իսկ է իրենց համաձայնութեան գաղտնիքը : Իշխանը նախ
յարգանքի առարկայ դարձաւ շորհիւ իր ընական իշխանական հովին,
որուն աղբիւրն էր իր ընտանիքը և զոր սքանչելապէս կ'արտայայտէր իր


բովանդակ անձնաւորութիւնը: «Ամէն տեղ իր պայտօն մէջ գտնուող թագաւորի» տիպարն էր, օժտուած էր ուրիշներուն ու նաև ինքզինքին հրամայելու ժառանգական վարժութեամբ: զիտէր պաղաւնութեան դիմակի մը տակ ծածկել հրայրքոտ, շուտ տպաւորուող և ծայրայեղօրէն զգայուն հոգիի մը խանդը: յետոյ՝ պատկառազօւ երեւոյթ մը ունէր: լաւ գիտէր բռնել գլուխը, որուն լայն ու բարձր ճակատը վեհութեամբ կը շողար, և որուն պողպատեայ աչքերուն խոցոտիչ նայուածքին մէջ կամքը կը փայլատակէր: Ֆէրտինանտ իշխան ամէն բանէ առաջ արժանիքը ունեցաւ ըմբռնելու թէ Պուլկարիոյ ապագան՝ Արեւելեան Խընդ-րին երեւոյթներէն մէկն էր, և թէ Արեւելեան Խնդիրը ինքնին եւրոպական հարց մը ըլլալով, Պուլկարիոյ ապագային խնդիրն ալ՝ Պուլկարական ըլլալէ առաջ՝ եւրոպական հարց մը պէտք է ըլլար: Անպարտասելի համբերութեամբ մը չընկալաւ եւրոպայի մէջ, իր երկրին ի սպաս դնելով իր ընտանեկան խնամութիւններն ու յարաբերութիւնները: Աշխատեցաւ Պուլկարիան ազատել իր մեկուսացումէն, ու զայն հեռացնել զուտ Պալքանեան հարցերէն և ներքին կռիւններէն, որոնք իր ոյժերը պիտի սպառէին անօգուտ տեղը: Այն Պուլկարիան որ Պերլինի վեհաժողովէն եաք՝ նեցուկներով կանգուն, ու միանգամայն թէ՛ Օսմանեան և թէ՛ եւրոպական խնամակալութեան ենթակայ իշխանապետութիւն մըն էր, և որ հազիւ թէ քաղաքապահ զօրախումբ մը պահելու արտօնուած էր, շնորհիւ Ֆէրտինանտի, դարձաւ եւրոպական ճշմարիտ պետութիւն մը, գործնականապէս անկախ ու ազատ»: Կ'արժէ աւելցնել որ մինչդեռ թուրքիա տակաւին չէ կրցած ազատագրուիլ Բարիթիւլասիօններու կաշկանդիչ ցանցէն, Օսմ. Կայսրութենէն բխած երէկուան Պուլկարիան վաղուց յաջողած է թօթափել Բարիթիւլասիօններու լուծը, ապացուցանելով թէ հիմնովին քաղաքակիրթ և արդարութեամբ կառավարելու ամէն երաշխաւորութիւն ներկայացնող պետութիւն մը դարձած է:

Ներքին վերածնութեան այս ճամբուն մէջ՝ Սերպիա շատ ետ մնաց Պուլկարիայէն: Կուսակցական պայքարներ, խլրտումներ, ըմբոստութիւններ, եղբայրադաւ ու եղբայրասպան կռիւներ իր ալ բախտը եղան, և իր մէջ՝ քաղաքական գործիչները յաճախ զուրկ գտնուեցան այն անհրաժեշտ հայրենասիրութենէն որ անձնական շահերէն ու հաշիւներէն նախընտրել պիտի տար իրենց՝ ազգին գերագոյն շահերը: Յետոյ Սերպիոյ մէջ յառաջ գլխավորութեան ու բարգաւաճման ուրիշ խոշոր խոչնդոտ մը կար: Մինչև 1903 յունիս 11՝ երբ սպաներու խումբ մը գիշերանց արքայական պալատին մէջ սպաննեց Ազեքսանդր թագաւորն ու Տրակա թագուհին, վերջ տալով Օպրէնովիչներու գերդաստանին, դժնդակ բռնակալութիւն մը կը ճնշէր Սերպ ժողովուրդը: Սթամպուլօֆ՝ Պուլկարիոյ մէջ՝ աւելի զարհուրելի բռնակալութիւն մը ի գործ դրած էր երբեմն. բայց այդ բռնակալութիւնը առաւելապէս միջոց մըն էր երկրին մենագոյն օգտին իրականացման համար: Բռնակալ Սթամպուլօֆ, Պուլկարիոյ բարգաւաճման լաւագոյն գործաւորն էր նոյն ատեն: Այդպէս չէր Օպրէնովիչներու

բռնակալութիւնը, այլ ուղղակի երկրին կենսական հիւթերը կը քամէր ու զանոնք կը վատնէր անօգուտ տեղը: Ընդհանրապէս աւելորդ պերճանքներու և շուայտութեանց մէջ: Սերպիա արդէն անուանապէս միայն անկախ էր: Բուն իշխողը Սերպիոյ մէջ՝ Աւստրիան էր: Պէրլինի դաշնագիրը սերպ պետութիւնը ա՛յն աստիճան անյարմար սահմաններու մէջ կաշկանդած էր որ անխուսափելի կերպով աւստրիական ազդեցութեան տակ պիտի իյնար: Ծով չունէր, աւելի Դանուբեան պետութիւն մըն էր քան Պալքանեան, և որովհետեւ իր գոյութիւնը սերտօրէն կապուած էր իր արջառներուն, մասնաւորապէս խողերուն արտածման հետ, ստիպուած էր ընդունիլ Աւստրիոյ տնտեսական հովանաւորութիւնը, որ ոչինչով կը տարբերէր քաղաքական լայն թեւարկութենէ մը: Դրացի Կայսրութիւնը ինք կը գնէր Սերպերու արջառները ու կ'արտածէր: Այս տնտեսական գերութիւնը չընկալաւ բոլորովին անկարելի չէր, ինչպէս փորձը ցոյց պիտի տար ապագային: Բայց վատթար վարչութիւն մը և ժողովուրդին կոնսակէն փարթամ ու չռայ կենցաղի մը հեշտանքին անձնատուր արքայական գերդաստան մը, իրենց ապիկարութեամբ այն համոզումը գոյացնել տուած էին թէ առանց դրացի Կայսրութեան «բարեացակամ» ձեռնտուութեան, Սերպիա անօթի կը մնայ: Եւ Աւստրիա չարաչար կը շահագործէր իր վայելած տիրական դիրքը: Վեհապետները իրմով իրենց գահը կրնային պահել. նախարարները ինք կ'որոշէր և ինք պաշտօնանկ կ'ընէր. իր գործակալները միշտ կը չընէին ամէն կողմ, իրենց ազդեցութեան տակ կը պահէին իրարու յաջորդող կառավարութիւնները, երբեմն դրամով, աւելի յաճախ ալ սպառնալիքով օրէնք կը կարդային քաղաքական կազմակերպութեանց. յետոյ միշտ վսու կը պահէին իշխող Օպրէնովիչներու և Սերպիոյ գահուն թեկնածու Բարաճօրճէվիչներու հակառակութիւնները: Մէկ խօսքով՝ Աւստրիա Պէրլինի վեհաժողովին ծրագիրը կ'իրակա նացնէր, Սերպիան պահելով ա՛յն աստիճան տկարութեան մէջ որ չկարենայ երբեք խոչնդոտ դառնալ դէպի Արեւելք իր յառաջխաղացութեան դէմ: Ինչպէս ըսինք արդէն՝ ինք էր որ զրգուեց 1885ի պատերազմը Պուլկարիոյ դէմ, բայց դարձեալ ինք էր որ Սերպերու մայրաքաղաքին սպառնացող Պուլկար բանակը կասեցուց: Յաղթական Սերպիա մը իր գործին կուգար, բայց ո՛չ երբեք յաղթական Պուլկարիա մը:

Միլան թագաւոր Աւստրիոյ լաւագոյն գործակալն էր այդ ճամբուն մէջ: Իշխելու հաճոյքը չափազանց կը յանկուցանէր զինքը, և առանց Աւստրիոյ՝ դժուար թէ կարենար իշխել. կը պահէր թագաւորի տիտղոսը, կը լողար արքայական դիրքին պարգեւած պերճանքին մէջ և կը թողուր որ իր նախարարները գործադրեն աւստրիական կառավարութեան կամքը: Սերպիան «խելքի բերելու» համար՝ Աւստրիա ոչ իսկ պէտք ունէր խոշոր սպառնալիքներու, զոր օրինակ՝ զօրահանութեան. կը բաւէր որ գոցէր իր սահմանները Սերպիոյ արջառներուն առջեւ, և ահա Սերպ կառավարութիւնը «աման»ի պիտի գար իսկոյն: Այդպէս եղաւ 1896ին, երբ քաղաքական անհամաձայնութիւններու պատճառաւ Աւստրիա արգիլեց արջառի ներածումը: Այն աստիճան ծանր անձկութիւն մը առաջ եկաւ երկ-



ցութիւնն էր, իրեն պետ ունենալով Պ. Բաշիչը: Արմատականները Սեր-
պիոյ մէջ՝ անկախ, մանաւանդ Աւստրիոյ լուծը թօթափելու անհամբեր
տարրն են: Պ. Ռընէ Բինսօն՝ ուրկէ կ'օգտուինք այս ամբողջման մէջ,
մէկ քանի բառով կը սահմանէ սերպ արմատականներու ծրագիրը. —



ԱՍՈՒՆ ԵՒ ԱՆԱՍՈՒՆ ԻՐԱՐՈՒ ԽԱՌՆՈՒԱԾ
Տեսարանը Պուլկար զինուորական վակոնի մը մէջ

«Ներքնապէս՝ սահմանադրական վարչութիւն և տնտեսական վերականգ-
նում. արտաքուստ՝ անկախութիւն վիեննայի և Պուտաբէշթի հանդէպ.
տուժ մերձենալու միւս բոլոր Սլաւ տարրերուն, և ձրգ-
Բէթար թագաւորի գահակալութենէն ասդին՝ Աւստրիա չափազանց բան





Պուլկար Տեռեւակի զօրքը պատերազմի դիրքին մէջ, հարթ հարթուքը գտնուող թնդանօթներէն պաշտպանուած

Պալանեան Պատերազմ. — Յաւելի 1. — Տպագր. Օ Արզուման

կորանցուցած էր իր ազդեցութենէն, քանի որ այս յայտնապէս հակաւրս-
տրիական, հետեւաբար նաև սլաւասիրական ծրագրով կուսակցութիւնը
կը յաջողէր իշխանութեան գլուխ անցնիլ:

Շուտով բաղխում մը տեղի պիտի ունենար անշուշտ. շուտով նաև
Սերպիա պիտի զգացնէր Աւստրիոյ թէ այլեւս տրամադիր չէ անցեալին
լուծը տանելու: 1905ին լրացած էր աւստրեւսերպ առեւտրական դաշնա-
գրին պայմանաժամը, երբ Պ. Բաշիչ իշխանութեան գլուխ անցաւ: Պէտք



Զօրակոչի տեսարանը Պուլկարիոյ մէջ

էր վերանորոգել դաշնագիրը, բայց շատ ծանր էին պայմանները: Արմա-
տական կառավարութիւնը, Աւստրիոյ հետ բանակցելով հանդերձ, անոր
տնտեսական տիրապետութենէն ազատելու միջոցներուն վրայ խորհեցաւ,
և որոշեց ուրիշ դրացի երկիրներու հետ յարմարելով, Աւստրիայէն ան-
կախ նոր ձամբաներ ու նոր շահաստաններ ստեղծել իր արտածմանց հա-
մար: Առաջին երկիրը որուն հետ այս մասին համաձայնեցաւ, Պուլկա-
րիան էր: 1905ի վերջին ամսուն էր որ Եւրոպա իմացաւ թէ Սերպիա և
Պուլկարիա, — հերուան հակառակորդներ, — մաքսային միութեան սկզ-
բունքը ընդունած են, և մասնաւորաբար Աւստրիական կառավարութիւնն
էր որ ամէնէն աւելի իրար անցաւ: Տնտեսական համաձայնութիւններ
գրեթէ միշտ նախադուռն են քաղաքական համաձայնութեանց: Աւստրիա
աւելի ծանր վտանգ մը կը տեսնէր Սերպիոյ և Պուլկարիոյ տնտեսական
միացման մէջ, — ապագայ քաղաքական դաշնակցութիւն մը, որուն հեշ-
տիւ կրնար միանալ նաև Պալքանեան միւս Սլաւ պետութիւնը, Գարա-



են իրենց . և այդ կորուստը աւելի զգալի եղած է անո՛ր համար որ հա-
զիւ կռիւրդ դադարած , դարձեալ վերահաստատուած են այն պայմաններն
ու կացութիւնը որոնց համար կռիւրդ տեղի ունեցած էր : Մի միայն եօ-
թանասնական թուականներու մեծ պատերազմին մէջ Թուրքիա ստիպ-
ուեցաւ Գարատաղցոց 25,800 զինուորներուն և 300 թնդանօթներուն



ԻՇԽԱՆ ՄԻՐՔՕ, ԳԱՐԱՏԱՂԻ ԳԱՀԱԺԱՌԱՆԳԸ

դէմ ճակատեցնել 117,000 զինուոր՝ 307 թնդանօթներով . արդիւնքը սա-
եղաւ որ Գարատաղցիք սոսկ 1360 սպանեալ , 3400 վիրաւոր ու մէկ
հատ ալ գերի տուին , մինչդեռ Թուրքերը ունեցան 18,035 մեռեալ ,
22,700 վիրաւոր , 4095 գերի . ասոնցմէ զատ՝ 20,000 թուրք զինուորներ
ալ զանազան հիւանդութիւններէ մեռան պատերազմի ընթացքին . այ-
սինքն՝ Գարատաղցոց 4761 հոգիի կորուստին դէմ 60,735 հոգիի ահռե-
լի կորուստ մը . ուրիշ հաշուով մը՝ կռուի մասնակցող 25,800 Գարա-

տաղցիներէն իւրաքանչիւրը կրցաւ երեք Թուրքեր պատերազմելու ան-
կարող վիճակի դատապարտել :

Թուրքիա ուրեմն շահ չունէր Գարատաղցոց հետ կռուելէն : Եւ
սակայն , 1389էն առդին շարունակ անոնց հետ մաքառելու հարկէն չկրցաւ
ազատիլ : Որքան ալ բարեացակամ տրամադրութիւններով լեցուած ըլլար
անոնց նկատմամբ , կրկին կուգար ատեն մը ուր կը ստիպուէր սուրբ
պատեանէն հանելու : Գարատաղցիք հանդարտ չէին կենար . և եթէ
Թուրքը յանցանք չունէր ատոր մէջ , Գարատաղցիք ալ յանցաւոր չէին :
Կեանքին անտեղիտալի պահանջներն էին , և էն առաջ ապրուստի հարցը
որ զիրենք կը բռնադատէին վար իջնելու իրենց լեռներէն . և լեռներէն վար՝
առաջին հանդիպողը Թուրքն էր : Ծովէ ու հողէ զրկուած Գարատաղցին՝
ապրելու համար ստիպուած էր աւազակութիւն ընել . դեռ ձմեռը չսկսած՝
կ'իջնէր վար , կը կողոպտէր մարդիկը , կը թալլէր գիւղերն ու արտերը , կը
քշէր նախիրները , և ձմեռուան պաշարը հաւաքելով կը քաշուէր իր լեռ-
ները , վստահ թէ Թուրքը չպիտի կրնայ մինչև այնտեղ գալով իր կողո-
պուտը խլել ձեռքէն . որովհետև ձիւնը շուտով կը փակէր արդէն իսկ
դժուարամերձ սարերուն բոլոր անցքերը : Բնական է այս կողոպուտը
առանց սպանութեան չէր ըլլար : Չէթինեէի Սև Ս . Իվան վանքին կատարը
կը բարձրանայ համբաւաւոր աշտարակ մը զոր Գարատաղցիք կը սիրէին
պճնել իրենց սպաննած թուրքերուն և Ալպանացիներուն գանկերով :
Իրենց աւարը սոսկ նախիր ու սննդեղէն չէր . «Գանկերու Աշտարակ»ն
ալ իր բաժինը կ'ուզէր , և իւրաքանչիւր լեռնական գոնէ երկու հատ մը
կը բերէր հետը : Արդէն տեսակ մը ազգային գնդախաղ ունէին որ ձմեռ-
ուան անգործութեան օրերուն՝ երբ ձիւնը կը պաշարէր զիրենք՝ մէկ հա-
տիկ զբօսանքնին էր , և որուն մէջ գնդակները պէտք էր որ իրենց թըշ-
նամիներուն գլուխները ըլլային : Այսպէս ուրեմն՝ սպանութիւնը Գարա-
տաղի լեռնականներուն համար նոյնքան անհրաժեշտ էր , որքան կողո-
պուտը :

Ճարահատ Թուրքերը՝ այս անսանձելի վտանգը չէզոքացնելու համար
հնարք մը գտան վերջապէս : Վարը , դաշտերուն և Շքօտրայի մէջ , ման-
կաժողովներու միջոցաւ Գարատաղցի տղաք խլամացուած ու Եէնիչէրի
դարձած էին . Շքօտրայի փաշան երբ 1687ին դարձեալ Չէթինեէ մտաւ ,
չգոհացաւ միայն Ս . Իվանի վանքը քանդելով , ինչպէս եղած էր 64 տա-
րի առաջ , այլ խառանի տուրքին ենթարկեց զանոնք . և լեռներուն կա-
տարը՝ Գարատաղցոց գլխուն վրայ պահակ թողուց նոյն ինքն խլամացած
գարատաղցի Եէնիչէրիները : Փաշային հաշիւը շատ խելացի էր . պիտի
կրնար վերջապէս սանձել աւազակները , առանց Թուրք զինուոր և թըր-
քական արիւն վտանգելու : Մինչև 1702 , այդ կերպով քիչ շատ հան-
գիստ մնացին Թուրքերը , բայց այդ թուականին իշխանական նոր դարձ
մը , — Բէթրովիչներու գերդաստանը որ մինչև այսօր կը տեւէ , — Գա-
րատաղի իշխանութեան կոչուած էր : Գարատաղցիք՝ ներքնապէս ունէին
նահապետական բարքեր և կը հնազանդէին ընդհանուր Վլադիքայի մը որ
միանգամայն թէ աշխարհական պետ էր և թէ կրօնապետ : 1516էն մին-

չեւ 1851՝ Գարատաղի վլատիքաները պահեցին այդ կրկին հանգամանքը • Բէթրովիչներու Պետրոս Բ • վլատիքան էր շոր այդ թուականին անջատեց



ՕՐ. ՍՕՅԻԱ ԻՎԱՆՈՎԻՉ

Աղջիկ կամաւոր մը որ մասնակցեցաւ սերպ բանակին կռիւներուն


կրօնական իշխանութիւնը և ինքզինքը բացարձակ միապետ հռչակեց՝ անդրանկութեան կարգով զաւելէ զաւակ ուղղակի յաջորդութեամբ: Բէթրովիչներու իշխանութեան անցնելը թուրքերուն համար վերա-

բացաւ երբեմնի արիւնալի շրջանը: Նոր վլատիքան՝ Տանիլօ, իսլամացած Գարատաղիներու ներկայութիւնը իր ժողովուրդին մէջ՝ վտանգ մը նկատեց երկրին համար: Անոնց կատարած հսկողութիւնը չէր որ զինքը կը վախեցնէր: Գարատաղի Եէնիչերիները, բաղդատմամբ իր ժողովուրդին, շատ հրապուրիչ առանձնաշնորհումներ ու դիւրակեցութիւն մը ունէին. օրինակը սկսած էր արդէն վարակիչ դառնալ, և մէկ քանի Գարատաղիներ լեռներէն իջած էին իսլամանալու համար: Տանիլօ խանդավառ և վճռական մարդ մըն էր. առանց ժամանակ կորսնցնելու, գլուխ կանգնեցաւ հսկայ դաւաղութեան մը որուն մասնակցեցաւ բովանդակ ժողովուրդը, և որ կատարեալ յաջողութեամբ պսակուեցաւ: 1702ի ձմեռը՝ Գարատաղիք իրենց սիրական գնդախաղին համար գնդակի, — թշնամիի գըլխու, — կարօտ չմնացին. Խթումի գիշերը բոլոր իսլամացած Գարատաղիները ջարդած և երկիրը ազատած էին պահակներէն:

Հաւատուրացներու ջարդին հետեւեցան աւազակութիւններն ու սպանութիւնները: Թուրքերը, բազմաթիւ ընդհարումներու մէջ խոչոր կորուստներ տալէ վերջ, ստիպուեցան նոր արշաւախումբ կազմել մեծ պատրաստութիւններով, և 1714 ին դարձեալ Չէթինեէ մտնելով, անգամ մըն ալ այրեցին Ս. Իվանի մենաստանը: Արդիւնքը դարձեալ չպսակեց իրենց զոհողութիւնները: Մինչև 1876ի վերջերը, Գարատաղիք միշտ զէնքը ձեռքէ չձգեցին: Սոսկ ապրուստի պայմանները չէին որ զիրենք թուրքերուն դէմ կը մղէին. դարաւոր կռիւները, ինկած զոհերը, կրօնքի տարբերութիւնը որ իսկոյն զիրենք կը գրաւէր ամէն անգամ որ աւերակացած կը տեսնէին Ս. Իվանի նուիրական մենաստանը, իրենց մէջ խոր ատելութիւն մը ստեղծած էին թուրքերուն, Ալպանացիներուն, և առ հասարակ բոլոր Մահմէտականներուն նկատմամբ: Քիչ առ քիչ կազմուած էր այդ ոգուով տոգորուած բանաւոր գրականութիւն մը. ռազմաշունչ ու վրէժի զգացումով դարբնուած երգեր կը շրջէին բերնէ բերան. մայրեր ատելութեան օրօրներով կը մեծցնէին իրենց զաւակները: Սպանութիւնը ոչ լոկ ապրուստի միջոց մըն էր երբեմն, ազգային իտէալ մը դարձած էր:

Բոլոր այս կռիւներուն մէջ՝ Գարատաղիք ձեռք բերին ռազմական թանկագին յատկութիւններ, որոնք արդէն անհրաժեշտ էին իրենց գոյութեան համար: Պատերազմը աշխատութեան եղանակ մըն էր, ճիշտ ինչպէս հողագործութիւնը կամ ուրիշ ո՛ր և է ձեռարուեստ: Եւ նոյն իսկ Մեծն Նաբօլէօնի անպարտելի զինուորները չկրցան ընկճել զանոնք: վլատիքա Բիէր 1807ին մերժեց ընդունիլ նշանաւոր աշխարհակալին կողմէ զինքը սիրաշահելու համար զրկուած արշաւախումբը, որովհետեւ Նաբօլէօն պատերազմի մէջ էր Ռուսիոյ հետ և ինք, իբր միեւնոյն սլաւ ընտանիքին անդամը, Ռուսիոյ թշնամին թշնամի կը նկատէր նաև իրեն: Մերժումը առաջ բերաւ ընդհարում մը, և վլատիքան՝ իր ոչ նուազ անպարտելի լեռնականներով Փրանսական զօրաբաժինը մինչև Ռակուզա քչեց, սպանլեռնականներով Փրանսական զօրաբաժինի սպաններ: Այն տարին, նեղով զօրավար Տէլիօրկը և ուրիշ բարձրաստիճան սպաններ: Այն տարին, — ինչպէս կը գրէ Պ. Բինօն, ուրկէ կը քաղենք այս տեղեկութիւնները,

— Չէթինէի աշտարակը ֆրանսական զանկերով ալ պճուեցաւ, և Գարատաղցիք իրենց ձմեռուան գնդախաղերուն մէջ առիթ ունեցան բաղդատութեան դնելու ֆրանսական և թրքական զանկերը: Եւ այս բաղ-




Պուլկար պահակը 1885ի Սերպեւապուլկար պատերազմին մէջ

դատութենէն շահաւոր ելան վերջինները. ֆրանսական զանկերը չափազանց թեթեւ էին Գարատաղցուց հուժկու թաթին համար. Թուրքերուն գոնէ զանկը ծանր կը կշռէր...

Ահա այս տեսակ ժողովուրդ մը կառավարելու կոչուեցաւ արդի

Նիքօլա թագաւորը, երբ տակաւին 19 տարեկան էր և աշակերտ Բարիզի Լուի-լը-Կրան Լիսէին: Նիքօլա, — Նիքիթա՛ ինչպէս կը կոչեն Գարատաղցիք, — կը յաջորդէր իր հօրեղբորը՝ Տանիլօ իշխանին՝ որ ալպանական պեսայի մը զոհուեցաւ Քաթարօի մէջ և որ չմեռած նշանակած էր իր յաջորդը: Դառնութեան շրջան մը մտած էր Գարատաղ, Տանիլօ՛ Կրա-



Պուլկար պահակը ներկայ պատերազմին մէջ

հօլօի մէջ ծանր պարտութեան մը մատնած էր Թուրքերը, բայց անոնք ահաւոր բազմութեամբ մը կրկնած էին յարձակումը: Թուրքիա՛ ժամանակէ մը ի վեր սկսած էր անսովոր կարեւորութիւն մը ընծայել Գարատաղի Գարբը ամբողջ այդ լեռնակոյտը արհամարհելէ վերջ, յանկարծ սկսած էր

գուրգուրալ անոր վրայ . անպէտ իր մըն էր երբեմն . անոր սեփականութիւնը ոչ մէկ հպարտութիւն կրնար տալ իրեն , որ այնքան չքեղ ստացուածքներ ունէր . բայց ահա յանկարծ՝ Գարատաղ գոհարի մը արժէքը ստացած էր իր աչքին : Եւ ասիկա առանց պատճառի չէր : Ժամանակին հետ՝ Թուրքիա սկսած էր աւելի մօտէն , մանաւանդ աւելի գիտակցութեամբ զգալ իրեն սպառնացող վտանգները . իր պետական մարդիկը այն ատեն աւելի խորատես էին որ պալքանեան սլաւ դաշնակցութեան մը վախը ունեցան , և սկսան հոգալ իրենց եւրոպական ստացուածքները : Ռուսական պատերազմները իրենց աչքը բացած էին . մնաց որ՝ Պալքանեան ժողովուրդները չէին ծածկեր անկախութեան տենչը : Գարատաղ՝ զմայլելի ամրոց մը կրնար դառնալ այդ տեսակ դաշնակցութեան մը համար . և յետոյ , ինքնին ռուսական բերդ մը չէր արդէն , միշտ պատրաստ Հիւսիսի կայսրութեան նկատումներուն և հաշիւներուն տրամադրելու իր ահարկու ռազմիկները , գրեթէ իր բովանդակ ժողովուրդը . որովհետև ամէն մարդ , և իշխանն ալ , նոյն իսկ կիները զինուոր էին այնտեղ :

Իշխան Նիքոլայ հազիւ իր գահուն տիրացած էր երբ էօմէր փաշա Գարատաղ մտաւ և սկսաւ քարուքանդ ընել ամէն կողմ : Ասպարէզը բաց էր իր առջեւ , որովհետև Ռուսիա չէր միջամտեր , ու եւրոպական միւս տէրութիւնները Բարիզի դաշնագրով Գարատաղը Թուրքիոյ ամբողջութեան մաս հռչակած էին , նոյնինքն Թուրք պատուիրակներու պահանջման վրայ :

Զարմանալին այս վերջիններուն ընթացքը չէր , այլ Ռուսիոյ անտարբերութիւնը : Ետ սերտ կապեր Գարատաղը կը միացնէին իր հզօր ցեղակցին : 1714ին՝ երբ Բէթրովիչներու առաջին Վլատիքան հեռացաւ Չէթինեէէն՝ ուր մտած էին Թուրքերը , շիտակ Ռուսիա ուղղուեցաւ : Սլաւցեղին բոլոր հատուածները , անոնք մանաւանդ որ թրքական իշխանութեան տակ կը մնային , այդ տարիներուն նոյնպէս իրենց աչքը Ռուսիոյ յառած էին : Դեռ նոր նոր Մեծն Պետրոս համապաւնութեան դաւանանքը հաստատած՝ բովանդակ Սլաւ ընտանիքը կը գրգռէր թրքական տիրապետութեան դէմ սրբազան պատերազմ մղելու : Իր գործակալները Պալքաններու մէջ ապստամբութեան սերմերը կը ցանէին , և ինք ալ կայսրութեան զինուորական ոյժը տրամադրած էր այդ մեծ նպատակին : Յոյսի անդրանիկ չըջանն էր որ կը բացուէր Պալքանեան սլաւ ազգութեանց համար : Առաջին Բէթրովիչը՝ Վլատիքա Տանիլօ՝ որ Ռուսիա ժամանեց , իր կարգին լեցուած էր այդ յոյսով : Մեծն Պետրոս որ շատ լաւ կը հասկնար Գարատաղի կարեւորութիւնը իր հետապնդած նպատակին համար , սիրով ընդունեց Տանիլօն : Ռուսեւգարատաղեան դաշնակցութիւնը՝ որ հակառակ անգիր ըլլալուն , շատ մը գրաւոր դաշնագիրներէ աւելի ամրակուռ պիտի մնար , այդ օրը կնքուեցաւ : Մեծն Պետրոս՝ 10,000 ռուբլիի նուէրով մը ամրապնդեց զայն , և Տանիլօ գրպանը լեցուն ու սիրտը զեղուն վերադարձաւ իր օճախը՝ Շքօտրայի փաշային գործած աւերը դարմանելու : Անկէ ասդին՝ Գարատաղի Վլատիքաները , իշխանութեան կոչուելնուն պէս , սկսան Բեթերսպուրկ երթալով իրենց գահակալութիւնը հաստատել տալ :


Գործքով՝ ինքզինքնին Թուրքիայէն անջատելով՝ Ռուսիոյ անմիջական հովանաւորութեան տակ կը դնէին : Երբ Պետրոս Բ . կրօնական հանգամանքը թօթափելով «Կօստօտար» (իշխան) տիտղոսը առաւ իրը միապետ , դարձեալ Բեթերսպուրկ երթալով Զարին նուիրագործել տուաւ իր նոր հանգամանքը :

Երբ Նիքոլայ իշխանութեան բարձրացաւ , պաղ հով մը անցած էր այս սերտ մտերմութեան վրայէն : Խրիմի պատերազմը՝ զոր Ռուսիա մղած էր Սլաւութեան գերագոյն շահերուն համար , անտարբեր թողած էր Գարատաղը : Ռուսիոյ հիասթափութիւնը աւելի դառն եղած էր անոր համար մանաւանդ որ կը կարծէր ապահով ու հաւատարիմ դաշնակից մը ունենալ Գարատաղի մէջ . անոր գործակցութիւնը ապարդիւն չպիտի ըլլար : Սակայն Գարատաղ չէզոք մնացած էր : Ատկէ՝ Ռուսիոյ լքումը : Ի զուր Նիքոլայ իշխան աշխատեցաւ Զարին աջակցութիւնը ձեռք բերելու՝ երբ էօմէր փաշա իր երկիրը կ'աւերէր : Վերջի վերջոյ Ֆրանսան էր որ միջամտեց և կասեցուց թրքական բանակը , թէեւ Թուրքերը բոլորովին ամբողջութեամբ իրենց սեփականատիրութեան տեսակէտը , Գարատաղի մէջ ամրոցներ շինելու իրաւունք ձեռք բերելով : Ֆրանսա նիւթապէս ալ օժանդակեց Գարատաղի . հանգանակութիւններու շնորհիւ խոշոր գուժարներ զրկուեցան իշխանին . որուն ժողովուրդը սովի մատնուած էր : Նիքոլայ սակայն շատ լաւ կը ճանչնար իր մարդիկը , նոյններուն պզտիկ մասը միայն պարէնի յատկացուց , և մնացած կարեւորագոյն մասով զէնք զնեց իր լեռնականներուն համար : Սովածար ըլլալով հանդերձ , անոնք աւելի անխառն ու խանդավառ յափշտակութեամբ փարեցան իրենց տրուած զէնքերուն քան հացին : Ետ շանցած , վրայ պիտի հասնէր 1875—78ի զէնքերուն քան հացին : Ետ շանցած , վրայ պիտի հասնէր 1875—78ի տաղնապը , և այդ զէնքերով է որ Գարատաղցիք աւելի քան 60,000 թուրք զինուորներ պիտի սպաննէին կամ անկարողութեան պիտի մատթուրէր զինուորներ պիտի սպաննէին կամ անկարողութեան պիտի մատթուրէր նէին : Այս անգամ՝ Գարատաղ Բեթերսպուրկէն հրահանգի չէր սպասած ռուսական նկատումներուն ծառայելու համար : Վարձքը իր անկախութիւնն էր , զոր Ռուսիա կը նուիրագործէր Սան Սթէֆանօի դաշնագրով , շնորհելով նաև գեղեցիկ և յուսթի հողամասեր՝ միանգամայն թէ՛ Հէրսէքէն , թէ՛ Նովի Բազարէն և թէ՛ Ալպանիայէն :

Ինչպէս տեսանք արդէն , Պէրլինի Վեհաժողովը՝ միւս պալքանեան ազգերուն հետ յուսախաբ թողուց նաև Գարատաղը : Իր անմիջական գրաքին՝ Աւետրիոյ նկատումներուն պատճառաւ , Սան Սթէֆանօի դաշնագրով իրեն սահմանուած բաժինն ալ կրճատուեցաւ : Եւ սակայն Գարատաղի ձեռք բերածը դարձեալ մեծ բան էր՝ բաղդատմամբ մանաւանդրատաղի ձեռք բերածը : Բօտկօրիցայի հովիտը , Շքօտրայի լիճին իր նախկին հողային դրութեան : Բօտկօրիցայի հովիտը , Շքօտրայի լիճին մէկ մասը , Բլալայի ու Կուսինեէի շրջանակները , ինչպէս նաև Անթիվարիի շրջանակը կը բաւէին իր ճակատագիրը յեղաշրջելու առաջ ոչ ծով ունէր , ոչ մշակելի հող . Պէրլինի Գաշնագիրը թէ՛ հող կու տար իրեն և թէ՛ ծով : Գարատաղ այլևս կրնար մտնել նոր ճամբու մը մէջ , որ քաղաքակրթութեան ճամբան պիտի ըլլար : Եւ այդ ճամբուն մէջ անկախ նոյնքան արթնանք ու յատկութիւն ցոյց տուաւ , որքան որ ունեցած էր զինուորա-

առ թիչ օտար դրամագլուխը սկսաւ այնտեղ մտնել. կոյս էր երկիրը և շատ գործ կար ընելիք, մանաւանդ որ հաստատուած կարգերը ամէն տեսակ երաշխաւորութիւն կ'ընծայէին կատարուելիք ձեռնարկներու ապահովութեան մասին: Կեանքի նոր պայմանները, մանաւանդ աշխատելու, ճակտի քրտինքով ապրելու վարժութիւնը բարերար գործ մը տեսած էին. երբեմնի վայրենի բարքերը սկսած էին մոռցուիլ. աւազակները մըտած էին քաղաքակրթութեան ճամբուն մէջ:


Միակ մարդու մը, Նիքօլա Իշխանին գործն էր այս շրջափոխութիւնը: Իր անդուլ ճիգերուն և իմաստութեան շնորհիւ, կրցաւ յեղաշրջել այն տեսակ կարգ ու սարքեր, որոնք դարաւոր արմատներ ունէին և անսրբագրելի կը նկատուէին: Անշուշտ իրաւունք ունէր Փարատաղի Իշխաններէն մէկը՝ երբ իր ժողովուրդին յաւակնութիւնները արժեցնելու համար կ'ըսէր հպարտօրէն. «Թիւով պղտիկ ենք, բայց կամքով մեծ»: Կամքը իրականացուցած էր այդ հրաշքը: Հազիւ իր անկախութեան տիրացած, Փարատաղ արդէն իսկ որոշ նշանակութիւն մը ձեռք բերած էր, և իր բարեկամութիւնը փնտռել կուտար: Նոր կարգերու և նոր բարքերու մուտքը այնքան իմաստութեամբ ու հաշուով կ'ըլլար որ ցեղին հոգին չէր եղծուեր. քաղաքակրթուած Փարատաղին միշտ երբեմնի պատերազմիկն էր, հպարտ ինչպէս իր նախահայրերը, սիրահար իր անկախութեան և անրաժան իր զէնքերէն: Պերլինի վեհաժողովը հարթած էր այդ լեռներուն շուրջը մշտապէս յայտնուող անհամաձայնութիւնները, սակայն չէր կրցած Փարատաղիները թուրքերուն հետ հաշ-



1877 թ. պրակար էջերները
Սուրբ Գրիգորի և Նախնական թանգարանի
իրենց դրոշմով և նախնական թանգարանի

տեցնել: Ընդհարումները միշտ անպակաս էին սահմանազխուն վրայ, և շատ հեղձ լեռնակունքները զէն ի ձեռին սահմաններն ալ կ'անցնէին, Նովի Բաղարի Սանճագին մէջ՝ օտար լուծի տակ մնացած իրենց եղբայրներուն օգնութեան հասնելու համար: Արօտատեղիի կռիւներ մանաւանդ շարունակ իրար կը ձգէին գարատաղի և արպանացի հովիւները, ու կռիւը չէր սահմանափակուեր, կը գառնար ընդհանուր, ինչ որ անմեռ կը պահէր վաղուցուան ատելութիւններն ու ոխերը:

Պղտիկ, աննշան Փարատաղը սակայն, սոսկ իր ներքին կազմակերպութեամբ և յառաջդիմութեամբ երբեք չպիտի հասնէր իր արդի նշա-



նակութեան, եթէ Նիքօլա Իշխան՝ ճարտար կազմակերպիչ մը ըլլալուն չափ ալ ճարպիկ, մանաւանդ գործնական դիւանագէտ մը չըլլար: Ատեն մը՝ Փարատաղի քաղաքականութիւնը շատ պարզ էր. — հաւատարմութիւն ռուսական նկատումներուն և հաշիւներուն: Եւ ասիկա էապէս իրապաշտ քաղաքականութիւն մըն էր, ու ոչ թէ լոկ վերացական, ինչպէս կարծուի թերեւս: Ծիշտ է որ ատոր մէջ կային նաև վերացական պատճառներ, ցեղակցութեան սերտ կապեր Ռուս տարրին հետ, բայց Փարատաղի հաւատարմութիւնը Բէթէրսպուրկի հրահանգներուն, տարբեր անհրաժեշտութեանէ մը կը ծնէր: Ամէն կողմէ Օսմ. կայսրութենէն շրջապատուած, ճգմուած Փարատաղը՝ շունչ առնելու, ապրելու համար ստիպուած էր անընդհատ մաքառիլ թուրքերուն հետ: Միայն Ռուսիան էր որ

իրեն կ'օգնէր այդ պայշարին մէջ: Մեծն Պետրոսի կողմէ Վլատիքա Տանիրօի տրուած 10,000 ռուբլի նպաստը աւանդութիւն մը դարձած էր: Ամէն տարի Գարատաղ դրամ կ'ընդունէր ու նաև զէնք, ինչ որ անհունապէս աւելի նախընտրելի էր իրեն համար: Այս կրկին նպաստը կը շարունակուէր Պերլինի Վեհաժողովէն ետքն ալ, ու մանաւանդ զէնքի առաջումները աւելի կարեւորութիւն ստացած էին: Գործածութենէ ինկած հրացաններուն հետ զորս Ռուսիա բաժին կը հանէր իր պզտիկ դաշնակցին, Չէթինէ կը զրկուէին նաև թնդանօթներ: Ահա այսպէս՝ Ռուսիոյ հետ կապուած դաշինքը անհրաժեշտութիւն մըն էր մշտապէս զէն ի ձեռին Թուրքիոյ դէմ կռուելու ստիպուած Գարատաղին համար:

Այս քաղաքականութիւնը սակայն բացարձակ կղզիացման մէջ կը պահէր Գարատաղը, և Նիքօլա իշխան շատ լաւ ըմբռնած էր թէ նոյն իսկ մեծ ու հզոր երկիրներու վայելած զիրքը խոշոր չափով մը արդիւնքն է անոնց միջազգային յարաբերութեանց: Մանաւանդ որ Պերլինի Գաշնագրէն վերջ, Գարատաղ աշխարհագրական նոր նշանակութիւն մը կը ստանար: Երբեմնի հայդուկներու բոյնը, ծովով և նոր հողերով օժտուած, ու բնական շատ լաւ պայմաններով նպաստաւորուած, պէտք էր որ ինքզինքը ներկայանալի վիճակի մը մէջ դնէր, որպէս զի կարենար արժեքնել նոր յաւակնութիւններ և անոնց իրականացման գետին հարթէր: Սան Սթէֆանօի Գաշնագիրը իրեն ամբողջ պէտք եղածը չէր կրցած տալ. և տակաւին այդքանն ալ կրճատուած էր Պերլինի Գաշնագրով: Պէտք էր ամուր կռուաններ ստեղծել՝ առաջին յարմար առիթէն օգտուելու համար. և այդ կռուանները դիւանագիտութիւնն է որ պիտի գոյացնէր:

Հաւատարիմ մնալով հանդերձ Ռուսիոյ, որուն բարեկամութիւնը հիմն էր իր քաղաքականութեան, իշխան Նիքօլա սերտ յարաբերութիւններ մշակել սկսաւ բոլոր դրացիներուն հետ: Նոյն իսկ իր ժողովուրդին դարաւոր ատելութիւնը խեղդեց՝ Պոլիս այցելութեան գալով Ապտիւլ Համիտին: Թուրքը միշտ նոյն աւանդական թշնամին էր, բայց վերջապէս կարելի չէր հին սխաթէմով. — մշտակայ աւաղակութեամբ ու ջարդերով, — պայքարիլ անոր հետ. երկար ստեն կար որ Չէթինէի Գանկերու Աշտարակը գանկերով չէր պճնուեր, և Գարատաղիք. նոր զբաղումներու յանձնուած, այլևս գնդախաղ չէին խաղար իրենց թշնամիներուն գլխով: Իշխանը ստիպուած էր նկատի առնել նաև Աւստրիան որ Պերլինի Վեհաժողովէն ասդին միանգամայն թէ՛ ծովէն՝ Տալմացիոյ միջոցաւ, և թէ՛ Պօննա Հէրսէքի ու Նովի Բազարի կողմէն Գարատաղը կը շրջապատէր, զայն իր ազդեցութեան ենթարկելու յայտնի ճիգերով: Որքան ատեն որ Վիեննայի և Բէթէրսպուրկի դահլիճները համաձայն էին իրարու հետ, իշխանին գործը կը դիւրանար. բայց Աւստրիա և Ռուսիա աւելի յաճախ անհաճաճայն կ'ըլլային իրարու հետ, և ինք՝ իբր դաշնակից Ռուսիոյ ու անմիջական դրացի Աւստրիոյ պարտաւոր էր արտակարգ ճկունութիւն ցոյց տալ՝ միանգամայն երկու հակառակորդներուն, և անոնց իրարու հակոտնեայ շահերուն հետ հաշտ մնալու համար:

Պէտք չէ մոռնալ որ Գարատաղ մեծ նշանակութիւն ունէր Աւստրիոյ

համար, մանաւանդ զէպի Սելանիկ իր ծաւալման տեսակէտով: Եթէ աչքէ անցրնէք Արևելեան Եւրոպայի քարտէսը, շուտով պիտի հասկնաք այդ նշանակութեան պատճառը: Սելանիկ իջնելու համար՝ Աւստրիա պէտք ունի Նովի Բազարի նեղ անցքին. այդ Սանճագին մէջ՝ Սերպ և Գարատաղի տարրը շատ բազմաթիւ է. դարձեալ՝ անիկա կը գտնուի Գարա-



ԴԱՇՆԱԿԻՑ ՎԵՀԱՊԵՏՆԵՐԸ
Ձախէն՝ Բէթար Սերպիոյ, Նիքօլա Գարատաղի, Ֆէրտինանտ Պուլկարիոյ, Ետրիոս Յունաստանի

տաղի և Սերպիոյ միջև, որոնք միևնոյն ծագումը ունին ու կրնան ձեռք ձեռքի տալ՝ իր առջև փակելով Արևելքի ճամբան: Աւստրիոյ համար՝ պետական անհրաժեշտութիւն մըն էր Գարատաղը իր բուռնցքին սպառնալիքին տակ պահելը: Իշխան Նիքօլա սակայն այդ վտանգը մասամբ չէզոքացուց, խնամութիւն հաստատելով Իտալիոյ արքունիքին հետ: Իր աղջկան Իտալիոյ թագուհի դառնալը սոսկ բարոյական աջակցութիւն մը

չէր բերեր Գարատաղի: Իտալիա՝ Ադրիականի մէջ մեծագոյն մրցակիցն է Աւստրիոյ. հետեւաբար, զօրաւոր Գարատաղ մը որ ամէն բանէ առաջ Աւստրիոյ ծաւալման դէմ խոչնդոտ պիտի դառնար, շատ կը յարմարէր իր հաշիւներուն: Ժամանակէ մը ի վեր՝ դրամն ու զէնքը միայն Ռուսերէն չէին գար Գարատաղ. Նիքոլա իշխանին Վեհափառ փեսան նոյնպէս դրամով ու թնդանօթով կը կաղընտէր իր աները: Յետոյ, առաւելապէս իտալական դրամագրուին էր որ կը գործէր Գարատաղի մէջ:

Իշխանը խնամութեամբ միայն Իտալիոյ արքունիքին չէ կապուած: Իր անդրանիկ աղջիկը, հիմայ մեռած, կինն էր Սերպիոյ Բէթար թագաւորին, երբ այս վերջինը տակաւին գահ չէր բարձրացած. յետոյ երկու աղջիկներ հարս դրկած է Բէթարսուլուրի արքունիքը, զորոնք մեծ-գուք սերուն հետ ամուսնացնելով: Բոլոր այս խնամութիւնները քաղաքական հաշիւներու արդիւնքն են. հեռատես իշխանը անոնցով մանաւանդ ամբարանդած է իր երկրին դիրքը: Այնքան լաւ հաշուող ու նախատեսող եղած է այս տեսակ խնդիրներու մէջ որ Սերպիոյ հետ միութիւն մը իրականացնելու մտքով մինչդեռ մէկ կողմէ իր աղջիկը կնութեան կու տար Գարաձօրձէվիչներու Բէթար իշխանին, երբ դեռ անիկա գահէն հեռու՝ տարագիր կ'ապրէր, միւս կողմէ ալ իր Միրքօ զաւկին հարս կ'առնէր իշխող Օպրէնէվիչներու Աղեքսանդր թագաւորին աղգական աղջիկ մը: Սերպիոյ գահը Օպրէնէվիչներուն ձեռքը ըլլար թէ Գարաձօրձէվիչներուն ձեռքը. միշտ խնամի մը պիտի ունենար անոր վրայ:

Նիքոլա իշխան իր դիւանագէտի բացառիկ, մանաւանդ գործնական կարողութիւնները ի յայտ բերաւ մասնաւորաբար 1908ի տագնապին մէջ, Պօսնա-Հէրսէքի Աւստրիոյ կցման խնդրին առթիւ: Սերպերը, որոնք քիչ էր մնացեր որ պատերազմի մղուէին, չկրցան բան մը շահիլ իրենց իրարանցուէն: Սակայն պզտիկ Գարատաղը որ նոյնպէս պատերազմի սպասնալիք կ'ընէր, ոչ միայն խօսքով, այլ նաև գործքով՝ իր աննամբեր ռազմիկները աւստրիական սահմաններուն վրայ համախուրտելով, յաջողեցաւ վերջնականապէս իր բացնել Ադրիականի իր ծովեզերքը, մասնաւորաբար Անթիվարիի նաւահանգիստը, զոր Պերլինի Դաշնագրին 29րդ յօդուածը Աւստրիոյ հսկողութեան ու թեւարկութեան տակ կը դնէր կարգ մը կաշկանդիչ պայմաններով: Ըստ այդ յօդուածին, Գարատաղ չէր կրնար պատերազմական նաւ ու դրօշ ունենալ. չէր կրնար նաև օտար մարտանաւեր ընդունիլ իր նաւահանգիստները, որոնց ոստիկանական և առողջապահական հսկողութիւնը Աւստրիոյ կը պատկանէր: 1908ի տագնապէն օգտուելով, Նիքոլա իշխան այս կաշկանդումներէն ազատեց իր ծովեզերքը. Պերլինի Դաշնագրին 29րդ յօդուածը ո՛չ փոխուեցաւ, ոչ ալ ջնջուեցաւ, բայց Գարատաղ գործքով բացարձակ տէր դարձաւ իր ծովեզերքին: Ինչպէս առիթ ունեցանք արդէն տեսնելու, առաջին անգամը չէր որ Պերլինի Դաշնագիրը կը բռնաբարուէր. Աւստրիոյ կողմէ Պօսնա-Հէրսէքի իւրացումը նոյնպէս Պերլինի Դաշնագրին բռնաբարումն էր. անկէ քիչ առաջ, Ֆէրտինանտ իշխանը բռնաբարած էր Պերլինի Դաշնագիրը՝ Ալբերտեան Բուձէլին վերջնականապէս Պուրկարիոյ կցելով և հանդիսա-

ւորապէս ինքզինքը Չար հոչակել տալով Թիրնօվօի մէջ: Իտալիա, Փրանսա, Ռուսիա և Անգլիա՝ 1908ի տագնապին մէջ օգնեցին Գարատաղի. ու եւրոպական վեց Մեծ Տէրութիւններէն չորսին համակրութիւնն ու աջակցութիւնը ապահոված ըլլալը՝ լաւագոյն ապացոյցն է անշուշտ Նիքոլա իշխանին դիւանագիտական յատկութեանց: 1910ի սկիզբը՝ Փրան-



Գարատաղի հետեւակազմերը

սական նաւաբաժին մը Անթիվարիի նաւահանգիստը ժամանելով, խանդավառ ընդունելութեան առարկայ դարձաւ Գարատաղցւոյ կողմէ: Ուրախ էր մանաւանդ Նիքոլա իշխանը, որովհետեւ 1908ին՝ Աւստրիոյ դէմ տարած դիւանագիտական յաղթանակին նուիրագործումն էր օտար մարտանաւերու մուտքը իր այլևս կատարելապէս ազատ նաւահանգիստին մէջ: Մինչեւ այստեղ՝ ցոյց տուինք միայն փայլուն էջերը Գարատաղի ժամանակակից պատմութեան: Կան սակայն սև էջեր ալ, մասնաւորաբար

Սահմանադրութեան հարցն ու Սերպիոյ հետ փոխադարձաբար մղուած տխուր պայքարը, ուրկէ երկու երկիրներն ալ ոչինչ կրնային շահիլ, և որ սոսկ իրենց պառակտման ու տկարացման տենչացող Աւստրիոյ հաշիւներուն դիւր կուգար, ինչպէս պիտի տեսնուի հետեւեալ հակիրճ ամփոփումէն:

1905 Հոկտեմբերին՝ Գարատաղի Իշխանը ինքնաբերաբար ծանոյց իր ժողովուրդին թէ սահմանադրութիւն մը կը շնորհէ իրեն: «Մշակուած ընկերութեան մը պատկանող ամէն մարդ, պէտք է որ նոյն աստին ազատ քաղաքացի մը ըլլայ»: Իշխանը այս բառերով կը մեկնէր իր շնորհը, իրօք շնորհ, որովհետեւ լոկ իր կողմէ նշանակուած հինգ հոգիէ բաղկացեալ Ծերակոյտի մը անուանական հակակշռին ենթակայ բացարձակ վեհապետէ մը կը բղխէր, առանց արտաքին ճնշման, առանց մանաւանդ ժողովրդային պահանջի: Այդ սահմանադրութեամբ կը հաստատուէր միակ Խորհրդարան մը, 76 անդամով, որոնց 14ը պաշտօնի վրայ գանուող բարձր պաշտօնատարներէն և կղերէն պիտի անուանուէին, ու մնացեալ 62ն ալ պիտի ընտրուէին ժողովուրդին քուէով: Քուէարկելու իրաւունք կը ստանային բոլոր այն լեռնականները որոնք տարեկան 15 քուրօն տուրք կը վճարէին: Մամուլը կը հռչակուէր ազատ, և նախնական կրթութիւնը պարտաւորիչ ու ձրի կը դառնար: Իշխանը՝ ելմտական հակակշռի բացարձակ իրաւունք տալով հանդերձ Խորհրդարանին որ չորս տարուան շրջաններ պիտի ունենար, չափազանց լայն առանձնաշնորհումներ կը վերապահէր իրեն. ինք կը մնար պետ բանակին՝ պատերազմ կամ խողաղութիւն վճելու իրաւասութեամբ. ինք կ'անուանէր կամ պաշտօնանկ կ'ընէր նախարարները, առանց Խորհրդարանին հաշիւ տալու. կրնար տակաւին լուծել Խորհրդարանը, և իր ուղած ատենը միայն ընտրել նորը: Եթէ լուծումը տեղի ունենար ելմտացոյցի վերաբերող անհամաձայնութեան մը պատճառաւ, Խորհրդարանին արձակումէն վերջ իրաւունք ունէր գործադրելու նախորդ շրջանին համար քուէարկուած ելմտացոյցը: Հաւանական է որ այս կարգադրութիւնը կ'ընէր պարզապէս օտար դրամազուլտին մուտքը քաջալերելու համար, որովհետեւ դրամատէրներ՝ առաւելապէս խորհրդարանական երաշխաւորութիւն ընծայելու կարող երկիրներու կը շուային իրենց դրամը: Եւ կամ թերեւս Իշխանը չէր ուզած ետ մնալ Պալքանեան միւս Պետութիւններէն, որոնք Գարատաղէն արդէն իսկ խորհրդարանական կազմ ունէին: Ինչ որ ալ ըլլայ բուն պատճառը, իրողութիւնը սա է որ այդ սահմանադրութիւնը, մանաւանդ անոր հաստատած խորհրդարանական դրութիւնը, Իշխանին ակնկալած բալրերու նախանձելի վիճակը չըջեցին բոլորովին աննպաստ կերպով: Այս մանադրական դրութեան Իշխանը մի միայն իր սերունդին մարդիկը նկատի առած էր. կը կարծէր մնալ նոյն յարգուած և գործելու բացարձակ ազատութիւն վայելող պետը. սահմանադրութիւնն ու խորհրդարանական

դրութիւնը լոկ արտաքին չպար մը, չքեղանք մը պիտի ըլլային վաղընջուց կարգերուն վրայ, ու չպիտի շրջէին զանոնք: Եւ սակայն, իր ժամանակուան մարդոցմէն զատ կար նաև եւրոպական համալսարաններու մէջ կրթուող սերունդը. որ արդէն իսկ յանձնուած էր աւելի ուսման վար խաշաներու և որ, սահմանադրական դրութենէն օգտուելով, պիտի աշխատէր էապէս ժողովրդապետական կարգեր հաստատելու երկրին մէջ: Իշխանը որ իր «հոգիին զաւակը» կը հռչակէր այդ սահմանադրութիւնը, շուտով յուսախար եղաւ: «Զաւակը» ըմբոստացաւ իր հոգիին դէմ: Հա-



Գարատաղի կամաւորներ

զիւ Խորհրդարանը բացուած, ճառերը ստացան այն աստիճան սանձարձակ ու ծայրայեղ բնոյթ մը որ իր հոգին խոցուեցաւ: Յետոյ, իր նախարարները սկսան տարակարծիք գտնուիլ իրեն հետ՝ պետական իրերու մասին: Անոնք յաճախ դիտողութիւններ ըրին նոյն իսկ իր սեփական արքունիքին ծախքերուն նկատմամբ և զանոնք կրճատելու աշխատեցան: Յառաջադէմ կուսակցութիւնը՝ որ «Ազգային-ազատական» անունը առած էր և որուն պետն էր Պ. Ռասուլիչ, շուտով իր կողմը շահեցաւ երիտասարդութիւնը, դարձաւ ընդդիմադիր հզօր սարր մը, միանգամայն դժգոհ ձգելով թէ՛ հիասթափուած Իշխանը և թէ՛ մեծ ընտանիքներու պետերը, որոնք արդէն հաշտ աչքով չէին դիտած դեռ երէկ իրենց աւատական իրաւասութեանց ենթակայ մարդոց հետ հաւասար աստիճանի մը վրայ գալերնին:


Յուսախար Իշխանը շուտով ստիպուեցաւ ընտրել վերկութեան մէկ

հատիկ ճամբան : Հասկացած էր թէ կանխահաս է սահմանադրութիւնը , որովհետեւ ո՛չ միայն չէր զօրացներ երկիրը , այլ ընդհակառակը կը տկարացնէր զայն . հետեւաբար՝ պէտք էր իրերը կարելի եղած չափով վերադարձնել իրենց հին դրութեան : Այս վերադարձը անկարելի էր՝ առանց բուռն միջոցներու : Իշխանը չընկրկեցաւ անոնց առջև , չխնայեց ո՛չ հալածանքը , ո՛չ ալ կամայական արգելքներն ու կարգադրութիւնները , ինչ որ իրեն դէմ հանեց երիտասարդ տարրն ու յառաջագէմ կուսակցութիւնը : Շատ զարգացած Գարատաղցիներ ստիպուեցան տարագիր ապրիլ օտար երկիրներ , մանաւանդ Սերպիա , և պայքարիլ Իշխանին դէմ :

Այս ներքին պառակտման հետ զուգընթաց կ'երթար նաև Սերպիոյ հետ հակառակութիւնը : Երկու համարիւն երկիրներուն մէջ այն կասկածը կար թէ փոխադարձաբար իրար կ'անելու կ'աշխատին : Աւելի կամ նուազ երեւակայական դաւադրութեանց յաճախանք մը գրաւած էր միանգամայն թէ՛ Չէթինէի և թէ՛ Պէլկրատի արքունիքները : Նիքօլա Իշխան մանաւանդ միշտ այն կասկածը ունէր թէ Գարածօրձէվիչները , նոյն ինքն իր փեսան՝ Բէթար թագաւորը՝ զինքը սպաննել տալ կ'ուզեն , Գարատաղը Սերպիոյ կցելու համար : Եւ սահմանադրական կարգերու բարձուձէն դժգոհ Գարատաղցի երիտասարդութեան գրկարաց ընդունելութիւնը Սերպիոյ մէջ , բոլորովին կը զօրացնէր այս կասկածը : Որքան հիմնաւոր էր այդ մտաւախութիւնը , որքան մանաւանդ տեղի կար վրդովուելու իբր թէ Իշխանին դէմ մահափորձ կատարելու համար Չէթինէ մտցուած «պոմպա»ներու կասկածելի խնդրէն : Իրողութիւնը սա է որ Իշխանը թէ՛ այդ կասկածէն և թէ՛ այդ ենթադրեալ դաւադրութենէն օգտուեցաւ՝ վերջնականապէս ջախջախելու համար «Աղգային-ազատական» կուսակցութիւնը , որուն պետը՝ Պ. Ռատովիչ՝ 15 տարուան թիապարտութեան դատապարտուեցաւ իբր «մասնակից» դաւադրութեան : Իր կուսակցութեան պատկանող բոլոր յայտնի մարդիկն ու շատ մը զարգացած երիտասարդներ նոյնպէս բանտերը նետուեցան կամ ստիպուեցան երկրէն հեռանալ :

Որքան ալ ծանր էին այս սխալները , նորէն շուտով դարմանուեցան : Իշխանը աշխատեցաւ մոռցնել իր ձեռք առած բուռն միջոցները և տակաւ առ տակաւ մօտենալ իր ժողովուրդին : Ծառայութիւնները զորս մատուցած էր Գարատաղեան հայրենիքին և որոնց յիշատակը ոչինչ կրնար ջնջել , բոլորովին դիւրացուցին այդ գործը : Այս օրուան պատերազմին մէջ Իշխանին անձին շուրջը պտտակացող խանդավառութիւնը , որուն կը մասնակցի բովանդակ ժողովուրդը , ապացոյց մըն է իր յաջողութեան : Սերպիոյ հետ ծագած անհամաձայնութիւնն ալ կարգադրուեցաւ շուտով . առաջին մերձեցում մը եղած էր արդէն 1908ի տազնապին առթիւ , երբ Աւստրիա կուլ կուտար իրենց երկուքին ալ սիրական Պօսնա-Հէրսէքը : Աւելի ետքը , իմաստուն խորհուրդներ լաւ ընդունելութիւն գտան թէ՛ Չէթինէի և թէ՛ Պէլկրատի մէջ , ու տակաւ կարելի դարձաւ արդի համախումբ գործակցութիւնը միեւնոյն նպատակին համար : Նիքօլա Իշխան որ պատուական վեհապետի իր յատկութիւններուն կը միացնէ բանաս-

տեղծի թանկագին արժանիք մըն ալ , գրած է նաև աղգային տուամերգութիւն մը՝ Պալխաներու Թագուհին , որուն հերոսուհին կ'ըսէ տեղ մը .




Օրագրիկով հետազոտութիւն խորհրէն շուրջը , Պուկարներու կողմէ

«Եթէ Սերպերը , Պուկարներն ու Երուսթները եղբայրաբար իրարու ձեռք տային , և եթէ նկատի առնելով նաև իրենց դրացի Յոյներուն արժանիքը՝

բարեկամաբար ապրէին անոնց հետ, այսօր ուրիշ երգեր պիտի հնչէին Ողիմպոսէն մինչև Տրալա: Բայց, աւա՛ղ, ատելութիւնն է որ կը յաղթանակէ»: Խորաթափանց քաղաքագէտը մատնող այս սրտայոյզ ըզձանքին իրականացման՝ անշուշտ ինք մանաւանդ պիտի տենչար ու աշխատէր: Նոյն ատեն՝ կը շարունակէր նաև բարեկաւել իր երկրին միջազգային դիրքը, լաւագոյն յարաբերութիւններ մշակելով բոլոր այն տէրութեանց հետ՝ որոնց բարեկամութիւնը ո՛ր և է կերպով կրնար օգտակար դառնալ Գարատաղի: Եօթանասնական թուականներուն իրեն բաւարար երեւցող հողը տակաւ կը սկսէր պզտիկ գալ. աշխատութիւնը շուտով գրաւած էր երբեմնի կոյս վայրերը. անտէր հող չկար. և աշխատելու ան համբեր նոր բազուկներ հոսած էին, որոնց հողը կը պակսէր: Իշխան Նիքոլա հողին մանաւանդ կարեւորութիւն կուտար, առաւելագէս անկէ կ'ակնկալէր իր ժողովուրդին քաղաքակրթական յառաջդիմութիւնն ու աշխուճացումը: Իր մտածման ճշգրտութիւնը հեշտիւ պիտի ըմբռնենք, աչքի առջեւ բերելով մեր սեփական երկրին Քիւրտերը: Անոնց ամէնքն ալ աւազակ չեն. կայ հանդարտ ու բարեբարոյ մաս մը, թալանի և ամէն տեսակ բարբարոսութեանց անընդունակ, որ շատ հաշտ կ'ապրի իր դրացի ժողովուրդներուն հետ: Հողագործ Քիւրտն է ասիկա, աշխատութեան լծուած, ճակտի քրտինքով, — հէլալ վաստակով, — ապրելու սովորած և աշխատութեան վարժութեամբ ազնուացած: Մինչդեռ աւազակ Քիւրտը բնաւ գործ չունի հողի տատանքին հետ և անբաժան կը մնայ իր գէնքէն, որովհետեւ ստիպուած է հարստահարութեամբ ապրի: Այլպանացիք — Եւրոպական Թուրքիոյ Քիւրտերը, — նոյն բանն են: Մեր ազգն անգամ այս մասին շատ թելադրիչ օրինակ մը կ'ընծայէ: Հայաստանի, նոյնիսկ Կիլիկիոյ անդորր, մեզմ բարքեր ու սովորութիւններ ունեցող, խաղաղ, աշխատութեան սիրահար և իրենց ազնիւ յատկութիւններով ծանօթ Հայերուն բաղդատմամբ՝ Զէյթունցիք անզուսպ և սակայն բարբարիկ մնացած են, զէնքը չեն ձգեր ձեռքերնուն, ու չեն ալ կրնար խաղաղ ապրի. հողի և առհասարակ ամէն տեսակ աշխատութեան անընտելութիւնն է ասոր գլխաւոր պատճառը: Զուրկ են ընդհանուր Հայերու ազնիւ յատկութիւններէն, որովհետեւ այդ յատկութիւնները արդիւնքն են աշխատելու վարժութեան, որ իրենց համար անսովոր բան մըն է:

Իշխան Նիքոլա՝ հողային նոր ծաւալմանց տենչալու ուրիշ պատճառ մըն ալ ունէր. հողէն, աշխատելու հնարաւորութենէն զրկուած Գարատաղցին որ այլ եւս չէր կրնար աւազակ մը ըլլալ, ստիպուած՝ կը գաղթէր որպէս զի ապրի. և գաղթականութիւնը բարիք մը չէր Գարատաղի պէս պզտիկ ժողովուրդի մը համար: Փառասիրական նկատումներէ անկան պատճառ մըն ալ կար ուրեմն: Իշխանը երկար ատեն բանակցեցաւ Թուրք կառավարութեան հետ՝ կանոնաւորելու համար Պոյանա գետին ընթացքը՝ զոր Տրին գետին քլած աւազները կը խափանէին: Եթէ այդ գործը գլուխ հանուէր, Եքօտրա լիճին մակերեսը պիտի իջնէր և շատ յուռթի հողեր որոնք այսօր ջրողող կը մնան, մշակութեան տրամադրելի

պիտի դառնային: Թուրքիա սակայն ականջ չկախեց, և ատով աւելի քաջալերեց Գարատաղի մէջ անհրաժեշտաբար ծագող երկրակալական ըզ-



Իստամբուլի Թուրք պահեստները ճամբայ կ'ելլեն դէպի Պոլիս

ձանքը: Փորձանքը քիչ մը չափազանց առատ է միշտ այս երկրին գլխուն, բայց եթէ խորը փնտռենք, պիտի տեսնենք իսկոյն որ առաւելագէս իր վարիչներն են որ զսնունք կը հրաւիրեն:

Չմոռնանք նաև քաղաքական իմաստութեան այն փայլուն ապացոյցն
 ալ զոր Նիքոլա իշխան տուաւ վերջին տարիներու ընթացքին, սիրաշա-
 հելով և իր ժողովուրդին հետ եղբայրացնելով Ալպանացոց ամէնէն ա-
 հարկու ու բաղձաւոր տարրը՝ կաթողիկ Մալխասորները, զորս ժէօն-Թիւր-
 քերու անհնարին տխարութիւնը վերջնականապէս Գարատաղի գիրկը
 նետեց: Մեծ յաղթանակ մըն էր ասիկա Գարատաղի համար: Մալխասո-
 րները իրական ոյժ մը կը ներկայացնեն, և ներկայ պատերազմին մէջ
 թանկագին օժանդակներ եղան Գարատաղի համար: Անոնց Օսմ. հայրե-
 նիքէն բաժանուեց սոսկ Թուրքիան չհարուածեց. կորուստը աւելի դաւն
 եղաւ Գերման տարրին համար, որովհետեւ երկար ատենէ ի վեր Աւստ-
 րիա կը ջանար իր կողմը շահիլ իրեն հետ միեւնոյն դաւանանքը ունեցող
 այդ կաթողիկ տարրը: Իր դրամով և իր բրօքականտով Թուրքիայէն ան-
 ջատուած այդ ոյժը գնաց ձեռք ձեռքի տուաւ Սլաւ տարրին հետ, հե-
 տեաբար՝ խոչընդոտ մին ալ ինք դարձաւ Գերմաններու դէպի Արեւելք
 յառաջխաղացութեան դէմ: Աղքատիկ Գարատաղը որ ինքզինքը չէր
 կրնար ապրեցնել, երկար ամիսներու ընթացքին կերակրեց բոլոր Մալխասո-
 րները, և իր ժողովուրդին նեղ եկող պղտիկ երկրին մէջ հանգիստ ապաս-
 տան ընծայեց անոնց: Այս դժուրակ զոհողութիւնը սակայն ոչինչ էր՝ բաղ-
 դատմամբ ձեռք բերուած խոչոր արդիւնքին:

Իշխան Նիքոլա՝ մեծագոյն վեհապետներու յատուկ իմաստութիւնն
 իսկ կը մարմնացնէր: Եւ անշուշտ այդ է պատճառը որ երբ երկու տարի
 առաջ ինքզինքը հանդիսաւորապէս թագաւոր հռչակեց Չէթինեթի մէջ,
 անգամ մըն ալ ոտնակոխ ընելով Պերլինի անիրաւ Դաշնագիրը, ոչ մէկ
 տէրութիւն բողոքի ձայն մը հանեց, որովհետեւ արքայական թագը էապէս
 իրեն արժանի գլուխ մը կը պէտէր: Աննշան Չէթինեթն արտակարգ սո-
 նոյթի և հանդիսաւորութեան վայր մը դարձաւ այդ նշանաւոր օրը: Հա-
 մեստ ու պարզուկ պալատը որ հպիւ թէ անպաճոյճ զօրանոցի մը տպա-
 ւորութիւնը կը թողու, իր խոնարհ երգիքին տակ հիւրընկալած էր Պուլ-
 կարիոյ Ֆէրաինանտ Զարն ու գահաժառանգ Պօրիս իշխանը, Իտալիոյ
 Թագաւորն ու թագուհին (աղջիկ Նիքոլա թագաւորին), Ռուսիոյ Նիքոլա-
 Նիքոլայէվիչ Մեծ-Դուքան ու դքսուհին (նոյնպէս աղջիկ Նիքոլա թագա-
 ւորին), Սերպիոյ գահաժառանգ Աղեքսանդր իշխանն ու իր քոյրը՝ Էլէն
 (երկուքն ալ թու Նիքոլա թագաւորին): Օգոստափառ հիւրերու այս
 շքախումբին մէջ կը գտնուէր նաև յայտնի պետական անձնաւորութիւն
 մը, Հիւսէին Հիլմի փաշան որ Թուրքիան կը ներկայացնէր: Ինչ կը մը-
 տածէր արդեօք այդ հանդիսաւոր օրը, թագակիր ծերունի վեհապետին և
 միւս նշանաւոր հիւրերուն շողջողուն հաւաքոյթին մէջ: Եւ կամ այսօր,
 երբ Պալքանեան Չինակցութեան անակնկալը այս ատիճան խոր ապշու-
 թեան մատնած է բովանդակ աշխարհը, ժամաւորաբար Թուրք պետական
 աշխարհը, Հիւսէին Հիլմի փաշա կը խորհի՞ արդեօք թէ 1910ի այդ անմո-
 գումարու մը ուրիշ բան չէր, այլ գաղանի մէկ նիստը կնքուելու վրայ
 եղող Պալքանեան Չինակցութեան: Այնտեղ՝ Գարատաղի հետ էին Պուլ-

կարիա և Սերպիա. այնտեղ էին մանաւանդ Պալքանեան Չինակցութեան
 երկու մեծագոյն հովանաւորիչները, Իտալիա՝ իր թագաւորով, և Ռուսիոյ
 արքունիքը՝ Նիքոլա-Նիքոլայէվիչ Մեծ-Դուքսով...


Տաժանքով և շատ ուշ իրականացաւ Յունաստանի վերագարթնու մը:
 Իր մէջ մանաւանդ քաղաքական կուսակցութեանց և ամէն տեսակ աւ-
 բոխավարներու հրահրած կիրքերը ամէնէն աւելի սարսիչ դարձան երկրին
 համար: Երկար ժամանակ Յունաստան նշանակութիւն անգամ չունեցաւ
 իբր կազմակերպեալ պետութիւն: Անկախութեան պատերազմի շրջանին
 Յունաստանն էր միշտ, ուր
 անուանական կարգապահու-
 թեան մը թափանցիկ չպա-
 րին տակ կատարեալ անիշ-
 խանութիւն մը կը տիրէր,
 և ուր ամէն մարդ հրամայող
 ու հնազանդող էր միանգա
 մայն, օրուան բերմունքին
 համեմատ: Հակառակ անոր
 որ կանուխ ազատագրուած
 էր և զերծ կը մնար իրմէ
 շատ ետքը անկախութեան
 տիրացած Պալքանեան Պե
 տութիւններու սպառնացող
 վտանգներէն, անոնցմէ ա-
 ւելի յետադէմ եղաւ գրեթէ
 ամէն բանի մէջ: Պոռչտուն,
 մնամէջ, աւելի խօսքի ու
 շարժուձևերու քան գործքի
 հայրենասիրութիւն մը որ
 տեսակ մը հայրենասպանու-
 թիւն էր, Հէլլէներուն մե-
 ծագոյն արդիւնքը եղաւ վե-
 ղականգնութեան ճամբուն



ՉՐԲԱՎՈՐ ՍԱՎՈՅ
 Սպարապետ պուլխոր բանակին

մէջ: Իրենց քաղաքական մարդիկը տարիներ ու տարիներ սոսկ շա-
 դակրատելով ծառայեցին երկրին, և այն կուսակցութիւնները որոնք
 դանոնք կը հովանաւորէին, աւելի իրենց ջոջերուն անձնական փառասի-
 րութիւնն ու հաշիւները փրկելու քան հանրային բարիքին ծառայելու
 համար կազմուեցան ու տեւեցին: Բանակը նոյնպէս յանձնուեցաւ այդ
 քաղաքական հոսանքներուն, դարձաւ հլու գործիք մը աւբոխավարներու
 ձեռքին մէջ, օր մը մէկուն, օր մը միւսին նկատումներուն ծառայեց,
 ներքնապէս պառակտուած ու բաժան բաժան, կազմալուծուեցաւ, քայ-
 ներքնապէս անգլաբարբար, և երբ տագնապի օր մը, 1897ին, հայրենիքը
 պէտք ունեցաւ իրեն, ուրիշ բան չկրցաւ ընել այլ միայն փախչիլ, փախ-
 պէտք ունեցաւ իրեն, ուրիշ բան չկրցաւ ընել այլ միայն փախչիլ, փախ-

չիլ, դարձեալ փախչիլ, առանց կռուի լքելով այն տեսակ զիրքեր ուր իրենց փառապանծ նախնիքը ափ մը մարդով անագին բանակներու արշաւը խորտակած էին: Եւ անա յանկարծ անկախութեան կռիւներու հերոսական էլլադան արթնցաւ զարհուրելի մղձաւանջով մը. բանակ չունէր, և էտնէմ փաշայի յաղթական զօրաբաժիններուն առջև՝ ճամբան




Միտոսով գտնուած զինուորական արձաններու և զինամթերքի մնացորդներ

բաց էր մինչև Աթէնք: Եթէ չըլլար չեռոպական տէրութեանց միջամտութիւնը, ոչինչ պիտի կրնար արգիլել թրքական զրօշին ծածանումը Հէլլէնականութեան մայրաքաղաքին վրայ:

Պերլինի Իաշնագրէն ասդին՝ ուր ինք ալ յուսաբար մնացած էր, ինչպէս Թուրքիայէն անջատուած բոլոր աղքերը, Յունաստան յանձնուե-

ցաւ իր ոյժերէն վեր մեծամտութեանց, և այն քիչ մը կենսունակութիւնը զոր իր ներքին տագնապներուն մէջ կրնար տրամադրել, վատնեց այդ մեծամտութեանց սիրոյն: Տարիներ անցան ապարդիւն, և արդէն իսկ ձեռքը ունեցած երկիրն ալ չկրցաւ կարգի կանոնի բերել ու քիչ շատ բարգաւաճ դրութեամբ մը բախտաւորել: Եթէ չըլլային իր բարերարները, որոնք արտասահմանի մէջ իրենց շահած դրամը մեծ մասամբ հայրենիքին կը նուիրէին, Յունաստան մշտապէս սնանկ վիճակի մը պիտի ենթարկուէր: Անոնց շուայ նուէրներուն շնորհիւ, իրարու յաջորդող կառավարութեանց գործը կը դիւրանար, և երկիրը կ'ազատէր խոշոր զօհողութիւններէ որոնք անհրաժեշտ էին իր կեանքի պայմանները տանելի դարձնելու համար, և որոնց սակայն չպիտի կրնար տոկալ՝ իր տարապայման աղքատութեան պատճառաւ: — «Ինչ որ առաջին այցելութեան մը միջոցին Աթէնքի մէջ նշանակելի պիտի երեւայ, գրած է մեր ողբացեալ Տիգրան Երկաթը, սա է որ՝ իւրաքանչիւր քայլի եկեղեցիներ, կիմ-նագիտներ, հիւանդանոցներ, մատենադարաններ, թատրոններ, արձաններ, մինչեւ անգամ ժամացոյցներ, նոյն իսկ մարմարեայ սալայատակները ներս կը կոխկրտես, կը յիշեցնեն նուիրատուներու սնունդներ, Չաբ-զորս կը կոխկրտես, կը յիշեցնեն նուիրատուներու սնունդներ, Չաբ-բաս, Ավէրօֆ, Սինկրօս, Վալիանօս, Սինաս... Երբոր աչքէ անցընես բաս, Ավէրօֆ, Սինկրօս, Վալիանօս, Սինաս... Երբոր աչքէ անցընես Աթէնքի եղած այս շքեղ ու անհամար նուէրները, այլ եւս ոչինչ կը մնայ որ կարենայ քեզ յանկուցանել... Լոկ Աթէնքի եղած վերջին նուէրներուն մէկ վիճակագրութիւնը ցոյց կուտայ թէ հարուստ Հէլլէնները աւելի քան 20 միլիոն նուիրած են անոր՝ հանրային հաստատութեանց համար: ... Անբերրի ու չոր Յունաստանը՝ խստամբեր, կորովի ու գործունեայ մարդոց սերմնարան մըն է: Ծովը որ կուգայ իրենց խարակները կը ծեծէ, զիրենք կը փոխադրէ դէպի աւելի կամ նուազ հեռաւոր շահաստաններ, և անոնց մէջ կը կիրարկեն այն գործունէութիւնը որով օժտուած են իրենց ճկուն մարմինն ու ճարտար իմացականութիւնը: Օտար երկրի մէջ կը յաջողին իրարու զուգելով շարքաշուրթիւնն ու յանդգնութիւնը, որոնք Հէլլէն ցեղին գլխաւոր առանձնայատկութիւններն են: Փոթորիկին դիմակալելու վարժուած նաւորդներ ըլլալով, չեն վախնար վաղորդայնէն, ու գործի, ինչպէս նաւարկութեան և յաճախ քաղաքակա-նութեան մէջ կը սիրեն բոլորը վտանգել բոլորին համար: Երբոր կը հարստանան, անձնասէրներու անձուկ վայելքներուն չեն յանձնուիր: Ընդհակառակը, հաճոյք կը զգան իրենց հայրենակիցներուն տալով լաւագոյն մասը այն հարստութեան զոր շահած են. շուայութիւններով չեն վատներ զայն, այլ կը վերածեն տեւական ու բարետուր գործերու: Իրենց հարստութիւնը այս աստիճան առատաձեռնութեամբ հայրենիքին տալով՝ կ'ապացուցանեն թէ բացարձակ հաւատք մը ունին Հէլլէնականութեան և համբաւներու յաւերժացման վրայ: Միշտ պէտք կը զգան ինքզինքնին ժողովուրդին գնահատութեան առարկայ դարձած տեսնելու: Կը փղձկին երբ դրուատուին, կամ երբ իրենց անունը արձանագրուած կը տեսնեն մարմարին վրայ, և կամ սիրով ու յարգանքով կը շրջապատուին: Կենդանւոյն ու կամովին կը պատրաստեն իրենց համբաւը որ պիտի ապրի

իրենցմէ ետքն ալ: Հարուստին քով իր ինչքը ընդհանուրին բարիքին զօհելու պարտականութեան գիտակցութիւնը այնքան զօրաւոր է, որքան երիտասարդներուն քով՝ հայրենիքին համար մեռնելու պատրաստակամութիւնը»: Ասիկա՝ Թուրքիւնէկէն պատերազմէն առջի վիճակն է. անկէ



Օսմ. զինուորական օթօմոբիլը արշաւի միջոցին

ետք մանաւանդ նուէրները եղած են աւելի բազմաթիւ, մանաւանդ աւելի գործնական, երկրին գլխաւոր և ամէնէն անմիջական կարօտութիւնները նկատի առնուելով: Այս պատերազմին մէջ՝ ծովու վրայ գերակըշուութիւնը զոր կը վայելէ և որ այնքան զիւրացուց Պալքանեան զինակից Պետութեանց յաղթանակը, Յունաստան կը պարտի իր Ալիերօֆ զրահաւորին, որ միակ մարդու մը համանուն բարերարին նուէրն է: Եւ միայն

Աթէնքը չէ՛ր այդ բարերարներէն օգտուող, օտար երկրի մէջ հարստացած իւրաքանչիւր Յոյն՝ բարիքի տուրքը մայրաքաղաքին ընծայելէ վերջ, իր ծննդավայր քաղաքը, աւանը, կամ նոյնիսկ գիւղը կը նպաստաւորէր հանրօգուտ հիմնարկութիւններով ու հոյակապ շէնքերով:



Ժողովրդական աղօթք՝ պուլկարական զինուց յաջողութեան համար

Երկիրը սակայն շատ աղքատ էր և ըմբոստ՝ ինչպէս իր բնակիչները: Մշակութեան լաւագոյն դրութիւնները ի զուր պիտի փորձուէին այնտեղ. արդիւնքը երբեք չպիտի վարձատրէր տարօրւած հոգն ու տաստանքը: Ընդարձակման տենչը՝ Յունաստանի համար՝ սոսկ ազգային փառասիրու-

Թեան արդիւնք չէր, ինչպէս կը մեկնուէր իր մեծամիտ ժողովուրդին կողմէ, այլ կեանքի անհրաժեշտ պահանջ. հողէն զրկուած Յոյնը կը ստիպուէր գաղթել, և որքան ալ գաղթականութեան մէջ ոչինչ կրնար իրեն մոռցնել տալ իր հայրենիքը, կրկին շահածը մեծագոյն մասամբ կը վատնէր ապրած երկրին մէջ: Յունաստան՝ զաւակներուն աշխատութեան արդիւնքէն զրկուած՝ չէր կրնար իր տնտեսական դրութիւնը քիչ շատ նախանձելի վիճակի մը ենթարկել: Դարձեալ Տիգրան Երկաթ կը պատմէ տեսակցութիւնը Յոյն գիւղացիի մը և ուսուցչի մը, որուն հետ պտոյտի երած էր Աթէնքի դաշտին մէջ. «Այս հողը ապերախտ է, եղբայր, կ'ըսէ գեղջուկը. Յոնիոյ մէջ, Մակեդոնիոյ մէջ չափ մը ցորեն կը ցանես և տասը չափ կը քաղես. այստեղ՝ չափ մը ցորենը հազիւ երկու կամ երեք ափ կուտայ: Անդին՝ տասը չափը ստանալու համար՝ հունտը կը ցանեն և այլևս բնաւ չեն զբաղիր անով. իսկ այստեղ՝ անդադար հողը կը քրքրենք, կը փորենք, անվերջ կ'աշխատինք»: Ուսուցիչը կը պատասխանէ. — «Այն մարդը որ ճիգ չընէր, կը յուլանայ: Իր ցորենը մինակը կը բուսնի, բայց իր բազուկները կը տկարանան և անունդով ծանրաբեռնուած իր ստամոքսը զինքը կը նեղէ: Հողին հետ մշտապէս կուռի մը մէջ ապրելուդ համար քու մարմինդ ձկուն դարձած է և երկաթեայ կազմուածք մը ունիս՝ որովհետեւ շատ քիչ անունդ միայն կ'առնես: Իո՛ւն ոչ մէկ բանէ կը վախնաս: Եթէ վաղը Թուրքը յայտնուի, դուն առանց վարանելու անոր վրայ պիտի յարձակիս: Իո՛ւն ազատ մարդ մըն ես, մինչդեռ Յոնիոյ քու եղբայրներդ գերիներ են»: Ատոր վրայ, գիւղացին՝ «Շիտակ խօսեցար, տասքալօս», կ'ըսէ և ուրախութեամբ կը վերսկսի իր աշխատանքը:

Քիչ ետքը՝ 1897ն է, ուր Թուրքը իրօք պիտի յայտնուէր. և սակայն՝ չարչարագին աշխատութեան մը շնորհիւ զօրացած «ազատ» Յոյնը չպիտի կրնար պսակել տասքալօսին վստահութիւնը: Յաղթական Թուրք բանակները, հակառակ անոր որ Հէլլենականութեան սրտին իսկ կը սպառնային, իրենց առջև ոչ մէկ արգելք պիտի գտնէին: Պատճառը պարզ է: Ազուր ժողովուրդը մը և ազուր ալ աւանդութիւններ ունեցող այդ երկրին մէջ՝ վարիչներուն ապիկարութիւնը ամէն բան քայքայած, լղրձած, տկարացուցած էր. և վարիչներուն յոռի օրինակը կազմալուծած էր նաև ժողովուրդը: Հէլլէն տարրը տակաւ առ տակաւ կորսնցուցած էր իր թանկագին յատկութիւնները. երբեմն գործքով հերոս էր, հիմայ դարձած էր խօսքով միայն հերոս:

97 թ դժբախտ պատերազմը դաս մը չեղաւ նորէն. ներքին քաղաքական պայքարները մնացին վառ, անիշխանական վիճակը յարատեւեց աւելի վատ պայմաններով. ո՛չ քաղաքական, ոչ ալ զինուորական իշխանութիւնները կրցան անհրաժեշտ հեղինակութեան տէր մնալ իրենցմէ ակնկալուած բարիքը գոնէ պղտիկ չափով մը իրականացնելու համար. իրենք իսկ անկարգապահութեան օրինակներ էին իրենցմէ աւելի ստորադասներուն աչքին: Նոյն իսկ թագաւորը երբեք չունեցաւ այնքան հեղինակութիւն որ կարենար հող չէ թէ ձեւական պատկառանք մը պա-

հել և իր յարգանքը պարտադրել. որովհետեւ իր ընտանիքն ալ ներքին միութենէ զուրկ էր: Շատ հեղձ քաղաքային պաշտօնէութիւնը, ինչպէս զինուորականը, մինչեւ անգամ հասարակ ժողովուրդը՝ թագաւորին դէմ արտայայտուեցան ամենաբուռն կերպով, և այս դժգոհութիւնը երբեմն այն աստիճան սուր հանգամանք ստացաւ որ գահընկեցութեան կամ գահէ հրաժարելու խօսքեր դարձան: Դժգոհութիւն կար մասնաւորապէս



Գարատաղի և Գոսովայի սահմանները

արքայական իշխաններուն դէմ, որոնք բանակին ու նաւատորմին գլուխը կը գտնուէին, և իրենց շուրջը շացկատակներու ֆաւարիչըններ ստեղծած՝ պաշտօնի տիրացման ու նաև բարձրացման ամէն ճամբայ փակեր էին բոլոր անոնց առջև՝ որոնք արժանիք ունենալով հանդերձ չէին գիտեր քծնելու, սողոսկելու, հաճոյ երեւալու արուեստը: Այս տխուր դրութիւնը՝ որ տակաւ պետական անխախտ սխթէմի մը կը վերածուէր, մինչեւ ապրտամբութեան մղեց բանակը, և Աթէնք ողբալի դէպքերու թատերավայր մը դարձաւ:


Յունաստանի համար դժբախտութիւն մըն ալ Կրէտէի հարցը եղաւ: Իրենց յամառ, զմայլելի հերոսութեամբ ու Եւրոպական Տէրութեանց աջակցութեամբ Թուրքիոյ լուծը թօթափած այդ անզուսպ կղզեցիները, ան-



Թրքական կարմիր Մահիկի զինուորներ

խորտակելի կամակորութեամբ մը միշտ աչքերնին չբաժնեցին Մայր Հայրենիքէն, ինչպէս ան ալ աչքը չէր բաժներ իրենցմէ: Երկար ատենէ ի վեր Հելլէնականութիւնը կը գործէր Կրէտէի մէջ: Յունաստանի ազատագրութենէն վերջ մանաւանդ, այդ գործունէութիւնը սխթեմաթիք հանգամանք ստացած էր: Ելլադայի երբեմնի յեղափոխական կազմակերպութիւնը՝ «Էթնիքի էթէրիա»-ն որ ազատագրութենէն վերջ՝ Հելլէնականութեան «Մեծ Գաղափար»-ին (Մէկալի Իտէա) իրականացման նուիրուած էր, յատուկ կազմակերպութիւններ կը պահէր Կրէտէի մէջ և անընդհատ բրօքականտ կը մղէր կցման դատին ի նպաստ: Արդէն Յունաստանի միացումը՝ Կրէտէի համար տիրական պահանջ էր՝ Թրքական բռնութեանց պատճառաւ որոնք մեծապէս կը դիւրացնէին Աթէնքի գործակալներուն պաշտօնը, հետըզհետէ կղզեցիներուն քով աւելի անդիմադրելի դարձնելով Օսմ. Կայսրութեան լուծը թօթափելու ըզմանքը: Բոլոր կղզիներուն մէջ՝ Կրէտէ բացառիկ դիրք մը ունէր. մինչդեռ միւսները՝ Թրքական տիրապետութեան տակ գտնուելով հանդերձ՝ էապէս հելլէն երկրամասեր մնացած էին, առանց իսլամ բնակչի, որով Թուրքիոյ լուծը չէին իսկ զգար, ընդհակարուն պաշտպանութեան համար Պոլսոյ կառավարութեան ձեռք առած խիստ միջոցները շատ մօտէն իրեն զգալի կը դարձնէին Թրքական լուծը: Մինչև 1868ի Ֆէրմանը՝ որ շարք մը բարենորոգումներ կը խոստա-

նար, Կրէտէ մշտակայ թատերավայր մըն էր արիւնալի դէպքերու և ընդհարմանց. կղզիին Իսլամներն ու Յոյները անընդհատ իրար կը ջարդէին, և թուրք զօրքն ալ պարապ չէր կրնար: 1868էն ետք, իրերը չփոխուեցան: Թուրք կառավարութիւնը 1868ի բարենորոգմանց Ֆէրմանը գործադրեց ճիշտ այն եղանակով՝ որով քառորդ դար վերջ պիտի գործադրէր Հայաստանի բարենորոգմանց միւս Ֆէրմանը, այսինքն բնաւ չգործադրելով: Այդ վիճակը, ինչպէս յայտնի է, առաջ բերաւ 1897ի պատերազմը, ուրկէ սակայն Յունաստան դիւրաւ կրնար խուսափիլ, քանի որ, դեռ թշնամութիւնները չսկսած, տէրութիւնները ինքնավարութիւն ձեռք բերած էին Կրէտէի համար: Եթէ կղզին զրկած իր զօրքերը ետ քաշէր և վերջ տար Թեսալիոյ սահմանագլուխին խրտումներուն, Յունաստան պարտութեան անպատեհութիւններէն պիտի ազատէր ինքզինքը, և չպիտի բռնադատուէր Թուրքիոյ վճարելու պատերազմական տուգանք մը, որուն պատճառաւ ստիպուեցաւ իր ելմուտքը եւրոպական հակակշռի ենթարկել, կերպով մը՝ դադրիլ իրապէս անկախ երկիր ըլլալէ ու տէրութեանց խնամակալութեան տակ մտնել: Իր վարիչները չկրցան հասկնալ թէ Կրէտական հարցը տակաւին այնքան հասունցած չէր որ իրականանար կղզիին



Պուլկարական կարմիր Խաչի զինուորներ

իւրացումը: Պիտի գար ատեն մը ուր ատիկա կարելի պիտի դառնար առանց նոյն իսկ գէնքի դիմելու: 1897ին դեռ շատ կանուխ էր. յետոյ Յունաստան շատ ալ գէշ չափած էր իր ոյժերը: Հակառակ եւրոպական

տէրութեանց խրատներուն՝ սուրը պատեանէն կը հանէր այն յոյսով թէ բովանդակ Հէլլէն տարրը ոտքի պիտի ելլէ իրեն հետ. թէ Եպիրոս, Մակեդոնիա, նոյն իսկ Ալպանիա պիտի ապստամբին. կը յուսար նոյն իսկ թէ Օսմ. Կայսրութեան մայրաքաղաքին մէջ գտնուող աւելի քան 300,000 Յոյները կրակի պիտի տան Պոլիսը: Չենք մոռցած այն ողորմուկ վիճակը զոր այս վերջինները պարզեցին Պոլսոյ մէջ. ո՛չ միայն զայն կրակի չտուին, այլ նոյն իսկ իրենց գլխարկները նետելով սկսան ֆէս կրել: Յունաստան նոյնքան յուսախաբ մնաց նաև միւս Հէլլէն տարրերէն. Եպիրոսի մէջ միայն մաս մը Յոյն Ալպանացիներ միջոց մը սիրտ տուին իրեն՝ յանուն Հէլլէնականութեան ապստամբութեան ղիմելով, սակայն ատիկա վազանցուկ ու չափազանց սահմանափակ շարժում մը եղաւ, և էտհէմ փաշա շուտով լրացուց Հէլլէնականութեան հիասթափումը: Հաղիւ թէ Յունաստանի թագաւորին երկրորդ զակկին՝ Եէորիոս իշխանին՝ ինքնավար Կրէտէի կառավարիչ նշանակուելը կրցաւ ամոքել իրենց դառնութիւնը, մինչդեռ միւս կողմէ՝ Պալքանեան աւելի խոհեմ ու համբերող երկու պետութիւններ՝ Սերպիա և Պուլկարիա՝ առիթէն օգտուելով, ի վնաս Հէլլէն տարրին նոր առանձնաշնորհումներ ձեռք կը բերէին, առաջինը Քոսովայի նահանգին, և երկրորդն ալ Մակեդոնիոյ մէջ:


Գլէն վերջ՝ մինչև արդի պատերազմը՝ Կրէտէ շարունակեց փորձանք մը մնալ Յունաստանի համար: Հէլլէն պետութեան հետ կցումը թերևս իրեն այնքան ալ նպաստաւոր չէր: Այն բացառիկ վարչութեամբ որով Մեծ Տէրութիւնները օժտած էին զինքը, կրնար աշխարհի երջանկագոյն երկիրներէն մէկը ըլլալ. յետոյ՝ աղքատիկ Յունաստանը, կցման մը պարագային, պիտի քէր տանէր իր հասոյթներուն կարեւորագոյն մասը. կցումը տնտեսապէս մանաւանդ վնասաբեր պիտի դառնար Կրէտէի. ինչիր էր նոյն իսկ թէ յունական վարչութեան ենթարկուելէ վերջ՝ Կրէտացիք պիտի վայելէին այն բացարձակ աղատութիւնը զոր Եւրոպական Տէրութեանց ստեղծած դրութիւնը կը շնորհէր իրենց: Բոլոր այս նկատումները անշուշտ չէին կրնար խուսափիլ Կրէտէի հանրային մարդոց ուշադրութենէն, որոնք ընդհանրապէս աւելի իմաստուն էին քան բուն իսկ Յունաստանիները: Սակայն Կրէտէի համար՝ կցումը պատմական պահանջ մըն էր, այն անողոք ու անդիմադրելի անհրաժեշտութիւններէն որոնց առջև տեղի կու տան ամէն հաշիւ ու նկատում, և որոնց սիրոյն ժողովուրդներ մինչև անգամ իրենց բախտը կը վտանգեն՝ ճակատագրական համակերպութեամբ մը: Մնաց որ Հէլլէնականութիւնը բոլորովին աշխարհակալած էր Կրէտէի Յոյն բնակչութիւնը. հակառակ ամէն բանի, հակառակ նոյն իսկ իրենց սեփական շահուն, անոնք միշտ պիտի տենչային կցման, և այդ իտէպլին իրականացման պիտի նուիրուէին, ինչպէս նուիրուեցան ալ: Տարակոյս չկայ որ աւելի արագ և աւելի ապահով կերպով մը այդ իտէպլին պիտի ժամանէին, եթէ երբեք Հէլլէն կառավարութիւնը ինքզինքը քիչ մը աւելի արժանի դարձնէր Եւրոպայի համակրութեան, իր սեփական արժանիքներուն նկատմամբ զրական վստահութիւն մը գոյացնել տալով: Քաօսը՝ որուն վերածուած էր Յունաստանի ներքին վար-

չութիւնը, դեռ շատ ու շատ հեռու էր այդ երաշխաւորութիւնը ընծայելէ:

Կրէտէի կցումը մասամբ պիտի փրկէր Յունաստանի տնտեսական դրութիւնը. քոյր կղզին՝ ատկէ առաջ՝ քաղաքական փրկութեան պարգեւն էր որ ընծայեց Մայր Հայրենիքին, անոր նուէր տալով իր ամէնէն նշանաւոր զաւակը, Պ. Վէնիզէլոսը, որ ճշմարիտ վերանորոգիչը դարձաւ հերթեան քայքայուած, կազմակերպութենէ ու զօրութենէ զուրկ Յունաստանին, ու նոյն ատեն լաւագոյն աշխատաւորներէն մէկը Հէլլէնականութեան դատին, քանի որ իրմով, սոսկ իրմով՝ իրականացան Յոյներու այսօրուան յաղթանակները, որոնք անսահման շահ կը բերեն Հէլլէնականութեան դատին: Տասնեակ մը տարիներ առաջ անյայտ այս մարդը՝ եւրոպական դիւանագիտութեան ամէնէն նշանաւոր դէմքերէն մէկն է այսօր, և իրաւամբ: Չորս տարի հազիւ կայ իր պաշտօնի անցնիլը, բայց այդ կարճ ժամանակը բաւած է իրեն՝ մօտաւորապէս հարիւր տարուան սխալները դարմանելու, այն տեսակ երկրի մը մէջ, ուր վեհապետէն սկսեալ յետին անհատը արգելք մըն էր վերածնութեան, և որուն համար քաղաքական ապիկարութիւնը ճակատագիր մը ըլլալ կը կարծուէր:

Կը յիշուի անշուշտ այն աղմուկը՝ որուն մէջ այս մարդը Յունաստանի նախարարապետութեան կոչուեցաւ: Ժէօն-Թիւրքերը, աւելի բնազդական հոտառութեամբ քան հեռատեսութեամբ ու մարդաճանաչութեամբ, — երկու յատկութիւններ որոնցմէ բացարձակապէս զուրկ էին, — բուն կերպով ընդդիմացան այդ անուանման: Տակաւին Պ. Վէնիզէլոս նախարարապետ չեղած, նոյնքան շունդալից եղանակով մը ընդդիմացած էին անոր Աթէնքի Խորհրդարանին անդամ ընտրուելուն: Իրենց կէս-պաշտօնական օւկանը՝ Թակնիս՝ և անոր հետ ալ յայտնի պետական մարդիկ ու զինուորականներ, չէին վարաներ հրապարակաւ պոռչտալու թէ նախ Պ. Վէնիզէլոսի երեսփոխան ընտրուելը և յետոյ Աթէնքի դահլիճին անոր յանձնուելը «պատերազմի պատճառ» պիտի նկատուի Թուրքիոյ կողմէ: Ժէօն-Թիւրքերու պատճառաբանութիւնը շատ պարզ էր՝ բոլոր տխմարութեանց պէս. — Պ. Վէնիզէլոս Կրէտացի էր, հետեւաբար՝ Օսմ. հպատակ և Օսմ. հպատակ մը չէր կրնար օտար Խորհրդարանի մը անդամ և օտար երկրի մը նախարարապետ ըլլալ: Անանկ ատեն մը ուր Կրէտացիք Աթէնքի Խորհրդարանը երեսփոխան զրկելու կ'աշխատէին, հակառակելով նոյնիսկ պաշտպան տէրութեանց բացարձակ արգելքին, Ժէօն-Թիւրքերը յուսահատօրէն կառչեցան այս պատճառաբանութեան: Եւրոպական տէրութեանց ընդդիմութիւնը Կրէտացի երեսփոխաններու Աթէնք անցնելուն, բոլորովին կը քաջալերէր զիրենք: Այդ ընդդիմութիւնը սակայն չէր նշանակեր թէ Կրէտէ Օսմ. հող է, ինչպէս կը մեկնէին Ժէօն-Թիւրքերը, այլ պարզապէս սա ըսել կ'ուզէր թէ Կրէտէ տակաւին վերջնական կերպով մը Յունաստանի կցուած չըլլալով, տեղի չկար որ Կրէտացիք երեսփոխան զրկէին Աթէնք: Միւս կողմէ Պ. Վէնիզէլոսի նկատմամբ իրենց բռնած թոյլատու ընթացքով կը հասկցնէին նախ Կրէտացեաց թէ այդ օրը վերջի վերջոյ պիտի ծագի իրենց համար, և յետոյ՝ Ժէօն-Թիւրքերուն ալ կերպով մը կ'ազդարարէին որ լաւագոյն դատի մը նուիրեն իրենց խանդա-

Վառութիւնն ու իրարանցումը, քանի որ կրէտէն, հող չէ թէ տակաւին պաշտօնապէս Յունաստանի չկցուած, անդարձ բաժնուած է Օսմ. կայսրութենէն:



Զինական կառավարութեան հաշուին շինուած «Շա-Նօ» զրահապատ յածանաւը զոր Յունաստան գնած էր

Այս կնճռոտութեանց ու պռաչառութեան մէջ պաշտօնի կոչուող մարդը շուտով ցոյց պիտի տար արտակարգ իմաստութիւն, կազմակերպութեան ոգի, մանաւանդ անընկճելի կորով, — յատկութիւններ՝ որոնք բացարձակապէս անհրաժեշտ էին Յունաստանի անկերպարան վիճակը բա-

րեկարգելու և երկիրը անուանական պետութեան մը հանգամանքէն մերկացնելով, արդիական դրութեան մը ենթարկելու համար: Դիւրին գործ չէր ասիկա, որովհետեւ խոչընդոտները շատ էին, և ամէնքն ալ մինչեւ այն ատեն անպարտելի կը նկատուէին: Էն առաջ արքայական ընտանիքը կար՝ իր իշխաններով, որոնց ձեռքը կը գտնուէին բանակն ու նաւատորմիւր: Յետոյ կուգային քաղաքական կուսակցութիւնները և յայտնի կուսակցապետները, մէկը միւսէն վարկարեկ, մէկը միւսէն փառասէր ու շահամոլ: Կային տակաւին որջացեալ պաշտօնեաներ քիչ մը ամէն կողմ: Մէկ մարդ մը պիտի յազթէր այս ամէնուն, մարդ մը որ նոյն իսկ կուսակցութիւն մըն ալ չունէր իր բախտին կապուած և իրեն զօրավիգ:

Եւ սակայն այդ մարդը ոյժ մըն էր, որ պիտի կրնար բոլոր արգելքները մէկանց խորտակել, ամէնուն ալ պարտադրելով իր հաստատ կամքը՝ որուն հպատակիլ կը պահանջէր հայրենիքին աւագագոյն շահուն համար: Յոյները զինքը սկսած էին սիրել իննսունական թուականներէն սկսեալ երբ յանկարծ յայտնուեցաւ իբր անդամ կրէտէի Գործադիր Իշխանութեան Թէ՛ այդ համակրութենէն և թէ՛ մանաւանդ ժէճօն-Թիւրքերու ընդդիմութեան իրեն պարգեւած մեծ ժողովրդականութենէն օգտուելով, կրցաւ շուտով յանկուցանել Յունաստանի ժողովուրդը: Ատոր համար անհրաժեշտ լաւագոյն միջոցը բնականէն ունէր արդէն, — պերճախօսութիւնը, — որ միշտ կրցած է ազդել այդ անհանդարտ ազգին վրայ, անոր նոյնիսկ ամէնէն փոթորկայոյզ շրջաններուն: Իր ճառերը որոնք լոկ հայրենիքին զօրացումն ու մեծութիւնը նկատի ունէին, իսկոյն համակիրներու ստուար թիւ մը ստեղծեցին իր շուրջը: Խորհրդարանական նոր ընտրութիւններ իրեն պարգեւեցին ջախջախիչ մեծամասնութիւն մը և կրցաւ անվախ ձեռնարկել իր ծրագրած գործին: Պաշտօնականութեանց շրջան մը սկսաւ Յունաստանի համար, նեպոտականութեամբ կամ տարբեր անարժան միջոցներով պաշտօնի անցած մարդիկը իրարու ետեւէ մաքրուեցան և ասպարէզը բաց մնաց ճշմարտապէս արժանաւոր եղողներուն առջեւ: Միայն քաղաքային վարչութեան մէջ չէր այս մաքրագործումը. բանակը նոյնպէս զտուեցաւ, և այդ անհունապէս աւելի դժուարին մաքրագործումը իրականացնելու համար՝ Պ. Վէնիզէլոս չվարանեցաւ նոյնիսկ արքունիքին պարտադրելու իր կամքը, և արքայագուն իշխաններուն տըրուած սանձարձակ իրաւասութիւնները իրենց օրինաւոր համեմատութեան վերածելու:

Ձեռք առնուած այս խիստ միջոցները բնական է դիւրաւ չկիրարկուեցան: Զեղծումներու շրջանի մը այս աստիճան արմատական կերպով փակոււմը բուռն ընդդիմութեանց հանդիպեցաւ հանրային դրամը խորելու վարժուած և երկարատեւ որջացման մը հետեւանքով խոչոր ազդեցութիւն ձեռք բերած մարդոց կողմէ: Պ. Վէնիզէլոս սակայն երկրին լաթիւն ձեռք բերած մարդը ունէր՝ իր ջանքերը՝ հայրենիքին վերածնութեան լազոյն տարրը իր կողմը ունէր: Իր ջանքերը՝ հայրենիքին վերածնութեան սիրոյն, տակաւ կը գնահատուէին նոյն ինքն իր թշնամիներուն կողմէ: արագ ու ապահով կը գործէր, և երկար ժամանակի պէտք չունեցաւ մէջտեղ դնելու համար արդիւնք մը այնքան զեղեցիկ, որ բոլորովին ամ-

րապնդեց իր շուրջը գոյացած համակրութիւնը : Ընդդիմութիւնները այդ ամուր դիրքին դէմ՝ ինքզինքնին սպառեցին ապարդիւն ու դժուարին մաքառումներով , և ասպարէզը այլևս ազատ մնաց Պ . Վէնիզէլոսի առջեւ :

Իր մտահոգութեան մեծագոյն առարկաներէն մէկն ալ երկրին զին-
ւորական զօրութեան կազմակերպութիւնը եղաւ :



ԵՆՈՐԻՈՍ, ԹԱԳԱՒՈՐ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ

Պորոնք ժամանակէ մը ի վեր կ'աշխատէին կարգի կանոնի բերե-
լու 1897ի պատերազ-
մին մէջ ջախջախուած
յունական բանակը , և
որոնց ջանքերը լիովին
չէին պսակուեր՝ տիրող
յուրի կարգերուն , մաս-
նաւորաբար նեպոտա-
կանութեան պատճա-
ռաւ , իրմով գտան
թանկագին աջակից մը ,
որ մաքրագործութիւնը
իրականացուց՝ կազմա-
կերպութեան հնարա-
ւորութիւնը ընծայելով
իրենց : Նոյն ատեն ,
միեւնոյն պայմաննե-
րով , Անգլիացի մար-
զիչներ կը կազմակեր-
պէին նաւատորմիդը ,
և Պ . Վէնիզէլոս , երկ-
րին ելմտական վիճակը

կարգի դրած , ի վիճակի կ'ըլլար նաւատորմը զօրացնելու՝ նոր մարտա-
նաւերու գնմամբ :

Այս ամէնը կ'ըլլային լռիկ մնջիկ : Յունաստանի բախտէն՝ Պ . Վէնի-
զէլոս զուրկ էր Յոյն տարրին գլխաւոր թերութիւններէն . շատախօս չէր ,
ոչ ալ մեծամիտ . խօսելու անստղիւտ ձիրքը զոր ունէր՝ միայն պէտք
եղած ատենը կը կիրարկէր և ան ալ կրցածին չափ ժլատութեամբ . հա-
կառակը ըլլալով Յոյն պետական մարդոց մեծամասնութեան , աւելի
գործքի քան խօսքի մարդ էր : Այդ յատկութեան շնորհիւն է որ կրցաւ
քնացնել , — սովորական ասութեամբ՝ խաբել , — ո՛չ միայն ժէօն-Թիւր-
քերը , որոնց հետ արտաքուստ չափազանց համակիր յարաբերութիւններ
կը մշակէր պաշտօնի աւջնելէն ի վեր , այլ նաև Եւրոպան : Երբ Պալքան-
եան Զինակցութեան գոյութիւնը յայտնուեցաւ՝ ներկայ պատերազմէն
չարթ մը առաջ՝ ոչ ոք կ'ուզէր հաւատալ թէ Յունաստան իրապէս կը


մասնակցի անոր . պըժ մը կը նկատուէր իր անունին ալ յիշուիլը . և կամ
կ'ենթադրէին թէ Յունաստանի ըրած սպառնալիքը սոսկ խաղ մըն է՝
առիթէն օգտուելով մաս մը բան , օրինակի համար կրէտէն կորզելու
ակնկալութեամբ : Այս հաւատքը ունէր նաև Թուրքիա , որ Գարատաղի ,
Սերպիոյ և Պուլկարիոյ դէմ յաջորդաբար պատերազմ յայտարարելէ ետք՝
տակաւին կը շարունակէր բանակցիլ յունական կառավարութեան հետ :
Եւ այս թերահաւատութիւնը կը տւէր հակառակ նոյն իսկ անոր որ Յու-
նաստան լրջօրէն զօրահանութեան ձեռնարկած էր երկու շարքէն ի վեր :
Իսկ երբ պատերազմի յայտարարութենէն անմիջապէս ետք 130,000
հոգինոց կարգապահ , լաւ սպառազինուած և տվէն անհրաժեշտ իրերով
օժտուած յունական բանակ մը սահմանագլուխը անցաւ , այն ատեն՝ ան-
խառն պակուցում մը յաջորդեց այդ թերահաւատութեան : Պէտք էր
սակայն ընդունիլ իրականութիւնը , որքան ալ ապշեցուցիչ և անսպասելի
ըլլար . — յունական բանակ մը կար իրօք : Եւ դէպքերը , անկէ ասդին ,
բոլորովին ապացուցին անոր գոյութիւնը :

Ներքին կազմակերպութեան գործը առաջ տանելով հանդերձ , Պ .
Վէնիզէլոս աշխատեցաւ նաև Յունաստանի արտաքին յարաբերութիւնները
բարուրդելու : Այդ տեսակէտով՝ ամէնէն փափուկ խնդիրը Ժէօն-Թիւրքե-
րու հետ հաշտ երթալն էր : Անհանդարտ կրէտացիները , և անոնց անհամ-
բերութիւնը անպատճառ երեսփոխան զրկելու Աթէնքի Խորհրդարանը ,
վրդովիչ ցրտութիւն մը առաջ բերած էին երկու երկիրներուն միջեւ :
Ժէօն-Թիւրքերը կը յամառէին կրէտէն օսմ . հող նկատելու , և պայքարի
ուրիշ միջոց չունենալուն , պոյքօթի ենթարկած էին հէլլէն առեւտուրն
ու նաւերը , հոգ չէ թէ ատկէ ամէնէն աւելի վնասուողը նոյն ինքն
ու թուրքիան ըլլար : Պ . Վէնիզէլոս՝ սքանչելապէս ծածկելով իր յետին միտ-
քերն ու դիտումները , ընդ առաջ գնաց Ժէօն-Թիւրքերու պահանջմանց ,
և ինք մանաւանդ ոչ մէկ ձիգ , նոյն իսկ բռնական միջոցները չ'անայց՝
կրէտացուց խօսք հասկցնելու համար : Սամ . կառավարութիւնը հետզհետէ
վստահութիւն գոյացուց իր վրայ , պոյքօթը մեղմացաւ , քիչ ետքը բո-
լորովին վերնալու համար , և անսովոր կերպով լաւ յարաբերութիւններ
լուծուին Վերնալու համար , և Պոլսոյ միջեւ : Պ . Վէնիզէլոս շատ լաւ գիտէր որ
վերսկսան Աթէնքի ու Պոլսոյ միջեւ : Պ . Վէնիզէլոս շատ լաւ գիտէր որ
կրէտէի խնդիրը չէ հասունցած տակաւին , և չէր ուզեր անտեղի ու վնա-
կար ընդդիմութեամբ մը Յունաստանը նոր սխալներու ու նաև նոր
վտանգներու ենթարկել : Այս խոհեմ և իմաստուն ընթացքը՝ Եւրոպական
Տէրութեանց համակրութիւնը շահեցուց իր երկրին . գրեթէ բոլոր տէլու-
թիւնները տակաւ այն հաւատքը գոյացուցին թէ Պ . Վէնիզէլոս վերջնա-
կանապէս Եւրոպայի կամքին թողած է կրէտէի և Յունաստանի ճակա-
տագիրը , ի սէր խաղաղութեան մը զոր ոչ մէկ գնով վտանգել կ'ուզէին :
Այդ միջոցին սակայն՝ Պ . Վէնիզէլոս ձեռքի տակէ Պալքանեան Դաշնակ-
ցութեան իրականացման կ'աշխատէր :

Յունաստանի համար՝ շատ հեշտ գործ չէր այդ Դաշնակցութեան
մասնակցութիւնը : Կազմուելիք պետական խմբաւորման հոգին Պուլկա-
րիան պիտի ըլլար՝ իբր ամէնէն հզօր պետութիւնը Պալքանեաներու մէջ :

նայէր քիչ մը ամէն մարդ, լուռ ու համբերատար ջանքերու շնորհիւ իւրական ոյժ մը դարձած էր. երբեմնի «Ջինուորական Դաշնակցութեան» ձեռքը գտնուող անձանաչ ու խառնափնթոր մարդակոյտը չէր, և անոր վրայ կրնային յոյս դնել Պալքանեան միւս դաշնակիցները: Եւ իրողութիւնները լիովին պսակեցին իրենց յոյսերը:

Պալքանեան Պետութեանց վերածնութեան այս հարեւանցի պատկերը լրացնելէ վերջ՝ կ'արժէ դիտել տալ թէ այդ Պետութիւններէն իւրաքան-



Դէպի Սելանիկ Յոյներու յառաջխաղացութեան ճամբան

չիւրին յառաջացումն ու բարգաւաճումը յամառ ու անվկանդ աշխատութեան մը և տարիներ տեւող անդուլ ջանքերու արդիւնքն է: Տարակոյս չկայ որ անոնցմէ ամէնքն ալ ունեցան իրենց սխալները, նոյնիսկ եղան պահեր՝ որոնց միջոցին ինքզինքնին բոլորովին անյուսալի վիճակի մը մէջ գտան, սակայն նորէն, առանց յուսահատելու, սոսկ իրենց կամեցողութեամբ ու գեղեցիկ յատկութիւններով, թէ՛ սխալները դարմանեցին և թէ կորսուած ժամանակը շահեցան: Դիտելի է նաև որ բոլոր Պալքանեան Պետութիւնները կրցան երեւան բերել ճշմարիտ արժանիքի տէր մեծ անհատականութիւններ, և անվերապահ՝ անոնց յանձնեցին իրենց ճակատա-

գրին ուղղութիւնը. անոնց լուծը յաճախ ծանր կուգար իրենց, սակայն երբեք չդժգոհեցան. ընդհակառակը՝ համբերատար կարգապահութեամբ և անայլայլ հլուութեամբ ճկեցան այդ լուծին տակ, որովհետեւ վստահ էին թէ պահանջուած տատանքը սոսկ իրենց բարօրութեան և հայրենիքին բախտաւորութեան ի սպաս պիտի դուրսի: Յէրախնանա մը Պուլկարիոյ մէջ, Նիքոլա մը Գարատաղի մէջ, Բաշիչ մը Սերպիոյ մէջ, Վէնիզէլոս մը Յունաստանի մէջ՝ միայն իրենց հանձարին և ձեռներէցութեան չեն պարտիր այն ապշեցուցիչ յաջողութիւնը որուն կրցան հասնիլ. առօրէ, կենսունակ ժողովուրդներ ունէին ամէնքն ալ և գիտցան շատ լաւ գործածել զանոնք. ազնիւ մետաղէն աղնուագոյն առարկայ մը դարբնող վարպետներ եղան պարզապէս:

Յետոյ՝ աւելի ճշգիւ ըմբռնեցին իրենց ժողովուրդներուն բուն կոչումը, և հակառակ դարաւոր ռիսակալութեանց, աշխատեցան զանոնք իրարու մօտեցնել փոխադարձ զիջումներով ու սիրաշահութեամբ, որոնք որքան ալ ծանրապէս ճնշէին իրենց ցեղային փառասիրութիւնն ու խղճմտանքը, կրկին տանելի կը դառնային անոր համար որ հայրենիքին աւագագոյն շահը ունէին իրենց նպատակակէտ: Առանձինն՝ որքան ալ բարգաւաճէին ու զօրանային, պզտիկ պետութեան իրենց հանգամանքով երբեք չպիտի կարենային գոյացնել այն տեսակ ոյժ մը որ կարենար իրականացնել իրենց յաւակնութիւնները: Պալքանեան հարցերը որոնք ամենասերտ առնչութիւն ունէին իրենցմէ իւրաքանչիւրին նեա և որոնց լնական, օրինաւոր իրաւարարները իրենք պէտք էին ըլլալ, հետզհետէ կրնային խուսափիլ իրենց միջամտութիւնէն: Մեծ Տէրութիւնները, ինչպէս տեսանք, արթուն կը հսկէին ու ծաւալման ծրագիրներու ճամբան հարթելու կ'աշխատէին ամէն կարելի միջոցներով. և եթէ պատահէր որ բուն շահակից պզտիկ պետութիւններէն մէկը կամ միւսը, իր արդար իրաւունքին կապտումը տեսնելով բողոքի ձայն բարձրացնէր, բռունցքը չուտով կուգար իր ձայնը խեղդելու, ինչպէս Սերպիոյ եղաւ 1908ին, Պօսնա Հէրսէքի կցման առթիւ: Ստար ոտնձգութիւններու վտանգը սոսկ իրենց հեռաւոր ակնկալութեանց չէր սպառնար, այլ նոյն իսկ իրենց գոյութեան: Ինչո՞վ պիտի կրնային այդ զահանդական վտանգը հեռացնել: Իրենց պաշտպաններով. — բայց վստահութիւն չունէին անոնց անշահախնդրութեան վրայ: Իրենց բանակներով. բայց առանձինն՝ որքան ալ նախանձելի վիճակի մը հասնէին, կրկին մեծ տէրութեանց զինուորական ամենի զօրութեան դէմ ուրիշ բան չպիտի կրնային ըլլալ, այլ սոսկ ճնճղուկներ՝ արծիւին հանդէպ:


Ելից հնարը գտնել դժուար չէր, որովհետեւ տրամաբանական հետևութիւնն իսկ էր այն վտանգին՝ ուրկէ կ'ահաբեկէին ամէնքն ալ: Ընդհուրդները որոնք ցրիւ ցրիւ ոչինչ կ'արժէին, միանալով պիտի կրնային գոյացնել ոյժ մը այնքան պատկառելի որ կարելի պիտի ընծայէր արծիւին դէմ մաքառում մը: Առանձինն անարժէք ու արհամարհելի Պալքանեան Պետութիւնները՝ ձեռք ձեռքի տալով իրօք ամենի զօրութիւն մը պիտի դառնային: Կար ատեն մը ուր այս միութիւնը բացարձակապէս անհնարին էր իրենց համար, որովհետեւ թրքական լուծէն ազատած ըլլալով հանդերձ՝ էր իրենց համար, որովհետեւ թրքական լուծէն ազատած ըլլալով հանդերձ՝

բորոքովին տէր չէին իրենց ճակատագրին, և աւելի կամ նուազ ծանր խնամակալութեանց ենթակայ կը մնային: Ռուսմանիա, յետոյ Պուլկարիա տակաւ ինքզինքնին աղատագրեցին այդ «պաշտպան»ներէն. աւելի ետքը կարգը Սերպիոյ եկաւ. ան ալ Աւստրիական թեարկութենէն ազատեց ինքզինքը, ինչպէս առաջին երկուքը Ռուսիոյ լուծը թօթախած էին. ազատ էր նաև Գարատաղը. իսկ Յունաստան գոնէ խնամակալութեան փորձանքէն զերծ կը մնար: Ուրեմն արգելք մը չկար իրենց միացման դէմ. ամէնքն ալ իրենց ճակատագրին տէր դարձած էին, և կրնային կատարեալ անկախութեամբ իրենց շահերուն իրականացման աշխատիլ:

Սակայն երկար տարիներ անոնք չկրցան իրականացնել այդ մերձեցումը, հակառակ անոր որ անկէ դուրս փրկութիւն չկար ո՛չ միայն իրենց աւելի կամ նուազ արդար ակնկալութեանց, այլ նաև իրենց սեփական գոյութեան համար: Միշտ կլանուելու, և կամ իրենց տրուած անձուկ ու անբնական սահմաններուն մէջ ինքզինքնին սպառելու վտանգին ենթակայ էին, և սակայն դարձեալ իրար ուտելու կ'աշխատէին և մէկզմէկ կը տկարացնէին, փոխանակ իրարու օգնելու, իրարմով զօրանալու: Այս աստիճան ահաւոր ընդվզում մը իրենց իրական ու անտեղիտալի կոչման դէմ, մանաւանդ այն տեսակ ժողովուրդներու կողմէ որոնք բարձր իմաստութեան մեծ ապացոյցներ տուած են համեմատաբար նուազ կենսական հարցերու մէջ, անշուշտ շատ խոր պատճառներ պիտի ունենար: Եւ այդ պատճառներուն աղբիւրը իրենց յաւակնութեանց շրջանակն էր, — Եւրոպական թուրքիան, — զոր Օսմ. կայսրութեան ձեռքէն չյափշտակած իրարմէ խլելու աշխատեցան երկար տարիներ: Յաջորդ գլխով պիտի պարզենք այդ ահաւոր մարանչումը, որուն ընթացքին անընդհատ իրար խողխողեցին, իրարու շէնքերը այրեցին ու Եւրոպական թուրքիան մէկ ծայրէն միւսը ոճիրներու և ամէն տեսակ բռնութեանց ողբալի թատերաւաճար մը դարձուցին:




Սերպ զօրավար Բութնիք



ԳԼՈՒԽ Ե.

Կ Ռ Ո Ւ Ա Խ Ն Ձ Ո Ր Ը

Մինչև ներկայ պատերազմը, Եւրոպայի մէջ թուրքերուն ձեռքը կը մնային միայն երեք երկիրներ՝ Թրակիան, Մակեդոնիան և Ալպանիան, բաժնուած Էտիրնէի, Սելանիկի, Մանասթրի, Եանեսայի, Շքօտրայի և Քոսովայի վիլայէթներուն: Բազմաթիւ իրենց երբեմնի աշխարհակալութեան, որ մինչև Վիեննայի դուռը հասած էր, — իր մէջ պարփակելու չուզարիան, Գարատաղը, Պոնա-Հէրսէքը, Սերպիան, Պուլկարիան, Ռուսմանիան, Յունաստանը, և այս ամէնուն սահմանակից զեռ բաւական ընդարձակ հողամասեր, — անշուշտ քիչ բան էր այդ մնացածը, սակայն նորէն կը բաւէր՝ Եւրոպական տրութեան հանգամանքը տալու համար թուրքիոյ: Սան Սթէֆանօի դաշնագիրը այդքանն ալ շատ տեսնելով՝ անկէ անջատած էր գրեթէ ամբողջ Մակեդոնիան, ու Թրակիոյ մէկ կտորը՝ իր մաս իր դարբնած Մեծ Պուլկարիային, և ուրիշ երկիրներ զորս Պալքանեան միւս պետութեանց կը շնորհէր: Այդ կերպով՝ թուրքիա այլևս կը դադրէր իրապէս Եւրոպական պետութիւն մը ըլլալէ: Մեծ տէրութեանց մրցակցութիւնը սակայն կրցած էր զինքը փրկել, և իբր ասիական պե-



Պ. ՏԱՆԷՅ
Նախագահ Պուլկար Սօպրանիէին

տութիւնն Պերլինի Վեհաժողով մտած Թուրքիան անկէ դուրս ելած էր նորէն եւրոպական տէրութեան հանգամանքով:

Իրօք փրկութիւնն էր ասիկա: Շատ նշանաւոր քաղաքագէտներ, և անոնց կարգին նոյն ինքն Փօն տէր Կօյց փաշա, բազմիցս յայտարարած են թէ Թուրքիա զուտ ասիական պետութիւնն դառնալով, մանաւանդ իրեն կապուած պահելով Հայ տարրը որ մեծապէս կրնայ նպաստել երկրին բարգաւաճման, աւելի տեւելու ընդունակ պիտի դառնար, քան Եւրոպայի մէջ մնալով: Փորձանաւոր ստացուածքները զորս Պերլինի Վեհաժողովը իրեն կը թողուր, և որոնք իրմէ անկախաբար բազմութիւ տէրեր ունէին, ո՛չ միայն նախասահմանուած էին իրմէ խրուելու, այլ նաև կրնային վտանգել իր ասիական ստացուածքներուն ապահովութիւնն ալ: Երբ այսօրուան դրութիւնը աչքի առջև բերենք, զիւրաւ պիտի տեսնենք թէ որքան խորատեսութիւն կար զանազան ժամանակներու մէջ կրկնուած այս կարծիքին մէջ:

Պերլինի Վեհաժողովը ճշմարիտ փորձանքներ կը թողուր իրեն և ո՛չ թէ երկիրներ: Ամբողջ երեսունը հինգ տարի անոնք անընդհատ խրուով պահեցին Թուրքիան, թէ՛ դրամի և թէ՛ մարդու անսահման զոհողութիւններ արժեցին, պոտճառ դարձան տէրութեան տկարացման, ծնունդ տուին յեղափոխութեան մը ու դարձեալ այդ յեղափոխութիւնը անանկութեան դուռը բերին. և այս ամէնը՝ հակառակ անոր որ երթալու սահմանուած երկիրներ էին, աւելի



ԻՇԽԱՆ ՏԱՆԻՂՕ
Զաւակ Գորատաղի Թագաւորին

իրը աւանդ կը մնային Թուրքիոյ ձեռքը ուածք: Թող ոչ ոք մեղադրէ Թուրքիոյ արդի վարիչները այդ երկիրներուն կորուստին համար. Մակեդոնիա, Թրակիա և Ալպանիա ձեռքէ

կ'ելլեն դարաւոր պատճառներու բերմունքով. այսօրուան Թուրք Պետութիւնը յանցաւոր չէ ատոր մէջ:

Թէ այդ երկիրներու կորուստը ճակատագրական էր Թուրքիոյ համար՝ ասիկա հեշտիւ պիտի կրնանք ըմբռնել եթէ երբեք պահ մը մտարեկենք այն քաղաքական դաւանանքը, — ազգայնութեանց սկզբունքը, — որուն համաձայն կատարուած էին Սան Սթէֆանօի Դաշնագրին բաժանումները: Պիզմարք՝ հզօր Գերման Կայսրութիւնը այդ սկզբունքին հիման վրայ կառուցած էր, և Ռուսիա շուտով ընդգրկած էր զայն, որովհետեւ անոր մէջ աւելի ապահով օգուտ կը տեսնէր Համապաւուութեան դատին համար: Առաջ՝ կրօնքի տեսակէտն էր որ պատրուակ կը դառնար իր խլրտումներուն, և կը քողարկէր իր յետին մտքերը. հիննալով և բազմիցս ծայրայեղօրէն գործածուելով՝ այդ դրութիւնը կորսնցուցած էր իր ոյժը. մինչդեռ նորը, ազգայնութեանց սկզբունքը, որ Պիզմարքի մեծագործութեամբ կը նուիրագործուէր, իր բազմազան առաւելութիւններուն կը միացնէր նաև տեւական ու անխախտ մնալու յատկութիւնը: Ինչ որ Պուլկար էր՝ պէտք է տրուէր Պուլկարներուն. ինչ որ Սերպ էր՝ պէտք է թողուէր Սերպերուն. ինչ որ Սեւ Լերան կը պատկանէր՝ պէտք է յանձնուէր իրեն. այս էր ազգայնութեանց սկզբունքը, որուն այնքան ջերմիւ փարած էին ոուս պետական մարդիկը, մասնաւորապէս վարչապետ իշխան Կօրչաքօֆ: Մեծ Պուլկարիա մը, զօրեղ Սերպիա մը և Գարատաղ մը ստեղծելու աշխատելով՝ Համապաւուութեան դատին կը ծառայէին. այն միեւնոյն ազգայնութեանց սկզբունքը որ այդ Սլաւ երկիրները մեծցուցած էր, վերջէն պիտի բերէր զանոնք միացնէր հզօրագոյն Սլաւ տէրութեան՝ Ռուսիոյ, ճիշտ ինչպէս որ Գերման երկիրները միացած էին հզօրագոյն Գերման տէրութեան՝ Բրուսիոյ: Այս հեռաւոր նպատակին կը ձգտէր Սան Սթէֆանօի Դաշնագիրը:

Պերլինի Վեհաժողովը, ուր տիրապետող մեծագոյն ազդեցութիւնը Պիզմարքինն էր, չկրցաւ հակառակիլ ազգայնութեանց սկզբունքին կիրառման: Անով Պիզմարք կերտած էր Գերման Կայսրութիւնը, որ դեռ թէ ներքնապէս բոլորովին ամրապնդուած չէր, և թէ արտաքուստ ալ սպառնալիքներու ենթակայ կը մնար. եթէ իր հովանաւորութեամբ գուժարուած Վեհաժողովը դատապարտէր ազգայնութեանց սկզբունքը, պիտի կրնար պահել Գերման Կայսրութեան ներքին միութիւնը որ լոկ այդ սկզբունքին վրայ կը կենար: Համանման վտանգ մը կար նաև Անգլիոյ համար. ան ալ իր ներքին միութեան չէնքը միեւնոյն հիման վրայ հաստատած էր: Ահա թէ ինչու Պերլինի Վեհաժողովը, հակառակ անոր որ տատած էր, Ահա թէ ինչու Պերլինի Վեհաժողովը, հակառակ անոր որ Ռուսիոյ ծրագիրները քանդելու համար գումարուած էր, իր կարգին ստիպուեցաւ նուիրագործելու ճիշտ այն բանը որ ոուսական պահանջմանց առանցքը կը կազմէր:

Եւ սակայն՝ պէտք էր թուժք մը դնել Սլաւ տարրին Արեւելքի մէջ ծաւալման առջև: Նախորդ գլուխներուն մէջ տեսանք թէ մէկ կողմէ Գերման տարրը և միւս կողմէ ալ Անգլիա, — առանց միւսները յիշելու, — ինչ մեծ ու կենսական շահեր ունէին Արեւելքի մէջ, և թէ Ռուսիոյ

ժինը: Ինչպէ՞ս այս հակընդդէմ պահանջմանց հետ հաշտեցնել ազգայնութեանց սկզբունքը. խելացութիւնը Թուրքերուն վերադարձնելն էր, մինչև որ վիճողները իրարու միջև համաձայնէին և բուն իրաւատէրը երեւան ելլէր: Ուրիշ կերպով կարելի չէր փրկել ազգայնութեանց սկզբունքը, և այդ է պատճառը որ հնարաւոր եղաւ Սան Սթէֆանոի Դաշնագրին Մեծ Պուլկարիայէն անջատել Մակեդոնիան: Ռուսիոյ գործածած զէնքը իրեն զէմ դարձուած էր ամենայն յաջողութեամբ: Պերլինի Վեհաժողովը սակայն նոյնքան իրաւական հիմ չունէր այդ Պուլկարիայէն կորզելու համար նաև Արեւելեան Րումէլին: Յոյները կը յաւակնէին թէ այնտեղ իրենք ալ գերակշիռ տարր կը կազմեն, սակայն իրենց յաւակնութիւնը քիչ մը չափազանց «յունական» էր, որովհետև իրապէս Պուլկարներն են որ միշտ ամենաշախախտ թուական առաւելութիւն ունեցած են այդ երկրին մէջ: Այս յայտնի անիրաւութիւնը զոր Վեհաժողովը գործած էր լոկ ուսսական ազդեցութիւնը Պոլսէն կարելի եղածին չափ հեռու պահելու համար, Պուլկարիա անձամբ դարմանեց եօթ տարի ետքը, անարիւն ու հեշտին յեղափոխութեամբ մը Արեւելեան Րումէլին իրեն միացնելով, հոգ չէ թէ Սուլթանին գերիշխանութեան տակ: Եւրոպա չընդդիմացաւ՝ նախ անոր համար որ ազգայնութեանց սկզբունքին տեսակէտով Պուլկարիոյ ըրածը օրինաւոր էր, և յետոյ՝ այլևս ուսսական վտանգին վախը չկար, քանի որ այդ միջոցին Պուլկարիա բոլորովին թօթափած էր Ռուսիոյ ազդեցութիւնը, և հերուան իր ազատարարն էր որ անգոր ու ապարդիւն կերպով կը բողոքէր Արեւելեան Րումէլիի իւրացման դէմ, ճիշտ այն բանին դէմ զոր երբեմն ինք աշխատած էր ամէն զնով իրականացնել:

Գիտենք որ մեծ տէրութիւնները այդ վիճելի շրջանակները Թուրքիոյ թողուցին լոկ իրենց յետին մտքերուն յարմար գետին պատրաստելու համար: Իրենց գործը շատ դժուարութեանց չբաղխեցաւ, որովհետև վիճող ազգերուն ալ գործին կուգար այդ կարգադրութիւնը. անոնք կը նախընտրէին որ վիճելի հող մը Թուրքիոյ վերադարձուէր քան իրենց մըրցակիցներուն տրուէր. այս վերջիններէն այլևս ետ առնելու հնար չկար, մինչդեռ, որքան ատեն որ Թուրքիոյ ձեռքը գտնուէր, միշտ յուսով էին թէ կրնան օր մը չէ օր մը յափշտակել անկէ. նպաստաւոր առիթէ մը օգտուելով:

Պարզ կը տեսնուի թէ այդ ստացուածքները իբր աւանդ վերադարձուեցան Թուրքիոյ. և աւանդը սեփականութիւն չէ, այն տեսակ աւանդ մը մանաւանդ որ ո՛չ թէ մէկ, այլ բազմաթիւ տէրեր ունի միանգամայն, ամէնքն ալ անհամբեր զայն վայրկեան մը առաջ ետ առնելու, ամէնքն ալ մշտարթուն և ուշադիր որ ձեռքէ չելլէ: Պարագային համեմատ կամ բուն իսկ իրաւատէրները՝ այսինքն անոնց վրայ աւելի կամ նուազ հիմնաւոր յաւակնութիւններ ունեցող Պալքանեան Պետութիւնները պիտի իւրացնէին զանոնք, և կամ Արեւելքի տիրապետութեան ձգտող մեծ տէրութիւններէն մէկն ու միւսը: Մինչև այն ատեն՝ լաւ էր որ Թուրքը պահէր զայն:

Այս է պատճառը որ հակառակ այնքան փորձանքներու և ձախորդ

պատերազմներու, Թրակիան, Մակեդոնեան ու Ալպանիան Թուրքիոյ ձեռքը մնացին: Պարզ աւանդապահն էր անոնց և ոչ թէ տէրը. և այդ աւանդապահութիւնը շատ սուղի կը նստէր իրեն, չէնք չնոր՝ք կը սպառէր, կը փճանար, և աւելի կամ նուազ մօտաւոր ժամանակի մը մէջ իր ձեռքէն անդարձ ելլելու սահմանուած հողերու համար կը վատնէր իր կենսական ոյժերը, բոլորովին անօգուտ տեղը. միանգամայն դժբախտ, ժամանակի, մանաւանդ մարդու կորուստ: Ապահովաբար իրաւունք ունէին անոնք որ Թուրքիոյ տեւականութեան համար աւելի խելացութիւն կը նկատէին զուտ ասիական պետութեան հանգամանքը: Ասիոյ մէջ ալ ոչ թուական առաւելութիւն ունէր, ոչ ալ կրցած էր խորարմատներ թողուլ և իր վարչական դրութիւնը պարտադրել. շատ վայրեր՝ անուանապէս միայն Օսմ. Կայսրութեան կցուած,




ՖԵՐԻՏԻՆԱՆՏ Ա., ՉԱՐ ՊՈՒԼԿԱՐԻՈՅ

թեան կցուած, ներքնապէս ինքնավար էին, նոյնիսկ տուրքէ ու զինուորագրութենէ զերծ: Բայց վերջապէս բնակչութեան ստուարագոյն մասը խլամ էր և իմաստուն ու շրջահայեաց վարիչներ դիւրաւ կրնային կրօնքը միացման գիծ մը դարձնել, տեղական պայմաններուն յարմար վարչական մէթոտներ կիրարկելով, կամ՝ աւելի արդիական բացատրութեամբ՝ կազմելով Խսլամ Դաշնակցական Տէրութիւն մը, որուն գոյացման մեծապէս պիտի նպաստէր Դաշնակցական Տէրութիւն մը, որուն կարելի էր հաւատարիմ պահել Քրիստոնեայ տարրերն ալ, ինքնավար ու թոյլատու կարգերու հաստատութեամբ:

Վիճելի հողերը բնական է առանց վէճի չպիտի մնային : Պալքանեան Պետութիւնները՝ անոնց թուրքիոյ վերադարձուելուն մէջ ուրիշ բան չէին տեսած , այլ միայն հնարաւորութիւն մը ապագային զանոնք խլելու . իւրաքանչիւրը իր հաշուին այս յետին մտքով լեցուած էր : Եւ որպէսզի ապագայ փոթորիկի մը կամ հաշուեյարդարութեան մը միջոցին կարենային այդ նպատակին հասնիլ , պէտք էր որ անոնց մէջ արժեցնէին իրենց յաւակնութիւնները և ընդլայնէին իրենց ազդեցութեան , հետեւաբար նաև իրաւունքի շրջանակները , քանի՛ դեռ անոնք աւանդ կը մնային թուրքիոյ ձեռքը : Այդ ճամբան ուր կը մտնէին՝ վէճի ճամբան էր . ինչ որ մէկը կ'ուզէր , ամէնքը մէկանց կ'ուզէին . իւրաքանչիւրին ձեռք բերածը՝ ուրիշի մը կամ միանգամայն բոլոր միւսներուն գրկանքովը կ'ըլլար : Մէկուն հաստատածը ուրիշի մը յաւակնութեանց դրժումն էր : Ահա թէ ինչո՞ւ 1878էն ասդին անոնք անդուլ մաքառումներու , ոճիրներու անաւոր թատերավայրեր դարձան , և ո՛չ թուրքիա , ոչ ալ շահակից Մեծ Տէրութիւնները ուզեցին լուրջ , դրական , մանաւանդ անկեղծ միջոցներ ձեռք առնել իրերու այդ ողբալի դրութիւնը բառնալու համար . Պալքանեան ազգութեանց իրար բզբտելը շահաւոր էր թէ՛ Մեծ Տէրութիւններուն և թէ՛ թուրքիոյ :

Բաժանմամբ տիրելու անհրաժեշտութիւնը այդ փորձանաւոր երկիրներուն մէջ՝ թրքական վարչութեան արդիւնքը չէր : Թուրքերուն համար նոյնպէս պետական սկզբունք մըն էր այդ դրութիւնը , որովհետև տարակրօն ժողովուրդներ իրենց հպատակեցուցած ըլլալով , միշտ անոնց համախումբ դիմադրութեան սպառնալիքին ենթակայ էին . բաժան բաժան և իրարու հետ մշտապէս կռուոտ մնալով , էն առաջ Օսմ . կայսրութեան գոյութիւնը պիտի ապահովէին : Հին խօսք է արդէն . «Մինչև որ երկու Քրիստոնեայ իրար չուտեն՝ Իսլամը չի կրնար կարկանդակ ուտել» : Բայց մասնաւորաբար Պալքանեան թերակղզիին մէջ՝ իրենք չէին եղած այդ դրութեան հիմնադիրները : Բիւզանդական կայսրութեան ատենէն սկսեալ , և անկէ առաջուրնէ ալ՝ նոյն պետական դաւանանքին կիրառութեամբ մանաւանդ կարելի եղած էր ասիական ու եւրոպական ցեղերու այդ խառնարանը կառավարել : Թուրքերը նոյնպէս աւարկայ դարձած էին այդ դրութեան : Ինչ որ ժ. Դ . դարէն ասդին , մինչև մեր օրերը , իրենք պիտի ստիպուէին ընել՝ իրենց տիրապետութիւնը ամրապնդելու համար , թ . դարէն սկսեալ իրենց վիճակուած բախտն էր նոյն շրջանակներուն մէջ ու նոյն նկատումներով :

Ճիշտ այդ դարուն կը սկսի թուրքերուն անդրանիկ մուտքը Եւրոպա : Մաս մը թուրքեր որոնք իրենց հեռաւոր ուստաններուն մէջ ծագած ներքին կռիւներու բերմունքով հալածական եկած Եւրոպա անցած էին , Բիւզանդական կայսրութեան ասպնջականութիւնը խնդրեցին և յաջողեցան հաստատուել Վարտարի եզերքները : Անոնք փոխեցին իրենց կրօնքը որ տակաւին Մահմէտականութիւնը չէր , այլ տեսակ մը կռապաշտութիւն , բայց չթօթափեցին իրենց ռազմական կենցաղն ու վաչկատուն հանգամանքը : Քաջ մարդիկ էին և պատուական պատերազմիկներ , զորս Յոյները




Սահմանադրուելու գացող Օսմ . անդրանիկ գործարարներ , եր դրոշով , Պատերազմական հայտարարութեան շէնքին առջեւ

Թեան յաւակնութեանց մէջ մտքերնէն անգամ չէին անցըներ սեփականատէր ճանչնալ Թուրքը, յանկարծ տեսան որ անիկա իրենցմէ անկախաբար և հակառակ իրենց՝ իր սեփականատիրութիւնը հաստատելու կ'աշխատի: Տարակոյս չկայ որ Թուրքը, աշխարհակալութեան իրաւունքը իր կողմը ունենալով, իրենցմէ անհունապէս աւելի նպաստաւորուած էր իր յաւակնութիւնը արժեցնելու համար: Խնդիր է սակայն թէ իրօք իմաստութեան գո՞րծ էր այդ նոր քաղաքական ուղղութիւնը որուն գլուխ կանգնեցան Ժէճն-Թիւրքերը, քիչ մը չափազանց անշրջանայեցութեամբ, և որուն սիրոյն նոյնիսկ Ալպանացուց պէս թանկագին տարր մը իրենց դէմ հանեցին: Պատասխանը այսօրուան դէպքերուն մէջն է: Ժէճն-Թիւրքերուն բռնած այդ ուղղութիւնն էր որ դիւրացուց ու փութացուց Պալքանեան Դաշնակցութեան կազմութիւնը: Ու ծանօթ է թէ ատոր արդիւնքը որքան աղէտալի եղաւ Օսմ. Կայսրութեան:



ՄԱՀՄԱՌԻՏ ՄՈՒՆԻՐԱՐ ՓԱՇԱ



ԳԼՈՒԽ Զ.

ՅԵՂԵՐՈՒ ՊԱՅԳԱՐԸ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹՈՒՐԿԻՈՅ ՄԷՉ

Երեք երկիրներէն՝ որոնք Եւրոպական Թուրքիան կը կազմէին ներկայ պատերազմէն առաջ՝ Թրակիան էր (Էտիրնէի նահանգը) որ նուազ վէճի առիթ կը դառնար, և բաղդատմամբ միւս երկուքին, Մակեդոնիոյ և Ալպանիոյ, բաւական հանդարտ կենցաղ մը ունէր: Եթէ մըխըրճուինք հեռաւոր անցեալին մէջ, պիտի տեսնենք որ Թուրք տարրը այնտեղ շատ աննշան թիւ մը միայն կը կազմէր. թուական ջախջախիչ առաւելութիւն ունէին մի' միայն Պուլկարները, և անոնցմէ ետքն ալ Յոյները: Ահաւասիկ Թրակիոյ բնակչութեան ընդհանուր ցուցակը, անգլիական վերջին վիճակագրութեան մը համեմատ. — 370,000 Օրթոտոքս Պուլկար, 115,000 Մահմետական Պուլկար (Բօմաք),



ՊՈՒԼԿԱՐ ԶՕՐԱՎԱՐ ԻՎԱՆՕՅ

250,000 Մահմետական Թուրք, 3,000 Օրթոտոքս Թուրք, 220,000 Օրթոտոքս Յոյն, 3,500 Օրթոտոքս Ալպանացի, 30,000 Հայ և 15,000


Մահմէտական Գնչու: Ինչպէս առիթ ունեցանք ըսելու, Պերլինի Վեհաժողովին մէջ ուր Ռուսիա մեծ ճիգ թափեց թրակիոյ վրայ Պուլկարներու բացարձակ իրաւունքը ընդունել տալու համար, առարկութիւն եղաւ թէ Յոյները եթէ ոչ հաւասար, գոնէ չափազանց կարեւոր թիւ մը կը կազմեն այդ նահանգին մէջ:

Այս առարկութիւնը անիրաւ էր անոր համար որ Պուլկարները կերպով մը բնիկ տարրն են այնտեղ, մինչդեռ Յոյները, որոնք ծովեզերքներուն երկայնքը կ'ապրին՝ թէ՛ Սև ծովու և թէ՛ Եգէականի կողմէն, եկուոր են մեծ մասամբ: Թրակիա էապէս Պուլկարական յաւակնութեանց շրջանակին մէջն է, և այդ շրջանակէն դուրս կը մնայ պզտիկ մաս մը միայն, ճիշդ այն մասը որ Միտհայէն մինչեւ Էնոս կ'երկարի, Մարիցա և Էրկէնէ գետերուն երկայնքէն, իր մէջ բովանդակելով Էնոսը, Սորոսի ծոցը, Կէլիպոլուն, Տարտանէլը, Ռոսոսթօն, Չախալճայի շրջանակն ու Կ. Պոլիսը:

Թուրք պետական մարդիկը՝ արուեստական կերպով նոր տարր մըն ալ գոյացուցին այդ երկրին մէջ, Իսլամ տարրը, որ 383,000 հոգինոց բազմութեան մը հասած էր մինչեւ ներկայ պատերազմը (Թուրք. Բօմաք, Օրթոտոքս Թուրք և Գնչու): Երբ Պերլինի Վեհաժողովը գումարուեցաւ, Իսլամ տարրը այսքան բազմաթիւ չէր. այլապէս՝ փոխանակ Յոյներուն անհաստատ յաւակնութիւններով Պուլկարիոյ ընդարձակումը արգելելու, աւելի չեչտ պիտի ըլլար Թուրքերուն թուական առաւելութիւնը մէջտեղ դնել իրր առարկութիւն: Իսլամներու այդ բազմացումը թրակիոյ նահանգին մէջ՝ Պերլինի Վեհաժողովէն ետք տեղի ունեցած է: Բուն բնիկ Իսլամ տարրը շատ սակաւաթիւ էր հոն. եթէ անոնցմէ անջատենք Բօմաքները որոնք Պուլկար ցեղին իսլամացած մէկ հատուածն են, մնացեալները կը բաղկանային այլեւայլ կողմերէ բերուած գաղթականներէ, որոնք գէշ ալէկ սեղաւորուած էին այդ նոր հայրենիքին մէջ. որուն սակայն ոչ մէկ յիշատակով կապուած էին. անհաստատ, արուեստական բնակչութիւն մըն էր, որ հազիւ պատերազմը ծագած՝ խեղովին Պոլիս թափեցաւ, ան կէ ալ դէպի Ասիա նահանջելով, առանց դառնութեան, առանց կարօտի կամ ցտեսութեան վերջին ակնարկ մը ձգելու իր լքած բնակավայրերուն վրայ:

Օսմ. Կառավարութեան համար սակայն, այդ արուեստական Իսլամ տարրին գոյացումը թրակիոյ նահանգին մէջ՝ պետական անհրաժեշտութիւն մըն էր: Տեսանք արդէն թէ ազգայնութեանց սկզբունքը ինչ աղէտալի դեր խաղացած էր իրեն համար. ահագին երկիրներ ելած էին իր ձեռքէն, սա գլխաւոր առարկութեամբ թէ անոնց մէջ գերակշիռ տարրը այս կամ այն ազգն էր, հետեւաբար անոնք պէտք է այդ ազգին տըրուէին: Թրակիոյ համար եթէ այդ սկզբունքը կիրառութեան դրուէր, նոյն ինքն Պոլիսը պիտի վտանգուէր. որովհետեւ Թրակիա էապէս Պոլսոյ բանալին է: Այսպէս ուրեմն՝ մայրաքաղաքին պահպանութեան հարցը զինքը Ազգայնութեանց սկզբունքին դէմ ազգայնութեանց սկզբունքը. տեսակ մը նմանաբուժութիւն: Պերլինի Վեհաժողովը այս տեսակէտով շատ մեծ

դաս մը եղած էր Թուրքիոյ համար: Եւ այդ դասը լաւ սերտած ըլլալուն համար չէ՞ որ Ապտիւլ Համիտ Չարդերով, հալածանքներով, հողազրկու-




Բօմաք լրտեսներ զորս Պուլկարները ձերբակալեցին պատերազմի սկզբնաւորութեան օրերուն

Թեամբ և Իսլամ գաղթականներու հաստատութեամբ ջնջելու աշխատեցաւ մեր ցեղին թուական առաւելութիւնը Հայաստանի մէջ: Ազգայնութեանց սկզբունքը որ մը մեզ ալ կրնար եթէ ո՛չ ինքնավար դարձնել, գոնէ խառնել Ռուսիոյ Հայոց: Թուրքիա զգուշացաւ թրակիոյ մէջ ալ կիրարկել այն միջոցները

որոնցմով մշտավառ կը թողուր Եւրոպական Թուրքիոյ միւս մասերուն մէջ գոյութիւն ունեցող ցեղային կռիւները: Թրակիոյ խնդիր մը գոյութիւն չունէր, չէր հասունցած տակաւին. այդ երկրին վրայ յաւակնութիւններ մնուցանող Յոյներն ու Պուլկարները Մակեդոնիոյ մէջ կը սպառէին իրենց բովանդակ կորովը: Ասիկա խաղաղութեան լուրջ պատճառ մըն էր անշուշտ, և Թուրքիա շատ պէտք ունէր այդ խաղաղութեան՝ մայրաքաղաքին այնքան մօտիկը գտնուող երկրի մը մէջ՝ ուր յայտնուող խլրտումները կրնային տարածուիլ մինչև Պոլիս ու դառնալ վարակիչ: Համիտ, որուն օրով մանաւանդ Եւրոպական Թուրքիոյ մէջ ամենագերագանց կերպով մը կիրարկուեցաւ բաժնելով տիրելու դրութիւնը, միշտ աշխատեցաւ որ Թրակիա խաղաղ մնայ: Իր բովանդակ ջանքը եղաւ՝ միշտ աւելի բազմացնել անոր խալամ բնակչութիւնը. յետոյ, ամէն կարելի միջոց չխնայեց սիրաշահելու համար Բօմաք տարրը, որ նախապէս լոկ կրօնքով միայն կը տարբերէր Պուլկարներէն, հոգուով Պուլկար կը մնար: Համիտի օրով՝ այդ հոգին հետզհետէ թրքացաւ և Բօմաք ժողովուրդը ո՛չ միայն պաղեցաւ իր արենակից Պուլկարներէն, այլ նաև սկսաւ զայն ատել: Ներկայ պատերազմին սկիզբը, Պուլկարները առաջին հարուածը Բօմաքներէն ստացան: Այս վերջինները ո՛չ միայն ջարդեցին իրենց դրկից Պուլկարները, այլ հաւատարիմ ու ապահով տեղեկատուներ եղան Օսմ. զինուորական իշխանութեանց համար:

Թրակիոյ այս վիճակը ճշմարիտ արքայութիւն մը պիտի երեւայ մեղի, եթէ զայն բաղդատութեան դնենք մակեդոնական դժոխքին հետ: Ինչ որ սովորաբար Մակեդոնիա կը կոչենք՝ տեսակ մը Բաբելոն է, որուն ոչ իսկ իրական սահմանները կարելի եղած է գծել, հակառակ անոր որ Արևելքով զբաղող բոլոր պետական մարդոց, Թուրքերուն և օտարներուն հաւասարապէս, դարաւոր մտահոգութեան առարկան եղած է: Նոյնքան անորոշ կը մնան նաև անոր բնակիչները. Պուլկարիա՝ Պուլկար կը նկատէ զանոնք, Յունաստան՝ Յոյն, Սերպիա՝ Սերպ, Ռումանիա՝ Ռումէն: Մակեդոնացի անունը որ կը կրեն, ազգութիւն մը չի ներկայացներ. երբ օրինակի համար Պուլկարիա կ'ըսենք, կը հասկնանք Պուլկարներու երկիրը, կամ այն տեսակ երկիր մը ուր Պուլկարները իրենց քաղաքական և ազգագրական գերակշռութեամբ դարձած են տիրապետող տարր. բայց երբ Մակեդոնիա կ'ըսենք՝ ասով չենք կրնար Մակեդոնացիներու երկիր հասկնալ. որովհետեւ՝ «Մակեդոնացի» յորջորջումը նշանակութենէ զուրկ է: Եւ ահա զարմանալի բառասօս մը, որ սակայն ճշմարտութիւն մըն է: Մակեդոնիա մը գոյութիւն ունի թէև, բայց Մակեդոնացիներ չկան, այլ Յոյներ, Պուլկարներ, Սերպեր, Ռւլահներ, Թուրքեր, և այլն որոնք Մակեդոնիոյ մէջ կը բնակին: Բոլոր արչաւանքները, բոլոր տիրապետութիւնները որոնց ենթարկուած է, իրենց հետքը թողած են այնտեղ. Յունաստանի նախնական տիրապետողներէն՝ Պեղասգեաններէն սկսեալ՝ յաջորդաբար Հէլլէնները, Թուրքերը, Հռոմայեցիք, Սլաւները, Սերպերը, Պուլկարները, վերջապէս բոլոր ցեղերը, բոլոր ժողովուրդները որոնք ձեռք




ՀԻՐԻ ՀԱՆԵՐ

Ուր թուրք զնուորենը՝ Գուրգենու տարազին տակ ոչ իսկ հ'ընդհատեն իրենց սպասակալէի բառ թին,
Կ իրենց փակցող ընկերները կը հեզանն

Պայտանիան Պատերազմի — Յաւարդ Օ. Մարգարիտի

անցուցած են այդ բարեբեր երկիրը, գաղութներ հաստատած են անոր այլ եւ այլ կողմերը և իրենցմէ ժողովուրդ թողած: Ահա թէ ինչո՞ւ Պալ- քանեան բոլոր ազգերն ալ միեւնոյն ատեն Մակեդոնիոյ վրայ յաւակնու- թիւններ ունէին, և իրենցմէ իւրաքանչիւրը կը յամառէր իրը, միայն իրը



Բաղրատական ցուցակ Եւրոպական թուրքիոյ բնակչութեան, անգլիական նորագոյն վիճակագրութեան մը համաձայն

նկատելու զայն: Երկիրը արդէն՝ ամէնուն ալ առատ կուտաններ կ'ընծայէր այդ յաւակնութիւնները հաստատելու համար: Երեք ցեղերը՝ Հէլլէնները, Սլաւներն ու Լատինները, — բացի թուրքերէն, — որոնք Մակեդոնիոյ տիրապետութեան կը ձգտին, ուղաձնուն չափ ազգագրական յենակներ կամ պատմական յիշատակներ կրնան գտնել անոր մէջ: Ատոնց վրայ հիմ-

նուած են արդէն այն զանազան քարտէսները որոնք շարունակ կը պատ-
րաստուէին միանգամայն թէ՛ Սօֆիայի, թէ՛ Աթէնքի, թէ՛ Պէլկրատի և
թէ՛ Պուքրէշի մէջ, և որոնցմէ իւրաքանչիւրը միւսին ժխտումն էր միշտ:
Պուլկարը ցանցառ ու հեռաւոր պզտիկ մասեր միայն ցոյց կու տար իբր
Հէլլէն տարր. Հէլլէնն ալ նոյն բախտին կ'ենթարկէր Պուլկարները. Սերպերն
ու Ռուսները նոյնպէս այդ հիման վրայ կը գծէին իրենց քարտէսները.
միայն Թուրքն էր որ ոչ քարտէսի պէտք կը տեսնէր, ոչ ալ պատահամբ
քարտէս մը գծած միջոցին ցեղերու բաժանումները կ'որոշէր անոր վրայ:
Գաղափար մը տալու համար թէ պալքանեան ազգերը որքան անհամա-
ձայն էին իրարու միջև՝ Մակեդոնիոյ մասին, այստեղ մէջ կը բերենք
հետեւեալ բաղդատական ցուցակը ուր որոշապէս ցոյց տրուած է թէ
անոնցմէ իւրաքանչիւրը ի՞նչ կերպով կը բաժնէր մակեդոնական ժողո-
վուրդները:

	Սերպ ցանկ	Պուլկար ցանկ	Յոյն ցանկ
Թուրք	231,400	489,664	576,600
Պուլկար	57,600	1,184,036	} 454,700
Սերպ	2,048,320	700	
Յոյն	201,140	222,152	656,300
Աչպանացի	165,620	124,211	— —
Ուլահ	74,465	77,267	41,200
Խառն	101,875	147,244	91,700
ԳՈՒՄԱՐ	2,880,420	2,245,274	1,820,500

Ինչպէս կը տեսնուի, մինչդեռ Սերպերը կը կարծէին 2,048,320 ազգա-
կից ունենալ Մակեդոնիոյ մէջ, Պուլկարները հաղիւ 700 Սերպ միայն կը ճանչ-
նային հոն, և Յոյներն ալ 200,000էն քիչ մը աւելի: Դարձեալ՝ Պուլկար-
ները 1,184,036 Պուլկար կը հաստատէին Մակեդոնիոյ մէջ, մինչդեռ
Սերպերը 57,600 Պուլկարէ աւելի չէին ճանչնար և Յոյներն ալ ատոր կէսը
միայն: Նոյնպէս՝ մինչդեռ Յոյները կը պնդէին թէ 656,300 Յոյն կը բնակին
Մակեդոնիոյ մէջ, Պուլկարները միայն 222,152 Յոյն կը ճանչնային և Սեր-
պերն ալ 201,140: Պարզ կ'երեւայ որ Մակեդոնիոյ վրայ յաւակնութիւն
ունեցող ազգերէն իւրաքանչիւրը իրեն կը սեփականէր տեղւոյն ժողովուր-
դին մեծամասնութիւնը, իր յաւակնութիւնները համաձայնեցնելու համար
ազգայնութեանց սկզբունքին, առանց որուն չպիտի կրնար զանոնք ար-
ժեցնել:

Սակայն ինչ ձեւով որ ալ շինուած ըլլային այդ քարտէսներն ու վի-
ճակագրութիւնները, էական կէտը հոն էր որ ո՛չ Պուլկարները, ո՛չ Սեր-
պերը, ո՛չ Յոյները, ոչ ալ Ռուսները, իրենց յաւակնութեանց չըջանակը
տարապայման կերպով ընդլայնելով հանդերձ, չէին կրնար Մակեդոնիայէն
բոլորովին դուրս ձգել միւս ազգերը. քիչ տեղ կուտային անոնց, բայց
վերջապէս կ'ընդունէին թէ անոնք ալ գոյութիւն ունին: Թուրքերը նոյն-

պէս ստիպուած էին ճանչնալ Քրիստոնեայ տարրի մը գոյութիւնը, քանի
որ Պէրաթներ կուտային Առաջնորդներու. Պէրաթ մը՝ ուրիշ ամէն յա-
ւակնութենէ աւելի կ'արժէ՝ ժողովուրդի մը գոյութեան, թուական իրա-
ւունքին իբր հաստատութիւն. թէ՛ Համիտի օրով և թէ՛ Ժէօն-Թիւրք
վարչութեան չորս տարիներուն՝ գիտենք թէ մեր Պատրիարքարանը
ի՞նչ շփուարութիւններու բաղխեցաւ առաջնորդական նոր վիճակներ
ստեղծելու համար. Կա-



Ի Շ Խ Ա Ն Ե Է Ո Ր Ի Ո Ս
Հրամանատար յունական նաւատորմին

ուավարութիւնը, որուն
Հայ տարրին թուական
ոյժը խորտակելու քա-
ղաքականութիւնը չէր
փոխուած նաև Ժէօն-
Թիւրքերուն օրով, միշտ
դժկամակեցաւ Պէրա
թով մը նուիրագոր-
ծելու այդ վիճակները.
չորս Պատրիարքարանը
ստիպուած կը կազմէր՝
տեղւոյն Հայոց թուա-
կան բազմացման պատ-
ճառաւ: Ի՞նչ պէտք
Հայերու բազմացումը
և որոշ հասարակու-
թիւն կազմած ըլլալը
նուիրագործելու, այն
տեսակ կառավարու-
թեան մը համար, որ
մեր ցեղին բնական ու
անվիճելի գերակշռու-
թեան սահմաններուն մէջ
անգամ կ'աշխատէր Հայոց
թուական ոյժը
խորտակել, ազգայնութեանց
սկզբունքին փորձանաւոր
հետեւանք-
ներէն վախնալով: Մակեդոնիոյ
մէջ՝ Կայս. Պէրաթները
նուիրագործած
էին նաև երկու որոշ տեսակ
Քրիստոնեաներու գոյութիւնը,
զանազա-
նութիւն դնելով Հէլլէն և Սլաւ
Առաջնորդներու միջև, մինչդեռ
առաջ-
ները՝ ամբողջ այդ չըջանակը
սոսկ Հէլլէնականութեան
ստացուածքն էր
և Պոլսոյ Յոյն Պատրիարքին
իրաւասութեան ենթակայ
կը մնար:

Այսպէս ուրեմն՝ ցեղերու գոյութեան հարցը չէր որ Մակեդոնիոյ
մէջ վէճի դուռ կը բանար. ոչ ոք կ'ուրանար թէ այս կամ այն
ցեղը կը
գտնուի հոն. կռիւը կը սկսէր ճիշտ այն պահուն՝ երբ այդ
ցեղերէն մէկն
ու միւսը իր յաւակնութիւնները կը ցուցադրէր՝ ապագայ
իւրացման
իրաւունքը հաստատելու, և Թուրքին ձեռք թողուած
աւանդը ինք
ստանալու համար: Տեսնենք հիմայ թէ ի՞նչ էին անոնցմէ
իւրաքանչիւրին
յաւակնութիւնները և թէ ի՞նչ փաստերով կը պաշտպանէին
զանոնք:

էն առաջ կուգային Հէլլէնները: Իրենց յաւակնութիւնները շատ աւելի հեռաւոր ու խոր արմատներ ունէին, քանի որ կը սկսէին Մակեդոնացի Փիլիպպոսի ու անոր աշխարհակալ զաւկին՝ Մեծն Աղեքսանդրի տոնէն, և անոնցմէ ետքն ալ՝ Բիւզանդական Կայսրութեան շրջանէն: Վիճելի այդ երկիրներուն մէջ պատմական փառաւոր անցեալ մը ունեցած էին իրենց նախնիքը. անոնց ուղղակի ժառանգորդը իրենք էին, հետեւաբար իրաւունք ունենալ կը կարծէին՝ Թուրքիոյ յաջորդութեան պարագային՝ սոսկ իրենք ժառանգորդ դառնալու. ինչ որ Թուրքէն պիտի խլուէր՝ իրենցն էր, ուրեմն պէտք էր որ իրենց վերագարձուէր: Մինչեւ 1860՝ Հէլլէնները այս պարզ պատճառաբանութեան վրայ հիմնած էին իրենց յաւակնութիւնները. Փաթիհի կողմէ՝ Պոսոյ Յոյն Պատրիարքին Եւրոպական Թուրքիոյ բոլոր Բայաններուն հոգեւոր պետ, միանգամայն քաղաքական պետ (= Պատրիարք) նշանակուած ըլլալը բոլորովին կ'ամրապնդէր այդ պատճառաբանութիւնը: Եւրոպական Թուրքիոյ մէջ տիրող վարչական դրութիւնն ալ արդէն այդ պարագան կը հաստատէր. բոլոր Քրիստոնեաները կը կառավարուէին յոյն Մէտրապոլիտաներով՝ որոնք փոխանորդներն էին Պոսոյ Պատրիարքին. յունականէն դուրս ուրիշ ո՛ր է հոգեւոր-վարչական կարգ չկար Եւրոպական Թուրքիոյ մէջ. այսօրուան իրար ուտող ցեղերը՝ Պոսոյ Պատրիարքարանին և անոր ներկայացուցած Օրթոտոքս կրօնքին ենթակայ՝ գոնէ ըստ երեւոյթին սերտ միութիւն մը կը պահէին իրարու հետ: Թուրքին համար՝ Բուժէլի մէջ ամէն ազգ Յոյն էր: Մակեդոնական խնդիր չկար ուրեմն, այլ լոկ յունական խնդիր. Իսլամը Թուրք էր, Քրիստոնեան՝ Յոյն, ու Մակեդոնացի նշանաւոր պուէտը՝ Բիկաս, Հէլլէնականութեան ամենաջերմ առաքեալներէն մէկը, իր ըմբոստութեան հրաւերները միանգամայն Մակեդոնիոյ բոլոր ժողովուրդներուն կ'ուղղէր, զանոնք հէլլէն գրօշին ու գաղափարին տակ հրաւիրելով.

Պուկարներ, Ալպանացիներ, Սերպեր և Ռումէններ,
Եպիրոսցիներ, Կղզեցիներ, մէկ ոստումով
Բաշեցէք սուրը ազատութեան անունով...
Էլլազան ձեզի համար լայն լայն բացած է իր բազուկները
Ձեզի կեանք, պատիւ ու փառք տալու համար:

Սակայն ասիկա չէր նշանակեր թէ անսիրելութեան պատճառներ գոյութիւն չեն ունեցած կամ չունէին Հէլլէն և միւս տարրերուն միջեւ. Յունաց Պատրիարքարանը, — ինչպէս վերջէն պիտի տեսնենք, — շատ բռնական ու անողորմ միջոցներով հպատակեցուցած էր ոչ-Հէլլէն տարրերը. անոնց մէջ յաճախ ըմբոստութեան փորձեր եղած էին Ֆէնէրի Պատրիարքարանին կրանիչ գործունէութեան դէմ, բայց միշտ խորտակուած էր իրենց ընդդիմութիւնը: Սլաւ զարթնումը կը սկսէր ԺԸ դարէն, դիւնաբերիլ: Յոյները պատմական աւանդութեան վրայ հիմնած էին իրենց յաւակնութիւնները: Սլաւները պրպտելով պրպտելով, մանաւանդ վանքերու խորը թաղուած գրչագիր վաւերագիրներ և ժամանակագրութիւններ երեւան բերելով, տեսան որ իրենք ալ նոյնքան փառաւոր պատմու-

թիւն մը ունեցած են այդ երկիրներուն մէջ, հետեւաբար՝ նոյնքան իրաւունք կրնան ունենալ անոնց մասին յաւակնութիւններ անուցանելու:



Օսմ. հեծելազօրքը Բ. Դրան առջեւ

Յունական ապստամբութիւնը և Յունաստանի ազատութիւնը բոլորովին կարելի կ'ընծայէին այդ յաւակնութեանց իրականացումը ու կը զրգուէին իրենց անհամբերութիւնը՝ վայրկեան մը առաջ իրենց գոյութիւնը հաստատելու իբր որոշ տարր: Պուկարները որոնց քով ամէնէն առաջ ար-

թընցած էր այս ինքնագիտակցութիւնը, 1860ին սկսան աւելի բուռն կերպով մաքառել Յոյն տարրին դէմ: Մակեդոնական կարգ մը չըջանակներու մէջ՝ ուր Յոյներէն բաղմամբիւ էին, այս մաքառումը վերածուեցաւ կատարեալ դիմադրութեան մը, որուն նախապէս պատրուակ դարձաւ կրօնքը, աւելի ճիշդը՝ եկեղեցիներու սեփականութեան հարցը: Բոլոր այն չըջանակներուն մէջ ուր բաղմամբիւ էին, Պուլկարները կ'ուզէին իրենց սեփականացնել գոյութիւն ունեցող եկեղեցիները, և ինքնավար հոգեւոր վարչութիւն հաստատել իրենց կրօնաւորներով:

Ծանր հարուած մըն էր զոր կը ստանար Հէլլէնականութիւնը: Պուլկարներու յաւակնութիւնները շուտով վրդովեցին զինքը. և վրդովուելու համար ունէր թէ՛ կրօնական, թէ՛ քաղաքական պատճառներ: Յունաց Պոլսոյ Պատրիարքարանը որ Հէլլէնականութեան առանցքն էր, կը կորսնցնէր իր համապարփակ ազդեցութիւնը Եւրոպական Թուրքիոյ մէջ. Օրթոտոքս եկեղեցիին մէջ վարչական նոր բաժանում մը ստեղծուելով՝ կը խանգարուէր կրօնական միութիւնը որ հիմն էր նաև քաղաքական միութեան: Յետոյ նոր ժառանգորդ մը կ'ելլէր մէջտեղ, Սլաւ տարրը, և այս ժառանգորդը վտանգաւոր էր անոր համար մանաւանդ որ թուով աւելի գերակշիռ էր քան բուն Հէլլէն տարրը: Եթէ գիտակցութիւնը տարածուէր Պալքաններու բովանդակ Սլաւ Պուլկարներուն մէջ, Հէլլէնականութեան ապագայի ծրագիրները ծանրապէս կը վտանգուէին: Օրինակը կրնար վարակիչ դառնալ, և Պուլկարներէն վերջ՝ Հէլլէնականութեան դէմ հանել նաև միւս բոլոր Սլաւ ժողովուրդները, որոնց ետին կեցած էր Համասլաութեան ամենի ոյժը, իր գործնական բրօքականտով: Պէտք էր ուրեմն առաջը առնել կրօնական բաժանման, արգիլելու համար քաղաքական բաժանումը որ Հէլլէն տարրը աղէտալի կղզիացման մը պիտի դատապարտէր Թուրք ու Սլաւ տարրերուն միջեւ:

Վէճը եկաւ Թուրքին դուռը ինկաւ: Իրաւական ոյժը Յոյներուն կողմն էր, որոնք բնաւ չէին տարակուսեր Թուրք կառավարութեան որոշման մասին. քանի որ Բ. Դուռը բովանդակ Եւրոպական Թուրքիոյ մէջ յունականէն զատ կրօնական կազմակերպութիւն չէր: Ճանչնար, ուրեմն հեշտիւ պիտի ընդունէր թէ եկեղեցիներն ալ պէտք է Յոյն մնային. Պուլկարները առանձին կրօնական կազմակերպութիւն չունէին որպէսզի տէր դառնային մասնաւոր եկեղեցիներու, մանաւանդ այն տեսակ եկեղեցիներու զորս Յունաց կրօնական իշխանութիւնները կառուցած էին և որոնք դարերէ ի վեր Յոյն կղերին կողմէ կը սնտեսուէին: Այսքան ապահով և առաջուց շահուած դատ մը ունենալով հանձերձ, Յոյները յուսախարներ մէջտեղ դրին, ի զուր դարերէ ի վեր նուիրագործուած, օրէնքի կարգանցած առանձնաշնորհումներու իրաւունքին կառչեցան. Դուռը ականջ չկախեց, և ատոր համար իր պատճառները ունէր: Յունաստանի ազատումէն ի վեր շարունակ աչքը չէր հեռացնել իր մականին տակ մնացած Հէլլէն տարրին վրայէն. գիտէր թէ ինչ ապագայ ծրագիր կը հետապնդէր Հէլլէնականութիւնը, և թէ՛ մէկ կողմէ Պոլսոյ Յոյն Պատրիարքարանը ու

միւս կողմէ Եւրոպական Թուրքիոյ մէջ զայն ներկայացնող Յոյն Մէտրապոլիտները, Հէլլէն հիւպատոսներու հետ ձեռք ձեռքի տուած, ինչ թաքուն բայց յամառ ու հաստատակամ եղանակով մը Հէլլէնականութեան Մեծ Գաղափարը իրականացնելու կ'աշխատէին: Առաջ՝ Թուրքը մինակ էր Հէլլէնականութեան այդ անսկանդ, գրեթէ անխորտակելի ճիգերուն դէմ, և Եւրոպական Թուրքիոյ ընդհանուր Բայաներուն միութիւնը Հէլլէնականութեան գաղափարին շուրջը, բոլորովին կը ջլատէր իր ընդդիմու-



ԵՐԲԵՄԵԻ ԲԻԻՉԱՆՆԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆԸ
Ինչպէս կը տեսնուի, Փոքր Ասիոյ մէջ ծովեզերքներուն վրայ միայն տարածուած էր իր տիրապետութիւնը

թիւնը. բայց ահա յանկարծ անսպասելի դաշնակիցներ երեւան կ'ելլէին, Պուլկարները, և ամէն բան ցոյց կուտար թէ անոնք Հէլլէններուն դէմ աւելի կատաղի հակառակորդ մը պիտի դառնան քան բուն իսկ ինք, Թուրքը: Այս աստիճան նպաստաւոր առիթէ մը չօգտուի՝ յեանագոյն մար: Օգուտը մէկ տեսակ չէր. Պուլկարները սոսկ դաշնակիցներ չէին. անոնց անջատումը Հէլլէններէն, թշնամի տարրը կը զրկէր թանկագին մարտիկներէ. երբ մէկ կողմէ ինք կը զօրանար, միւս կողմէ Հէլլէնամարտիկներէ. կա լթիւնը կը տկարանար: Ահա թէ ինչո՞ւ Բ. Դուռը իրաւունք տուաւ Պուլկարներուն և քաջալերեց կրօնական վարչութեան անջատումը, որ Եւրոպիոյ իրական հիմերու վրայ հաստատուեցաւ, երբ Յունաց Պատրիարքարանը այդ վարչական անջատումը «հերձուած» հռչակեց: Թուրք կառավարութիւնը աւելի առաջ տարաւ բաժանման այս սխիթէմը: 1870ին՝ Պուլկարներու էկզարքը պաշտօնապէս պետ ճանչցաւ բովանդակ Պուլկարներու եկզարքը պաշտօնապէս առանձին Պուլկարական Եկեղեցի: հասարակութեան, որով կազմուեցաւ առանձին Պուլկարական Եկեղեցի:


Բ. Դուռը, ժողովուրդը ժողովուրդին դէմ հանելէ վերջ՝ Եկեղեցին Եկեղեցիին դէմ կը հանէր:

Կ'արժէ այստեղ դիտել տալ թէ պետական նոյն սիսթէմին արդիւնքն է նաև մեր ազգին մէջ առաջ եկած Կաթոլիկ և Բողոքական հասարակութեանց ճանաչումը: Ատեն մը՝ մեր Պատրիարքները և Թուրք Պետութեան հետ շփման մէջ գտնուող նշանաւոր Հայեր յաջողած էին Դրան ընդունիլ տալ սա տեսակէտը թէ օտար կրօնքի տեղ տալ Հայ ազգին մէջ՝ կը նշանակէ դիւրացնել օտար տարրերու արմատացումը երկրին մէջ. կրօնքը միշտ յառաջապահն էր քաղաքական ծաւալման ու նոյն ատեն անոր պատրուակ ալ կրնար դառնալ: Երկար ժամանակ Բ. Դուռը անխախտ մնաց այս համոզման վրայ և հակառակ նոյն իսկ դեսպանական միջամտութեանց, թողուց որ Հայոց Պատրիարքարանը, ճշմարիտ տրաքոնեան միջոցներով, նոյն իսկ արիւնալի հայաժանքներով, ջախջախէ կազմուելու վրայ եղող օտարակրօն տարրերը: Դրան կողմէ մեր Պատրիարքարանին ընծայուած պաշտպանութիւնը այն աստիճան անխորտակելի էր որ ձիզվիթները՝ իրենց ծաւալման արգելք դարձող Հայ Պատրիարքները չափաւորութեան բերելու համար ի զուր Պոլսոյ Ֆրանսական դեսպանատան բոլոր միջոցներն ու սպառնալիքները կը սպառէին: Հայ Պատրիարքները իրական ոյժեր էին երկրին մէջ, և եթէ կառավարութիւնը անոնցմէ մէկն ու միւսը կը հարուածէր՝ երբ դեսպանական սպառնալիքները չափազանց վտանգաւոր կը դառնային, երեսանց էր, չուտով կ'աշխատէր եղածը դարմանելու: Ատիկա շատ լաւ գիտնալնուն համար չէ՞ որ ձիզվիթները երբ յաջողեցան աքսորի դատապարտել տալ Աւետիք Պատրիարքը, — ամէնէն անարկուն իրենց հակառակորդներուն, — առեւանգեցին զայն և Ֆրանսա տանելով բանտարկեցին նախ Մօն Սէն-Միշէլի մենաստանին և յետոյ Պասթիլի մէջ, ուր մեռաւ: Վերջէն սակայն նոր մարդիկ երեւան եկան, նոր սկզբունքներ ու նոր վտանգներ գոյացան. եկաւ օր մը ուր Հայ ազգը բաժան բաժան ընելն ալ դարձաւ պետական անհրաժեշտութիւն, և հետզհետէ մարմին առին նախ Հայ-Կաթոլիկ հասարակութիւնը, յետոյ Հայ-Բողոքական հասարակութիւնը:

Խնդիր է սակայն թէ Եւրոպական Թուրքիոյ մէջ կիրարկուած այդ դրութեամբ ի՞նչ կը շահէր Թուրքիա: Երկրին հոգերը օրը օրին սնտեսելու և վաղուանը միշտ Աստուծոյ ձգելու վարժուած Թուրք պետական մարդիկը բնական է չէին կրնար նախատեսել թէ Յունաց Պատրիարքարանին դէմ իրենց բռնած ընթացքով՝ Թուրքիա օր մը չէ օր մը պուլկարական վտանգ մըն ալ պիտի գտնէր իր դէմը, աւելի սպառնալից քան հէլլէնականը, քանի որ Պուլկարները Սլաւ ըլլալով, իրենց պաշտպան ունէին ամենահզօր և բնապէս Թուրքիոյ թշնամի սլաւական մեծ Կայսրութիւնը, Ռուսիան: Օրուան անհրաժեշտութիւնը՝ Հէլլէնականութիւնը բաժան բաժան ընելու և տկարացնելու պէտքը, մանաւանդ ատոր համար ներկայացած թանկագին պատեհութիւնը զոր Պուլկարները կ'ընծայէին, ապագան մոռցուցին իրենց. ամէն օրուան իր հոգը. վաղը եթէ ուրիշ վտանգ մը ելլէր, այն ատեն ալ անոր վրայ կը խորհէին: Բ. Դուռը, քիչ

ետքը, միեւնոյն նկատումներով ոյժ տուաւ նաև Ուլահներու պահանջումներուն՝ ընդդէմ Հէլլէն տարրին:

Պուլկարներու անջատմամբ կողէն խոցուած Հէլլէնականութիւնը ինք-




ՍՐՐ ԷՏՈՒՍՐ ԿՐԷՅ

Անգլիոյ Արտաքին Գործոց նախարարը որ հաշտութեան բանակցութեանց պատուակալ նախադահութիւնը ստանձնեց

զինքը պարտուած չնկատեց. «Մեծ Գաղափար»ը, — իսլամական լուծին տակ գտնուող քրիստոնեայ բնակչութիւնը հէլլէն մշակմամբ աշխարհակալելու և Թուրք Կայսրութեան աւերակներուն վրայ երբեմնի էլլաղան վերականգնելու այդ անմեռ իտէալը, — Հէլլէն տարրին էութիւնն իսկ էր:

յետոյ, Գահաժառանգին հօրը՝ Ենթորիս Թագաւորին օրով ձեռք բերուած Թէսալիան ու Եօթ Կղզիները: Բայց հակառակ այս ամէնուն, Ազգային Երազը երեք քառորդ մասով անկատար կը հուշակէր: «Էլլադա գերի է



Ձէնքի բաշխումը լուսկար պահեստներու, Սօֆիայի մէջ

տակաւին, գերի է մանաւանդ Մակեդոնիան, աչքը յառած Ձեր Թագաւորութեան: Ո՛ր էր թէ Հէլլէնականութիւնը որ այսօր ուրախութեամբ կը տօնէ այս յիշատակելի օրը, իր ներքին բաղձանքները ձեղձով իրականացած տեսնէր, և դուք, մեր պաշտելի Գահաժառանգը, Մեծ Գաղափարին քահանան ու քրմապետը ըլլայիք»: Ողջ չէ այսօր Հէլլէնականութեան այս մարգարէն. ի՛նչ խանդավառութեամբ պիտի ողջունէր արդեօք յունական բանակներուն յառաջխաղացութիւնը մինչեւ Մակեդոնիոյ սիրտը, մինչեւ Թեսաղոնիկէ, առաջնորդութեամբ նոյն ինքն գահաժառանգ Իշխանին, զոր Մեծ Գաղափարին քրմապետը դարձած տեսնել կ'ըզձար: «Մակեդոնիան Հէլլէնականութեան սիրտն է, առանց Մակեդոնիոյ Էլլադա չկայ: Մակեդոնիա իրապէս մեծ ու միացած Էլլադային հիմն է, յունական ազատութեան պատուարը, Յունաստանի ապագային գրաւականը», — կը գրէր դարձեալ Պ. Քալօթիբիս, մեղադրելով իր հայրենակիցները թէ հակառակ այդ կենսական կարեւորութեան, Մակեդոնիոյ մասին այնքան տգէտ են որքան Ափրիկէի ներքին մասերուն կամ Բօլէնիզիոյ նկատմամբ: Ու զանոնք լուսարաններու համար էր որ կը հրատարակէր Գահաժառանգին ձօնուած իր գործը. — Մակեդոնիոյ տնտեսական, աշխարհագրական, պատմական ու ազգագրական ուսումնասիրութիւնը:

Կ'ենթադրուի անշուշտ թէ ի՛նչ կրնար ըլլալ իր երեւակայած Մակեդոնիան, և թէ Սլաւ տարրերը արքան իրաւատէր կը մնային անոր մէջ:

Պէրլինի Գահաժառանգին ու Բոււնդիի յեղափոխութիւնը յունական ակնկալութիւններէն շատ բան կորզած էին, բայց մնացածը նորէն մեծ բան էր, Հէլլէնականութեան յաւակնութեանց առջեւ անսահման ասպարէզ բանալու համար: Այդ ակնկալութիւնները, Պ. Տրիօի սահմանման համեմատ, հետեւեալներն էին. — Թէսալիական սահմանագլուխին հիւսիսակողմէն (Տեսնել քարտէս էջ 110) Բոււնդուքը, այսինքն Բոււնդներու երկիրը՝ Վիսթ-րիցայի երկայնքը, Ողիսպոսի հիւսիսային կողերուն վրայ, Գարաֆէրիա և Վոսէնա պղտիկ քաղաքներով: Յետոյ՝ Սելանիկէն անդին՝ Կալքիտեան եռալեզու թերակղզին, բացի անոր ամէնէն նշանաւոր մասէն, ուր կը գտնուին Աթոս լեռն ու Այնօրօզի համալուար վանքը: Այդ նեղ հողի լեզուակը Օրթոտոքս կրօնքին սրբարանն է. այնտեղ հիմնուած են հարուստ և միշտ առատ նուէրներու առարկայ դարձող ու յարգուած մենաստաններ, որոնց մէջ 10,000 վանականներ ծոյլ ու բարեկեցիկ կեանք մը կ'անցընեն. գրեթէ ամէնքն ալ Ռուս են, աւելի զինուոր քան վանական: Այնօրօզը՝ Ռուսիոյ համար՝ տեսակ մը ձիարալթար է Արշիպեղազոսին հիւսիսակողմը: Անկէ անդին՝ դէպի արեւելք, ծովեզերքները նոյնպէս Հէլլէններու ակընկալութեանց սահմանին մէջն էին. անոնք կը խորհէին Օրֆանօի, Քալկալու յու Ծարտանէլի ճամբով հասնիլ մինչեւ Պօլիս, ուր 300,000 Յոյներ լայի ու Տարտանէլի ճամբով հասնիլ մինչեւ Պօլիս, ուր 300,000 Յոյներ կ'ապրին: Յետոյ՝ Փոքր Ասիոյ երկայնքը՝ արեւմտեան ծովեզերքերը յու-




Պուլկար պահեստներու մեկնումը դէպի կուռի դաշար

նական կը նկատէին, և այն մեծ շրջանակը զոր Յոյն ցեղը գծած է Արշիպեղազոսի մէջ, կը լրացնէին Հոռոգոսով ու Կրէտով: Այս է Հէլլէնականութեան բուն կալուածը, զոր հետաքրքրական է բաղաձայն Ռեզան-

դական Կայսրութեան երբեմնի տարածութեան հետ (Տե՛ս քարտէս էջ 135) :

Բայց Հէլլէները տակաւին կը մտաբերէին թէ Մակեդոնացի Փիլիպպոսը երբեմն իրենց Թրակեան ստացուածքներէն աւելի անդին անցաւ, և կը հակէին նաև դրացի հողամասերու վրայ : Արեւմտեան կողմը՝ Մանասթըրի մէջ՝ հէլլէնական հարուստ գաղութ մը ունէին . արեւելքի կողմը՝ Հէլլէն ժողովուրդը Սրֆանօէն կը տարածուէր մինչև Սէրէզ, Սթրուսմա



Օսմ. հետեւակազօրքը մարզանքի մեջոցին

գետին երկայնքէն . Ամֆիպոլիսի երբեմնի հզօր աթենական գաղութին հողամասն էր ատիկա : Թէ՛ այս երկու ձամբաներէն և թէ՛ Կալքիտեան թերակղզիէն Յոյները կը յուսային ձեռք ձգել Մակեդոնիան : Ու գիտենք արդէն որ ասիկա սոսկ փառասիրական նպատակ չէր իրենց համար : Յունաստան տնտեսապէս արգահատելի վիճակի մը մէջ կը մնար՝ իր հողերուն մշակութեան անյարմար ըլլալուն պատճառաւ . Մակեդոնիոյ տենչալով՝ փառասիրական նկատումներուն կը միացնէր նաև էապէս գործնական նպատակ մը, քանի որ անոր յուսթի հողերը մեծապէս պիտի նպաստէին իր տնտեսական վերականգնութեան :

Այս յաւակնութիւնները պաշտպանող Յոյները իրենց դէմ ունէին թէ՛ Թուրք Պետութիւնը և թէ՛ Սլաւ տարրերը : Իրենց բրօքականտը՝ Հէլլէնականութեան ի նպաստ, ամենաբուռն գիմադրութեանց կը բաղխէր . իրենց յայտնի գործիչները Մակեդոնիոյ մէջ՝ միշտ կը սպաննուէին Պուլկարներէն, և Համիտեան Կառավարութիւնը յաճախ գիտակցօրէն կը հովանաւորէր սպանիչները : Սպանութեան այս դրութիւնը շարունակեց նաև Ժէօն-Թիւրք վարչութեան օրով . նոյն իսկ Կրէվէնայի Յոյն Մետրապօլիտին սպանութեան մէջ՝ Ժէօն-Թիւրքերը արտաքին աջակցութեան ալ պէտք չտեսան : Ահարկու մանաւանդ Պուլկար չէթէներն էին, և Յոյները ստիպուած, իրենք ալ սկսան չէթէներ կազմակերպել, իրենց բարոյական

ստացուածքը, իրենց հեղինակութիւնն ու ազդեցութիւնը պաշտպանելու համար : Շատ անգամ ալ իրենք ինքզինքնին տկարացուցին ներքին անհամաձայնութիւններով ու սլառակողմներով : Մետրապօլիտներ յաճախ կ'ընդհարէին Յունաստանի հիւպատոսներուն հետ, որոնց ձեռքն էր բրօքականտի անհրաժեշտ դրամը, թէ՛ Յոյն Կառավարութեան տուածը և թէ՛ բարեբարներու դրկածը . Աթէնք այնքան մօտէն կը հակէր Հէլլէնականութեան շարժումներուն վրայ, որ Օսմ. հպատակ յոյն Մետրապօլիտներ ընդհանրապէս ուղղակի Յունաստանի կառավարութեան կը դիմէին հիւպատոսի մը հեռացումը պահանջելու համար : Այս պարագան՝ Թուրք կուսակալներէն գաղտնի չէր մնար : Պ. Վիքթօր Պէնար կը պատմէ թէ իննսունական թուականներուն Մանասթըրի Վալին ձեռք անցուց տեղւոյն Յոյն Մետրապօլիտին կողմէ Յունաստանի նախարարապետ Պ. Թրիքուբիսի զրկուած նամակ մը որով Մանասթըրի Հէլլէն Հիւպատոսին հեռացումը կը պահանջէր, դոյն շլասակար նկատելով Հէլլէնականութեան դատին : Եղածը պղտիկ բան չէր, պարզապէս դաւաճանութիւն էր Օսմանեան Հայրենիքին դէմ . բայց վերջապէս ժամանակն ալ համիտեան էր, և կաշառքը շուտով կը հարթէր այս կարգի խնդիրներ : Մանասթըրի այն ատենուան Կուսակալը, փոխանակ բռնուած նամակը Պոլիս դրկելու, կը վերադարձնէ Մետրապօլիտին, 500 ոսկիի գումարի մը փոխարէն, որ Հէլլէնականութեան սնուկէն կ'ելլէր :

Հէլլէնականութիւնը ծանր կորուստ մը կրած էր նաև 1897ի դժբախտ պատերազմին և կրէտական ձախորդ քաղաքականութեան հետեւանքով : Յունաստանի պարտութիւնը շատ Մակեդոնացիներէ խլած էր Հէլլէնականութեան ապագային վրայ կեդրոնացած հաւատքը . անվստահ Յունաստանի յսջողութեան մասին և ներքնապէս Թուրքին լուծը թօթափելու անհամբեր, անոնք սկսած էին ուրիշ կողմ ուղղել իրենց ակնկալութիւնները . Պուլկարները մանաւանդ . և ընդհանրապէս Սլաւ տարրը, սահմանուած էին Մակեդոնացուց մէջ Հէլլէնականութեան մասին գոյացած այդ թերահաւատութենէն օգտուելու, ինչպէս որ օգտուեցան ալ : Կը հասկըցուի անշուշտ թէ Թուրքեհէլլէն պատերազմին առթիւ Ռուսիա ինչո՞ւ այնքան անպաշտպան թողուց Հէլլէն ազգը : Յունաստանի տկարացումը շահաբեր էր Համասլաւութեան :

Յոյները՝ պատմական յիշատակներու և աւանդութեանց վրայ հիմնած էին Մակեդոնիոյ մասին իրենց սնուցած յաւակնութիւնները . հեռաւոր անցեալին մէջ կը փնտռէին իրենց իրաւունքներուն հաստատութիւնը : Պուլկարները նոյնպէս այդ անցեալը սկսան ոգեկոչել, իրենց յաւակնութիւններուն ոյժ տալու համար : Ծիշտ է որ իրենք այնքան հին չէին այդ երկրին մէջ՝ որքան կը կարծէին ըլլալ Յոյները, բայց վերջապէս խնդիր էր թէ այսօրուան Մակեդոնացիք իրօք այն Մակեդոնացիներն են որոնց էր թէ յայտնուան Մակեդոնացիք իրենց աշխարհակալութիւնները իրամով Փիլիպպոս և Մեծն Աղեքսանդր իրենց աշխարհակալութիւնները իրականացուցին : Երբ Մեծն Աղեքսանդրի ծննդավայր Բէլլա քաղաքն անգամ անհետ կորսուած էր, ինչպէս կրնար մնացած ըլլալ զայն շէնցնող Մանհետ կորսուած էր, ինչպէս կրնար մնացած ըլլալ զայն շէնցնող Մա-

կեղոնացի ժողովուրդը: Եւ յետոյ՝ այդ Մակեդոնացիք Յոյն ալ չէին, քանի որ Դէմասթէնէս զանոնք Հէլլէն տարրին օտար ու թշնամի կը հրօշակէր: Մինչդեռ՝ անհերքելի պատմական ճշմարտութիւն էր թէ Չ. և է. դարերուն՝ Սլաւ ցեղէ բազմաթիւ խումբեր յաջորդաբար եկած հաստատուած էին Պալքանեան




ԲԷԹԱՐ ԹԱԳԱՒՈՐ ՍԵՐՊԻՈՑ

Թերակղզիին երկայնքը: Սերպերը որոնք ճաքարիւն Սլաւներ են, յետոյ Պուլկարները որոնք սլաւացած Թաթարներ են, հիմնած էին ուժեղ կայսրութիւններ՝ որոնց դէմ Բիւզանդական կայսրութիւնը երկար ժամանակ մտքաուեցաւ: Ժ. դարուն, Պուլկարներու Սիմէոն Զարը կ'իշխէր ահագին տարածութեան մը վրայ, որուն մէջ կը գտնուէին այսօրուան Պուլկարիան, Սերպիան, Մակեդոնիան, Ալպանիան: Սլաւները իջան նոյն իսկ մինչև Պեղոպոնէս, ուր այսօր դեռ իրենց հետքերը կը մնան: Ե-

թէ խնդիրը պատմական աւանդութեանց վրայ էր, Պուլկարները նոյնքան իրաւունք ունէին ուրեմն Մակեդոնիոյ վրայ, որքան Յոյները: Այս վերջիններուն այն յաւակնութիւնն ալ թէ Հէլլէնականութիւնը քաղաքակրթած է Սլաւները, հետեւաբար պէտք է անոնցմէ գերակշիռ մնայ և անոնց բնակավայրերը իւրացնէ, կը քանդուէր ճարտար առարկութեան մը առջև զոր Պուլկարները մէջտեղ կը դնէին. — «Երբեմնի Կօլուան (Փրանսա) և Մեծն-Բրիտանիան, կ'ըսէին, Հոռոմայցեաց ձեռքով քաղաքակրթուեցան. այսօրուան Իտալացիները կրնան այդ պատճառաբանութեան վրայ հիմնուելով տէր կանգնել Փրանսայի և Անգլիոյ»: Միւս կողմէ՝ կ'առարկէին տակաւին որ եթէ Յոյները զիրենք քաղաքակրթեցին, իրենք ալ հէլլէնական վատասերած, յուլացած, մեղկացած ժողովուրդին ներարկեցին իրենց առոյգ ու կենսունակ արիւնը, և թէ ատոր շնորհիւ մանաւանդ Բիւզանդիա կրցաւ երկար ժամանակ յաղթականօրէն դիմադրել Իսլամ արշաւներու:

Բոլոր այս վէճերն ու առարկութիւնները նոր ժամանակներու գործ

են. անոնցմէ առաջ՝ Հէլլէն տարրը իր բացարձակ տիրապետութեան ենթարկած էր Պալքաններու բոլոր ազգութիւնները, չարաչար օգտուելով Ճաթիի աւանձնաշնորհումէն՝ որ Եւրոպական Թուրքիոյ բալկանդակ Կը-



ՊՈՒԼԿԱՐ ՕԴԱՆԱԻՈՐԴՆԵՐՈՒ ԼՐՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԻՒՆԸ


1. Տեղակալ Լուիս-Ֆի սաւառնակը. — 2. Էտիւնէի վրայ հետազոտութիւն կատարելէ վերջ՝ տեղակալ Լուիս-Ֆի Մուսթաֆա Փաշա կ'իջնէ. — 3. Զախորդ վայրէջք մը. — 4. Տեղակալ Միլօֆի և Թարաքչիէֆի առաջին սաւառնումը Էտիւնէի վրայ. — 5. Զօրավար Եուլօֆի կը շնորհաւորէ Թարաքչիէֆը՝ Էտիւնէի վրայ կատարած յաջող սաւառնումին համար. — 6. Զինուորական սաւառնորդներ իրենց հետազոտութեանց արդիւնքը կը հաղորդեն զօրավար Եուլօֆի:

բիստոնեայ բնակչութիւնը, «Բումի» ընդհանուր անունին տակ, Պոլսոյ Յուսայ Պատրիարքին հոգեւոր-վարչական իրաւասութեան կ'ենթարկէր: Պուլկարներուն և առ հասարակ միւս բոլոր Սլաւներուն ազգային գի-

տակցութիւնը այնքան զօրաւոր չէր որ այդ հաստատեալ կարգին դէմ ընդվզէին . ընդհանրապէս տեղեկութիւն չունէին իրենց անցեալին նկատմամբ : Փառաւոր նախնիքը որոնք երբեմն անագին Կայսրութիւններ հիմնած էին նոյն այդ հողին վրայ , անյայտ կը մնային , որովհետեւ պատմութիւն չկար : Մտաբերեցէք Համլտեան օրերու ջղագար հալածանքը մեր ազգային պատմութեան մասին . Հայ ազգին ինքնագիտակցութիւնը ջնջելու և անոր տոհմիկ հպարտութիւնը անհետացնելով կրաւորական անշիղ տարրի մը վերածելու քաղաքականութիւնը որուն կը հետեւէին , ինչքան ալ վայրագ ու անողորմ ըլլար , նորէն չպիտի կրնար յաջողի՝ որքան ատեն որ Ազգ . պատմութիւնը կար . կորովի , սրտապնդման , մաքառման , ու նաև հերոսական անձնազոհութեան ու մարտիրոսացման բուն , թելադրիչ աղբիւրը ան էր : Այդ մէթոտը՝ Համլտէն շատ առաջ՝ Յունաց Պատրիարքը կը կիրարկէր Պալքաններու Սլաւ ժողովուրդները յունացնելու համար . և անհեռատես թուրքը որ դեռ Հէլլենականութեան վտանգը զգալէ շատ ու շատ հեռու էր , ինք ալ գործիք կը դառնար Ֆէնէրի Պատրիարքարանին ձեռքը , անոր աշխատութեան օժանդակելով : Սլաւ տարրը սոսկ թուրքերուն քաղաքական և ընկերային լուծը չէր կրեր , այլ նաև Յոյներուն մտաւոր և կրօնական լուծը , որ ընդհանրապէս առաջինէն աւելի ծանր կը ճնշէր իրենց վրայ : Ֆէնէրի Պատրիարքարանը կ'արգիլէր իրենց լեզուն , իրենց եկեղեցական պաշտամունքը , իրենց գրականութիւնը , մանաւանդ պատմութիւնը . անհամար սլաւ ձեռագիրներ կ'այրուէին կոյր մոլեռանդութեամբ մը . ինչ որ Իսլամը չէր ընէր , յոյն կրօնաւորները կ'ընէին : Պուկարերէն գիրք մը ունենալ՝ ոճիրի պէս բան մըն էր . շուտով կը գրաւուէր ու կ'այրուէր , և տէրն ալ փորձանքէ զերծ չէր մնար : Այդ մոռելանդ հետապնդութեան զոհ գնաց թիրնօվօի նախկին Պուկարական Պատրիարքարանին հարուստ գրատունը զոր յոյն կրօնաւորներ կրակի տուին՝ Աղեքսանդրիոյ պատմական Մատենադարանին կորուստը յիշեցնող վանտալականութեամբ մը : ԺԸ . դարուն՝ Ֆէնէրի Պատրիարքարանը իր աշխարհակալութիւնը կատարեալ կը նկատէր այլեւս : Սլաւ չկար . ինչ որ սլաւ էր՝ հեռաւոր , տարտամ , անկապակից տեղեկութիւններ միայն ունէր իր նախնիքներուն վրայ . և այդ հատուկոր գիտելիքները այնքան անբաւական էին որ ոչ իսկ կրնային իր մէջ արթնցնել Յոյներէն անկախ ազգ մը ըլլալուն գիտակցութիւնը : Ատկէ քաջալերուելով է որ Ֆէնէրի Պատրիարքարանը 1766ին ջնջեց Իբէքի Սերպ Արքեպիսկոպոսութիւնը , ու տարի մը վերջն ալ Օխրիտայի Պուկար Պատրիարքութիւնը . ատկէ առաջ՝ ջնջած էր նաև անոնց եկեղեցական պաշտամունքին արարողական զանազանութիւնները , որով այլեւս իրօք Սլաւ տարր չէր մնար իր դէմը : Ստրուկ ու տէր էր միանգամայն Յունաց Պատրիարքարանը , ինչպէս ստրուկ ու տէր էին թուրք Պետութեան մէջ ամէն մարդ , Եպարքոսէն սկսեալ մինչև յետնագոյն անհատը ժողովուրդին . մէկ կողմէ ստիպուած էին կուրօրէն հնազանդիլ իրենցմէ բարձրաստիճանին և միւս կողմէ ալ բռնաբար կ'ընկճէին իրենցմէ ստորադասը : Ստրուկ էր Յունաց Պատ-

րիարքարանը՝ պետութեան առջև , ու տէր՝ իրեն Էնթակայ ժողովուրդներուն վրայ : Ու տեսանք արդէն թէ ինչ բարբարոսութեամբ կը կիրարկէր իր տիրութեան իրաւունքը :

Սակայն որքան ալ խիստ , որքան ալ անողորմ ըլլային հալածանք-



ները , միշտ կայծ մը պիտի խուսափէր իրենցմէ , պիտի մնար անմեռ , և որ մը կարելի պիտի ըլլար այդ կայծով մեծ հրդեհ մը առաջ բերել : Բոլոր հալածանքներուն ճակատագիրն է ասիկա : Եւ Յոյները բացառութիւն մը չեղան : Իրենց հաւատաքննական հետապնդումներէն կարելի եղաւ ազատել կարգ մը գրչագիր գործեր ու ժամանակագրութիւններ որոնք գաղտնի


կը պահուէին հոս ու հոն՝ վանքերու խորը Զարթնումը այդ վանքերէն
և այդ ձեռագիր յիշատակարաններուն միջոցաւ պիտի սկսէր :

1762ին՝ Բիսոցի Պուլկար քահանայ մը , Բախսիուս , որ միաբան էր Այ-
նորօզի վանքին , հակառակ անոր որ հելլէն դաստիարակութիւն մը ստա-
ցած , գրեթէ հելլէնացած էր , կը ձեռնարկէ իր ցեղին պատմութիւնը գը-
րելու : Ազգային հպարտութիւնը կ'ըլլայ պատճառ այս որոշման որ Պուլ-
կարներուն վերադարձնումին սկզբնակէտը պիտի դառնար : Յոյները՝ զիրենք
բարբարոս կը կոչէին . Սերպերը նոյնքան արհամարհոտ էին իրենց մասին .
մէկն ու միւսը կը հերքէին Պուլկար տարրը , առարկելով թէ պատմու-
թիւն չունի , ազգ չէ , ժողովուրդ չէ . «Սիրաս կը ժորմոքէր ու կուլայի
իմ Պուլկար ժողովուրդիս վրայ : Յաճախ Յոյներն ու Սերպերը մեզ կը
նախատէին , ըսելով թէ պատմութիւն չունինք . . . : Առանց նկատի առնելու
ո՛չ գլխու ցաւերը որոնք երկար ատեն զիս հետապնդեցին , ոչ ալ այն չար-
չարանքները որոնց ենթարկուեցայ , մեծ դժուարութեամբ հաւաքեցի բազ-
մաթիւ դարելու յիշատակները որոնք թաղուած ու մոռցուած էին . . . » :
Այս սրտազրաւ տողերով Բախսիուս քահանան կը ներկայացնէ իր գոր-
ծը՝ «Պատմութիւն Սլովէն—Պուլկար ժողովուրդին , և Պուլկարիոյ Զարե-
րուն ու Սուրբերուն» : Անով կը վերյուշէր փառաւոր անցեալ մը զոր յու-
նական հալածանքները մոռացութեան մատնած էին . ապագայ անկախու-
թեան հնչակն էր այս գործը . երբեմնի հերոսները փառաբանելով՝ նոր
հերոսներու գոյացման գետին կը պատրաստէր . նախնիքներու մեծա-
գործութիւնները թուելով , հաւատք կը ներշնչէր Պուլկարներուն թէ իրենք
ալ կրնան նոյնքան փառաւոր արդիւնք տալ :

Յունաց Պատրիարքարանը , զգալով վաւանգը , շուտով աշխատեցաւ
գործին տարածումը արգելելու . հալածանքներն ու խուզարկութիւնները
վերսկսան ամենաբուռն կերպով , սակայն արդիւնքը չպակեց իրենց ջան-
քերը . Բախսիուսի օրինակէն խանդավառուած նոր առաքեալներ ելած էին
մէջտեղ և ասոնք կը մանէին խրճիթները , կը պտտէին դաշտերը , կանգ
կ'առնէին պարտէզներուն մէջ , ամէն տեղ և ամէն Պուլկարի պատմելով
ինչ որ Բախսիուս անհնարին գուրգուրանքով հաւաքած էր իր գործին մէջ :

Պուլկար վանականին այդ աշխատութիւնը , աւելի մեծ արձագանգ
պիտի գտնէր Ռուսիոյ մէջ . այնտեղ ալ յայտնութիւն մը եղած էր անիկա ,
և Մեծն Պետրոսի աւանդութիւններով տոգորուած պետական մարդիկ ,
անոր մէջ ապահով միջոց մը տեսած էին սլաւ ազգեցութիւնը բերելու
մինչև Պոլսոյ , — մինչև երազուած Զարիկրատին , — դուռները , իրենց
կողմը շահելով Պալքաններու համացեղ եղբայրները : Հասնելու համար
այս նպատակին , ռուս համալսարաններուն մուտքը լայնօրէն բացուեցաւ
Պուլկարներուն առջեւ . կէս դար , անընդհատ , Ռուսները պուլկար երի-
տասարդներուն տուին սլաւ կրթութիւն , զանոնք խանդավառեցին սլաւ
աւանդութիւններով , անոնց սորվեցուցին իրենց անցեալը , իրենց պատ-
մութիւնը , հրապուրեցին մանաւանդ ապագայ անկախութեան յոյսերով՝
զորս կարելի կ'ընծայէր Սլաւ հզօր տէրութեան պաշտպանութիւնը : Այդ
երիտասարդները Ռուսիայէն հայրենիք կը դառնային բոլորովին թօթա-

փած հելլէն ազգեցութիւնը . ամէնքն ալ իրենց գիւղին , աւանին կամ
քաղաքին մէջ մոլեռանդ պայքար մը կը մղէին Յոյներուն դէմ , և քանի՛
այս վերջիններուն հալածանքները կը սաստկանային , անքան ուժգին կը
դառնար նաև Պուլկարներու ընդդիմութիւնը : Բախսիուս ունեցած էր իր



Սերպ կրկնուէր մէջ մոռցուած պատմութիւնը օրերուն արտակարգ եռանդ երեցաւ դէն ի ճեղքին
մասնակցելու պատեհողքին : Նրոտարութեանք արդէն Սր Սոփիա իվանովի պատկերը : Ներկայ
պատկերին մէջ ալ կ'երեւան իրումը մը սերպ ուսուցչուհիներ , որոնք հազիւ պատեհողքը ծաղկած ,
սկսած գիտավարձութիւն ընել , որոնք իրենց օրնակներուն , սմանք ալ իրենց եղբայրներուն սկա-
նորը համար պատեհողքի դաշտին վրայ :

յաջորդները , ինչպէս վէնէլին ու Աբրիլօֆ , որոնք աւելի կատարեալ և
աւելի թելադրիչ պատմութիւններ ընծայած էին Պուլկար ժողովուրդին :
Մինչև 1856ի Խաթթը Հիւմայունը , որուն երկրորդ յօդուածը կայս-
րութեան քրիստոնեայ բնակչութեան մասին քննութիւն կը հրամայէր ,
Յունաց Պատրիարքարանը տէր կը մնար իր երբեմնի առանձնաշնորհ-
մանց՝ Ռուսիայի բովանդակ քրիստոնեայ ժողովուրդներուն վրայ , ու
բնաւ չէր լքած ամէն կարելի կերպով զանոնք յունացնելու [վաղընջուց

նպատակն ու բռնական միջոցները: Տարակոյս չկայ որ աւելի ապահով կերպով մը պիտի կրնար հասնիլ այդ նպատակին, եթէ երեք թոյլատու վարչութեան մը տակ պահէր Սլաւ ժողովուրդները, անոնց ազգային արժանապատուութիւնը յարգելով, և զանոնք ազատ ձգելով իրենց ներքին գործերուն անտեսութեան մէջ: Ինք կ'աշխատէր ասրապիով տիրելու, մինչդեռ աւելի նպաստ պիտի բերէր Հէլլէնականութեան՝ եթէ ւիրով տիրէր: Այդ պարագային՝ անոնք թերեւս չփորձուէին իրեն դէմ ընդվզելու: Ինչ սխալ որ կ'ընէր պետութիւնը՝ Կայսրութիւնը կազմող ոչ-թուրք տարրերուն վրայէն բուռնցքը անպակաս պահելով և զանոնք միշտ աւելի ցրտացնելով իրմէ, նոյն սխալը կ'ընէր նաև Յունաց Պատրիարքարանը: Բոլոր եկեղեցական պաշտօնները Հէլլէններու կամ ապահով կերպով յունացած Սլաւներու կը յանձնուէին, և ասոնց ամէնքն ալ ամենաանխիղճ կերպով կը կեղեքէին ժողովուրդը: «Իրենց երկար ու յարգելի հազուատները հագած, ու մօրուքնին պարզած՝ կը հեծնեն լաւ սնած ձիերնուն վրայ և կ'երթան հաւաքելու դրամ, գարի, սերմնացու, հաճար, եգիպտացորեն, վարսակ, սոխ, սխտոր, բողկ, կաղամբ, պղպեղ, լուրիա, բակիա, ոսպ, ոլոռն, ամէն տեսակ պտուղներ, ու նաև կանեփ, բուրդ, այծի և ոչխարի մորթ, վերջապէս ինչ որ գտնեն: Ահա՛ այս Բօքերը, այս յոյն կրօնաւորները, որոնք կը յաւակնին ազգային բարերարներ և Սինայի, Յիսուսի գերեզմանին ու Սրբազան Լերան բարեպաշտիկ սպասարկուները ըլլալ...»: Այսպէս կը ներկայացնէր զանոնք պուլկար հրապարակագիր մը, և այս պատկերին մէջ ոչինչ կար չափազանցուած: Յոյն քահանային յայտնուած տեղը կը չորնար պարզապէս: Ազահութեան մարմնացումն էր անիկա:

Պուլկարները մասամբ զերծ էին այս փորձանքէն, որովհետեւ իրենց շրջանակներուն մէջ, գոնէ ստորադաս կղերը Պուլկար էր. և այդքան մը արդիւնքը ձեռք բերած էին կաշառքի շնորհիւ: Դարձեալ կաշառքով էր որ մէկ քանի Պուլկար եկեղեցականներ յաջողած էին բարձր աստիճաններու հասնիլ և դառնալ առաջնորդ: Այս վերջիններն էին որ գլուխ կեցան յիսունական թուականներու ընդդիմութեան որ Սլաւ տարրը պիտի կորզէր Յունաց Պատրիարքարանին ազդեցութենէն: 1857ին, երբ Պոլսոյ Պատրիարքը ժողովի հրաւիրեց իր հոգեւոր իրաւասութեան ենթակայ բոլոր նահանգներուն ներկայացուցիչները, Պուլկարները պահանջ դրին անկախ եկեղեցի և հասարակութիւն կազմելու: Բ. Դուռը շատ արամազիր էր իրենց պահանջումը ընդունելու. բացատրեցինք արդէն իր երկիւղը՝ Հէլլէնականութեան ծաւալման մասին, ինչպէս նաև այն օգուտը զոր կը տեսնէր Եւրոպական Թուրքիոյ Քրիստոնեաներուն բաժանման մէջ: Մեծ-Եպարքոս Գրպրըզը Մէհմէտ փաշա՝ Սուլթանին մատուցուած տեղեկագրով մը ուշադրութիւն հրաւիրած էր Եւրոպական Թուրքիոյ Յոյն Մէտրապոլիտներուն վրայ, որոնք իրենց հոգեւոր իրաւասութեան ու պաշտօնին հետ առնչութիւն չունեցող և տէրութեան շահերուն բոլորովին անհամապատասխան գործունէութեան մը յանձնուած էին: Այս տեղեկագիրն ալ պատճառ մըն էր Բ. Դուռը մղելու որ ըն-

դունի Պուլկարներուն պահանջը: Կար նաև Ռուսիոյ ստիպումը՝ ի նպաստ Սլաւ տարրին: Կառավարութիւնը սակայն կը վախնար Ֆրանսայի և Անգլիոյ դժգոհութենէն. երկու երկիրներն ալ՝ Խրիմի պատերազմէն առջին շատ մօտէն կը հետաքրքրուէին թրքական իրերով, մանաւանդ երբ անոնց տակ Սլաւութեան, հետեւաբար նաև Ռուսիոյ խնդիր կար: Պատերազմին յիշատակը դեռ թարմ էր — հազիւ տարի մը անցած էր — և

Թուրքիա չէր ուզեր իր երէկուան պաշտպանները վշտացնել: Միանգամայն իր շահերուն և իր բարեկամներուն ծառայելու այս դժուարութեան մէջ՝ Պուլկարներու և Յոյներու միջև ծագած խնդիրը ամբողջ տասը տարի (1860—70) ձգձգուեցաւ: Ֆրանսա և Ռուսիա այդ շրջանին մէջ ձեռք ձեռքի գործեցին ընդդէմ Յունաց Պատրիարքարանին, թէև երկուքն ալ իրենց հաշուին: Ռուսիա Սլաւութեան տեսակէտը կը պաշտպանէր. իսկ Ֆրանսա կ'աշխատէր կաթոլիկ Մակեդոնիա մը ունենալ, և այդ մտքով արդէն Լազարիսթ ժիզվիթներ առաքելութիւններ հաստատած էին Եւրոպական Թուրքիոյ ամէն կողմերը: Սկիզբէն՝ բաւական յաջողութեամբ պսակուեցան ասոնց ջանքերը, և Պուլկար վանական մը, Սօպօլսքի՝ որ կաթոլիկութիւնը ընդունելով Եպիսկոպոս ձեռնադրուած էր Պապէն, 1861 յունիս 9ին կը հաստատէր թէ 14,000ի հասած է կաթոլիկ Մակեդոնացիներու թիւը: Բ. Դուռը՝ Ֆրանսայի պահանջման վրայ, առանձին հասարակութիւն ձանչցաւ զանոնք, առանց դժուարութեան, որովհետեւ կաթոլիկ տարրի մը գոյութիւն առնելը կրկնապէս օգտակար էր իրեն. ասով թէ՛ Հէլլէնականութիւնը կը տկարանար և թէ՛ Համալուսութիւնը: 1861 յունիս 18ին սակայն՝ Գեր. Սօպօլսքի յանկարծ անհետացաւ, իրեն հետ տանելով թէ՛ Պապին կոնդակը, թէ՛ Դրան Պէրաթը և թէ՛ Ֆրանսայի նուէրները. ոչ ոք գիտցաւ ինչ ըլլալը. հաւանականը ան է որ սպաննուեցաւ կամ Հէլլէնականութեան և կամ Համալուսութեան գործակալներուն միջոցաւ: Ո՛վ որ ալ ըլլայ սպաննիչը, իր տուած հարգործակալներուն միջոցաւ: Ո՛վ որ ալ ըլլայ սպաննիչը, իր տուած հարուածը սպաննեց նաև կաթոլիկութիւնը: Սօպօլսքիի փորձը ոչ ոք համարձակեցաւ կրկնելու, և Դրան Պէրաթով նուիրագործուած կաթոլիկ




Պուլկար պահեստի տիպարներ

առանց դժուարութեան, որովհետեւ կաթոլիկ տարրի մը գոյութիւն առնելը կրկնապէս օգտակար էր իրեն. ասով թէ՛ Հէլլէնականութիւնը կը տկարանար և թէ՛ Համալուսութիւնը: 1861 յունիս 18ին սակայն՝ Գեր. Սօպօլսքի յանկարծ անհետացաւ, իրեն հետ տանելով թէ՛ Պապին կոնդակը, թէ՛ Դրան Պէրաթը և թէ՛ Ֆրանսայի նուէրները. ոչ ոք գիտցաւ ինչ ըլլալը. հաւանականը ան է որ սպաննուեցաւ կամ Հէլլէնականութեան և կամ Համալուսութեան գործակալներուն միջոցաւ: Ո՛վ որ ալ ըլլայ սպաննիչը, իր տուած հարուածը սպաննեց նաև կաթոլիկութիւնը: Սօպօլսքիի փորձը ոչ ոք համարձակեցաւ կրկնելու, և Դրան Պէրաթով նուիրագործուած կաթոլիկ

Մակեդոնացի տարրը մեծագոյն մասամբ վերադարձաւ Սլաւ եկեղեցիին : Յունաց Պատրիարքարանը , Կաթողիկոսեան տարածումէն վախնալու աւելի պատճառներ ունէր քան Սլաւ տարրին զօրացումէն . ասոր համար՝ հաշտարար ընթացք մը փորձեց և կարգ մը զիջողութիւններ ըրաւ Պուլկար կղերին , որուն պահանջումները կը պաշտպանէին Օգոստինոսի և Հիլարիոն եպիսկոպոսները :


Ասոնք սակայն , Ռուսիոյ ստիպումներուն վրայ , մերժեցին Յունաց կողմէ եղած զիջողութիւնները : Պատրիարքարանը բանադրեց զանոնք և որոշեց որ ապաշխարեն Հալքի վանքին մէջ (Իշխանաց Կղզիներ) : Բ. Դուռը , վէճը փակելու համար , 1862ին աքսորեց պուլկար եպիսկոպոսները , առաջինը Գոնիա և երկրորդն ալ Վոյօ : Ռուսիոյ պահանջման վրայ սակայն , երկու տարի վերջ անոնք դարձան աքսորէն : Որտեւր չէր կասած : Ռուսիա անդու կը զօրձէր Մակեդոնիոյ մէջ . իր զրդումներուն վրայ , Պուլկարները 1867 ապրիլին Թիրնովօէն վանակցին յայն եպիսկոպոսն ու քահանաները : Ամիս մը ետքը «Պուլկար Կեդրոնական դագանի Քօմիթէն» վերջնազրով մը հետեւեալ պահանջումները կը ներկայացնէր Սուլթանին . 1. — Պուլկարիա ինքնավար վարչութիւն մը պիտի ունենայ և Սուլթանը Պուլկարիոյ Թագաւոր անունը պիտի առնէ . 2. — Պուլկարիա պիտի ունենայ



Ալպանիոյ շրջանակը

առանձին Եկեղեցի ու Սինօզ և Պատրիարք մը , որ Թիրնովօ պիտի նստի : Քօմիթէն կը սպառնար որ եթէ Դուռը այս պայմանները չընդունի , Պուլկարները ոտքի հանելով Պալքանները պիտի անցնի : Կրէտական ապստամբութիւնը որ իր սաստիկագոյն շրջանին մէջն էր այդ պահուն , յարմար գեալին կ'ընծայէր այս յանդգնութեան : Բ. Դուռը տակաւին խնդիրը երեք տարի ալ ձգձգեց , թէև առանց խղուելու Պուլկարներուն հետ : Նոյն ատենները Միտհատ Փաշա Դանուբեան նահանգները խաղաղեցնելու զբաղած էր . ան ալ խորհուրդ տուաւ Պուլկարներու պահանջումներէն գոնէ երկրորդը ընդունելու , քանի որ առանձին Պուլկար Եկեղեցիի մը հաստատութենէն մինակ Ֆէնէրի Պատրիարքարանը կը տուժէր , մինչդեռ

պուլկար Մէտրապոլիտը , որ պիտի նախագահէր իրեն օժանդակ տրուած Սինօզին : Իր իրաւասութիւնները պիտի որոշուէին մասնաւոր կազմական Կանոնագրով մը , համաձայն Օրթոտօքս եկեղեցիին հաստատեալ կարգե-



ԼՈՒՍԱՐՁԱԿՆԵՐՈՒ ԴԵՐԸ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՄԷՁ
Պուլկարները լուսարձակի շնորհիւ գեշերանց երեւան կը հանեն թրքական զօրախումբ մը որ գեւղի մը մօտը դերք բռնած էր

րուն և կրօնական սկզբունքներուն : Այդ Կանոնագրին տրամադրութեամբ , Յունաց Պատրիարքարանը ոչ ուղղակի , ոչ ալ անուղղակի կերպով չպիտի կրնար միջամտել եկեղեցական գործերուն , մասնաւորաբար էկզարքին և

եպիսկոպոսներուն ընտրութեան: Երբ Էկզարքը ընտրուէր՝ Պուլկար Սինօզը ընտրութիւնը պիտի հաղորդէր Յունաց Պատրիարքարանին, որ անյապաղ պիտի վաւերացնէր զայն: Կայս. Պէրաթ մը պիտի հաստատէր Էկզարքին ընտրութիւնը, որ վաւերացուելու համար Դրան պիտի ծանուցուէր եկեղեցական նուիրագործումը ընդունելէ առաջ: Էկզարքը՝ պատարագի միջոցին պարտաւոր էր յիշատակելու Պոյսոյ Յունաց Պատրիարքին անունը. Միւռոնն ալ անկէ պիտի ստանար: Ֆէնէրի պուլկար վանքն ու եկեղեցին Էկզարքին իրաւասութեան պիտի ենթարկուէին. — Ասոնք էին 1870 մարտ 10ի Ֆէրմանին գլխաւոր տրամադրութիւնները: Պուլկար Էկզարքութիւն մը կը հաստատուէր, բայց ոչ բոլորովին անկախ Յունաց Պատրիարքարանէն:

Ո՛վ գիտէ, թերեւս այս վերջինը ընդունէր այդ կէս պարտութիւնը, բայց Ֆէրմանին մէջ կար նաև վտանգաւոր տրամադրութիւն մը որ կրնար ծանրապէս հարուածել Պատրիարքարանը, և անոր հետ ալ Հէլլէնականութեան դատը: Էկզարքին իրաւասութեան շրջանակները հատիկ հատիկ թուելէ ետք, Ֆէրմանը կը տրամադրէր որ եթէ յականէ յանուանէ յիշուած տեղերէն դուրս գտնուող ո՛ր է է շրջանակի ժողովուրդին առ նուազն երկու երրորդ մասը փափաքէր Էկզարքին իշխանութեան տակ մտնել, այդ շրջանակն ալ իսկոյն Էկզարքին իրաւասութեան պիտի ենթարկուէր: Տեսանք արդէն թէ Յոյն կղերը ի՞նչ տխուր համբաւ կը վայելէր Մակեդոնիոյ մէջ: Ասկէ օգտուելով՝ Պուլկարները սկսան ազդու բրօքականտ մը մղել ի նպաստ Էկզարքութեան: Կը բաւէր որ ըսէին Մակեդոնացի գեղջուկին թէ Էկզարքութեան քահանաները յոյն քահանաներուն պէս պտղի հաւաքելու պատրուակին տակ զիրենք չպիտի սօթտեն, և ահա անոնք իսկոյն Էկզարքին կողմը կ'անցնէին: Տակաւին Յունաց Պատրիարքարանը որոշում մը չտուած, Պուլկարները՝ Պէրաթին թուածներէն զատ շատ մը ուրիշ շրջանակներ շահած էին իրենց կողմը: Այդ փութկոտ գործունէութիւնը մանաւանդ որ վաղուան ըլլալիքը կը յայտնէր, ստիպեց Յունաց Պատրիարքարանը որ ընդդիմանայ Ֆէրմանին: Ընտրուած Էկզարքը, Տ. Անթիմոս, մինչեւ 1872 չկրցաւ իր պաշտօնը հաստատող Կայս. Պէրաթը ստանալ: Մեծ Եպարքոս Ալի փաշա դիտմամբ կ'ուշացնէր Պէրաթը, որովհետեւ ձգձգումը կրկնապէս օգտակար էր կառավարութեան. — Պուլկար տարրը հանդարտ կը մնար Էկզարքին ընտրութեան հաստատութիւնը չվտանգելու համար, Յոյն տարրը նոյնպէս հանդարտ կը մնար՝ վախնալով որ Էկզարքին ընտրութիւնը կը հաստատուի: Մինչեւ իր մահը Ալի փաշա այս վիճակին մէջ թողուց խնդիրը. բայց իր յաջորդը՝ Մահմուտ Նէտիմ փաշա՝ զօրավար Իկնաթիէֆի պնդումներուն վրայ, վերջապէս տեղի տուաւ: Տ. Անթիմոսի պաշտօնը հաստատուեցաւ 1872 ապրիլ 16ին. ութ օր վերջ՝ Մէճիտիէի մեծ-ժապաւէնը կ'ընդունէր: Հազիւ թէ Պէրաթը ստացուած էր, Պուլկար Սինօզը դիմեց Յունաց Պատրիարքարանին՝ որպէս զի Էկզարքին պաշտօնը նուիրագործէ, բայց պատասխան չստանալով, Տ. Անթիմոս Մայիս 24ին նոյն ինքն Ֆէնէրի մէջ, Յունաց Պատրիարքարանէն քայլ մը անդին, հանդիսաւոր պատարագ ըրաւ առանց Պատրիար-

քին անունը յիշատակելու. նոյն օրը կարդացուեցաւ նաև Պուլկար Եկեղեցին անկախութիւնը հռչակող Ֆէրմանը: Այդ միջոցին՝ Յունաց Պատրիարքարանին մէջ գումարուած եկեղեցական ժողով մը, բացի Երուսաղէմի Պատրիարքէն՝ Օրթոտոքս Եկեղեցիէն կը վտարէր բովանդակ Պուլկար կղերը, և զայն հերձուածող կը հռչակէր: Ներկայ Պատրիարքին հաւանական հետեւանքներէն մէկն ալ ան ըլլայ թերեւս որ վերնայ այդ հերձուածի հարցը, ինչ որ մեծապէս պիտի ապահովէ Պալքանեան Զինակցութեան տեւականութիւնը:

Յունաց Պատրիարքարանէն անջատուելէն վերջ, Պուլկարները աւելի կորովով և յառաջդիմութեամբ առաջ տարին բաժանման գործը: 1870ի Ֆէրմանին այն յոդուածը որ Էկզարքին իրաւասութեան կ'ենթարկէր Ֆէրմանին մէջ չյիշատակուած բայց գոնէ երկու երրորդի մեծամասնութեամբ Պուլկարական Եկեղեցին ընդունող բոլոր թեմերը, մեծ գրգիռ մըն էր իրենց՝ որպէսզի կարելի ամէն միջոցներով առաջ տանին բրօքականտը: 1872ին՝ երկու տարուան ընթացքին՝ ահագին թուով պուլկար ժողովուրդ գոյացած էր Մակեդոնիոյ մէջ՝ ուր տակաւին հինգ տարի առաջ ամէն բան յոյն էր. Սկիւպի, Օխրիտայի ու Վէլէսի խոշոր եպիսկոպոսական վիճակները նոյնպէս միացած էին Էկզարքութեան, երբ Պուլկարները անոնց ժողովուրդին քուէին դիմած էին: Յունաց Պատրիարքարանը բուռն կերպով բողոքած էր այդ միացման դէմ, առարկելով թէ ժողովրդական քուէարկութիւնը բռնական միջոցներու և սպառնալիքներու տակ տեղի ունեցած է. և ճշմարտութեան բաժինը պզտիկ բան չէր այս առարկութեան մէջ:



ՊՈՒԼԿԱՐ ԶՕՐԱՎԱՐ ԳՈՒԹԻՆՉԷՅ

Այդ կրօնական գործունէութեան տակ՝ թաքուն կերպով կը կատարուէր նաև քաղաքական բրօքականտը, և մօտալուտ ապստամբութեան գետին կը հարթուէր, Ռուսիայէն թելադրուած խանդավառ գործիչներու միջոցաւ: Հէլլէնականութեան վտանգէն սարսափահար, թուրք Կառավարութիւնը, Պուլկարներն ու Յոյները իրարմէ բաժնելով և իրա-

րու թշնամի դարձնելով, կարծած էր իր եւրոպական ստացուածքները ապահոված ըլլալ: Եղածը սակայն սա էր որ առանց գիտնալու՝ ազատագրութեան ճամբան բացած էր Պուլկարներուն առջև: Եկեղեցւոյ անկախութիւնը ձեռք բերելէ վերջ՝ իրենց կարելի երեւցած էր նաև քաղաքական անկախութիւնը: Յետոյ, Յունաց Պատրիարքարանին ճնշումներն ու խափանարար բռնակալութիւնը թօթափելով՝ ազատ ասպարէզ գտած էին աւելի խորապէս սորվելու իրենց պատմութիւնն ու լեզուն, վերլուծելու իրենց աւանդութիւնները, վերահաստատելու իրենց ցեղային բարքերն ու սովորոյթները: Վաղընջուց հերոսներու յիշատակը՝ արթննալով՝ յեղաշրջած էր Պուլկար Հոգին: Եւ Յոյներու անարգանքին կամ հալածանքներուն չենթարկուելու համար իր ցեղին անունէն իսկ հրաժարած այդ ժողովուրդը սկսած էր ինքզինքը հպարտ զգալ՝ Պուլկար կոչուելով: Այդ հպարտութիւնը մանաւանդ գրգռու մը պիտի ըլլար իրեն որ հաւատքով նայի ապագային. և ապագան բոլորովին յուսադրիչ կ'երեւար, որովհետև անոր արեւը Հիւսիսէն՝ Ռուսական պաշտպան Կայսրութենէն կը ծագէր:

Պուլկարներուն այս թաքուն քաղաքական գործունէութիւնը՝ էն առաջ Հէլլէն տարրը վրդովեց, որովհետև իր ապագայի ծրագիրներուն քանդումն էր որ զր պատրաստուէր: Օսմ. կառավարութիւնը այդքան հեռուներ տեսնելու վարժ չէր. իրերու արտաքին երեւոյթը միայն կըրնար ըմբռնել, և պուլկարական բրօքականտին մէջ ուրիշ բան չէր տեսներ, այլ միայն քիչ մը աւելի խոր անջատում Յոյն ու Պուլկար տարրերուն միջև. ինչ որ նպաստաւոր կը նկատէր իր շահերուն: Տարակոյս չը կայ որ Յունաց Պատրիարքարանը բացաւ իր աչքերը, Սկիւպի, Օխրիտայի և Վէլէսի եպիսկոպոսական Վիճակներու խնդրին առթիւ: Ի. Դուռը տակաւին այդ Վիճակներուն Պէրաթները չէր տուած պուլկար եպիսկոպոսներուն. և երբ խորհուրդ հարցուց Միտհատ փաշայի որ Դանուբի Կուսակալն էր այդ միջոցին, այս վերջինն ալ պնդեց որ Պէրաթները չտրուին: Ինք որ դեռ մէկ քանի տարի առաջ Դրան վրայ աղբած էր Պուլկարական Եկեղեցիին անկախութիւնը իրականացնելու մտքով, անշուշտ իր կարգին յունական աղբիւրէ ըլլած մատնութիւններէ աղբուած էր որ այսպէս սահմանափակելու կ'աշխատէր մասամբ իր ձեռքով հաստատուած նոր Եկեղեցիին ազդեցութեան չըջանակը: Թուրքիոյ պետական դրութեան մէջ նոր ըմբռնումի մը հիմնադիրը պիտի ըլլար ինք, — Ժէօն—Թիւրք ըմբռնումին, — որ էպպէս ուրիշ բան չէր՝ այլ Օսմ. Կայսրութեան ամբողջութիւնը սլահել՝ անոր մէջ Թուրք տարրն ու ոգին զօրացնելով ի վնաս միւս բոլոր տարրերուն, և ասիկա՝ ամէն կարելի միջոցներով, նոյն իսկ բռնութիւններով ու ջարդերով: Մենք մանաւանդ գիտենք թէ Ժէօն—Թիւրքերը սոսկ այդ ըմբռնումին գործաւորները եղան 1908ի յեղափոխութենէն վերջ. գիտենք տակաւին թէ այդ ըմբռնումը անխախտ դաւանանք ու գոյութեան պայման էր իրենց համար. նոյն իսկ իրենց տարագրութեան օրերուն տարբեր բանի վրայ չէին խորհեր. և Ահմէտ Բիղա պէյի հետ ուրիշ Ժէօն—Թիւրքեր ալ չէին վարաներ յայտարարելու

որ եթէ այդ ճամբուն վրայ Հայերը կամ ուրիշ ո՛րևէ տարր գտնեն իրենց դէմ, չպիտի երկմտին, պիտի ջարդեն անխնայ, ինչպէս ջարդեցին ալ Ատանայի մէջ: Միտհատ փաշա՝ նոյն այդ ըմբռնումին գործադրիչը եղաւ Դանուբի կուսակալութեան մէջ, երբ սկսաւ մօտէն զգալ պուլկարական բրօքականտին ներքին նպատակը: Բռնական միջոցներու, հալածանքներու և ջարդերու թուականը բացուեցաւ Պուլկարներուն համար: 1872—76, մինչև ապստամբութիւնը, չորս տարի շարունակ աքսորը, բռնագրաւումները, դպրոցներու և եկեղեցիներու փակումը, բանտարկութիւններն ու տանջանքը, ինչպէս նաև զարհուրագին կամայականութիւն մը Պուլկար ժողովուրդին համար դարձան բնական կարգեր:

Անկէ ետքը՝ դէպքերը գահավիժօրէն իրարու յաջորդեցին երկու տարուան կարճ շրջանի մը մէջ, — ապստամբութիւնը, պուլկարական մեծ ջարդերը, Ռուսեւթուրք պատերազմը, էտիրնէի զինադադարը, Սան-Սթէֆանօի դաշնագիրը, Մեծ-Պուլկարիոյ ծրագրումը, յետոյ Պէրլինի Վեճաժողովը, և ի վերջոյ՝ Պուլկար Իշխանապետութեան ճանաչումը:

Այս արդիւնքը աննպաստ էր որքան Թուրքերուն, այնքան նաև Յոյներուն: Պուլկարիոյ անկախութեան հեռանկարը այնքան կը վախցընէր զիրենք, որ պուլկարական ապստամբութեան միջոցին՝ չաս Յոյներ իր կամաւոր մտան թրքական զսպիչ քանակներուն մէջ, և իրենք աւելի անողորմաբար հարուածեցին ապստամբները, քան նոյն ինքն Թուրքերը: Քիչ ետքը, Պէրլինի Դաշնագիրը կատարուած իրողութեան մը առջև կը դնէր հիասթափուած Հէլլէնականութիւնը. Պուլկարիա մասամբ հասած էր իր նպատակին:

Պուլկարականութեան երազը սակայն կը մնար անկատար: Այդ երազը անկատար մնաց նաև այն ատեն՝ երբ 1885ի յեղափոխութիւնը Պուլկարիոյ կցեց Արեւելեան Բուլճարին: Բուն կենսական, իրենց ազգային հպարտութեան գոհացում տալու սահմանուած երկիրը որուն կը տենչար, իրեն մաս չէր կաղմեր:

Յունական յաւակնութիւնները պարզած ատեննիս տեսանք թէ ինչպէ՛ս Հէլլէնականութեան մարգարէներէն մէկը՝ Եուանուս Քալօթիրիս՝ հակառակ Յունաստանի անկախութեան և Թէսալիոյ ու Եօթ Կղզիներու կցման՝ Յոյներուն «ազգային երազը երեք քառորդ մասով անկատար» կը հուշակէր: Պատճառ. — որովհետև Մակեդոնիան դուրս կը մնար անկէ: Այդ տեսակ մարգարէներ Պուլկարականութիւնն ալ ունեցաւ, և անոնցմէ մէկը, հակառակ Արեւելեան-Բուլճարի կցման, նոյնպէս Պուլկարներուն ազգային երազը երեք քառորդ մասով անկատար կը հուշակէր ութսունական թուականներուն: Պատճառը նոյնն էր. — որովհետև Մակեդոնիան մաս չէր կաղմեր Պուլկարիոյ: — «Մեր բովանդակ ապագան Մակեդոնիոյ մէջ է, Մակեդոնացի Պուլկարներու զարթնումին և վերականգնութեան մէջ: ... Առանց Մակեդոնիոյ՝ Պուլկար պետութիւնն ու Պուլկարականութիւնը ոչ նշանակութիւն, ոչ ալ արժէք կրնան ունենալ Պալքանեան Թերակղզիին մէջ»: Այս երկու արտունջները ուրիշ ամէն բանէ աւելի պերճախօս են անշուշտ՝ Մակեդոնիոյ մէջ գոյութիւն առնող


նութեան տպաւորութիւնը կրնար տալ տղոց, մինչդեռ ահագին Օսմ. կայսրութիւնը, ղինքը ներկայացնող քարտէսին տարապայման փոքրութեան պատճառաւ, հազիւ թէ աննշան աւան մը կը թուէր անոր քով: Առաջինը ցոյց տալով՝ հարցուցի տղու մը. — «Որո՞ւն էր կիրն է ասիկա»: — «Մեր երկիրը»: Յետոյ՝ Թուրքիան ցոյց տալով, — «Իսկ ա՞ս»: — «Տաճիկներուն երկիրը»: Աւելի ապշեցուցիչը տղոց ձեռքը տրուած ընթերցանութեան դասագիրք մըն էր՝ որուն մէջ Մակեդոնիոյ և Եպիրոսի Յունաստանի միացման, Թուրքերը կոտորելու և անոնց ձեռքէն գերի հայրենիքը ազատագրելու համար գրուած հատուածները ուրիշ բանի տեղ չէին ձգած: Նոյն դրութիւնը տեսանք նաև Մակեդոնիոյ բոլոր վարժարաններուն մէջ»: — Եւ մեր խօսակիցը այդ դրութեան պատճառ կը նկատէր օտարահպատակ ուսուցիչները, որոնք ամէն բանէ առաջ Հելլենականութեան գործակալներ էին:



ՊՈՒԼԿԱՐ ԶՕՐԱՎԱՐ ՊԱՆՊԱՆՕՅ

Թրակիոյ մէջ, Վօսէնա՝ Մակեդոնիոյ մէջ՝ ոչ մէկ յոյն բնակիչ ունէին 1885ին, և սակայն բովանդակ ժողովուրդը յունարէն կը խօսէր և յունարէն կը կարդար. որովհետեւ դպրոցները յունական էին: Պուլկար ժողովուրդին ամէնէն ցայտուն յակութիւնը իր յամր բայց ապահով գործունէութեան մէջն է. չաճապարեր, բայց առած իւրաքանչիւր քայլը դէպի առաջ կը տանի զինքը: Թուրքերը՝ որոնք շատ լաւ ճանչցած են զանոնք, կ'ըսեն սովորաբար. — «Պուլկարը նապաստակը առապայով կ'որսայ», — այսինքն՝ կամաց կամաց, որովհետեւ պուլկարական առապան՝ մեզի ծանօթ եզնաքարչ սայլն է, ամէնէն դանդաղը փոխադրութեան միջոցներուն: Թերեւս նոյն Թուրքերը խորհին թէ միայն ներկայ պատերազմին մէջ նապաստակը շոգեկառքով որսաց, բայց եթէ նկատի առնենք երեսուն տարիներու յամր ու համբերատար աշխատութիւնը որով այդ օրուան կը պատրաստուէին, պիտի տեսնեն թէ եղածը դարձեալ արա-

պայով որսորդութիւն մըն էր: Այդ յամր բայց յամառ ու ապահով աշխատութեամբ նուիրուեցան նաև կրթական գործին: 1882ին՝ երկար վէճերէ ետք վերջապէս յաջողեցան դպրոցներու մենաշնորհը խել Յոյներուն ձեռքէն. իրենց վարժարաններուն վրայ Օսմանեան կառավարութիւնը պիտի



Պուլկար հետազօտիչ լրատուներ պատերազմական գործողութենէ մը քիչ առաջ

հսկէր. և Պուլկարները այնքան վնաս կը տեսնէին յոյն վարժարաններէն, որ Օսմանեան կառավարութեան հովանաւորութիւնը իրենց կրթական հաստատութեանց վրայ, իբր բարիք մը ընդունեցին: Անկէ անդին, մանաւանդ 1885էն վերջ, անընդհատ դպրոցներ բացին էքզարքութեան ենթակայ բո-

լոր թեմերուն մէջ, և անոնցմէ դուրս ալ : Ժամանակ անցնելով՝ իրենց ուսուցչական խումբերը կատարեալ ղինուորական կազմակերպութեան մը վերածեցին . ուսուցիչները անմենախիստ կարգապահութեան մը ենթարկուած էին, որովհետեւ քաղաքական գործիչներ էին նոյն ատեն՝ ինչպէս յունականները . և իրենց անտեսած վարժարաններուն մէջ՝ կիրարկուած մեթոտը յունականին թարգմանութիւնն էր պարզապէս : Պուլկար վարժարանները, համախումբ, աւելի քան կէս միլիոն ֆրանքի պիւտձէ ունէին մի՛ միայն Մակեդոնիոյ մէջ, և այդ դրամը ընդհանրապէս տեղական միջոցներով, մեծագոյն մասամբ՝ էքզարքարանին հասոյթներով կը մատակարարուէր . Սօֆիայի կառավարութիւնը պզտիկ գումար մը միայն կը վճարէր : Գասերուն մէջ՝ ամէնէն աւելի հոգ կը տանէին պուլկար պատմութեան, մանաւանդ «Պուլկարականութեան աշխարհագրութեան» . այս վերջինը՝ իրենց մակեդոնական յաւակնութեանց նուիրուած դաս մըն էր, բրորականտի զմայելի միջոց մը որ դարձոցէն տղաքը կ'ընտելացնէր թաքուն կերպով հետապնդուած Մեծ-Պուլկարիոյ կազմութեան խտէպին :

Այդ երազուած Պուլկարիան՝ մէկ կողմէ կ'իջնէր դէպի Վարսար՝ Սերպերուն դէմ . 1872ին արդէն յաջողած էին Սկիւպի, Վէլէսի և Օխրիտայի ժողովուրդին երկու երրորդ մասը ապահովել էկզարքութեան, և եպիսկոպոսներ անուանել այդ թեմերուն համար . գիտենք որ Բ. Գուր այդ եպիսկոպոսներուն Պէրաթները չտուաւ . վրայ հասան ապստամբութեան, պատերազմի, յետոյ անկախութեան հարցերը, որոնք բոլորովին վտանգեցին Պէրաթները . բայց Պուլկարներու յամառութիւնը վերջ ի վերջոյ յաղթեց և 1890ին էկզարքը ձեռք բերաւ Սքիւպի, Վէլէսի, Շիթիպի, Բրէզպայի, Բրիլէրի և Օխրիտայի թեմերուն համար Պէրաթներ . աւսոնց մէջ կարեւոր էր մանաւանդ Օխրիտայի թեմը որ 1019էն մինչև 1767՝ Պուլկարներու պատրիարքարանիստ վիճակն էր, և որուն իրաւասութիւնը այն ատեն կը տարածուէր Քասթորիայի, Սէրվիայի, Մանասթրիի, Բրիզընտի և Շանեայի թեմերուն վրայ, այսինքն մինչև Արթայի ծոցը : Միւս կողմէ՝ Մեծ-Պուլկարիոյ ծրագիրը կը պարփակէր Արչիպեղագոսի ձամբան, որ Պուլկարներուն համար անհրաժեշտութիւն մըն է ինքնին . Սև ծովը չի գոհացնէր զիրենք, որովհետեւ Ռուսիա կը տիրապետէ անոր մէջ . իրենց համար ասպարէզ չկայ . մինչդեռ Արչիպեղագոսը անասման առաւելութիւններ կ'ընծայէ իրենց, մասնաւորապէս Մակեդոնիոյ տիրացման տեսակէտով : Այդ ձամբուն վրայ որ դէպի Քավալա կը յանգի, առաջին յաջող քայլերը առնուեցան 1897ին, երբ Պուլկարները, Թուրքուհէլէն պատերազմին առթիւ իրենց չէզոքութեան փոխարէն, իրաւունք ստացան Մէլնիքի, Սթրումնիցայի և Գուրուչի թեմերուն համար առաջնորդական Պէրաթներ ձեռք բերելու :

Բաղդատմամբ պուլկարական երեւմտի կայսրութեան (Տե՛ս քարտէս էջ 147), այդ «Մեծ» յորջորջուած Պուլկարիան նորէն պզտիկ բան էր : Ներկայ պատերազմին առթիւ իր սնուցած երկրակալական յաւակնութիւնները ցոյց կու տան թէ նոյն ինքն Սան-Սթէֆանօի դաշնագրին ստեղծած «Մեծ-Պուլկարիա»ն շատ հեռու էր Պուլկարներու ազգային

երազը, — «Մեծագոյն Պուլկարիա» մը կազմելու երազը, — իրականացրնելէ :

Լոկ խաղաղ միջոցներով կարելի չէր առաջ տանիլ ատոր ձգտող բրորականար : Բռնութեամբ ու ճնշումներով ծաւալած էին Յոյները Մակե-



Սերպ բնակչութեան տարածութիւնը Սերպիայէն դուրս


դոնիոյ մէջ, բռնութեան ու ճնշումներու շնորհիւ նաև կրնային ընկրկիլ յունական ազդեցութեան, — աւելի ճիշդը՝ յունական տիրապետութեան, — արմատները Սլաւ տարրին մէջ՝ դարաւոր ամրութիւն ունէին, և միայն համոզողութեամբ ու խոստումներով կարելի չէր զանոնք խլել . բիրտ ոյժը իր տիրական անհրաժեշտութիւնը պիտի զգացնէր ուշ կամ կանուխ, ինչպէս որ ալ եղաւ : Զէթէները սկսան գործել Մակեդոնիոյ ամէն կողմը .

հոն ուր խօսքը չէր զօրեր, գնդակը կամ դաշոյնը շուտով կը համոզէին ամէնէն յամառները: Յոյները նոյնպէս չէթէներու ապաւինեցան, և երկու կողմէն սկսան իրար սպաննել անագորոյն կատաղութեամբ: Թուրք պետական մարդիկը ի՞նչ կ'ուզէին աւելի. այդ եղբայրասպան կռիւը՝ քրիստոնեայ տարրերու միջև, սքանչելապէս կը յարմարէր Թուրք կառավարութեան շահուն. փոխանակ անոր վերջ տալու, իրենք մանաւանդ առիթներ ընծայեցին որ սաստկանայ: Սերպերն ալ, Ուլահներն ալ նոյն միջոցը ընտրած էին՝ իրր լաւագոյնը իրարու խօսք հասկցնելու եղանակներուն. Թուրքերուն համար՝ տղու խաղ մըն էր զանոնք միշտ աւելի գըրգռելը: Չմոռնանք որ Թուրքիոյ բուն վարիչն ալ Համիտն էր այդ միջոցին, ոչ միայն քրիստոնեայ տարրերը՝ այլ նոյն իսկ Իսլամները բաժան բաժան ընելու և անոնց երկպառակութեամբ անհաստատ գահ մը ամրապնդելու գործին հոյակապ վարպետը: Երբ ներկայ պատերազմին առթիւ գերմանական Լօրըյայ նաւով Պոլիս կը փախադրուէր Սելանիկէն, ճամբան նաւապետին կը հարցնէ թէ ինչո՞ւ զինքը կը տեղափոխեն: Նաւապետը կը պատմէ տեղի ունեցած անցքերը, — Պալքանեան Դաշնակցութեան կազմութիւնը, պատերազմի յայտարարութիւնը, Դաշնակիցներու յաջողութիւնները, Սելանիկի անկման հաւանականութիւնը, և ինչ: Համիտ ապշահար մտիկ կ'ընէ, գրաւուած մանաւանդ Պալքանեան Դաշնակցութեան մը կազմութեան անակնկալէն: — «Չարմանալի՛ բան, կ'ըսէ ի վերջոյ, ամբողջ Թուրքիոյ մէջ չգտնուեցա՞ւ մէկը որ Յոյներուն և Պուլկարներուն դարաւոր ատելութիւնը վառ պահէր. այնքան դժուար բան էր ասիկա...»: Իր օրով՝ Պալքանեան ազգերու ո՛չ թէ դաշնակցութիւն մը, այլ նոյն իսկ ձեւական, առերևոյթ համաձայնութիւն մը դժուար թէ յաջողէր:

Արդէն իր ծրագրած բաժանումը՝ լաւ ու անվրիպելի մէթոտով մը կը կիրարկուէր. Յոյներուն ոյժ կուտար հոն ուր Պուլկարները բազմաթիւ էին. Պուլկարները կը քաջալերէր այնտեղ ուր Յոյներն էին մեծամասնութիւն. այսպէս նաև միւս տարրերուն համար: Բայց ո՛չ Սերպը և ոչ ալ Յոյնը վախ չէին տար իրեն. եթէ պէտք ըլլար՝ սոսկ պղատոնական սպառնալիք մը կրնար զանոնք զգաստութեան բերել. սակայն կարելի չէր Պուլկարը սպառնալիքով կասեցնել. զօրեղ, իր ոյժին գիտակից պետութիւն մը դարձած էր, — էպպէս զինուորական պետութիւն մը, — և որքան ալ հիմնաւոր ըլլային միւսներուն յաւակնութիւնները, Մակեդոնիոյ ժողովուրդին խոշոր մեծամասնութիւնը կը համակրէր անոր. ոյժը միշտ յանկուցիչ է: Բաժանմամբ տիրելու դրութիւնը կիրարկելու ստիպուած Համիտը բնական է աւելի շահաբեր պիտի նկատէր հակապուլկար տարրերուն ոյժ տալը: Այդ պատճառաւ էր որ յոյն չէթէներուն համար Թուրք կառավարութիւնը ոչ միայն արգելիչ տարր մը չդարձաւ, այլ ընդհակառակը միշտ քաջալերիչ ոյժ մը եղաւ: Երբ Յոյն չէթէ մը Պուլկարներ կը սպաննէր, կառավարութիւնը ոճրագործները կը թողուր որ ազատօրէն հետաճան և Պուլկարներ կը ձերբակալէր անոնց տեղը: Յոյն չէթէները տեսակ մը օրինական կազմակերպութեան երեւոյթը ստացած էին, մինչդեռ Պուլկար չէթէն, հազիւ յայտնուած, իսկոյն կը հետապնդուէր անհա-

գին զինուորական ոյժերէ: Այդ պաշտպանութեան շնորհիւ, Յոյները շուտով կրցան ծանրապէս հարուածել Պուլկարականութեան դատը: Էկզարքութեան իրաւասութեան ենթակայ թեմերէն կարեւոր մաս մը նորէն անցան Պատրիարքարանին. Պուլկարներուն տարիներու մաքառմամբ և համբերատար աշխատութեամբ ձեռք բերած արդիւնքն էր որ կ'երթար: Մակեդոնիոյ մէջ զինաթափ Պուլկարները՝ ուրիշ կողմէ լուծեցին իրենց վրէժը:

Յոյն չէթէներու սանձարձակ գործունէութեան և սպանութեանց հետեւանքով Պուլկարիոյ հանրային կարծիքը՝ վաղուց յուզուած էր, երբ 1906ի ամ-




Սերպերը «կայտա»յով կ'երթան պատերազմի

րան ընթացքին տեղի ունեցած կարգ մը դէպքեր բոլորովին գրգռեցին զայն: Պոլսոյ Յունաց Պատրիարքարանին պաշտօնաթերթը՝ Էկլիզիասաքիֆի Ալիթիա՝ Թուրք կառավարութեան թոյլատու ընթացքէն քաջալերուած, այդ միջոցին ծանր յարձակումներու կ'ենթարկէր ո՛չ միայն Պուլկար չէթէները, այլ նաև բովանդակ Պուլկարական ազգը, իր Իշխանը, իր կառավարութիւնը, առանց նկատի առնելու թէ բազմաթիւ Յոյներ կը գտնուէին Պուլկարիոյ մականին տակ, ու միայն 80,000 Արեւելեան Ռումէլի մէջ: Այս վերջինները, նոյնպէս ամէն պատշաճութիւն մոռցած, հակապուլկար միթիսկներ կը գումարէին պուլկարական հողի վրայ: Ծիշտ այդ ատենները Սելանիկի մէջ ձեւ համար ձերբակալուած էին Յոյն չէթէներու անդամներ և Աթէնքի թերթերէն՝ որոնց մէջ հրատարակուած էր ձերբակալուողներու անունը, կը հասկցուէր թէ անոնք մեծ մասամբ Արեւելեան

Բուժելիի բնիկ Յոյներ են: Այդ հրատարակութեան վրայ Պուլկարները իրաւամբ համոզում գոյացուցին թէ Մակեդոնիոյ իրենց եղբայրները Չարդող յունական չէթէները նոյն ինքն պուլկարական հողին վրայ կը կազմուին, ինչ որ բոլորովին գրգռեց զիրենք: Փոթորիկ մը պիտի պայթէր անպատճառ, և շուտով շարժառիթ մը ծագեցաւ: Վառնայի Յոյն եպիսկոպոսական թեմը թափուր էր. Պատրիարքարանին կողմէ կարգուած նոր Եպիսկոպոսը երբ նաւահանգիստ ժամանեց, Պուլկարները ընդդիմացան անոր ցամաք ելլելուն: Հակահէլլէն շարժումը ծաւալեցաւ մինչև Անքիալոս, ուր ցոյցեր կատարուեցան Յոյն Եպիսկոպոսին դէմ: Յոյները որոնք մենաստանին մէջ ապաստանած էին, կրակ ըրին Պուլկարներուն վրայ. ընդհարումը ճշմարիտ կուռի մը վերածուեցաւ, պատճառ դառնալով ութ Պուլկարներու և տասնմէկ Յոյներու մահուան: Սր մը վերջ՝ խռովութիւնը գրգռած ըլլալու ամբաստանութեամբ ձերբակալուեցաւ Յոյն Եպիսկոպոսը որ հրկիզուած տուն մը ապաստանած էր. սակայն շուտով ազատ արձակուեցաւ: Օգոստոս 7ին՝ խռովութիւնները սուելի ծանր կերպով սկսան Թիլիպէի մէջ՝ ուր Պուլկար ամբոխը յարձակեցաւ յոյն վարժարաններուն վրայ և զանոնք քանդեց. յետոյ թալանի տրուեցան յունական վաճառատունները. ի վերջոյ՝ ամբոխը գրաւեց Յունաց եպիսկոպոսարանը, և այնտեղ հաստատեց Պուլկար Եպիսկոպոս մը: Յոյն փաստաբան մը որ ընկրկելով Պուլկար մը սպաննած էր, բղիկ բղիկ եղաւ ամբոխին կողմէ: Յաջորդ օրը՝ խռովութիւնը ծաւալեցաւ Թիլիպէի հարաւակողմը՝ Սթանիմաքայի մէջ. վաճառատուններ թալուեցան, դպրոցներ քանդուեցան նորէն, բայց սպանութիւն չեղաւ: Սօֆիայի մէջ գումարուած հսկայ հակահէլլէն միթինկ մը, ինչպէս նաև կառավարութեան թոյլտուութիւնը՝ առաջին օրերուն՝ մեծագոյն գրգիռը եղան այս ծայրայեղութեանց:

Այդ միջոցին Ֆէրիսնանտ Իշխանն ու նախարարապետ Պ. Բէթքօֆ Մարիէնպատ կը գտնուէին, ուրկէ փութով Պուլկարիս վերադարձան: Իսկոյն խիստ միջոցներ ձեռք առնուեցան և խռովութիւնները վերջ գրտան, բայց Պուլկար կառավարութիւնը որոշեց աւելի խիստ դրութեան մը ենթարկել Արեւելեան Բուժելիի հէլլէն տարրը, անոր հակապուլկար ձգտումներն ու գործունէութիւնը ջլատելու համար: Հակառակ Պէրլինի Ռաչնագրին չորրորդ և հինգերորդ յօդուածներուն՝ որոնք Պուլկարիոյ Յոյն ու Թուրք տարրին կրօնական և կրթական ազատութիւնը կ'երաշխաւորեն, Պուլկար կառավարութիւնը մէջտեղ դրաւ 1891ին քուէարկուած օրէնք մը, և անոր տրամադրութեանց համաձայն փակեց բոլոր յունական վարժարանները: Պուլկարիոյ մէջ գոյութիւն ունեցող եպիսկոպոսական չորս թեմերու գահակալներուն համար ալ պայման դրաւ որ պէտք է անպատճառ պուլկարահպատակ Եպիսկոպոսներ ըլլան: Անկախաբար այս պետական կարգադրութիւններէն, Պուլկար ժողովուրդը պոյքօթի ենթարկեց երկրին բոլոր յոյն վաճառականները և առհասարակ ամբողջ Յոյները. շատ վաճառականներ սնանկացան: Տարի մը ետքը՝ 1907 մայիսին, պոյքօթը չէր դադարած տակաւին. յուսահատ Յոյ-

ները տասնեակ հազարներով լքեցին Պուլկարիան և խոնուեցան Աթէնք, ուր կառավարութիւնը ստիպուեցաւ փոխառութիւն մը կնքել, առնոց հող հայթայթելու համար: Պէտք եղաւ երեք քաղաքներ կառուցանել, և փախստական Յոյները հակապուլկար ցոյցերով ու մեծ հանդիսութեամբ անոնց տուին Անքիալոս, Էօքսինօբօլիս և Թիլիբօբօլի անունս



Ի Տ Ի Ր Ն Է Ք Ա Ղ Ա Ք Ը

ները, ի յիշատակ իրենց ծննդավայր պուլկարական քաղաքներուն, որոնց մէ տարադրուած էին:

Քանի այս տակաւին շատ մերձաւոր անցեալը կար, — և անոր հետ ալ դեռ ինչե՛ր, — բնական է Համիտ իրաւունք կ'ունենար զարմանալութէ ամբողջ Թուրքիոյ մէջ չգտնուեցա՞ւ մէկը որ Յոյներն ու Պուլկարները երարու ձգէր և երկիրը ներկայ փորձանքին չենթարկէր...

Մակեդոնիոյ սեփականութեան մասին յաւակնութիւն սնուցանող ժողովուրդներուն մէջ՝ Սերպերը շատ ուշ յայտնուած են, բայց ատկա պատճառ մը չէ եղած որ իրենք ալ նոյնքան պահանջկոտ ու տարածերժ չըլլան՝ որքան որ էին Հէլլէններն ու Պուլկարները: Մակեդոնիա՝ ինքնին Պալքաններու բոլոր ժողովուրդներուն խառնարանը ըլլալով, կրնար յարմար գետին ընծայել նաև իրենց յաւակնութեանց. Ինդիրը այդ յաւակնութիւնները արժեցնելուն վրայ էր միայն, և առ այնքան դժուար բան չէր. եթէ ներկան չկարենար կռուաններ հայթայթել, կրնային անցեալին ապաւինիլ և պատմութենէն քաղել աւելի կամ նուազ տոկոսն փաստեր, անոնց վրայ բարձրացնելու համար իրենց յաւակնութեանց չէնքը:

Հակառակ այս դիւրութեան՝ Սերպերը Մակեդոնիոյ խօսքն ան-

գամ չէին ըներ մինչեւ եօթանասնական թուականներու վերջերը: Պէրլինի վեհաժողովին մէջ ալ ուր Պալքանեան բոլոր ժողովուրդները ժամադիր եղած էին իրենց ազգային ակնկալութիւններով, սերպիական պահանջումներու խնդիր չեղաւ Մակեդոնիոյ մասին: Սերպերուն աչքը ուրիշ կողմ դարձած էր այդ միջոցին. Պօսնա-Հէրսէքի անագին հողամասն էր որ զիրենք կը յանկուցանէր. սերպ էին անոր բնակիչները, և ազգայնութեանց սկզբունքը որ հակառակ ամէն բանի անվթար կը մնար վեհաժողովին մէջ, բոլորովին կը զօրացնէր իրենց յոյսերը: Արդէն անկախութեան տիրանալէն ի վեր ուրիշ բանի վրայ չէին խորհած. Պօսնա-Հէրսէքը կէս մը Սերպիա էր, և եթէ կարելի չըլլար անով յագուրդ տալ իրենց ազգային ակնկալութեանց, Աւստրիական Կայսրութեան մաս կազմող սերպիական երկիրներ չէին պակսեր նոր յոյսերու ասպարէզ բանալու համար: Յետոյ Գոսովայի նահանգն ու Մանասթըրի նահանգին մեծագոյն կտորը, Սթէֆան Տուչանի երբեմնի ընդարձակ Կայսրութեան էապէս սերպ մնացած մասերն էին, և նոյնպէս կրնային առարկայ դառնալ իրենց ազգային ակնկալութեանց: Այսքանը մեծ բան էր ինքնին, ինչպէս կարելի է տեսնել 163 էջի քարտէսէն. այլևս ինչ հարկ իջնելու աւելի վար, մինչեւ Նգէական, և Յոյներուն, Պուլկարներուն ու նաև Ուլահներուն ձեռքէն Մակեդոնիան կորզելու ասպարախտ աշխատութեան նուիրուելու:

Պէրլինի վեհաժողովը սակայն զինքը իր բնական յաւակնութեանց սահմաններէն հանելով նետեց Մակեդոնիոյ վրայ: Պօսնան, Հէրսէքը, Նովի Բազարը Աւստրիոյ տրուեցան. Թուրքիայէն առնուելիք հողերն ալ կրճատուեցան, և Սերպիա անուանատէս միայն անկախ մնաց, քանի որ անտեսապէս գերի կը մնար Աւստրիոյ. իր բոլոր արտաձուլները անոր բարիկամեցողութենէն կախուած էին. եթէ զոյգէր սահմանները՝ Սերպիա կը փճանար. չգոցելու համար ալ Սերպիոյ հողին կը հանէր: Այս դժուարին կացութեան միակ դարմանը ծովն էր. նաւահանգիստ մը պէտք էր Սերպիոյ՝ իր արտաձուլանց ապահովութեան համար, և այդ նաւահանգիստը կամ Ադրիականը կրնար ընծայել՝ Գոսովա-Սլոյանիոյ ճամբով և կամ Նգէականը՝ Մակեդոնիա-Սելանիկ ճամբով. և որովհետև Աւստրիական ըստառնալիքը իր ասլև փակած էր Ադրիականի ճամբան, — ինչպէս այսօր իսկ կը ջանայ փակելու, — Սերպիա ստիպուած էր Մակեդոնիա իջնելու՝ անկէ Նգէական հասնելու համար: Ահա թէ ինչո՞ւ Պուլկարները, Ուլահներն ու Յոյները Մակեդոնիան իրարու ձեռքէ խլելու աշխատած ատեննին՝ յանկարծ իրենց դէմը գտան նաև Սերպերը: Թուրքը որ այդ ժողովուրդներուն իրար ուտելը կը դիտէր զիւրըմբռնելի գոհունակութեամբ մը, ոչ իսկ հարցուց Սերպերուն թէ ինչ տեսակ իրաւունքի վրայ հաստատուած է իրենց միջամտութիւնը. ընդհակառակը՝ լայն տեղ բացաւ նաև անոր, ուրախ որ Մակեդոնիոյ Գրիստոնեայ բնակչութիւնը բաժան բաժան ընելու ծառայող նոր ազգակ մըն ալ ինկաւ երկիրքէն: Եւ կամ նոր կաթնտու կով մըն ալ ծնաւ, որովհետև այդ ժողովուրդներուն վէճերը նիւթապէս ալ շահաբեր էին իրեն: Պ. Վիքթօր Պէռար կը պատ-

մէ որ երբ առաջին անգամ Սերպ հիւպատոս մը հաստատուեցաւ Մանասթըրի մէջ, Վալին սկսաւ ուրախութեամբ ձեռքերը շփել ըսելով. — «Այստեղ երեք կուսակցութիւն ունէինք, Պուլկարները, Ուլահներն ու Յոյ-



Թուրանօթի փոխադրութեան դժուարութիւնները Գարատաղի շրջակայ լեռներուն վրայ

ները, որոնցմէ իւրաքանչիւրը ամսական հարիւր ոսկի կը ցնծար. հիմայ չորրորդ մըն ալ աւելցաւ անոնց վրայ»:

Սերպերուն յայտնութիւնը Թուրքին գործին կու գար, բայց ո՞չ միև կառուղ տարրերուն: Ինչ որ Թուրքը չուզեց հարցնել, անոնք հարցուցին. ուրկէ՞ ուր Մակեդոնիա ինկած էր Սերպ յաւակնութեանց սահմաններուն


մէջ: Պատասխանը պատրաստ էր. — Սերպերը Մակեդոնիոյ վրայ իրաւունք ունէին անոր համար որ բոլոր Մակեդոնացիները, անոնք որ Յոյն կը կոչուէին, և անոնք ալ որ Պուլկար կամ Ուլահ կը կոչուէին՝ պարզապէս անուանին փոխած Սերպեր էին. նոյն իսկ Ալպանացիք Սերպ էին և ո՛չ թէ առանձին ժողովուրդ...: Ու Սերպերը այս ապշեցուցիչ յաւակնութիւնը կը պաշտպանէին ճիշդ այն մեթոտով, որով Յոյն և Պուլկար տարրերը կը փորձէին արժեցնել իրենց իրաւունքը, — այսինքն պատմութեան ապաւինելով. և Մակեդոնիոյ պատմութիւնը, ինչպէս ըսինք, կրնար ամէնուն ալ կուռան հայթայթել այդ տեսակէտով:

Տակաւին Սերպ ժողովուրդին ամբողջութեան մէջ չարմատացած՝ այդ յաւակնութիւնները ներկայացուեցան 1889ին, Մակեդոնիա եւ Հին Սերպիա անունը կրող հատորով մը, որ մինչև այս վերջին դէպքերը սերպական ակնկալութեանց հիմնաքարն էր: Հեղինակը, Պ. Կօրչէվիչ, մետասաներորդ ժամու փաստարան մըն էր Սերպիոյ համար, զինիէն դարձած քացախին պէս զօրեղ: Հակառակ անոր որ Սերպ էր, մինչև 1888, — յայտնութեան թուական մը իրեն համար, — չէր սիրեր Սերպերը: 1885ին, Սերպօ-Պուլկար պատերազմին առթիւ հրատարակած էր շունդալից հատոր մը որ աստուածացումն էր Պուլկար ցեղին և անոր կու տար ամէն իրաւունք՝ ընդդէմ Սերպիոյ: Քիչ ետքը, նոյնքան շունդալից ուրիշ հատորով մը պաշտպանած էր Ալպանացի տարրը, միշտ ի վնաս Սերպերուն: Բայց անա յանկարծ յայտնութեան ժամը հնչած էր. Սօղոսը դարձած էր Պօլոս, և անոր պէս կ'այրէք ինչ որ պաշտած էր, կը պաշտէր ինչ որ այրած էր: — Չէի գիտէր որ Մակեդոնիոյ Պուլկարները և Ալպանիոյ Ալպանացիները պարզ Սերպեր են. այդ երկիրներուն մէջ ուսումնասիրական ճամբորդութիւն մը կատարելէ վերջ միայն տեղեկացայ այս ճշմարտութեան, և հիմայ կրնամ ապացուցանել թէ Մակեդոնիոյ վրայ լոկ Սերպերը ունին սեփականութեան իրաւունք, կ'ըսէր Կօրչէվիչ:

Այդ ապացոյցը պատմութիւնն է որ պիտի ընծայէր, աւելի ճիշդը՝ Պ. Կօրչէվիչի դարբնած պատմութիւնը: Յոյներուն ու Պուլկարներուն պաշտպանած տեսակէտին ծանօթանալէ վերջ, տեղն է ուրեմն որ ծանօթանանք նաև Պ. Կօրչէվիչի տեսակէտին, — նոյն ինքն Սերպերու տեսակէտին. — «Գ. դարուն էր որ, կ'ըսէ Սերպ պատմագիրը, Սլաւները առաջին անգամ ըլլալով Պալքանեան Թերակղզիին մէջ յայտնուեցան. 2. դարուն՝ բովանդակ թերակղզին Սլաւ տարրէն զբաւուած էր: 3. դարուն յայտնուեցան նաև Խրուաթները, Սերպերն ու Սլօվէնները որոնք նոյն լեզուն խօսող միակ ժողովուրդ մըն էին, և իրենց խօսած լեզուն ալ նախապէս հաստատուած Սլաւներուն խօսածէն չէր տարբերեր: Ուրեմն է. դարուն՝ թերակղզիին բովանդակ բնակչութիւնը Հին-Սերպերէ կը բաղկանար: Այն ասե՛ն է որ (679ին) կ'երեւան պուլկարական ոչ-սլաւ Հորթաները, և Դանուբը անցնելով կը տարածուին մինչև Պալքանեան լեռնաշղթան (արդի Պուլկարիոյ տարածութիւնը): Այդ Պուլկարները սակայն այնքան սակաւաթիւ էին որ Հին-Սերպ տարրը չուտով ընկուզեց զանոնք. անոնցմէ ուրիշ բան չմնաց՝ այլ միայն իրենց անունը և մէկ քանի

բառեր, որոնք այսօր միակ տարբերութիւններն են սերպերէնին և պուլկարերէնին: Այդ Հին-Պուլկարները ո՛չ Արև. Բուսնի մտան երբեք, ոչ մանաւանդ Մակեդոնիա, որուն բովանդակ բնակչութիւնը Սլաւ, այսինքն Հին-Սերպ մնաց: Թ. դարուն միայն, դանուբեան դաշտին մէջ, Պուլկար և Սերպ տարրերու խառնուրդէն ծնաւ նոր ժողովուրդ մը որ հին-սեր-


Տօնակաճառի օրէկու տեսարանը՝ Գարատալցարոց դիմացը, համբաւաւոր բերքաբազում մէջ



պերէն կը խօսէր, գործածելով նաև մէկ քանի պուլկարերէն բառեր, և որ Պուլկար անունը առաւ: Այդ ժողովուրդը Հին-Պուլկարներէն ժառանգած էր կուռազան բնաւորութիւն մը և ռազմական ոգի մը որ անծանօթ էր Սլաւներուն: Կուրը չուտով սկսաւ իրենց և Բիւզանդական Կայսրութեան միջև, ու այլևս բնաւ վերջ չգտաւ: 809ին՝ Պուլկարները Խօքէրը անցան և Սօֆիան գրաւեցին. երկու տարի վերջ իրենց ձեռքը ինկաւ Արևելեան Բուսնիին, և անկէ տարի մը ետքն ալ՝ Թրակիան: Այդ

աշխարհակալութիւնները երկարատե չեղան, և ամբողջ դար մը՝ Արեւելեան Բուսէլին, Թրակիան, Արեւելեան Սերպիան ու Մակեդոնիան Յոյներէն Պուլկարներուն և Պուլկարներէն Յոյներուն անցան բազմիցս: 917ին՝ Պուլկարական Կայսրութիւնը իր ամենամեծ ծաւալման հասաւ. բացի Կ. Պոլսէն, Սերպիայէն և մէկ քանի ծովեզերեայ քաղաքներէ, բովանդակ թերակղզին իրենց ձեռքը անցած էր»:

Պուլկարական Կայսրութեան գոյութիւնը հաստատելէ և անոր անազին տարածութիւնը այսպէս խոստովանելէ ետք, Պ. Կօրչէվիչ կը հարցնէ թէ այդ աստիճան սակաւաթիւ ազգ մը ինչպէ՞ս կրնար այսքան լայնատա-




Պուլկարական Պատերազմական նախարար Զօրավար Նիքիտօրօֆ (առաջին կարգին վրայ կեցողը) և իր սպայակոյտը

րած երկիր մը աշխարհակալել: Պուլկարներ չէին ուրեմն այդ աշխարհակալները, քանի որ իրենց թիւը շատ աննշան բան մըն էր, այլ Սլաւներ, այսինքն Հին-Սերպեր, որոնց բազմամարդութիւնը միայն կարելի կ'ընծայէր այդքան խոշոր երկրամասի մը գրաւումը: Եւ ահա հիմէն կը հարուածուին պուլկարական բոլոր յաւակնութիւնները: Պուլկար պատմութիւնը ինքնին ուրիշ բան չէ՝ այլ Սերպ պատմութիւն. պուլկար մեծագործութիւնները նոյնպէս, աշխարհակալութիւնները նոյնպէս. ամէն ինչ Սերպ է՝ հակառակ անոր որ Պուլկար անունը կը կրէ: Պ. Կօրչէվիչ կը հաստատէ նաև Շիշման Պուլկար իշխանին հիմնած Կայսրութիւնը Մակե-

դոնիոյ մէջ, բայց չընդունիր որ Շիշմանի հպատակները Պուլկարներ էին. — Շիշման, կ'ըսէ, Պուլկարիոյ Պետրոս Զարին դէմ ապստամբելով Մակեդոնիա ապաստանեցաւ և այնտեղ ինքզինքը «Մակեդոնացւոց ու Ալպանացւոց կայսր» հռչակեց: Իր ժողովուրդը սլաւ, — Հին-Սերպ» — էր, և այդպէս ալ մնաց: — Յետոյ կը ներկայացնէ Սերպիական յաւակնութեանց բուն փաստը, Սթէֆան Տուչան կայսեր տիրապետութիւնը Սերպերու, Յոյներու, Պուլկարներու և Ալպանացւոց վրայ. իր Կայսրութիւնը Տրալա գետէն մինչև Մօրէա (Յունաստան) և Ադրիականէն մինչև Գալալա կը տարածուէր, իրեն կեդրոն ունենալով ո՛չ թէ այսօրուան Սերպիան, այլ Մակեդոնիան, և իբր մայրաքաղաք ալ Սկիւպը (Տէս քարտէս էջ 174): «Ինչպէ՞ս կարելի է ենթադրել թէ, կը յարէ. Սերպ կայսր մը իրեն մայրաքաղաք ընտրէ Պուլիար քաղաք մը, և Սերպ Կայսրութեան կեդրոն դարձնէ Պուլիար երկիր մը»: Ի վերջոյ՝ Պ. Կօրչէվիչ կը յայտնէ թէ Մակեդոնիոյ Սերպ ժողովուրդը՝ Թուրքերուն յայտնուելէն և Սերպ Կայսրութեան կործանումէն ետքը միայն սկսաւ ինքզինքը «Պուլկար» կոչել, որովհետև Թուրքերը սոսկալի հալածանքներու կ'ենթարկէին «Սերպ» անունը կրող ամէն մարդ: Ատկէ մնացած է «Պուլկար» յորջորջումը այն տեսակ ժողովուրդի մը որ Սերպ է ամէն բանով. իր այսօրուան խօսած լեզուն իսկ փաստ մըն է թէ Պուլկար չէ, այլ Սերպ է, պուլկարերէն չի խօսիր, այլ սերպերէն, հակառակ անոր որ ինքզինքը «Պուլկար» և խօսած լեզուն ալ «պուլկարերէն» կը կարծէ: — «Մակեդոնիոյ «Պուլիարները», կ'ըսէ Պ. Կօրչէվիչ, ինքզինքնին Պուլիարի կը կոչեն և իրենց լեզուն ալ պուլկարի. Սերպերն ալ այդ անունները կուտան Պուլկարներուն և պուլկարերէնին. մինչդեռ Պուլկարիոյ Պուլկարները ինքզինքնին Պոլիարի և իրենց լեզուն ալ Պոլիարսի կը կոչեն: Այս պարզ դիտողութիւնը կը լուսաբանէ Մակեդոնական Պուլկարականութեան բովանդակ պատմութիւնը»:

Անշուշտ վիճելի շատ բան կայ Պ. Կօրչէվիչի այս պատմութեան և իր առաջ բերած փաստերուն մէջ: Պուլկարական տիրապետութիւնը Մակեդոնիոյ վրայ՝ հաստատուած իրողութիւն է. երբ ժան Զիմիսքէս Ա. կայսրը 971ին գրաւեց Պալքաններու հիւսիսային կողմը գտնուող Պուլկար Պետութիւնը, Պուլկար ազգն ու անկախութիւնը Մակեդոնիոյ մէջ յարատեւեցին, իրենց մայրաքաղաք ունենալով Բրէզպան զոր Սամուէլ Զարը կառոյց համանուն լիճին եզերքը (այսօր անբնակ): Վերջէն՝ աւելի ապահովութեան համար՝ Օխրիտա հաստատուեցաւ: Սամուէլ յիսուն տարի իշխեց Մակեդոնիոյ վրայ: 1000 թուականին՝ Վասիլ Բ. կայսրը, — «Պուլկարասպան»ը, — սկսաւ իր արշաւանքը, և տասնըութը տարուան պատերազմներէ վերջ միայն յաջողեցաւ ձեռք ձգել Օխրիտան: Անկէ ասուղին, ամբողջ եօթ դար, մինչև 1767, Օխրիտայի մէջ կը նստէր «Պուլկար Պատրիարք» մը որ երբեք «Սերպ Պատրիարք» չէ կոչուած: Պուլկարները Մակեդոնիոյ տէր մնացին նախ 914էն մինչև 1018. յետոյ՝ 1241—1196, մինչև Ասէն Բ. որուն օրով Պուլկարիա իր մեծագոյն տարածութեան հասաւ (Տէս քարտէս էջ 147): Գալով Սերպերուն, անոնց տիրապետութիւնը Մակեդոնիոյ վրայ կը սկսի 1273ին ու կը վերջանայ 1375ին:

Արդէն իրենց մեծագոյն կայսրը՝ Սթէֆան Տուչան՝ որ բուն Պուլկարիոյ չէ տիրած, այլ միայն Մակեդոնիոյ, ինքզինքը կ'անուանէր «կայսր Սերպերու, Յոյներու, Ալպանացւոց և Պուլկարներու»: Ո՛ւր կը բնակէին ուրեմն այս Պուլկարները, զորս հպատակեցուցած էր Տուչան. տարա-



Սթէֆան Տուչանի Սերպական կայսրութիւնը

կոյս չկայ որ Մակեդոնիոյ մէջ: Յետոյ՝ թէ՛ Յոյները և թէ՛ Պուլկարները՝ Մակեդոնիոյ մասին իրենց յաւատարմութեանց իբր հաստատութիւն միշտ կրնային ցոյց տալ ամբողջ քաղաքներ, գիւղեր, աւաններ՝ համայնքներ որոնք ինքզինքնին «Յոյն» կամ «Պուլկար» կը կոչէին. Սերպերը սակայն ի զուր բովանդակ Մակեդոնիան մէկ ծայրէն միւս ծայրը տակն ու վրայ պիտի ընէին՝ ինքզինքնին «Սերպ» կոչող հոգ չէ թէ աննշան գիւղ մը գտնելու


համար: — Թուրքէն վախնալնուն՝ «Պուլկար» անունը առին և այդպէս ալ մնաց, կ'ըսէ Պ. Կորչէվիչ, բայց խնդիր է թէ այդքան վրան բաց խաղ մը կարելի էր կլլեցնել այն ատենուան Թուրքերուն, որոնք հիմակուաններուն չէին նմաներ. ո՛չ միայն աւելի կորով, այլ նաև աւելի խելք, աւելի իմաստութիւն ունէին. պարզ խօսքով՝ կարելի չէր անոնց քիթէն բռնել, և այն Եւրոպան որ հիմակուանները ուզածին պէս կը խաղցնէ պղտիկ մատին ծայրովը, այն ատեն բացարձակապէս զինաթափ էր Թուրքին թէ՛ զօրութեան, և թէ պետական հանճարին հանդէպ:

Պ. Կորչէվիչ՝ իր առաքելութեան ընթացքին կազմած էր նաև Մակեդոնիոյ բնակչութեան մէկ վիճակագրութիւնը, որ Սերպերուն թիւը կը բարձրացնէր 920,000ի, 188,000 Ալպանացիներու, 75,000 Թուրքերու, 47,000 Յոյներու, 90,000 Ուլահներու և 10,000 Հրեաներու ու Գնչուներու դէմ: Պուլկար չկար...: Եւ սակայն, Մակեդոնիոյ մէջ անոնք միայն աչքի կը զարնէին իրենց գործունէութեամբ, յամբ բայց ապահով, միշտ նոյն նապաստակի որսորդութիւնը որ թէեւ դանդաղագոյն արապայով կը կատարուէր, բայց անպատճառ յաջողութեամբ կը պսակուէր: Թուրքերուն և Յոյներուն յաւակնութեանց դէմ մաքառել վերջ, անոնք սկսան մաքառիլ նաև Սերպերու յաւակնութեանց դէմ, երբ այս վերջիններն ալ սկսան քիչ շատ գործունէութիւն ցոյց տալ և բարականատ ընել: Այս ընդդիմութիւնը քիչ առ քիչ ջլատեց Սերպերը. տարիներուն հետ՝ անոնք մէկ կողմ դրին Պ. Կորչէվիչի շինած պատմութիւնն ալ, վիճակագրութիւններն ալ, որովհետեւ հոն ուր այդ քարոզը կը կրկնէին, իրենց ձայնը կը խափանուէր Պուլկար չէթէներու մավզէրներուն համազարկի աղմուկէն: Փաստերուն լաւագոյնն էր ատիկա՝ զոր Պուլկարները երեւան կը բերէին իրենց մրցակիցներուն դէմ: Այսպէսով Սերպերը, Մակեդոնիոյ վրայ հեռաւոր ակնկալութիւններ պահելով հանդերձ, ստիպուեցան սամանափակուիլ իրենց յաւակնութեանց ամենէն բնական շրջանակին՝ Բոսովայի դաշտին մէջ՝ ուր Խիւսովէնտիկեար խորտակած էր իրենց երբեմնի կայսրութիւնը, ինչպէս նաև Իբէքի, Բրիգրէնտի ու Բրիլթինայի Սանճազներուն մէջ, մինչև Տուչանի մայրաքաղաքը՝ Սկիւպ:

Այդ ընդարձակ հողամասը որ մինչև այսօր Հին Սերպիա անունը կը կրէ, աւելի յարմար գետին մըն էր սերպ յաւակնութեանց համար. 400,000 Սերպեր կային անոր վրայ, շրջապատուած 600,000 Ալպանացիներէ, որոնք Սերպերուն համար այն էին ինչ որ են Քիւրտերը Հայաստանի մէջ: Սերպ գիւղացին զէնք կրելու արածութիւն չունէր. Ալպանացին՝ տասը զէնք մէկանց կը կրէր. հետեւանքը դիւրին է ըմբռնել. Հին Սերպիան Հայաստանէն ոչինչով կը տարբերէր. հարստահարութիւն, թաւան, առեւանգութիւն, բռնի խլամացում՝ Սերպերու կեանքին բնական պայմաններն էին. շատ Սերպեր՝ միանգամայն թէ՛ Ալպանացւոց կեղեքումներէն ազատելու և թէ անոնց ունեցած հրապուրիչ առաւելութիւնները վայելելու համար կ'իսլամամային. Բոսովայի վիլայէթին 600,000 Ալպանացիներուն գոնէ 200,000ը մահմէտականութիւնը ընդունած Սերպեր էին: Իսկ չիսլամացողները կամ կը սոկային դժոխային կեանքի մը

իրապէս անտանելի պայմաններուն, և կամ սահմանազուխը անցնելով կ'երթային բեռ ըլլալու Սերպիոյ վրայ, ինչպէս որ Մակեդոնացի Պուկարներն ալ բեռ եղած էին Պուկարիոյ վրայ:

Իրերու այս դրութիւնը միջամտութեան շատ նպաստաւոր շարժառիթներ կ'ընծայէր Սերպիոյ, ու մասնաւորաբար Համիտի օրով, միջամտութեան պատճառ մը միշտ շահարեր բան էր. Քոսովայի Սերպերուն տխուր վիճակին նկատմամբ Սերպիոյ կողմէ եղած աւելի կամ նուազ ազդու դիտողութիւններ եթէ չէին կրցած կեղեքուողներու դրութիւնը բարելաւել, գոնէ սերպիական արտածմանց առջև բացած էին Սելանիկի



Պուկար օդանավորներու արձակած ուռմբերը

ճամբան: Յաւանութեանց այդ շրջանակին մէջ մնալով, Սերպիա կըրնար յուսալ թէ ուշ կամ կանուխ պիտի յաջողի ամուր յենակներ ստեղծել իր ակնկալութեանց համար: Ինք ալ սկսած էր հիւպատոսներ պահել Հին Սերպիոյ մէջ և դպրոցներ բանալ. յետոյ կ'աշխատէր մրցակից տարրերը հեռացնել իր ծաւալման ճամբէն, և այդ մտքով յաջողած էր Սկիւպի մէջ Սերպ Մէտրապոլիտութիւն մը հաստատել, ջնջել տալով Յունական Մէտրապոլիտութիւնը: Այդ ճամբուն մէջ էն առաջ Ալպանացիներն էին լրջագոյն խոչընդոտները. նոյնիսկ իր հիւպատոսներէն մէկը՝ Պ. Մարթինովիչ՝ օր ցերեկով ինկած էր Բրիտիանայի փողոցներուն մէջ, ալպանական գնդակէ մը զարնուելով: Վերջէն աւելի լրջագոյն խոչընդոտներ դարձան Պուկարները: Ճիշտ ինչպէս որ Սերպերը Մակեդոնիոյ մէջ Պուկար տարրի մը գոյութիւնը կ'ուրանային, այնպէս ալ Պուկարները սկսան ուրանալ Սերպ տարրի մը գոյութիւնը Հին Սերպիոյ մէջ, որ Տուշանի Կայսրութեան մաս կազմելէ առաջ՝ Պուկարական Կայսրութեան մէկ բեկորն էր: Եւ այստեղ ալ Պուկարները գործածեցին այն միեւնոյն փաստերը, որոնցմով երբեմն բռնադատած էին Սերպերը՝ Մակեդոնիայէն նահանջելու, — այսինքն չէթէները: Սահմանազրութենէն քիչ առաջ երբ Հիւսէին Հիլմի փաշա իր իրաւասութեան ենթակայ ժողովուրդներուն մարդահամարը կը կատարէր, շատ Սերպեր պուկարական չէթէներու սարսափին տակ՝ ինքզինքնին Պուկար հուշակեցին: Մանասթըրի մօտաւորապէս 100,000 Սերպերէն կէսը՝ վախերնուն՝ ծածկեցին Սերպ ըլլալին,

և իբր Պուկար արձանագրուեցան: Եկաւ ատեն մը ուր պուկարական բռնութիւնները մոռցուցին Ալպանացուց վայրագութիւնները, ու Սերպերը իրենք ալ սկսան չէթէներ կազմել և անոնցմով փրկելու աշխատիլ իրենց իրաւունքներն ու յաւակնութիւնները: Մի միայն Սկիւպի շրջանակին մէջ



ՍԵՐՊԻՈՅ ԳԱՀԱԺԱՌԱՆԳ ԻՇԻԱՆԸ

բազմաթիւ գիւղեր որոնք էկզարքութեան հօտ արձանագրուած էին, սերպ չէթէներու ներկայութեան և ճնշումներուն շնորհիւ նորէն ընդունեցին Սերպութիւնը: Եւ Թուրք Կառավարութիւնը, ինչպէս Յոյներուն ըրած էր, թոյլատրեց նաև սերպ չէթէներու գործունէութիւնը, որքան ատեն որ անոնք Պուկարները հարուածելու կ'աշխատէին: Սերպերը Թուրք Կառավարութեան ալդ «բարեացակամութեան» մանաւանդ կը պարտէին իրենց ցանցառ յաջողութիւնները:

Պատմական յաւակնութեանց հետեւանքն էր նաև Ուլահներուն միջամտութիւնը Մակեդոնիոյ սեփականութեան վէճերուն: Սակայն մինչև վաթսուական թուականները՝ ոչ ոք կը կասկածէր թէ այդ տեսակ տարր մը գոյութիւն ունի Եւրոպական Թուրքիոյ, մասնաւորաբար Մակեդոնիոյ մէջ: Ուլահ ժողովուրդ մը կար թէև, բայց Հէլլենականութիւնը վաղուց աշխարհակալած էր զայն. անոր լեզուն յունարէն էր, գիրը նոյնպէս. Ուլահները յունական վարժարաններու մէջ կ'ուսնէին և ինքզինքնին «Հէլլէն» կը նկատէին. Հէլլենականութեան «Մեծ Գաղափար»ը իրենցն ալ էր, իրենք նոյնքան եռանդով կ'աշխատէին անոր յաջողութեան, և Յունաստանի անկախութեան կռուին մասնակցած էին աւելի անձնադոհութեամբ ու խանդավառութեամբ, քան նոյն ինքն բուն Հէլլէն տարրը: Կրիվաս, Քօլէթիս, Մարքօս Պօցարիս, Զալէլաս, Հաճի Բէթրօս, Անարուցօս, Պուքօվալաս, Տիաքօս, Չէրվաս, Քօյօքօթրօնիսները և ուրիշ հերոսներ որոնք ապստամբութիւնը յաջողցուցին՝ Ուլահ էին. դարձեալ Ուլահ տարրը շատ մեծ բարերարներ ընծայած էր յունական հայրենիքին: Անոնցմէ մաս մը՝ «Հէլլէն» անունով հաստատուած էր Ռուսմանիոյ մէջ. ընդհանրապէս վաճառական և հարուստ մարդիկ էին ասոնք, և իրենց դրամով մանաւանդ առաջ կը տարուէր Հէլլենականութեան բրօքականտը Յունաստանէ դուրս, Մակեդոնիոյ մէջ. Մակեդոնիոյ յունական վարժարաններուն, — Հէլլենականութեան վառարաններուն, — անհրաժեշտ դրամը այդ Ուլահները կու տային:

Ինական է Ռուսմանիա հաշտ աչքով չէր դիտեր եղածը. Ռուսմանիոյ քնիկները հնուց կ'ատէին Յոյները, որովհետև իրենք ալ՝ Պուլկարներուն և Սերպերուն պէս՝ երկար ժամանակ ո'չ միայն Յունաց Պատրիարքարանին և յոյն կրօնաւորներուն, այլ նաև Դրան կողմէ կարգուած յաջորդական յոյն Հօսքօտարներու (կառավարիչներու) տիրապետութեան տակ մնացած էին. ու գիտենք արդէն թէ Յոյներուն կրօնական-կրթական տիրապետութիւնը աւելի անողորմ ու վայրագ բան մըն էր քան Թուրքերուն քաղաքական-ընկերային տիրապետութիւնը: Ռուսմէները վերջապէս թօթափած էին Փէնէի լուծը, գրաւելով Ռուսմանիոյ բոլոր յունական վանքերը, եկեղեցիներն ու անոնց ստացուածքները, բայց ահա ուրիշ ճամբով մը, Ռուսմանիա հաստատուած Մակեդոնացի-Ուլահներու միջոցաւ, ռուսմանական դրամը կը հոսէր դէպի Յունաց Պատրիարքարանը, անոր յետին մըտքերուն իրականացման շռայլութեամբ համար:

Ռուսմանիոյ վրդովումը կը մեծնար անով որ Հէլլենականութեան գործիք դարձած այդ Ուլահները նոյն ինքն Ռուսմէներ էին: Յոյնը Ռուսմէնը կը կողոպտէր. Ռուսմէնին միջոցաւ: Ռուսմէն տարրը Միջին դարու աքաղին չըջանին կը գրաւէր Պալքանեան և Քարթլութեան լեռներու միջև գտնուող բովանդակ երկիրը: Սլաւական արշաւը խորտակեց զայն և բաժնեց երեք հատուածներու: Մաս մը Ռուսմէներ մնացին հիւսիսային կողմը, Քրանսիլվանիոյ լեռներուն բարձունքը, ուրկէ վերջէն Դանուբի հովիտը իջան. ասոնք արդի Ռուսմանացիներն են, որոնցմէ հատուած մըն ալ մը մնայ Քրանսիլվանիոյ ռուսական բաժնին մէջ, Երկրորդ մաս մըն

ալ՝ Սլաւներու մղումին առջեւէն փախաւ մինչև Իսթրիա, ուր ժամանակ անցնելով բոլորովին ձուլուեցաւ Իտալացի լատին ցեղակիցներուն հետ. իսկ երրորդ մաս մը՝ հարաւ իջնելով՝ ապաստանեցաւ Պալքաններու և Բինտայի ապառաժներուն վրայ. Մակեդոնիոյ Ուլահները Ռուսմէն տարրին այս հատուածն էին ահա, աւելի յայտնի Քուցօ-Վալաքի (Կաղ-Ուլահներ) անունով: Բայց չունէին ազգային գիտակցութիւն, ինքզինքնին Հէլլէն կը նկատէին, իրենց համար ամէն բարօրութիւն լոկ Հէլլենականութեան յաղթանակին մէջ փնտռելով: Արդէն ո՛ր և է յարաբերութիւն ալ չկար իրենց և Ռուսմանիոյ միջև:

1850—1860, ամբողջ տաս տարի, Ռուսմանիա աշխատեցաւ այս յունացած Ռուսմէն տարրը շահելու. բնական է այդ մերձեցումը անկարելի էր առանց զայն Յոյներէն պաղեցնելու, անոր մէջ զօրացնելով իր ազգային գիտակցութիւնը: Շատ խանդավառ Ռուսմանացիներ այս մտքով անցան Մակեդոնիա, ուր իրենց հաշուով աւելի քան 1,200,000 Ուլահներ կը գտնուէին, 450,000ը Մակեդոնիոյ, 200,000ը Թէսալիոյ, 350,000ը Եպիրոս-Սլաւանիոյ, և 200,000ն ալ Թրակիոյ մէջ: Իրականութիւնը շատ հեռու էր այս ենթադրական հաշուէն, հազիւ մէկ երրորդը. բայց վերջապէս կար Ուլահ տարր մը, և բաւական ալ կենսունակ ժողովուրդ մըն էր, կրնար պայքարի աղուոր գործիք մը դառնալ, եթէ ձեռք անցուէր: Տասը երկար տարիներ, յետոյ ուրիշ հինգ տարիներ՝ ռուսմանական առաքելութիւններ ի դուր աշխատեցան այդ նպատակով: Թուրքերը նոյնպէս ձեռք տուին Ռուսմէն բրօքական տխրութիւններուն, և մասնաւորաբար Բէշիտ փաշա, Հէլլենականութիւնը տկարացնելու մտքով, նոյն իսկ «Թրքական» միջոցները չխնայեց Ուլահներն ու Յոյները իրարմէ անջատելու համար: Բոլոր այս ճիգերը մնացին ապարդիւն. Ուլահները՝ բուն Յոյներէն աւելի համոզմամբ ու հաւատքով կը յայտարարէին թէ իրենք Հէլլէն են:



Գարատաղցի Զօրավար Եուքուլիչ

Իրերը այս վիճակին մէջն էին, երբ 1865ին Պուքրէչէն Մակեդոնիա ժամանեց Աբուլթօլօ Մարկարիթի անունով Ուլահ վաճառական մը, զոր առևտուրը բաւական խոշոր հարստութեան մը տիրացուցած էր: Այս Ուլահը՝ տակաւին Ռուսմանիա չգացած՝ Հէլլէն և Հէլլենականութեան խանդավառ գործիքներէն մէկն էր. բայց Ռուսմանիոյ մէջ դիւրաւ կրցած էին զինքը համոզել թէ իսկապէս Ռուսմէն է, ինչպէս Ռուսմէն են Մակեդոնիոյ և Իր Ուլահ եղբայրները: Ինչ որ եղած էին Բախիուս քահանան Պուլկար-

ներուն և Պ. Կօրչէվիչ Սերպերուն համար, նոյնը եղաւ նաև Մարկարիթի Ռուսներուն համար: Պ. Կօրչէվիչի պէս, ինք ալ Սօղոս մըն էր որ յանկարծ Պօղոս կը դառնար. և այս Սօղոսը գրչի մարդ չէր, այլ գործքի և խօսքի մարդ, յամառ, պայքարող, ճարպիկ, օժտուած անընկճելի կորովով և համոզողութեան անբաղդատելի կարողութեամբ մը: Հազիւ Մակեդոնիա դարձած, սկսաւ շրջիլ Ուլահ կեդրոններու մէջ, և ամէն կողմ ահագին խանդավառութիւն առաջ բերաւ: Դիւրին գործ չէր ատիկա. ո՛չ միայն հէյլէնական ազդեցութիւնը չափազանց զօրաւոր էր, այլ նաև պատմութիւնն ալ, — Ուլահներու ծագման պատմութիւնը, — բաւական մութ էր, որպէս զի կարելի ըլլար սոկուս կռուաններ զանել անոր մէջ: Մարկարիթի սակայն յուսահատող մարդ չէր. փոխանակ շփոթելու այդ մթութենէն, ընդհակառակը շահագործեց զայն՝ Ուլահներու ծագումը կրցածին չափ հեռաւոր թուականներու մէջ հաստատելով: Ինչպէս սրամտօրէն դիտել կուտայ Պ. Վիքթօր Պէուար, Մարկարիթի և իր աշխատակիցները՝ Մակեդոնիոյ մասին իրենց մնուցած յաւակնութիւնները արժեցնելու համար «ճամբայ ելած էին հայր մը փնտռելու, և ահա տեսան որ շատ մը հայրեր ունին, ամէնքն ալ իրարմէ ճշմարտաման»:

Հարկ չկայ որ այդ պատմական աւելի կամ նուազ ենթադրական վէճերուն հետեւինք. կը բաւէ որ յիշատակենք Ուլահներուն յաւակնութեանց առանցքը. — Մինչև Յուստինիանոսի ատենը և անկէ ասդին ալ, կ'ըսէին, բովանդակ Մակեդոնիա լատինախօս էր և լատինական զօրեղ գաղութներ ցրուած էին Պալքանեան Թերակղզիին ու Գանուբի շրջանակներուն մէջ: Ինչ եղան այս Լատինները. բնական է չեն կորսուած, և ապացոյց թէ չեն կորսուած, ահա իրենք, Ուլահները (կամ Ռուսները): Յետոյ՝ Ժ. Գ. դարուն՝ իրենց ցեղին պատկանող վեհապետներ կ'իշխէին Պուլկարական երկրորդ Կայսրութեան վրայ, նոյն ինքն Մակեդոնիոյ մէջ, և ժամանակին Պապը կը յիշեցնէր անոնցմէ ամէնէն նշանաւորներէն մէկուն՝ Յոանիկէի թէ ինք Յոյն չէ, այլ Հռոմայեցի: Ուրիշ կռուաններ չէին պակսեր՝ իրենց յաւակնութեանց ոյժ տալու համար. Յաթիհ իր Եւրոպական ստացուածքներուն բնակիչները «Հէյլէն» կամ «Յոյն» չէր կոչեր, այլ «Րուսի», զոր «Հռոմայեցի» կը մեկնէին: Ուրեմն Մակեդոնիա Լատին էր իրօք, և որովհետև Մակեդոնիոյ Լատին տարրը լոկ իրենք էին, ուրեմն իրենցն էր Մակեդոնիան:

Վրայ հասան 1876ի Ռուսները պատերազմը և Պալքանեան խլրտումները: Ազգայնութեանց սկզբունքը որ այդ շրջանին մեծագոյն գրգիռը եղաւ Եւրոպական Թուրքիոյ Քրիստոնեաներուն ազգային ակրնկալութեանց յայտնութեան, հրապուրեց նաև Ուլահները. Մարկարիթի բրօքականտը դարձաւ աւելի ազդու. Մեծ-Վալաքիա մը կազմելու ծրագիրը կը մշակէր, և կ'ուզէր անոր տալ Ժ. Գ. դարու Մակեդոնական Կայսրութեան սահմանները: Իր խանդավառութեան մէջ՝ Ուլահ Կայսրութիւն կը հռչակէր այդ տիրապետութիւնը, մինչդեռ էապէս Պուլկար Կայսրութիւն մըն էր, լոկ Ուլահ կայսրերով: Մեր ազգն ալ Հայ կայսրեր, — և նշանաւոր ալ կայսրեր, — տուած է Բիւզանդիոյ, բայց մեզմէ ոչ ոք օր

մը օրանց փորձուած է Բիւզանդիան Հայկական Կայսրութիւն մը հռչակել: Մարկարիթի այս տեսակ նկատումներու հետ գործ չունէր. ամէն միջոց բաւ էր իրեն համար, կը բաւէր որ զինքը իր նպատակին հասցնէր: Այս մտքով յաջորդաբար զիմեց թէ՛ Ռուսներու, թէ՛ Պապին, թէ՛ Աւստրիոյ և թէ՛ Թուրքիոյ, ամէնքն ալ համոզելով, ամէնէն ալ մէյ մէկ կտոր աշակցութիւն զանկող: Յետոյ աշխատեցաւ ձեռք անցընելու նաև Ալպաշակցութիւն զանկող: Յետոյ աշխատեցաւ ձեռք անցընելու նաև Ալպաշակցութիւն զանկող, համալուար Յայտարարութեամբ մը որուն մէջ կ'ըսէր թէ



Պուլկարական Զ. զօրաբաժնի սպաները

Յոյները բնաւ իրաւունք չունին ինքզինքնին Յունաստանի ու Մակեդոնիոյ տէր հռչակելու, քանի որ Եգիպտոսէն ու Փիւնիկիայէն եկած գաղթականներ են, մինչդեռ իրենք՝ Ուլահներն ու Ալպանացիք՝ ուղղակի նախահէյլէն տիրապետութեան շրջանի Պեղասգեաններէն կը սերին, թէ Յոյները գողեր և մակարոյժներ են ի վնաս իրենց. կ'ըսէր տակաւին թէ յոյն կղերն ու թագաւորութիւնը զիրենք կողոպտելով միայն կ'ապրին, և թէ Ուլահներն ու Ալպանացիք միևնոյն ծագումը, ինչպէս նաև միևնոյն շահերը ունենալով, պէտք է ձեռք ձեռքի տան Յոյներուն դէմ: Իբր ապացոյց այս եզրակացութեանց՝ Մարկարիթի կազմած էր մանրամասն հաշիւներ, որոնցմով ցոյց կու տար թէ Յունաստան ամէն տարի, բացի մարտկային զոհերէն, աւելի քան 15 միլիոն ֆրանք կը քաշէր Մակեդոնիայէն: Պրանսացի Լազարիսթ կրօնաւոր մը, Հ. Պալէրիալ՝ Ալպանացիները լատինացնելու յետին մտքով՝ ոյժ կու տար Մարկարիթի կոչումին, անոր ի սպաս դնելով իր ժողովրդականութիւնը Ալպանիոյ մէջ. իր ջանքերով մանաւանդ Ուլահներուն և Ալպանացուց միջև հետզհետէ աւելի սերտ մերձեցում մը կը գոյանար: Մարկարիթի զիմեց նաև աւելի ազդու միջոցի մը, Ուլահ վարժարաններու հիմնարկութեան: Մակեդոնիոյ միւս ժողովուրդները դպրոցներով մանաւանդ կ'ամրապնդէին իրենց յաւակնու-

թիւնները . ինք ալ այդ եղանակը ընարեց , ու թէև յամր , բայց ապահով արդիւնքներ ձեռք բերաւ :

Յոյները , կը հասկցուի անշուշտ , կատաղի կերպով մաքառեցան Ուլահներու վերազարթնումին , մասնաւորաբար Մարկարիթիի դէմ : Ուլահ տարրը Հէլլէնականութեան ամէնէն ամուր պատուարներէն մէկն էր Մակեդոնիոյ մէջ . անոր կորուստը ծանրապէս պիտի վտանգէր իր շահերը . Պուլկարները մէկ կողմէն , Սերպերը միւս կողմէն Յոյներուն առջև ամէն ճամբայ փակելու կ'աշխատէին արդէն . եթէ անոնց վրայ աւելնային նաև Ուլահներն ու Ալպանացիները , այն ատեն բոլորովին դժուարին պիտի դառնար իրենց դիրքը : Պոլսոյ Պատրիարքարանն ու Աթէնք ձեռք ձեռքի տուին շուտով , և սկսան զարհուրելի հալածանք մը , որուն մէջ գլխաւոր դերակատարները ծպտուած Յոյն սպաներու հրամանատարութեան տակ գործող չէթէներն էին : Միջոց մը՝ Թուրք կառավարութիւնը ոյժ տուաւ իրենց . Պուլկարներուն ծաւալման դէմ Յոյն չէթէներու գործակցութեան ապաւինած ըլլալով , թողուց որ անոնք զարնեն նաև Ուլահները : Նոյն իսկ պահ մը բանտարկեց Մարկարիթիին : Քաջայերուած այդ թոյլատուութեանէն , Յոյները անաւոր համեմատութեանց հասցուցին իրենց ծայրայն դուրսիները . մի միայն Աբութօլօ Մարկարիթի չորս անգամ մահափորձի ենթարկուեցաւ . էն առաջ զինքը դաշոյնով զարկին Սելանիկի մէջ , յետոյ երկու հեղ յաջորդաբար Վարտար գետը նետեցին , և ի վերջոյ հրացանի հարուածներով հալածեցին Օխրիտայի լեռներուն վրայէն : Չկրցան սակայն զայն սպաննել , ոչ ալ տկարացնել անոր խանդը . մօտաւորապէս քառորդ դարու ընթացքին (1878—90) Մարկարիթի կրցաւ Մակեդոնիոյ և Յպիրոսի հինգ քաղաքներէն ու երեսուն զիւղերէն վանել Յոյները :

Իր մահուամբ բրօքսկանտը տկարացաւ բայց չկասեցաւ . յաջողած էր Ռուսմանիոյ արենակիցները հետաքրքրել Մակեդոնիոյ Ուլահներուն դատին , և վերջ ի վերջոյ պաշտօնական Ռուսմանիան , զրգուռած մանաւանդ Յոյն չէթէներու վայրագութիւններէն , ձեռք առած էր այդ դատարարի հանդէպ , շուտով կրցաւ Բ . Դուռը համոզել թէ Ուլահներու անջատումը Հէլլէնականութենէն՝ աւելի օգտակար է Թուրքիոյ քան վրասակար : Կ . Պոլսոյ Ռուսմանական դեսպան Պ . Լահովարի , այս հիման վրայ յաջողեցաւ ձեռք բերել 1905 Մայիս 23ի Ֆէրմանը որ Ուլահներուն Յոյն տարրէն անջատումը կը նուիրագործէր՝ զանոնք առանձին հասարակութիւն ճանչնալով : Ֆէնէր և Աթէնք իրար անցան . Հանգուցեալ Տ . Ետաքիմ Պատրիարք բողոք բողոքի վրայ տեղացուց Բ . Դուռը , մինչդեռ յունական սպաներ , դարձեալ չէթէներու գլուխ կեցած , սահմանազրուելը անցնելով կը վերսկսէին իրենց անողորմ գործունէութիւնը Ուլահ շրջանակներու մէջ : Այս վերջինները , Ռուսմանիոյ իրենց եղբայրներուն ուղղեցին սրտառուչ կոչեր , և Պուքրէշի դահլիճն ու Աթէնքի դահլիճը սկսան ծանուցազիրներ փոխանակել , երրորդ պետութեան մը վերաբերող հարցերու մասին : Աթէնք ուրացաւ իր մասնակցութիւնը , առարկելով թէ Մակեդոնիոյ յունական չէթէները տեղին վրայ կը կազմակերպուին .

ուրացաւ նաև իր գործակցութիւնը Պոլսոյ Յունաց Պատրիարքարանին հետ : Ռուսմէն կառավարութիւնը երկար բարակ բանակցելու ժամանակ չուներ . Պուքրէշի փողոցները աղմկալից ցոյցերու թատերավայր դարձած էին . ժողովուրդը ազդու միջոցներ կը պահանջէր՝ իրենց Մակեդոնիոյ եղբայրներուն վիճակը ամօքելու համար : Հետեւանքը սա եղաւ որ Ռուսմանիա հաստատուած Յոյները ծանր խստութեանց առարկայ դարձան և կառավարութիւնը սկսաւ խմբովին արտաքսել զանոնք . բազմաթիւ վաճառականներ փճացան այդ հալածանքին և անոր ընկերացող անողորմ պոլքօթի մը հետեւանքով : Ռուսմանիա խզեց նաև իր յարաբերութիւնները Յունաստանի հետ , ջնջելով մանաւանդ յոյնուումէն առեւտրական դաշնագիրը , ինչ որ կատարեալ ազէտ մըն էր յունական վաճառականութեան համար : Յոյները ամէն բան վրայ տուին այսպէս , առանց բան մը շահելու , որովհետև Ուլահները մնացին առանձին հասարակութիւն , և այսօր ալ , Պալքանեան Դաշնացութեան յաղթանակներէն վերջ , Մակեդոնիոյ Ուլահներուն հարցը կայ ու կը մնայ , պաշտպանուած Ռուսմանական կառավարութենէն : Հաշտութեան հետեւելիք հաշուեյարդարութեան մէջ անշուշտ ան ալ իր դերը պիտի ունենայ :

Թրակիոյ և Մակեդոնիոյ հետ՝ Թուրքիոյ եւրոպական ստացուածքներուն մաս կը կազմէր նաև Ալպանիան , որ Օսմանեան Կայսրութեան ամէնէն հաւատարիմ երկիրն էր ինքնին , հակառակ իր վայելած կէս անկախութեան : Երկար ատեն Եւրոպական Թուրքիոյ բնական պաշտպանն էր այդ երկիրն ժողովուրդը . իրեն դէմ կը փչրուէր օտար արշաւը : Իրմով կը ճնշուէին ներքին ըմբոստութիւնները , ժէօն-Թիւրքերը , այս աստիճան հաւատարիմ և Կայսրութեան գոյութեան համար անհրաժեշտ տարր մը կատաղի ու անհաշտ թշնամիներ դարձուցին իրենց , վրէժը լուծելու համար մէկ քանի Իթիհատականներու , որոնք այլանական գնդակներու տակ ինկած էին . իրենց իրր թէ զսպողական արշաւանքներուն մէջ , որոնք Ալպանիան զինաթափ ու մեծ մասամբ քար ու քանդ ըրին , ոչ քաղաքական իմաստութիւն կար , ոչ ալ հեռատեսութիւն . եթէ Ալպանացի տարրը Օսմ . Գահուն հաւատարիմ մնացած ըլլար , դժուար թէ Պալքանեան Դաշնակցութիւն մը ծրագրուէր , կամ Պալքանեան Զինակցութիւն մը այս աստիճան զիւրին ու ապահով յաղթանակներ տանէր : Ինչ որ ժէօն-Թիւրքերը իրենցմէ ցրտացուցին , կարծածուն չափ արհամարհելի տարր մը չէր , շուտով ուրիշներ ձեռք անցուցին զանոնք . Մալխորներու գործակցութիւնը Գարատաղի հետ , որ Նիքոյա թագաւորին բանակներուն թանկագին օժանդակութիւն մը բերաւ ներկայ պատերազմին մէջ՝ ժէօն-Թիւրքերու անհեռատեսութեան արդիւնքն էր պարզապէս : Օտար տէրութեանց , մասնաւորաբար Իտալիոյ և Աւստրիոյ զրգումներուն հետեւանքով մարմին առած անկախութեան տենչ մը բողոքովին լրացուց Ալպանիոյ բաժանումը Օսմ . Կայսրութենէն , և ասպարէզը բաց թողուց Պալքանեան Դաշնակցութեան առջև :

Ալպանացիք՝ ցեղային կռիւներէ զերծ էին , հակառակ անոր որ երեք

իրարու վրայ : Ժանտարմաներն ու վերակացուները՝ յուսահատած այդ չփացած տղաքը աշխատեցնելէ՝ ծխողներուն և ճաշողներուն խառնուած են : Ամենամանուշ ընտանութիւնը հիմայ իրարու միացուցած է այդ ռիս չպահող բանտարկեալներն ու թողատու պահապանները : «Մ.ս.



ՉՕՐՎՈՒՄ ԽՈՒՍԻՆ ԳՈՒՄԱՆԻՄԱՆ ՊԵՏԻՆՆԵՆՆԵՐԸ

եղբայր սա ձեզեն), կ'ըսէ Ալպանացի մը՝ Չավուշին տալով գանձուկին լեարդը, — պատուոյ պատաս մը : Ամէնքն ալ երջանիկ են : Վային որոշած է որ մինչև ճամբան չլինեն այդ տեղէն չպիտի հեռացնէ զիրենք : «Կեննա՛ցը, եղբայր» : Յերեկը կ'ուտն, կը քնանան, կը ծխեն : Գիշերն


ալ «գործ» չի պակսիր . շրջակայ գիւղերուն մէջ էրիկ մարդիկը անգէն են, կլիները գեղանի և գոմերն ալ շատ գէշ գոցուած . . . : Վալիին ուղածին չափ, նոյն իսկ աւելի ժամանակ ալ կը մնան այնտեղ : Ժանտարմաները որոնք բռնի բերած էին զանոնք, պիտի ստիպուին բռնի առնել տանիլ, որովհետև անոնց դրացնութենէն տուժող գիւղացիները, ճարահատ, վալիին դիմելով պիտի աղաչեն որ հեռացնէ, և իրենց աղաչանքը ընդունել տալու համար ալ թէ՛ քսակնին պիտի բանան և թէ՛ իրենք պիտի ստանանն ճամբուն շինութեան գործը» :

Ալպանացուց մասին աւելի ընդարձակօրէն պիտի խօսինք երբ հասնինք Ալպանիոյ անկախութեան հռչակման, որ ներկայ պատերազմին ամէնէն նշանակելի հետեւանքներէն մէկը եղաւ : Այստեղ կը բաւականանանք միայն անցողակի յիշատակելով թէ մաս մը Ալպանացիներու մէջ Մակեդոնիոյ մասին յաւակնութիւններ սկսած էին մարմին առնել պատերազմէն առաջ : Մակեդոնիոյ տենչացող օտար տէրութեանց թելադրութիւնները ստեղծած էին այդ շարժումը, որ նոյնպէս պատմութեան կը յենուր : — Ինչո՞ւ լոկ Յոյներն ու Պուլկարները պիտի բաժնեն Մակեդոնիան և մենք Ինչո՞ւ լոկ Յոյներն ու Պուլկարները պիտի բաժնեն Մակեդոնիան և մենք անմասն պիտի մնանք, կ'ըսէին այդ շարժման գլուխ կանգնողները . մեր անաւան պիտի մնանք, կ'ըսէին այդ շարժման գլուխ կանգնողները . մեր իրաւունքները աւելի հին ծագում ունին քան անոնցը . մենք ուղղակի յաջորդներն ենք Պեղասագեաններուն, որոնք երբեմն բովանդակ թերակողմն կը գրաւէին և որոնց ճիւղերն են միայն Յոյներն ու Մակեդոնացիք : Ա.քիլլէս և Մեծն Աղեքսանդր Յոյներ չէին, այլ Պեղասագեաններ, Ալպանացիներ : Սուլիի հերոսները, անգապելի Արնատութները որոնք իրենց արիւնքները թափեցին Յունաստանի անկախութեան համար, նոյնպէս Ալպանա-ցիներ էին : Գալով Սլաւներուն, թէ Սերպերը և թէ Պուլկարները Ալպանացուց ճորտերը եղած են միշտ : Ինչո՞ւ համար Ալպանացի ժողովուրդը, որ բազմաթիւ ու քաջ է, ուրիշներու պիտի թողուր Մակեդոնիոյ գեղեցիկ դաշտերը որոնց մէջ իր նախահայրերը ապրած են և ինքզինքը պիտի բռնադատէր լեռներու կատարը՝ արծիւի բոյներու մէջ ապրելու :

Ալպանական այս յաւակնութիւնները բոլորովին կը կնճռոտէին Մակեդոնիոյ մէջ արդէն իսկ գոյութիւն ունեցող ցեղային վէճերը : Ծայրայեղութեան տարուած այս հայրենասիրական յաւակնութիւնները, անընդհատ իրարու բաղխելով, կը ստեղծէին մշտական անիշխանական վիճակ մը, ուր զանազան ցեղեր իրար բըքտելէ զատ ուրիշ բանի վրայ չէին խորհեր, և որ իրաւունք կուտար Մակեդոնիոյ ընդհանուր քննիչ Հիսէրին Հիլմի փաշայի՝ ըսելու թէ «Այստեղ յիմարապահ մըն եմ, կ'արգիլեմ որ իրար չմորթեն» : Թրքական վարչութիւնը միայն կը զսպէր զանոնք . եթէ Թուրքը յանկարծ եւրոպան ձգելով Ասիա անցնելու ըլլար, անոնք շուտով իրար պիտի ջնջէին : Ինչ ահագին յեղաշրջութիւն դեռ երէկուան այդ անցեալէն մինչև այսօրուան Պալքանեան Դաշնակցութիւնը : Գալտ-նիքը պարզ է . Թուրքը կ'արգիլէր որ իրար չմորթեն, բայց նաև չէր ուզեր որ իրարու հետ հաշտ երթան . իր գոյութիւնը եւրոպայի մէջ՝ անոնց փոխադարձ թշնամութենէն կախուած էր : Այն օրը ուր այս կացութիւնը ըմբռնող, մանաւանդ այդ ըմբռնումը իրենց ժողովուրդներուն պարտա-

դրելու կարող պետական մարդիկ գոյացան Պալքանեան ազգերուն մէջ, բնական է կամ պիտի համաձայնէին իրարու միջեւ, և կամ առժամաբար մէկ կողմ պիտի դնէին իրենց վէճերը, էն առաջ վանելու համար «Հասարակաց թշնամին», — ինչպէս սկսած էին կոչել, — որ միակ օգտուողն էր միշտ իրենց ասելութիւններէն: Պալքանեան Դաշնակցութեան գաղտնիքը ասոր մէջն է: Ժէօն-Թիւրքերը տակաւին կրնային արգիլել այդ Դաշնակցութեան կազմութիւնը, քայքայ իրենց օրով գործադրուած պետական դրութիւնը եւրոպական Թուրքիոյ մէջ՝ յոսեգոյն բան մըն էր քան Բռնակալութեան միջոցին կիրարկուածը. ոչինչ կրցան բարեկաւել. բնականապէս աւելի վատթար պայմաններ ստեղծեցին, իսկ որ հերուան իրար բզբտող ազգերը զինակիցներ դարձուց Թուրքիոյ դէմ: Օսմ. Կայսրութեան թշնամիները, Պալքանեան Դաշնակիցներէն առաջ. Ժէօն-Թիւրքերը եղան: Եւ դեռ Կայսրութեան տուած վնասնին մինակ այդ կողմէն չէ...

ՎԵՐՋ Ա. ՀԱՏՈՐԻՆ



Պեղկոստի արքայական պալատը

ՅԱՆԿ Ա. ՀԱՏՈՐԻՆ

Յառաջարկ

ԳԼՈՒԽ Ա. — Պալքանեան Թերակղզիին անցեալը

Պալքանեան Թերակղզիին ժողովուրդները. — Յեղային խառնուրդ. — Փորձանաւոր երկիր, փորձանաւոր պատմութիւն. — Կամուրջ մը որ երկու թշնամի աշխարհներ կը միացնէ. — Պալքանեան վրայ հաստատուած տիրապետութիւնները. — Թուրքերու յայտնութիւնը. — Կազմութիւն Պալքանեան պետութեանց. — Աւստրեւոս հակամարտութիւնը. — Մեծն Պետրոսի քաղաքականութիւնը. — Ռուսերը ժառանգորդ Արեւելքի տուութիւնը. — Ռուս հոգեվարք նկատուած Թուրքիան կը յաղթէ թէ՛ Ռուսիոյ և թէ՛ Աւստրիոյ. — Իրիսի պատերազմին պատճառը. — 1877ի Արեւելեան Պատերազմը պատճառ այս օրուան պատերազմին

ԳԼՈՒԽ Բ. — Սան Սթեֆանօի վաղորդայնը

Զօրավար Կուրքօ Լտիւնէի մէջ. — Սուլթան Համիտ զինադադար կը խնդրէ. — Անգլիա և Ռուսիա դէմ դէմի. — Անգլիական նաւատորմի իշխանաց կղզիներուն առջեւ. — Սրտմտութիւն Ռուսիոյ մէջ. — Ռուսական բանակը հրաման կը ստանայ Պոլսոյ վրայ — Մեծ-քաղերու. — Սան Սթեֆանօի Դաշնագիրը. — Թուրքիոյ մահուան դատավճիռը. — «Մեծ-քաղերու». — Վրդուլուս եւրոպայի մէջ. — Անգլիոյ սպառնալիքները. — Աւստրիական Պոլկարիան. — Վրդուլուս եւրոպայի մէջ. — Անգլիոյ սպառնալիքները. — Պիզմարք և Արեւոզօրահանութիւնը. — Ռուսիա կ'ընդունի Վեհաժողովի առաջարկը. — Պիզմարք և Արեւելք. — Պէրլինի Դաշնագիրը. — Ինչ շահեցաւ Թուրքիա, ինչ կորսնցուցին Ռուսիա և Արեւելք. — Պէրլինի Դաշնագիրը. — Ինչ շահեցաւ Թուրքիա, ինչ կորսնցուցին Ռուսիա և Արեւելք. — Պալքանեան պետութիւնները. — Հայոց վեճակը և Սան Սթեֆանօի 16րդ ու Պէրլինի 61րդ յօդուածները. — Կիպրոսի գրաւումը Անգլիոյ կողմէ. — Պէրլինի Դաշնագրին Պոլկարիան. — Անգլիա ինչո՞ւ կը պաշտպանէր Թուրքիան. — Հնդկաստանի ապահովութեան հարցը՝ Թուրքիոյ փրկութեան պատճառ. — Ինչո՞ւ քանդուեցաւ Ներսէս Պատրիարքի ձեռնարկութիւնը. — Գերման և Սլաւ պայքարը Արեւելքի տիրապետութեան համար. — «Մղում դէպի Արեւելք». — Համպուրկ Սելանիկ ձամբան. — Պիզմարքի խաղերը. — Ռ՞վ շահեցաւ Պէրլինի Դաշնագրէն. — Սլաւ վտանգէն ետքը Գերման վտանգը. — Ֆրանսիա և Ռուսիա զինակցութիւնը. — Սիրալիք համաձայնութիւնը Ֆրանսայի և Անգլիոյ միջեւ. — Անգլիա և Ռուսիա ձեռք ձեռքի կուտան Գերման տարրին դէմ. — Արեւելեան Խընդիւրը կը յեղաշրջուի Անկլօ-Ռուս համաձայնութեան շնորհիւ

ԳԼՈՒԽ Գ. — Պէրլինի Դաշնագրին արդիւնքը

Գերման ոգին Պէրլինի Դաշնագրին մէջ. — Պալքանեան ազգերու դաշնակցութեան վտանգը. — Ինչո՞ւ չէին կրնար դաշնակցել. — Պէրլինի Դաշնագիրը կը բռնաբարուի. — Պոլկարիները Ռուսիոյ դէմ. — Խաղաղ յեղափոխութիւն մը. — Արեւելեան Ռուսիոյ կողմէն Պոլկարիոյ կը կցուի. — Յոյներուն բողոքը. — Եւրոպա Յունաստանի դէմ. — Ռուսիա Պոլկարիոյ դէմ. — Սթամպուլօֆ տիկտաթօր. — Ֆէրտինանտ իշխան. — Ռուսասէր կուսակցութեան պարտութիւնը Պոլկարիոյ մէջ. — Թուրքիոյ յաջորդութեան հարցը. — Նոր ժառանգորդ մը. — Մեծ Տէրութիւնները և Պալքանեան պետութիւնները. — Պալքանեան

ՔԱՐՏԷՍՆԵՐ

1. — Եւրոպական Թուրքիան Սան Սթէֆանօի Դաշնագրով	22
2. — Եւրոպական Թուրքիան Պէրլինի Դաշնագրով	23
3. — Պատերազմիկ տէրութեանց տարածութիւնը	49
4. — Դէպի Էտիրնէ՝ Պուլկարներու յառաջխաղացութեան ճամբան	56
5. — Պուլկար սահմանագլխէն մինչեւ Պուլխա	78
6. — Էտիրնէ և իր շրջակաները	81
7. — Գարատաղի և Դօսօվայի սահմանները	99
8. — Դէպի Սելանիկ Յոյներու յառաջխաղացութեան ճամբան	110
9. — Դաշնակից և Թուրք նաւային ոյժերը	123
10. — Բաղդատական քարտէս Եւրոպական Թուրքիոյ բնակչութեան	129
11. — Երբեմնի Բիւզանդական Կայսրութիւնը	135
12. — Երբեմնի Պուլկարական Կայսրութիւնը	147
13. — Ալպանիոյ շրջանակը	152
14. — Սերպ բնակչութեան տարածութիւնը Սերպիայէն դուրս	163
15. — Երբեմնի Սերպիական Կայսրութիւնը	174

ՅԱՒԵԼՈՒԱԾՆԵՐ

1. Պուլկար հետեւակազօրքը կռուի դիրքին մէջ.
2. Պատերազմի ատեն թղթախաղ.



Յ Ա Ն Կ Ե . Է Ա Տ Ո Ր Ե Ն

Գ. ՄԱՍ. — ՍԵՐՊԻՈՅ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

ԳԼՈՒԽ Ե.—Մանասրբի հակասամարտը	755
ԳԼՈՒԽ Զ.—Ներհորդական գործողություններ	765

Դ. ՄԱՍ. — ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

ԳԼՈՒԽ Ս.—Փոխադարձ ոյժերը	781
ԳԼՈՒԽ Բ.—Էլաստիկության անկումը	793
ԳԼՈՒԽ Գ.—Սարանաբորոսի հակասամարտը	799
ԳԼՈՒԽ Դ.—ՆԷՆԻՆԷ-Վարսաբի հակասամարտը	809
ԳԼՈՒԽ Ե.—Սելանիկի անձնատուրքները	816
ԳԼՈՒԽ Զ.—Սելանիկի կռուտխնձոր	833
ԳԼՈՒԽ Է.—Ներհորդական գործողություններ	846
ԳԼՈՒԽ Ը.—Նախնական բանակի գործողությունները	854
ԳԼՈՒԽ Թ.—Նանիայի անկումը	867
ԳԼՈՒԽ Ճ.—Հայ զինուորները Նանիայի մէջ	886
ԳԼՈՒԽ ԺԱ.—Յարակից անցքեր	894

Ե. ՄԱՍ. — ՊՈՒԼԿԱՐԻՈՅ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

ԳԼՈՒԽ Ա.—Պատերազմի յայտարարություններ	908
ԳԼՈՒԽ Բ.—Փոխադարձ ոյժերը	930
ԳԼՈՒԽ Գ.—Քրքի Քիլիսէ	940
ԳԼՈՒԽ Դ.—Լիլէ Պուրկազ	954
ԳԼՈՒԽ Ե.—Զարպիսա	1007
ԳԼՈՒԽ Զ.—Ներհորդական գործողությունները	1030

Վ Ա Ր Տ Է Ս Ն Ե Ր

39. Մանասթըրը և շրջակաները	756
40. Մանասթըրի ճակատամարտը (Յաւելուած)	
41. Սերպ բանակներու գործողութիւնները	761
42. Էլաստիկ և Սարանաբորոս	813
43. Սելանիկ և շրջակաները (Յաւելուած)	
44. Նախնական ռազմադաշտը	865
45. Նանիայի ամրութիւնները	881
46. Պուրկազ գործողութիւն և համախառնութիւն	921

47. Հէլէններու գինուորական գործողութիւնները	927
48. Մուսթաֆա Փաշայի գործողութիւնը	946
49. Թուրքեւալուկար բանակները Լիւլէ Պուրկազի վաղորդայնին	997
50. Պուլկարներու տարածումը Թրակիոյ մէջ, Լիւլէ Պուրկազէն վերջ	1000
51. Պուլկարական Բ. բանակին շարժումները Էպիրոսէի շուրջը (հոկտ. 15)	1001
52. Եւրուշի ճակատամարտը (9 հոկտ)	1009
53. Սէլ Եօլուի և Օրթաքչիի ճակատամարտները (9 հոկտ.)	1013
54. Բըրք Քիլիսէի ճակատամարտը	1016
55. Պուլկարեւթուրք բանակներու դերքը Բըրք Քիլիսէն առաջ (9 հոկտ)	1017
56. Պուլկարեւթուրք բանակներու դերքը Լիւլէ Պուրկազէն առաջ (14 հոկտ.)	1020
57. Լիւլէ Պուրկազի ճակատամարտը (15—20 հոկտ)	1024
58. Չաթալճայի ճակատամարտը (4—6 նոյ)	1026
59. Զօրավար Բօվաչէֆի գործողութիւնները	1028
60. Ընդհանուր յառաջխաղացում պուլկարական Ա. Բ. Գ. և Դ. բանակներուն	1032

Ս Ա Ն Ե Լ Ո Ւ Ս Ե Ն Ե Ր

11. Մանասթըլի ճակատամարտը
12. Սելանիկ և շրջակաները
13. Նահանջ սամ. Արեւմտեան բանակին

Վ Ր Ի Պ Ա Կ

- Ա. ՀԱՏՈՐ.**—էջ 70 (պատկերին տակ) «գահաձառանգը» պիտի ըլլայ «քաղաւորին գահը»։—էջ 175 (վարէն՝ 13րդ տող) «Սերիպա» պիտի ըլլայ «Սերպիա»։
- Բ. ՀԱՏՈՐ.**—էջ 209 (վարէն՝ 4րդ տող) «Ս էիմէս մհաւ» պիտի ըլլայ «Մէիմէս ձիով մհաւ»։—էջ 286 (վարէն՝ 10րդ տող) «190» պիտի ըլլայ «1906»։—էջ 364 (վարէն՝ 4րդ տող) «Սեպսեմբեր 13ին» պիտի ըլլայ «Սեպտեմբեր 25ին»։
- Գ. ՀԱՏՈՐ.**—էջ 379 (վարէն՝ 12րդ տող) «Բաղաֆներուն» պիտի ըլլայ «Բաղաֆներուն»։—էջ 413 (վարէն՝ 12րդ տող) «Մահմուտ Մուխար» պիտի ըլլայ «Մ.իմէս Մուխար»։—էջ 419 (վարէն՝ 17րդ տող) «Մահմուտ Մուխար» պիտի ըլլայ «Մ.իմէս Մուխար»։
- Դ. ՀԱՏՈՐ.**—էջ 353 (պատկերին տակ) «գնդաձիրը» պիտի ըլլայ «Միրաչ-Էֆօրը»։—էջ 557 (վարէն՝ 9րդ տող) «1886» պիտի ըլլայ «1876»։—էջ 564 (վարէն՝ 3րդ և 21րդ տողերը) «Կոկսեմբեր» պիտի ըլլայ «սեպտեմբեր»։

Հայաստանի Ազգային գրադարան



NL0425720

17 474

9(4971)
U-62